

# **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՆԱՐԵԿ ԱՐՏԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ**

## **ՂԱԶԱԽՍՏԱՆ. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐԱՅԻՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**ԱԼԲԵՐՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆ 2018**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	3
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ</b>	19
<b>1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ԿԵՐԵՒՑ ԵՎ ԺԱՆԻԲԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՆԱԶԱՐԲԱԵՎ</b>	19
1.1. Թյուրքական էթնիկ միասնությունից դեպի Ղազախական խանություն ..... (ազգային ինքնագիտակցության ծիլերը) .....	19
1.2. Ղազախները Ռուսական կայսրության կազմում .....	23
1.3. Խորհրդային Ղազախստան..... ա. Տնտեսական և ընկերային նորացումը 1920 – 1930-ական թվականներին..... բ. Հասարակական նորացման գործընթացները 1950–1980-ականներին .....	33
1.4. Ինքնիշխան Ղազախստանի Հանրապետությունը..... ա. Պետական ինստիտուտների կայացումը..... բ. Տնտեսությունը .....	43
գ. Ռազմարդյունաբերական համալիրը .....	46
դ. Արտաքին քաղաքականության ուղեծիրը.....	49
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b>	53
<b>2. ՂԱԶԱԽՍՏԱՆ. ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ</b>	53
2.1. Լեզվագաղաքականություն .....	54
ա. Ղազախներենի կարգավիճակի հիմնախնդիրը..... բ. Ղազախներենի հանրայնացումը .....	55
2.2. Ինքնության ազգային-պետական խորհրդանիշները .....	63
ա. Դրոշ .....	64
բ. Գերբ.....	65
գ. Հիմն.....	66
2.3. Կրթական նորացման ծրագիրը .....	67
2.4. Իսլամը և կրոնական ինքնության նոր հարացույցը .....	73
ա. Իսլամի հետխորհրդային զարգացումն ու տարածումը..... բ. Իսլամի հաստատութենացումը.....	74
2.5. Ղազախստանը և թյուրքական ինքնության աշխարհաքաղաքական չափումը.....	79
2.6. Միջէթնիկ հարաբերությունների կառավարումը.....	82
2.7. Ազգային ինքնությունը և պատմական միտքը .....	85
ա. Էպիկական ասքեր .....	85
բ. Ռուսական պատմական միտքը .....	88
գ. Ղազախական պատմագրությունը.....	90
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ</b>	96
<b>3. ՀԵՏԽՈՐՀԴԱՅԻՆ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾ- ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԱՍՏԱՆԱ</b>	96
3.1. Քոչվորական հավաքատեղիից դեպի արդիական քաղաք .....	97

ա. Ինքնիշխան Ղազախստանի մայրաքաղաք .....	100
<b>3.2. Աստանան իբրև նոր հետխորհրդային տեքստ .....</b>	<b>104</b>
<b>3.3. Աստանայի փորձառությունը քաղաքակրթական զուգահեռներում.....</b>	<b>110</b>
ա. Ռուսական փորձառությունը. Պետերբուրգ .....	113
բ. Թուրքական փորձառությունը. Անկարա .....	116
գ. Այլ քաղաքակրթական զուգահեռներ .....	121
դ. Սեմանտիկ հարադրություններ.....	125
<b>Եզրակացություններ .....</b>	<b>127</b>
<b>Օգտագործված գրականության ցանկ.....</b>	<b>133</b>
Սկզբնաղբյուրներ .....	133
Գիտական ուսումնասիրություններ.....	135
Գիտական հոդվածներ .....	141
Տեղեկատվական աղբյուրներ.....	145
<b>ՀԱՎԵԼՎԱԾ.....</b>	<b>149</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ղազախստանի նախագահ Ն. Ա. Ղազարբաևի ուղերձը Ղազախստանի ժողովրդին «Ղազախստան 2030. բարգավաճում, անվտանգություն և բոլոր դաշտական առողջապահության բարելավում», 11-հոկտեմբեր 1997 թվական: (Հատված).....</b>	<b>150-151</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ղազախստանի նախագահ Ն. Ա. Ղազարբաևի ուղերձը Ղազախստանի ժողովրդին, 31 հունվարի, 2017թ.....</b>	<b>152-153</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ղազախստանի նախագահ ազգի առաջնորդ Ն.Ա. Ղազարբաևի ուղերձը Ղազախստանի ժողովրդին. «Ղազախստան 2050» ուազմավարություն, կայացած պետության նոր քաղաքական ուղին, ք. Աստանա, 14 դեկտեմբեր 2012թ.: (Բովանդակություն).....</b>	<b>154-158</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում գտնվող Լ. Գումիլևի անվան Եվրասիական ազգային և Ղազարբաև համալսարաններում անցկացված փորձագիտական հարցախույզի հարցադրումները, 08 օգոստոս 2017-ից մինչև 28 օգոստոս 2017.....</b>	<b>159</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումով վերջ դրվեց աշխարհի վերջին բազմազգ կայսրությանը, որն ըստ քաղաքագետ ֆ. Ֆոկույամայի շտապողական կարծիքի՝ ազդարարեց «պատմության ավարտի» մասին<sup>1</sup>: Սակայն այդ ավարտը իր անորոշություններով, սպառնալիքներով և մարտահրավերներով պարունակում էր նաև նոր սկզբի հնարավորություններ: Կարևոր էր պատմական պահը. այդ մարտահրավերները նախանշում էին հետխորհրդային երկրների կերպափոխման ուղին: Ինչպես ցույց տվեց պատմությունը, դա ինքնընթաց գործընթաց չէր. իշխանությունը դարձավ նոր ընտրախավերի մերթ հավասարակշիռ և շրջահայաց, մերթ արկածախնդիր և ուժային ոգորումների առարկա: Այլապես՝ գործ ունենք անցումային հասարակությունների համայնապատկերի հետ, որպիսիք եղել են, կան և կլինեն պատմության հոլովույթում: Հարկավ, յուրաքանչյուր պարագայում՝ իրենց ընդհանրություններով և առանձնահատկություններով:

Միության փլուզումից հետո ստեղծված պարապում փորձարկվեցին և շարունակում են փորձարկվել ազգային և պետականաշխնական նոր տեխնոլոգիաներ: Երկրությունների մի խումբ որդեգրեց Արևմտյան ժողովրդավարական հարացուցը, մի մասը գնաց ավելի պահպանողական—ազգային անձնիշխանական համակարգերի ներդրման ուղիով, իսկ մյուսներն էլ ընտրեցին (իրական կամ ցուցադրական) հիբրիդային տարբերակը՝ հիմնվելով Արևմտյան և Արևելյան հարացուցերի վրա: Որոշ դեպքերում էլ այդ գործընթացն ընդհատվեց կամ դանդաղեց ազգամիջյան հակամարտությունների պատճառով՝ Արցախ, Աբխազիա, Հարավային Օսիա, ՄերձԴնեստրյան տարածք: Այժմ արդեն՝ Ղրիմ, Արևելյան Ռուսական:

Հետխորհրդային տարածքում ազգա-պետականաշխնության գործընթացներն ընթացան մի քանի տարբերակներով՝ **ա.** Արևմտյան—Բալթյան՝ Լատվիա, Լիտվա Էստոնիա, **բ.** Սլավոնական՝ Ռուսաստան, Ռուսականա, Բելառուս, **գ.** Այսրկովկասյան՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան, **դ.** Կենտրոնասիական՝ Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան, Ուզբեկստան և Թուրքմենստան:

<sup>1</sup> Fukuyama F., End of History and the Last Man, New York: Simon and Schuster, 2006.

Հետխորհրդային ճգնաժամի հաղթահարման համար նորանկախ պետություններն սկսեցին կիրարկել քաղաքական, տնտեսական և հասարակական համայիր ծրագրեր: ԽՍՀՄ վլուգման պատճառներին և դրանց հաջորդող կերպափոխումներին տրվեցին ամենատարբեր սահմանումներ՝ հետգաղութատիրական<sup>2</sup>, հետացիալիստական<sup>3</sup>, հետարյունաբերական<sup>4</sup>, ժողովրդավարական<sup>5</sup>, համակարգայինկառուցվածքային<sup>6</sup>, քաղաքակրթական<sup>7</sup> և այլն :

Արևամտյան ժողովրդավարական ուժին բռնեցին բալթյան երեք երկրները՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան: Նախապես ազգային համախմբումն աստ ուներ շեշտված հակառական կողմնորոշում, որը նախ և առաջ արտահայտվեց նրանց արտաքին քաղաքական կողմնորոշման մեջ, այն է՝ անդամակցություն Եվրամիությանը և ՆԱՏՕ-ին: Այդուհանդերձ, էթնոազգային համախմբումը չդարձավ այս երկրների ինքնակայացման հիմնական բաղադրիչը. շուտով գործընթացն ընդունեց քաղաքացիական բնույթ՝ հիմքում ունենալով արևամտյան ժողովրդավարության արժեքները:

Մրան զուգընթաց Ռուսաստանի Դաշնությունում ձեռնարկվեց պետականաշխնություն՝ ընդգծված անձնիշխանական հատկանիշերով: Այն ունի քաղաքակրթական բացատրություն. կենտրոնացված պետական համակարգը և ուժեղ առաջնորդը ռուսական պատմության հաստատուններն են: Դրա արմատները ոմանք փնտրում են «բյուզանդական ժառանգության» մեջ: Նորօրյա փորձառության մեջ անձնիշխանության օրինականացումը դիտարկվում է նաև իբրև «Արևամուտքին հակադրվելու միջոց»: Իր ծայրահեղ դրսնորմանն այն հասավ սառըպատերազմյան գաղափարաբանության և հոետորաբանության մեջ: Եվ շարունակվում է նաև մեր օրերում:

<sup>2</sup> Ste'u, Adams L. L., Can we apply Postcolonial Theory to Eurasia? Central Eurasian Studies Review, Vol.7, No.1, 2008, pp. 2-7. Moore D. Ch., Is the Post- in Postcolonial the Post- in Post-Soviet? Toward a Global Postcolonial Critique. PMLA Vol. 116, No. 1, 2001, pp. 111-128. Khalid A., Introduction: Locating the (post-) Colonial in Soviet History. Central Asian Survey 2007, 26, n. 4, pp. 465-473. Kandiyoti D., Post-colonialism Compared: Potentials and Limitations in the Middle East and Central Asia. International Journal of Middle East Studies Vol. 34, No. 2, 2002, pp. 279-297. Ram H., Spivak G. Ch., Condee N., and Chernetsky V., “Are We Postcolonial? Post-Soviet Space.” PMLA Vol. 121, No. 3, 2006, pp. 828-836.

<sup>3</sup> Collier J. S., Post-Soviet social: neoliberalism, social modernity, biopolitics, Princeton: Princeton University Press, 2011, p.22

<sup>4</sup> Castells M., End of Millennium, Vol. 3 of The Information Age: Economy, Society, and Culture, Oxford: Blackwell, 2010, p. 8.

<sup>5</sup> Ste'u, Collier D., Levitsky S., Democracy with Adjectives, Conceptual Innovation in Comparative Research. World Politics, Vol. 49, No. 3, 1997, pp. 430-451. Held D., Models of Democracy. 2nd edition. Cambridge: Polity Press, 1996.

<sup>6</sup> Sakwa R., Soviet Politics in Perspective, London: Routledge, 1998, p. 285.

<sup>7</sup> Huntington S., The Clash of Civilizations and Remaking the World Order. New York: Simon and Schuster, 1996.

Բազմազգ ՌԴ-ի նոր համակեցական միջավայրի ձևավորման գործում իշխանությունները որդեգրեցին նաև նոր գաղափարախոսական հարացույցեր: Ամենակարևոր՝ մտցրին *rossciaynii* (ռուսաստանցի) իրավաքաղաքական եզրույթը: Եվ ապա հայտարարեցին ազգային-պետական միավորներին. «Վերցրեք ինքնավարություն՝ որքան ի զորու եք»: Սակայն նման «զիջումները» չկանխեցին ծայրահեղական տրամադրությունները, որոնցից ամենացայտունը չեւենական պատերազմն էր՝ իր հազարավոր գոհերով (1994 – 1999 թթ.):

Անցումը համեմատաբար «փափուկ» ընթացավ Ուկրաինայում և Բելառուսում: Աստ ներդրվել էր արդիականացման ուսական հարացույցը՝ ինքնիշխանական աստիճանակարգի և հրամայականի գերակայությամբ: Սակայն արդյունքները զգալիորեն տարբեր էին: Բելառուսական ընտրախավը, օրինակ, երկրում ձևավորեց օրենքի և օրինականության միջավայր և երկիրը տարավ տնտեսական զարգացման ուղիով: Համաշխարհային բանկի տվյալներով՝ Բելառուսը դարձավ առաջին բարեկեցիկ հետխորհրդային երկիրը, որի արդյունաբերական և գյուղատնտեսական ցուցանիշները հասան խորհրդային մակարդակին և գերազանցեցին այն<sup>8</sup>:

Այլ էր Ուկրաինայի պարագան: Այն շարունակում էր մնալ Ռուսաստանից Էներգետիկ և տնտեսական կախվածության մեջ: Սկզբում ամեն ինչ թվում էր խաղաղ, սակայն հընթացս ժամանակի ձևավորվեց կոռումպացված վերնախավ, որին քիչ էր հետաքրքրում երկրի ինքնակա զարգացման հեռանկարը: Դա տեղիք տվեց ընկերային բներացումների, սրվեցին ներհանրութային հարաբերությունները՝ պարարտ հող ստեղծելով գունավոր հեղափոխությունների համար: Դրանց կարևորագույն խթանը հակառուսականությունն էր, որն այժմ օգտագործվում է վավերացնելու համար Ուկրաինայի եվրոպական ինտեգրման հավակնությունները<sup>9</sup>:

Խիստ խայտաբղետ էր (և շարունակում է այդպիսին մնալ) իրավիճակը Այսրկովկասում: Արդիականացման գործընթացներն աստ խոչընդոտվում էին ազգային հիմնահարցերով: «Տեղական տերությունները»՝ Վրաստանը և Ադրբեյջանը, ձգտում էին օրինականացնել ԽՍՀՄ-ից ժառանգած իրենց գերակայությունն այլ ազգերի նկատ-

<sup>8</sup> **World Bank**, Belarus, URL: <https://data.worldbank.org/country/Belarus> (10.06.2017)

<sup>9</sup> **Բայադյան Հ.** Ազգային ինքնություն. սպառված նախագիծ, Հետք, 21. 12. 2009, URL: <http://hetq.am/arm/news/31559/azgayin-inqnutyun-sparvats-nakhagits.html/> (24.12.2015)

մամբ: Դա հանդիպեց վերջիններիս զորեղ դիմադրությանը՝ «հանուն ազգային ինքնորշման իրավունքի»: Եվ դերությունները պարտվեցին իրենց սկսած պատերազմներում: Արդ յուրաքանչյուրն ընթանում է իր ուղիով. Վրաստանը՝ դեպի արևմտյան ժողովրդավարություն, Ադրբեյջանը՝ դեպի անձնիշխանական թուրքականություն: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն (չնայած արցախյան պատերազմին, տնտեսական դժվարություններին, կոռուպցիային) ձգտում է իր արտաքին և ներքին քաղաքականության մեջ համադրել Արևմտյան և Արևելյան համակեցական արժեքները:

Հետխորհրդային փոխակերպումների գործընթացներն առավել հակասական ընթացք ստացան Կենտրոնական Ասիայի<sup>10</sup> երկրներում՝ Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Տաջիկստան և Թուրքմենստան: Տարածաշրջանը ԽՍՀՄ փլուզումից ի վեր կանգնած է մարտահրավերներին հարիր պատասխաններ մշակելու խնդրականի առաջ: Պատասխաններ, որոնք պետք է ճանապարհ հարթեին նրանց արդիականացման համար:

Տարածաշրջանի հինգ երկրների անկախության հոչակումն ընթացավ առանց «ազգային անկախության և այլախոհական շարժումների»<sup>11</sup>: Այդուամենայնիվ, երկրները անցումային ցնցումները չշրջանցեցին: Արյունալի քաղաքացիական պատերազմի միջով անցավ Տաջիկստանը: Ներքին խիստ լարված իրադրություն էր Ուզբեկստանում՝ պայմանավորված քաղաքական և ծայրահեղական իսլամի դրսնորումներով: Արմատական իսլամի զապման անհրաժեշտությունը ակնհայտ էր նաև Թուրքմենստանում:

Իրադրությունն այլ էր Ղրղզստանում և Ղազախստանում: Այս երկրները աչքի էին ընկնում միջազգային համակարգին ինտեգրվելու իրենց պատրաստակամությամբ: Ուշագրավ է նաև նրանց պետականաշխնական փորձառությունը: Ղրղզստանն իր խիստ սահմանափակ բնական ռեսուրսներով փորձում էր առանձնանալ ժողովրդավարության ներդրման հանձնառությամբ: Չնայած ներքին բախումներին (գունավոր

<sup>10</sup> Նշենք, որ խորհրդային տարիներին շրջանառության մեջ էր «Միջին Ասիա» եզրույթը, սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո 1993 թ. Նուրսուլլան Ղազարբակի նախաձեռնությամբ հինգ երկրների ղեկավարները որոշեցին տարածաշրջանի խորհրդային-ուսական «Միջին Ասիա» եզրույթը փոխարինել «Կենտրոնական Ասիա» եզրույթով՝ ընդգծելու նոր ձևավորվող տարածաշրջանի դերը նոր աշխարհակարգում: Տե՛ս, Akiner S., Post-Soviet Central Asia: past is prologue in Ferdinand P., (Ed.) The New States of Central Asia and Their Neighbours. The Royal Institute of International Affairs, New York: Council on Foreign Relations Press, 1994, p. 32.

<sup>11</sup> Olcott M. B., Catapult to Independence, Foreign Affairs, Vol. 71, No. 3, 1992, pp. 108-113.

հեղափոխություններ)՝ այն շարունակում է ընթանալ իր ընտրած ուղիով և միջազգային քաղաքագիտական խոսություն ներկայացվում է իբրև «ժողովրդավարության կղզի»<sup>12</sup>:

Մեր ատենախոսության հիմնական նպատակը Կենտրոնական Ասիայի առանցքային երկրի՝ Ղազախստանի հետխորհրդային արդիականացման ուսումնասիրությունն է: Գործընթաց, որի կարևորագույն չափումներն են պետականակենտրոնությունը և ազգային ինքնության նոր հարացուցը: Դրանք զուգորդվում են ներհանրութային տարակերա նորարարություններով:

Պատմականորեն ղազախների (ինչպես տարածաշրջանի մյուս ժողովուրդների) ինքնությունը խարսխված է եղել կլանային համակարգի և իսլամի արժեհամակարգի վրա<sup>13</sup>: Խորհրդային վարչակարգը կարևոր քայլեր ձեռնարկեց այս համակարգը հաղթահարելու ուղղությամբ: Արդյունքները տպավորիչ էին՝ զարգացած արդյունաբերություն, գյուղատնտեսություն, կրթական համակարգ, առողջապահություն և այլն: Սակայն դրանց կրողները մեծավ մասամբ այլազգիներն էին, որոնք երկրի ազգաբնակչության կեսից ավելին էին՝ հիմնականում քաղաքաբնակներ: Պետական լեզուն դե ֆակտո ուսերենն էր, քարոզվող համակեցական ինքնությունը՝ վերացական կոմունիստական:

Իսկ ղազախական ազգային իդեալը շարունակում էր շաղկապված մնալ կլանային անցյալի արժեքներին և հերոսներին: Այն պետք է ելակետային նշանակություն ստանար հետխորհրդային ինքնակայացման հոլովույթում՝ համակցված, սակայն, տարածքային ինքնության ինչ-ինչ տարրերի հետ: Իզուր չէ, որ 1995 թ. սահմանադրությամբ հաստատագրվում էր. «Մենք՝ Ղազախստանի ժողովուրդն՝ միավորված միասնական պատմական ճակատագրով, ստեղծում ենք պետականություն բնիկ ղազախական հողում»<sup>14</sup>: Նկատի ունեին 130 էթնիկ խմբերի խաղաղ համակեցության խնդիրը:

<sup>12</sup> Juraev Sh., Kyrgyz democracy? The Tulip Revolution and beyond in Cummings S., (Ed.) Domestic and International Perspectives on Kyrgyzstan's 'Tulip Revolution': Motives, Mobilization and Meanings, Routledge, 2013, p. 32.

<sup>13</sup> Golden P.B., Central Asia in World History, New York: Oxford University Press, 2011, p. 1.

<sup>14</sup> Конституция Республики Казахстан, 1995.URL: [http://www.akorda.kz/ru/official\\_documents/constitution](http://www.akorda.kz/ru/official_documents/constitution) (10.04.2016): Նշենք, որ 1993 թվականի սահմանադրությունում «բնիկ» (исконный) եզրույթի փոխարեն գրված էր «հնագույն» (древний).

1991 թվականի դեկտեմբերի 16-ին Ղազախստանը հոչակեց իր անկախությունը: Այն վերջինն էր խորհրդային հանրապետություններից, որ գնաց այդ քայլին: Նախկին կուսակցական աստիճանակարգի դեկավար Նուրսուլթան Նազարբաևը դարձավ նորանկախ Ղազախստանի առաջին նախագահը: Խոսքը քարիզմատիկ իշխանության մասին էր, որը, արդի քաղաքագիտական եզրաբանությամբ, նպատակ ուներ ստեղծելու ղազախական նոր «կենսաշխարհը և համակարգը»: Նախագահին հաջողվեց ժողովրդին համախմբել այդ ապագայատեսական (ֆուլտուրիստական) ծրագրի շուրջ<sup>15</sup>: Եվ անձնիշխանությունը դարձավ ազգաշինության կարևորագույն լծակը:

Մինչ ներհանրության խրթին հիմնախնդիրներին անդրադառնալը, նախ հաստատագրվեցին նորանկախ երկրի սահմանները. շուրջ 2,724, 900 կմ<sup>2</sup> տարածք՝ սահմանակից Ռուսաստանի Դաշնությանը, Ուզբեկստանին, Թուրքմենստանին, Չինաստանին և Ղրղզստանին:

### **Արենախոսության հետազոտական ժամանակը, առարկան և նպատակը.**

Ասենախոսության հիմնական ժամանակային շրջանակն ընդգրկում է Ղազախստանի պատմության նորագոյն ժամանակահատվածը՝ սկսած ԽՍՀՄ փլուզմից: Սակայն հիմնախնդիր համապարփակ պատկերը ներկայացնելու նպատակով ակնարկային քննության են ենթարկվել նաև երկրի խանական, ցարական և խորհրդային ժամանակաշրջանները:

Ըստ նշված ժամանակագրական մոտեցման՝ որոշարկվել է հետազոտության առարկան՝ ուսումնասիրել հետխորհրդային Ղազախստանի ազգապետականաշխնության հիմնարար սկզբունքներն ու հարացուցերը: Շնորհիվ այս մոտեցման՝ հնարավոր է եղել համակարգային ուսումնասիրության ենթարկել ղազախական ինքնության հարացուցերի ժամանակային հերթագայությունը:

Ասենախոսության նպատակն է՝ ուսումնասիրել նորարարական այն մեխանիզմները, որոնցով Ղազախստանի անձնիշխանական կառուցը ձեռնարկեց ազգապետականաշխնության մի աննախընթաց գործընթաց: Տեղի ունեցավ խօսում նախկին ինքնու-

<sup>15</sup>Այս համատեքստում նախագահի քարիզմատիկ իշխանությունը որոշակիորեն տարբերվում է Մաքս Վեբերի դասական հիացքից, որը քարիզմատիկ իշխանությունը ներկայացնում է իրեն «անձի անհատականության որակական հատկանիշ», որը նրան առանձնացնում է հասարակ մարդկանցից և վերագրում գերբնական, գերմարդկային կամ առնվազն բացառիկ լիազորություններ կամ որակներ»: Max Weber, The Theory of Social and Economic Organization, Henderson A. M., Parsons T. trans and eds. New York: Simon and Schuster, 2009, p. 358.

թենական մոդելից. քաղաքակրթական ինքնանույնացման գործընթացն այլևս միշ-նորդավորվում էր *ազգային և քաղաքացիական միջավայրերով*, որոնց համադրվում էին նաև ավանդական արքետիպերը:

Ըստ այդմ՝ աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ **հիմնախնդիրները**.

- ներկայացնել դազախական հանրույթի պատմական մարտահրավերները և դրանց հարիր պատասխաններ մշակող ընտրախավի ապագայատեսական նախագծերը,
- դիտարկել, թե ինչպես է վարչակարգը փորձում երկար տևողության ժամանակային տիրույթում շրջանցել ավանդական ցեղային-կլանային հարաբերությունների մնացուկները,
- ուսումնասիրել հետխորհրդային ազգաշինության տարբեր շերտերը՝ ազգային-էթնիկական, քաղաքացիական, կրոնական, քաղաքական, աշխարհաքաղաքական, ապա դրանց համատեքստում քննարկել համադազախստանյան ինքնության տեսլականը,
- ցույց տալ ազգաշինության և ինքնութենական գործընթացներից արմատական իսլամի ազդեցության բացառման ճիգերը,
- վերլուծել և գնահատել ազգային համակեցական նոր միջավայրերի ստեղծմանը միտված քաղաքակրթական ջանքերը՝ լեզվաքաղաքականություն, խորհրդանիշեր (ազգային դրոշ, գերբ, տոներ), կրթություն և գիտություն, էթնիկ-վարչական քաղաքականություն և այլն,
- համեմատական վերլուծության ենթարկել քաղաքաշինության և մասնավորապես նոր մայրաքաղաքի կառուցման քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և ինքնութենական շերտերը,
- ուսումնասիրել նոր մայրաքաղաքի՝ Աստանայի առանցքային դերը ազգաշինության նոր հարացույցի մշակման, գործարկման և զարգացման գործում:

**Ատենախոսության կառուցվածքը** բխում է նախանշված իրողություններից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից առաջինը բաղկացած է չորս, երկրորդը՝ յոթ և երրորդը՝ երեք ենթագլուխներից), վերջաբանից, Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածներից:

## **Հետազոտական մեթոդաբանությունը.**

Ատենախոսության հիմնախնդիրների գիտական արծարծման նպատակով կիրառվել է հետազոտության որակական (qualitative) մեթոդաբանությունը՝ հիմնվելով պատմաքննական և պատմահամադրական վերլուծության սկզբունքի վրա: Կիրառվել են հղացքներ այնպիսի գիտակարգերից, ինչպիսիք են մշակութաբանությունը և ազգագաբանությունը, քաղաքակրթագիտությունը և կրոնագիտությունը, աշխարհաքաղաքականությունը և քաղաքագիտությունը: Նման մոտեցումը կարևոր է՝ վեր հանելու գործընթացների բազմաշերտությունը:

Առաջ քաշված հիմնախնդիրների առավել ընդգրկուն վերլուծության նպատակով կատարվել է հետազոտական այց Աստանայի Նազարբաև և Լ. Գոմիլկի անվան Եվրասիական ազգային համալսարաններ: Կատարվել է գրադարանային ուսումնասիրություն և անցկացվել է փորձագիտական հարցախույզ դասախոսների շրջանում, որի արդյունքներն օգտագործված են ատենախոսությունում<sup>16</sup>:

Ատենախոսությունը գրված է հայերեն, անգլերեն, ռուսերեն և ռազախերեն լեզուներով հրապարակված սկզբնադրյուրների և գիտական գրականության հիմամբ: Իբրև սկզբնադրյուրներ օգտագործվել են արխիվային նյութեր, հուշագրություններ, ազգագրական և վիճակագրական ուսումնասիրություններ, օրենսդրական փաստաթղթեր, հրամանագրեր, պաշտոնական ելույթներ, որոնց բովանդակային վերլուծությունը թույլ է տվել լուս սփոթել ինչպես պատմական, այնպես էլ արդի հիմնախնդիրների վրա:

Ուսական կայսրության տիրապետության շրջանում ռազախ հասարակության մասին կարևոր տեղեկույթ պարունակող սկզբնադրյուրների շարքում հարկ է ընդգծել Է. Ս. Վոլֆսոնի, Ա. Ի. Դմիտրիևա-Մամոնովայի, Ն. Վ. Տոլչինինովի, Վ. Ն. Վիտևսկու, Ա. Ի. Լսշինի, Ա. Ն. Խարուգինի, Լ.Մ. Մեյերի և Վ. Ն. Բարտոլդի գեկույցները<sup>17</sup>: Նշանակած

<sup>16</sup> Փորձագիտական հարցախույզի հարցերին ծանոթանալու համար տե՛ս, Հավելված 4, Էջ 158:

<sup>17</sup> **Вульфсон Э. С.**, Киргизы. Составила Э. С. Вульфсон. Природа и люди России. Общедоступные книжки под редакцией А. А. Ивановского, Москва: Издание книжного магазина торгового дома С. Курнин и К°, 1901. Путеводитель по Туркестану и Средне-Азиатской железной дороге : С ист. очерком сооружения и эксплуатации Закасп. воен. ж. д. и очерком сооружения Оренбург-Ташкент. ж. д. / Под ред. Дмитриева-Мамонова А.И.; Ист. очерк сооружения и эксплуатации Закасп. воен. ж. д. сост. подполк. В.Н. Антипиным под ред. ген.-лейт. Н.Н. Левашева. - Санкт-Петербург : тип. Исидора Гольдберга, 1903. **Турчининовъ Н. В.**, Население Азиатской России. Статистические Очерки, ред. И. И. Тхоржевский, Азиатская Россия, Люди и Порядки За Уралом: Изздание Переселеческого управления главного управления землеустройства и земледелия, том 1., Санкт Петербург, 1914. **Харузин А. Н.**, Степные очерки (Киргизская Букеевская орда): страницы из записной книги,

շարքը հիմնականում Կենտրոնական Ասիա գործուղված հետազոտողներ և քաղաքական-ռազմական գործիչներ էին, որոնց հանձնարարված էր տեղում ուսումնասիրել և գրի առնել տափաստանի ժողովուրդների մշակույթը, սովորութեաները, ներհանրութենական հարաբերությունները և այլն: Այդ ուսումնասիրությունները կարևոր էին տարածաշրջանի կառավարումը կազմակերպելու համար:

Ղազախական հասարակության մասին կարևոր առաջնային տեղեկույթ են պարունակում նաև ղազախ մտավորականների աշխատությունները: Նրանց շարքում հատկապես աչքի էին ընկնում Ա. Կունանբաևը, Ի. Ալտնսարինը, Շ. Ուալիխանովը և այլք: Ա. Կունանբաևի «Ղարա սյոզ (Սև խոսք)» պոեմը պատկանում է գրական ողբի ժանրին և պարունակում է կարևոր պատմական տեղեկույթ ղազախների աշխարհաճանաչման մասին<sup>18</sup>:

Ալտնսարինի աշխատանքները կարևոր տեղեկություն են տրամադրում ցարական քաղաքականության, ղազախներին և կրթական համակարգի կերպափոխությունների մասին<sup>19</sup>: Ղազախների քոչվորական կենսամշակույթի, կրոնական պատկերացումների, ոուսների և տարածաշրջանի ռազմատենչ ցեղերի հետ փոխհարաբերությունների մասին կարևոր տեղեկույթ են պարունակում հատկապես ղազախ ազգագրագետ, պատմաբան, ռազմական գործիչ Չոկան Ուալիխանովի աշխատությունները<sup>20</sup>:

Օգտագործված սկզբնաղբյուրների մյուս խոմքը վերաբերում է մեր ուսումնասիրության հիմնական խնդրին՝ խորհրդային և հատկապես հետխորհրդային Ղազախստանի ազգապետականաշխնությանը: Այս շրջանի սկզբնաղբյուրները հիմնականում

А.Н. Харузин, М.: Типография А. А. Левенсон, 1888. **Ильминский, Н. И.**, Воспоминания об И. А. Алтынсарине: Письма и бумаги И. А. Алтынсарина, Н. Ильминский, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1891. **Левшина А. И.**, Об имени киргиз-кай-сацкого народа и его отличии от подлинных, или диких киргизов, Московский вестник. 1827. **Левшин А. И.**, Описание Киргиз-Казачьих, или Киргиз-Кайсацких орд и степей, СПб, 1823 , под общей ред. академика М.К. Козыбаева, Алматы: Санат, 1996. **Мейер Л. М.**, Киргизская степь Оренбургского ведомства / Сост. Ген. штаба подполк. Л. Мейер. - Санкт-Петербург : тип. Э. Веймара и Ф. Персона, 1865. **Бартольд В. В.** Отчёт о поездке в Среднюю Азию с научною целью 1893 – 1894 гг. СПб., Типография Императорской Академии наук, 1897. **Витевский В. Н.**, И. И. Неплюев и Оренбургский край в прежнем его составе до 1758 г., т. 3, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1897.

<sup>18</sup> **Күнанбаев А.** Избранное, пер. К. Липскеров [и др.]. Москва: Государственное издательство художественной литературы, 1945. Ст’яնալы Құнанбайұлы А., Алматы, «MELOMAN Publishing», 2016.

<sup>19</sup> Ст’яն, **Ильминский, Н. И.**, Воспоминания об И. А. Алтынсарине: Письма и бумаги И. А. Алтынсарина, Н. Ильминский, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1891.

<sup>20</sup> **Валиханов Ч.**, Исторические предания о Батырах XVIII века, Предания Большой киргиз-кайсацкой орды, Абылай хан, Собрание сочинений в пяти томах, т. 2, Алма-Ата, Академия наук Казахской ССР, 1983, с. 136 – 276; **Валиханов Ч.**, О мусульманстве в Степи в. Т. 4, Собр. соч. Алма-Ата, 1985, с. 63 – 122

պաշտոնական գեկույցների, վիճակագրական տվյալների, ելույթների, օրենսդրական և այլ փաստաթղթերի տեսքով են:

Հետխորհրդային Ղազախստանի մասին կարևոր (բայց նաև սուբյեկտիվ) տեղեկություն են պարունակում նախագահ Ն.Նազարբաևի ինքնակենսագրական-հուշագրական աշխատությունները: Քաղաքական առանցքային գործըթնացների և որոշումների մշակման, մեկնարկի, նպատակների և ակնկալվող արդյունքների մասին առաջնային տեղեկույթ ստանալու համար ատենախոսությունում օգտագործվել են Նազարբաևի հեղինակած աշխատանքներից մի քանիսը՝ «Ղազախստանյան ուղի», «Հետարյունաբերական հասարակություն դառնալու ռազմավարությունը և քաղաքակրթությունների համագործակցությունը», «Եվրասիայի սրտում», «Ճգնաժամային տասնամյակ», «Հասարակության կերպափոխման եւ Եվրասիական քաղաքակրթության վերածննդի ռազմավարությունը», «21-րդ դարի շեմին», և «Անկախության ռազմավարություն»<sup>21</sup>:

Հետխորհրդային կարևոր տեղաշարժերի մասին սկզբնադրյուր են ծառայել նաև 1993 և 1995 թվականների սահմանադրությունները<sup>22</sup> և նախագահ Նազարբաևի՝ ժողովրդին հղված տարբեր ելույթ-ուղերձները: Իբրև սկզբնադրյուր՝ վերլուծվել են նաև ապագայատեսական «Ղազախստան 2030» և «Ղազախստան 2050» երկրի արդիականացման պետական ծրագրերը: Այս փաստաթղթերն ըստ էության հետխորհրդային ազգաշինական հարացույցի ուրվագծերն են՝ առաջադրված քարիզմատիկ առաջնորդի կողմից<sup>23</sup>: Հույժ կարևորություն ունեն վիճակագրական տվյալները, որոնք որոշակի պարբերությամբ հրատարակվում են Ղազախստանի կառավարության կողմից:

<sup>21</sup> **Նազարբաև Ն.**, Ղազախստանյան Ուղի, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2008. **Назарбаев Н.**, В Сердце Евразии, 2-е издание, Алматы: Атамұра, 2008. **Назарбаев Н.**, Стратегия становления постиндустриального общества и партнерство цивилизаций, Москва: Экономика, 2008. **Назарбаев Н.**, Критическое десятилетие, Алматы: Атамұра, 2003. **Назарбаев Н.**, Стратегия Независимости, Алматы : Атамұра, 2003. **Назарбаев Н.**, На пороге XXI века, Алматы: Атамұра, 2003.

<sup>22</sup> **Конституция Республики Казахстан – 1993. Конституция Республики Казахстан – 1995.**

<sup>23</sup> **Назарбаев Н. А.**, Послание Президента Республики Казахстан народу Казахстана "Казахстан-2030: Процветание, безопасность и улучшение благосостояния всех казахстанцев" (10 октября 1997 года). Официальный Сайт Президента Республики Казахстан, URL: [http://www.akorda.kz/kz/republic\\_of\\_kazakhstan/kazakhstan](http://www.akorda.kz/kz/republic_of_kazakhstan/kazakhstan) (10.03.2014). **Назарбаев Н. А.**, Стратегия «Казахстан-2050», Новый политический курс состоявшегося государства, Послание Президента Республики Казахстан - Лидера Нации Н. А. Назарбаева Народу Казахстана, Официальный Сайт Президента Республики Казахстан URL: [http://www.akorda.kz/kz/republic\\_of\\_kazakhstan/kazakhstan](http://www.akorda.kz/kz/republic_of_kazakhstan/kazakhstan) (09.04.2015)

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ որպես Երկրորդային սկզբնաղբյուր են ծառայել գիտական տարբեր հետազոտություններ՝ գրքեր, հոդվածներ և վերլուծություններ:

Ուսումնասիրվող հիմնախնդիրը հղացականացնելու նպատակով օգտագործվել են տեսաբաններ Ա. Թոյնբիի, Է. Սմիթի, Բ. Անդերսոնի, Ու. Նորմանի, Է. Հոբսբաումի, Ս. Հանթինգթոնի, Էդ. Սայիդի, Լ. Ն. Գումիլյովի, Յ. Մ. Լուտմանի և այլոց տեսական մոտեցումներն ու ըմբռնումները<sup>24</sup>:

Հետխորհրդային Ղազախստանի ազգային ինքնության և պատմական մտքի փոխազդեցությունները հասկանալու համար կարևոր են խորհրդային հետազոտողներ Ս.Դ. Ասֆենդիարովի, Ե. Կ. Բեկմախանովի, Ա. Ի. Պանկրատովայի, Մ. Պ. Կիմի, Մ. Ա. Աբդիկալիկովայի, Վ. Յ. Բասինի և Վ.Վ. Տուրտայի, Ն. Բ. Ախմետովայի, Ն. Գ. Ապառ-լովայի պատմագրական բնույթի աշխատանքները<sup>25</sup>: Պատմական նույն իրողությունների մասին սկսեցին այլ շեշտադրումներով խոսել արդեն հետխորհրդային ղազախ հետազոտողները, որոնք պատմությունը ուսումնասիրում են ազգային և պետականության գաղափարների լույսի ներքո: Այս առումով աշխատանքներ կատարեցին Ս. Կ. Իգիբաևը, Ա. Լ. Աբդակիմովան, Ժ. Բ. Աբիլխոժինը<sup>26</sup>: Այս նույն տրամաբանությամբ աչքի է ընկնում նաև ղազախ պատմագետներ Կ. Մ. Բայպակովի, Բ. Ե.

<sup>24</sup> **Arnold J. Toynbee**, A Study of History: Volume I: Abridgement of Volumes I-VI, ed., D. C. Somervell, London: Oxford University Press, 1987. **Smith A.**, Ethno-Symbolism and Nationalism: A Cultural Approach, London, New York: Routledge, 2009. **Anderson B.**, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London: Verso Press, 2006. **Hobsbawm E.**, The Invention of Tradition. Cambridge: Cambridge University Press, 1992. **Huntington S.**, The Clash of Civilizations and the Remaking of Order. New York: Simon and Shuster, 1996. **Гумилев Л. Н.** Ритмы Евразии. Эпохи и цивилизации / [предисл. С. Б. Лаврова]. – Москва : Прогресс. Фирма «Прогресс-Пангея» : Центр экол. просвещения и развития «ЭкоПрос», 1993. **Лотман Ю. М.**, Семиосфера, Санкт-Петербург: «Искусство-СПб», 2000. **Said E.**, Orientalism, New York: Vintage Books, 1979. **Norman W.**, Negotiating Nationalism: Nation-building, Federalism, and Secession in the Multinational State, New York: Oxford Univ. Press, 2006.

<sup>25</sup> Асфендиаров С. Д., История Казахстана (с древнейших времен), т. 1., Алма-Ата; М.: Казах. краев. изд-во, 1935. Абыкаликова М. А. това А., ред. История Казахской ССР, Алма-Ата, изд. Казфана, 1943. Ким М.П. Аграрный вопрос и классовая борьба в Казахстане в период Великой Октябрьской социал истической революции. – Москва: Госполитиздат, 1945. Панкратова А.М. Основные вопросы истории Казахской ССР (К выходу в свет книги «История Казахской ССР с древнейших времён до наших дней») // Большевик Казахстана. 1943. № 10. Бекмаханов Е., Казахстан 20-40 годы XIX века: 20-40 годы XIX века, под ред. Жиенгалиев Н. Б., Алма-Ата, 1992. Басин В. Я., Турта В. В., Некоторые вопросы советской историографии присоединения Средней Азии и Казахстана к России, Известия АН СССР, 1971. Аполлова Н.Г., Присоединение Казахстана к России в 30-х годах XVIII века. -Алма-Ата: Изд-во АН КазССР, 1948. Ахмедова Н. Б. Советский Казахстан за 40 лет (Расцвет экономики и культуры Казахстана за годы Советской власти), Алматы, 1961.

<sup>26</sup> Абдакимов А. Л., История Казахстана (с древнейших времен до наших дней), Алматы; РИК, 1994. Айлыхожин Ж. Б. Традиционная структура Казахстана: социально-экономические аспекты функционирования и трансформации (1920-1930 гг.), Алма-Ата: Гылым, 1991. Игибаев С. К., Историография истории Казахстана, Алматы: Ассоциация вузов, 2013.

Կումեկովի և Կ. Ա. Ակիշևի խմբագրած Ղազախստանի պատմության չորսհատորյակը<sup>27</sup>: Հարկ է առանձնացնել նաև նոյն Բայպակովի, Կումեկովի և Կ. Յ. Նուրափիսի աշխատությունները ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հրատարակված «Կենտրոնական Ասիայի քաղաքակրթությունների պատմությունը» վեցհատորյակի 5-րդ և 6-րդ հատորներում<sup>28</sup>:

Օգտագործված գիտական գրականության մյուս խումբը վերաբերում է հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության ամենատարբեր ոլորտներին՝ լեզվաքաղաքականություն, կրոն, մշակույթ, էթնոքաղաքականություն, քաղաքաշինություն, արտաքին քաղաքականություն և այլն: Այս առումով աչքի են ընկնում ինչպես դազախ, այնպես էլ ռուս և արևմտյան հետազոտողները՝ Գ. Յեմելիխանովա, Մ. Օմելիչևա, Ի. Ազակիշիև, Ս. Եսենովա, Ա. Սարսամբաև, Դ. Կասիմովա, Ժ. Կունդակբաևա, Դ. Կուդայբերգենովա<sup>29</sup>: Լայնորեն կիրառվել են արևմտյան հեղինակների՝ Մ. Բրիլ Օլրուտի, Զ. Նազպարիի, Վ. Բաքիի, Ա Հոգենի, Պ. Լուտնիի, Ս. Քուսմինզափի, Ու. Ֆիրմանի հետազոտությունները<sup>30</sup>: Հատկապես ուշադրության է արժանի Բ. Դեյվի «Ղազախստան: Էթնիկություն, լեզու և իշխանություն» աշխատանքը, որտեղ հեղինակը փորձել է շատ խնդիրներին մոտենալ հետզաղութատիրության

<sup>27</sup> **Байпаков К. М., Кумеков Б. Е., Акишев К. А.**, ред. История Казахстана. В четырех томах, т. I–IV, Алматы, Атамура, 1996 – 2000.

<sup>28</sup> **Baipakov K., Kumekov B.E.**, The Kazakhs, in Adle Ch., Habib I., Baipakov, K. M, (Eds.). History of Civilizations of Central Asia, Vol. V, Development in contrast: from the sixteenth to the mid-nineteenth century, Paris: UNESCO publishing, 2003. **Nurpeis K.**, Kazakhstan, In Chahryar A., Madhavan K. Pa., Anara T., (Eds.) History of Civilizations of Central Asia, Vol. VI, Towards the Contemporary Period: from the mid-nineteenth to the end of the twentieth century, Paris: UNESCO publishing, 2006.

<sup>29</sup> **Sarsembayev A.**, Imagined communities: Kazak nationalism and Kazakification in the 1990s, Central Asian Survey, Vol. 18, No. 3, 1999. **Агакишиев И.**, Казахстан На пути к межнациональной гармонии Казахстан, под ред. Бутаков Я. А., Верхотов Д., Путь к лидерству: социально-экономические и политические реформы в Казахстане, Бослен, 2007. **Yemelianova G. M.**, Islam, National Identity and Politics in Contemporary Kazakhstan, Asian Ethnicity, Vol. 15, No. 3, 2014, pp. 286-301. **Omelicheva M. Y.**, Islam and Power Legitimation: Instrumentalisation of religion in Central Asian States, Contemporary Politics, Vol. 22, No 2. 2016, pp. 144-163. **Markus U., Kassymova D., Kundakbayeva Zh.**, Historical Dictionary of Kazakhstan. Lanham: Scarecrow Press, 2012. **Yessenova S.** Routes and Roots of Kazakh Identity: Urban Migration in Post socialist Kazakhstan, Russian Review Vol 64, No. 4, 2005, pp. 2–20. **Kudaibergenova D. T.**, “Imagining Community” in Soviet Kazakhstan. An Historical Analysis of Narrative on Nationalism in Kazakh-Soviet literature.” *Nationalities Papers: The Journal of Nationalism and Ethnicity*, Vol. 41, No. 5, 2013, pp. 839-854.

<sup>30</sup> **Olcott M. B.**, The Kazakhs, Stanford: Hoover Institute Press, 1995. **Haugen A.**, The Establishment of National Republics of Central Asia, Palgrave Macmillan UK, 2003. **Nazpariy J.**, Post-Soviet chaos: violence and dispossession in Kazakhstan, London: Pluto Press, 2002. **Luong P. J.**, The Transformation of Central Asia: States and Societies from Soviet Rule to Independence, Ithaca, NY: Cornell University Press, 2004. **Fierman W.**, Language and Education in Post-Soviet Kazakhstan: Kazakh-Medium Instruction in Urban Schools, The Russian Review, Vol. 65, No. 1, 2006, pp. 98-116. **Fierman W.** Kazakh Language and Prospects for its Role in Kazakh «Groupness», AbImperio, 2, 2005, pp. 393–423. **Buchli V.**, Astana: Materiality and The City in Alexander C., Buchli V., Humphrey C, (Eds.) Urban Life in Post-Soviet Asia, Taylor & Francis Group, 2007.

տեսության դիտանկյունից, մի բան, որ նորույթ է դազախստանյան գիտական խոսություն՝<sup>31</sup> Նշենք, որ հայկական միջավայրում հետխորհրդային Կենտրոնական Ասիայի հասարակությունների մասին առկա ուսումնասիրությունները խիստ սահմանափակ և հատվածական են: Այդուամենայնիվ, առկա ուսումնասիրությունների շրջանում աչքի են ընկնում պատմագիտական, գրականագիտական և քաղաքագիտական բնույթի որոշ աշխատություններ՝<sup>32</sup>:

### **Հետազոտական հարցադրումներ.**

Ատենախոսության արդյունքներին հետամուտ՝ առաջադրվել են հետևյալ հետազոտական հարցադրումները.

- Ի՞նչ հանգամանքներ են ընկած Ղազախստանի՝ պետականազուրկ ցեղային միավորից դեպի անկախ պետական/ազգային կազմավորման անցման հիմքում:
- Ի՞նչ մեխանիզմներով է Ն. Նազարբաևի վարչակարգը դազախսական հասարակությանը պատրաստում ինքնանորագման:
- Ի՞նչ առնչություններ կան պատմության ընկալման, լեզվական, կրթական, էթնիկ և քաղաքաշինական նորացման նախաձեռնումների և դազախսական քաղաքակրթական ինքնության նոր հարացույցի մշակման միջև:

<sup>31</sup> Bhavna D., Kazakhstan: ethnicity, language and power, London, New York: Routledge, 2007.

<sup>32</sup> Մինայան Ա., Թուրքիայի Քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում (1991-2007), Երևան «Լուսաբաց հրատարակչություն» 2013: Մինայան Ա., Հետխորհրդային Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Իրանի մշակութային քաղաքականության առանձնահատկությունների ու նպատակների շուրջ, Ժամանակակից Եվլասիա, Հասոր III (1), 2014, էջեր 63-74: Խաչատրյան Շ., Կերպարների զարգացման առանձնահատկությունները Մուխթար Առիեզովի «Դժվար տարիներ» վիճակում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2016, 1.5 (15), հասարակական գիտություններ, էջեր 45-49: Պետրոսյան, Ա., Թուրքմեն բանաստեղծ Մահրումկովի ֆրագիի դերը հոգևոր արժեքների պահպանման գործում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2014, 1 (1), հասարակական գիտություններ, էջեր 79-82: Խաչատրյան Շ., Մուխթար Առիեզովի ստեղծագործությունների թեմատիկ առանձնահատկությունները, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2014, 1 (1), հասարակական գիտություններ, էջեր 98-102: Խաչատրյան Շ., Մուխթար Առիեզովի «Ենիկ և Քերեր» և «Քարագյոզ» պիեսների համեմատական վերլուծություն, Մերձավոր Արևելք (XII-XIII): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. - Երևան ; ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2017: էջեր 253-261: Բաբայն Դ., Некоторые направления геополитики Китайской Народной Республики в Центральной Азии, Центральная Азия и Кавказ, N 4, 2010, с. 62-74. Բաբայն Դ., Политика КНР в регионе Северного Прикаспия, XXI век, журнал Научно-образовательного фонда «Нораванк», Ереван, N 1, 2013, с. 44-71: Սաֆարյան Ա., Առաք Ա., Կ Вопросу О Сотрудничестве Между Арменией И Казахстаном «21-й Век», № 4 (33), 2014, с. 69-79. Սաֆարյան Ա., Թյուրքականությունը՝ Զիյա Գյոքալիից հարյուր տարի անց, Արևելագիտության հարցեր, 2016, № 12, էջեր 67-79:

## **Գիտական նորույթը.**

- ա. Ատենախոսության հիմնական նորույթը Ղազախստանի հետխորհրդային ազգապետականաշխնական ինքնակայացման տիպաբանության ուսումնասիրությունն է՝ տարբեր գիտակարգերի համադրությամբ: Համադրականություն, որը հարիր է այն բազմաշերտ ու բազմավեկտոր գործընթացներին, որոնք ընթանում են այդ երկրում:
- բ. Ղազախական անցումային (տրանզիտիվ) հասարակությունը ներկայացվում է քաղաքակրթական ժամանակի երեք չափումների հատույթում՝ կարճ, միջին, երկար տևողություններ: Դրանց արդյունքները դիտարկվում են քաղաքակրթական մարտահրավերների և պատասխանների հոլովույթում:
- գ. Ղազախական ինքնակայացումը դիտարկվում է Էլիտուրզիայի (ընտրախավագիտության) լուսի ներքո. լուսաբանվում է քարիզմատիկ առաջնորդի և իր շրջապատի կառուցիկ դերակատարությունը Կենտրոնական Ասիայի էթնաքաղաքական միջավայրում, որտեղ դեռ ներունակ են քոչվորական նախակենցաղ կյանքի համակեցական արժեքները:
- դ. Բացահայտվում են ազգային ինքնակայացման ղազախական նորօրյա հարացուցի (խորհրդանշեր, կրոն, ազգամիջյան քաղաքականություն, պատմագրություն) ներքին քաղաքակրթական առնչությունները:
- ե. Սեմիոտիկ վերլուծության է ենթարկվում նոր մայրաքաղաքի իմաստանշանային տարածքը՝ հրապարակներ, տարբեր նշանակության շինություններ, թանգարաններ, հուշարձաններ և այլն: Դրանք նպատակամիտված են ձևավորելու ղազախի (և ղազախստանցու)՝ իբրև մարդու և քաղաքացու նոր կերպարը: Այս առումով զուգահեռներ են անցկացվում Սանկտ Պետերբուրգի, Անկարայի, Բրազիլիայի և Երևանի հետ:
- զ. Ի վերջո, ատենախոսությունը Ղազախստանի օրինակով հետխորհրդային Կենտրոնական Ասիայում ընթացող տարասեռ ընկերային տեղաշարժերի առաջին համակարգված ուսումնասիրությունն է հայկական միջավայրում:

## **Կիրառելության հնարավորությունները.**

Ատենախոսության հիմնադրույթները հնարավորություն կտան նոր հայացքով դիտարկելու հետխորհրդային պատմական տեղաշարժերը Կենտրոնական Ասիայում: Բացահայտելու դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները ոչ միայն

տարածաշրջանային, այլ նաև գլոբալ պատմության հետնախորքում: Այն հետնախորքում, որը նվիրված է անցումային հասարակություններին իրենց քաղաքակրթական, քաղաքական, մշակութային, կրոնական, ինքնութենական կայացման հոլովույթում:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ակադեմիական հետազոտություններում՝ հընթացս պատմական և քաղաքագիտական, քաղաքակրթական և մշակութաբանական թեմաների արձարձման: Դրանք կարող են օգտագործվել բուհական դասընթացների, ծրագրերի, ավարտական աշխատանքների և համապատասխան ձեռնարկների մշակման նպատակով:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ԿԵՐԵՒՑ ԵՎ ԺԱՆԻԲԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՆԱԶԱՐԲԱԵՎ

Ղազախների պատմական ուղին ներկայացնում է շարունակությունների և ընդհատումների մի երկար շղթա, որի ծիրում ուրվագծվում են հետևյալ տիպաբանական շրջափուլերը. ա. թյուրքական էթնիկ միասնությունից դեպի Ղազախական խանություն (ազգային ինքնագիտակցության ծիլերը), բ. ղազախները Ռուսական կայսրության կազմում, գ. Ղազախստանը ԽՍՀՄ կազմում, դ. ինքնիշխան Ղազախստանը: Որոշել ենք ինց այս տրամաբանությամբ էլ կառուցել մեր պատմական ակնարկը:

#### 1.1. Թյուրքական էթնիկ միասնությունից դեպի Ղազախական խանություն (ազգային ինքնագիտակցության ծիլերը)

Թյուրքական էթնոսն սկսել է համախմբվել Կենտրոնական Ասիայի տարածքում մ.թ. 4-րդ դարից: Այն տարասեռ էր, սակայն բոլորին միավորում էին միևնույն լեզուն, կրոնական հավատալիքները, ընդհանուր նախնիները և ավանդությունները: Ապրում էին քոչվորական նախակենցաղ կյանքով. բուծում էին ոչխար, այծ, ձի, ուղտ, և արոտավայրերի համար էլ հաճախ արյունալի ընդհարումներ էին ունենում: Զկար հայրենի տարածքի և սեփական ինքնության գիտակցություն: Սակայն արտաքին վտանգի դիմաց համախմբվելու անհրաժեշտությունը նրանց ստիպեց առժամանակ լոեցնել հակասությունները, և ծնվեց Թյուրքական կազանաթը (556-603 թթ.): Կարճ կյանք ունեցավ և շուտով բաժանվեց Արևելյան և Արևմտյան հատվածների: Պատմությանն ավելի հայտնի է Արևմտյանը, որը պաշտոնապես անվանվում էր Խազարական կազանաթ (650-960 թթ.): Այն ընդգրկում էր Կասպից ծովի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանները:

7-րդ դարում Կենտրոնական Ասիան ընկավ արաբների տիրապետության տակ: Նրանք բերեցին իսլամը, կենտրոնածիգ կառավարման համակարգը, հստակ կազմակերպված տնտեսական կյանքը, հիմնեցին դպրոցներ, ներմուծեցին գիտություններ: Այդ ամենը նախանշեց կարևոր տեղաշարժեր կյանքի տարբեր բնագավառներում: Սակայն ասվածը վերաբերում էր առավելաբար վերնախավի մի

փոքր հատվածին. հասարակության մեծ մասը կրկին ապրում էր նախակենցաղ կյանքով:

11-րդ դարի սկզբին արաբական տիրապետությունը ի չիք դարձավ: Արաբները հեռացան, և Կենտրոնական Ասիայի տարածքում ձևավորվեց Երկու հզոր պետական կազմավորում. արևելքում ղարախանյաններն էին, հարավ-արևմուտքում՝ օղուզները: Միևնույն ժամանակ արդի Ղազախստանի հյուսիսարևելյան տարածքներում սկսեց ձևավորվել մի նոր ցեղային միավորում, որի էթնիկ առանցքը կազմում էին ղփչաղները՝ արդի ղազախների հեռավոր նախնիները<sup>33</sup>:

Գրավոր սկզբնաղբյուրներում հանդիպում ենք «ղպչաղ» "Kipchak" ցեղանունը, որը տարբեր կերպ է ներկայացվում. ոուսերենում՝ *половцы*, լատիներենի լեհական տարբերակում՝ *Plauci, Plawci*, չեխերենում՝ *Plavci*, լատիներենում՝ *Pallidi, Flavi*, գերմաներենում՝ *Valwen, Falwen, Falones*, հայերենում՝ *խարդէշքն* (*xartēšk'n* < *xartēš, xarteas*)<sup>34</sup>: Լինելով տարբեր լեզուների համաձուլվածք՝ ղփչաղներնը դարձավ միջէթնիկ փոխհարաբերությունների յուրահատուկ միջոց<sup>35</sup>:

Չդիմանալով ղարախանյանների և ղփչաղների մրցակցությանը՝ օղուզները սելջուկ ցեղի առաջնորդությամբ 11-րդ դարի կեսերին շարժվեցին դեպի հարավ-արևմուտք՝ գրավելով Իրանը, Այրկովկասը, Փոքր Ասիայի մեծ մասը՝ հիմք դնելով ապագա Օսմանյան տերությանը:

Թվում էր, թե այս գործընթացը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծեր ղազախների միավորման և միացյալ ազգության ձևավորման համար: Սակայն պատմությունն ընթացավ այլ ճանապարհով. 13-րդ դարում սկսվեցին մոնղոլական արշավանքները, և Կենտրոնական Ասիան դարձավ մոնղոլների ծավալապաշտության առաջին գոհը: Նրանց հաջորդեցին Թամերլանի արյունալի արշավանքները, որի մահվամբ նրա աշխարհակալ տերությունը բռնեց քայլայման ուղին: Այդ նույն ուղիով էր ընթանում նաև Ուկե հորդան:

<sup>33</sup> Толостова С.П. Жданко, Т.А. Абрамзон С.М, Кисляков, Н.А. Народы Средней Азии и Казахстана, Москва, Академия Наук СССР, Институт Этнографии Имени Н.Н. Миклухо-Маклая, 1963, стр. 324.

<sup>34</sup> Մանրամասնությունների համար տե՛ս, Golden P. B., Qırčaq, in Demir N., Karakoç B., Menz A. (Eds.) Turcology and linguistics. Éva Ágnes Csató Festschrift. Ankara: Hacettepe University Publications, pp. 183-184.

<sup>35</sup> Székely, E. Schütz, Re-Armenisation And Lexicón From Armeno-Kipchak Back to Armenian, Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae, Vol. 19, No. 1, 1966, pp. 99-115. Golden P.B., Religion among the Qırčaqas of Medieval Eurasia, Central Asiatic Journal, Vol. 42, No. 2, 1998, pp. 180-237.

15-րդ դարի 20-ականներից իրադրությունը կրկին խաղաղվեց, և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ղազախների վերցելյա ընդհանրության համախմբման համար: Այս նոր շարժումը ղեկավարեցին Զոչիի խանության երկու հայտնի խաներ Կերեյն ու Ժանիբեկը, որոնք իրենց համարում էին «Օզբեկ ղազախներ (*ozbek-kazakhs*)», այն է՝ «ազատ, անկախ, արկածախնդիր և այլն»<sup>36</sup>:

Համաձայն պատմական ավանդույթի՝ այս խաները միավորեցին ղփչաղ ղազախներին Ուզբեկական խանության ռեմ մղած պայքարում, հաղթեցին և սահմանագծեցին նրանց բնակության սահմանները: Ընդունված է կարծել, որ այն կազմում է արդի Ղազախստանի տարածքի կորիզը: Սակայն այս միավորումը տակավին հեռու էր բառիս բուն իմաստով պետական միավոր լինելուց: Այն վերցեղային էթնիկ կազմավորում էր, որի հիմքում հստակ ուրվագծվում էին տոհմացեղային բարքերը, կառուցները և ընկերային հարաբերությունները: Կերեյի և Ժանիբեկի ջանքերով ստեղծվեց ղազախների կառավարման (թեպետ թույլ) ուղղագիծը. բաժանվում էին երեք ցեղային միությունների կամ հորդաների (ժուգեր). Մեծ հորդա (*Yurygacyz*)՝ բաղկացած 12 ցեղից, Միջին հորդա (*Ortma jazyz*)՝ 5 ցեղից և Փոքր հորդա (*Kisasi jazyz*)՝ 3 ցեղից<sup>37</sup>: Հորդաները գտնվում էին դաշնակցային հարաբերությունների մեջ՝ ամրագրված Ղուրանով, հավատարմության երդմամբ և ծիսակարգով: Ասվածին հավելենք, որ ցեղերն իրենց հերթին բաժանվում էին տոհմական-կլանային միավորումների, որոնք անվանվում էին թայիկներ: Այս համակարգով էր կարգավորված հասարակական աստիճանակարգը:

Ղազախական ցեղերի՝ մեկ տարածքում համախմբումը և ժուգերի ստեղծումը կարելի էր համարել ելակետ էթնիկ ինքնագիտակցության ծլարձակման համար: Եվ հատկանշական է, որ մինչև 19-րդ դարի վերջը ղազախ եզրույթի բովանդակությունն առավելաբար առնչվում էր տոհմացեղային կամ ներհամայնքային հարաբերություններին: Այլապես՝ ղազախական միասնությունը կարելի է տիպաբանել իբրև «[...] տա-

<sup>36</sup> **Golden P.B.**, Central Asia in World History, Նշվ աշխ, էջեր 103-105. Տե՛ս նաև, **Baipakov K., Kumekov B.E.,** The Kazakhs, Նշվ. աշխ. էջեր 90-91: **Абдакимов А. Л.**, Նշվ. աշխ. էջեր 51-53. **Svanberg I.**, Kazakhstan and the Kazakhs, In The Nationalities Question in the post-Soviet states, Graham Smith (Ed.), second edition, London and New York: Longman, 1996, p. 318-319. **Сафарян А. В., Саакян Л. С.** Армяно-кыпчакские рукописи - источники изучения истории тюркских языков, Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи. 2016, с. 180-191.

<sup>37</sup> **Baipakov K., Kumekov B.E.**, Նշվ. աշխ., էջ 91:

րածաքաղաքական մի ընդհանրություն, որը հասարակական ինքնակա մակրոմիավոր էր»<sup>38</sup>:

Սակայն տարբեր ցեղային միավորումների հակասական շահերի հետևանքով ղազախական խանությունը չկարողացավ պատշաճորեն պատասխանել արտաքին մարտահրավերներին: Քոչվորական կենսաձևի պայմաններում կանոնավոր զինված ուժերի հնարավորությունները նվազագույնի էին հասցված: Նման պայմաններում կիրառվում էին ինքնապաշտապանության չհամաձայնեցված ռազմավարություններ:

Արդեն 18-րդ դարում ջունգարական ցեղերի ներխուժման սպառնալիքի պատճառով ղազախական տափաստանում ստեղծվել էր ռազմաքաղաքական խոր ճգնաժամ<sup>39</sup>: Մինչդեռ մարտահրավերներին պատասխանելու համար անհրաժեշտ էին հարիր ծրագրեր և գործողություններ, իսկ դրանք բացակայում էին: Ի հետևանս՝ ղազախները կորցրին իրենց ինքնիշխանությունը:

Դա 18-րդ դարի 20-ականներն էին: Զևսվորվել էր մի չափազանց անբարենպաստ աշխարհաքաղաքական պատկեր. կենտրոնում քոչվորական հարաբերություններով ագուցված ղազախական կլանային կառույցն էր, մի կողմում՝ հզոր Ռուսական կայսրությունը, մյուս կողմում՝ Ջունգարական, Կալմիկական և կենտրոնասիական ռազմատենչ խանությունները:

Չունենալով կանոնավոր բանակ և ռազմավարական փորձ՝ ղազախական երեք կլանային միությունների խաները որոշում կայսցրին հայցելու Ռուսական կայսրության օգնությունը՝ պաշտպանվելու թշնամիների (Ջունգարներ, Կալմիկներ) հարձակումներից: Ղազախների, դրդաների և ուզբեկների երկարակու պայքարը դեղի ռազմակենչ ցեղային միությունների դեմ իրենց արդացոլումն են սպացել էպիկական ասքում՝ «Ալպամիշ կամ Մանաս»:

Ռուսական գերիշխանության հաստատումը ղազախաբնակ տարածքների նկատմամբ տեղի ունեցավ մի քանի շրջափուլերով: Կայսրությանը հաջողվեց դյուրությամբ հավատարմության երդումներ կորցել բոլոր երեք ցեղային միություններից. 1731 թվականին Փոքր հորդան կալմիկներից պաշտպանվելու նպատակով անցավ Ռուսաստանի հովանավորության տակ: Նույն գործարքը ռուսական կողմը 1740 և 1742

<sup>38</sup> Бромлей Ю. В., Очерки теории этноса, Москва: Изд. Наука, 1983, с. 62.

<sup>39</sup> Мусеев В. А. Джунгарское ханство и казахи XVII-XVIII вв, Алма-Ата, "Гылым", 1991, с. 68.

թվականներին կնքեց Միջին և Մեծ հորդաների հետ: Ընդունին, Մեծ հորդան պահպանեց իր ինքնիշխանության ինչ-ինչ տարրեր մինչև 1873 թվականը: Ռուսական կողմը վերացրեց դրանք, երբ հաջորդաբար ռազմակալեց Տաշքենդի, Սամարդանդի ու Բուխարայի, իսկ ապա Կոկանդի խանությունները<sup>40</sup>:

## 1.2. Ղազախները Ռուսական կայսրության կազմում

Ինչպես նշվեց, 1742 թվականից սկսյալ՝ ղազախները գտնվում էին ռուսական գերակայության ներքո: Իրավիճակ, որն ուղեկցվում էր ղազախների տոհմացեղային իշխանական կառուցների աստիճանական լուծարմամբ: 1822 թվականին իրապարակվեց կայսերական իրովարտակը «Ռուսական Թուրքեստանի մասին»՝ հեղինակված Ն. Սպերանսկու կողմից: Աստ հաստատված էր, որ տեղացիները նախակենցաղ են և կարիք ունեն իմուտ և կայուն կառավարման: Առաջնորդվելով այս մոտեցմամբ՝ կայսրությունն սկսեց ռազմակալել նոր տարածքներ. արդեն 1845-1847 թվականներին կառուցվել էին մի շարք ամրություններ (ֆորտեր)՝ Նովոպետրովսկի, Տուգայի, Օրենբուրգի, Ուրալսկի, Կապալսկի և այլն:

Ի պատասխան՝ 1837-1847 թվականներին Ղազախական տափաստանում բռնկվեց հզոր հակառական ազատագրական ապստամբություն Կենեսարի Կասիմ Ուլյայի առաջնորդությամբ: Դրան հարել էին ղազախ վերնախավի և մտավորականության շատ ներկայացուցիչներ: Ղազախական պատմագրությունում այս շարժմումը հաճախ նկարագրվում է իբրև ազգային-ազատագրական<sup>41</sup>: Ցարիզմը դաժան հաշվեհարդար տեսավ ապստամբության նկատմամբ: Այս մասին տեղեկանում ենք նաև Է. Վոլֆսոնի «Ղրղզներ» աշխատությունից.

«Քոչվորական ժողովուրդների շրջանում մենք [ռուսներս- Ն.Մ.] հիմնականում մրահիոզված էինք ղրղզներով [ղազախներ- Ն.Մ.]: Եվ դա զարմանալի չէ. նրանք քանակությամբ շատ էին, և նրանց հարձակումները իիզախ էին: Չնայած ծանր կորուսպներին՝ կայսրությունը կարողացավ հաղթանակած դուրս գալ՝ մեկընդմիշը կուրրելով և թուլացնելով քոչվորների ուժը»<sup>42</sup>:

<sup>40</sup> Bhavna D., Kazakhstan, p. 35.

<sup>41</sup> Артықбаев Ж. О., Казахское Общество в XIX веке: традиции и инновации, Караганда: Полиграфия, 1993, стр. 276-284.

<sup>42</sup> Вульфсон Э. С., նշվ. աշխ. էջ 3:

Հաջորդ խոշոր ընդվզումը տեղի ունեցավ շուրջ ութսուն տարի անց. խթանը Առաջին աշխարհամարտն էր: Կենտրոնական Ասիայի ժողովուրդները, այդ թվում և՝ ղազախները, կայսերական բանակ էին զորակոչվել: 390 հազար տեղացիների զորակոչելու հրամանագիր ստորագրվեց<sup>43</sup>: Եվ 1916 թվականին պայթեց ղազախական ապստամբությունը Երկրի հյուսիսային շրջաններում, որոնք, հիշենք, սլավոնական ժողովուրդների ամենաստվար զանգվածն ունեին: Այն հանդիպեց ոռւսական բանակի դաժան հակահարվածին և ճնշվեց:

Խոսելով այս և այլ ապստամբությունների մասին՝ կարող ենք հատկանշել, որ դրանցում, ըստ Էռլթյան, գերակայում էր ավանդական քոչվորական կենսակերպը պահպանելու միտումը: Ազգային ինքնազիտակցությունը զանգվածների շրջանում տակավին թույլ էր:

Սակայն կոշտ ուազմակալման քաղաքականությանը զուգընթաց կայսրությունը փորձարկում էր նաև իշխանության փափուկ դարբերակը: Ասվածի լավագույն օրինակը Ստորին Վոլգա և Ուրալ միջագետքն ընդգրկող Բուկեյան օրդայի վերջին խանությունն էր: Խան Զանգիրն (1801-1845 թթ) իր լիազորությունները ստացել էր 1824 թվականին Ալեքսանդր I-ից: Խանը փայլուն կրթություն էր ստացել, տիրապետում էր ինչպես ավանդական, այնպես էլ ադմինիստրատիվ հանրային կառավարման հմտությունների, ուներ ոռւսական բանակի գեներալի կոչում: Քաջատեղյակ էր ղազախական ավանդույթներին և իսլամի արժեհամակարգին: Ոռւսական գենքի օգնությամբ Զանգիրին հաջողվեց լրեցնել իր բոլոր ընդդիմադիրներին և հաստատել ներհանրութային համաձայնություն<sup>44</sup>:

Զանգիրը փորձեց համադրել իսլամն ու ոռւսական տիրապետությունը: Կառուցեց մզկիթներ, նշանակեց իմամներ, վերակազմեց կրոնական համայնքները: Բացեց դպրոցներ, որտեղ արաբերենի, իսլամական իմաստնության և կանոնի կողքին ամենայն լրջությամբ դասավանդվում էին աշխարհիկ առարկաներ: Նպատակն էր, որ շրջանավարտը պատրաստ լիներ կրթությունը շարունակելու ոռւսական գիմնազիայում: Ավելի հեռուն նայելով՝ խանը 1840 թվականին Բուկեյան Օրդայում բացեց առաջին

<sup>43</sup> Gleason G., The Central Asian States: Discovering Independence, Westview Press, 1997, p. 53

<sup>44</sup> Қозыбаев М. К., под ред. Қазақстандағы 1836-1838 жылдардағы халық-азаттық козгалысы (Күжаттар, материалдар, мақалалар), Қазақстан Республикасының Ғылым Академиясы, Алматы; Ғалым, 1992 , б. 22-23.

Կենտրոնական դպրոցները (ռուս-ղազախական), որոնք հայտնի էին նաև Զանգիրյան դպրոցներ անվամբ: Միջոցները տրամադրում էր անձամբ: Այդ դպրոցների առաջադեմ շրջանավարտները նրա միջոցներով շարունակում էին կրթությունը Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի, Կազանի և Օրենբուրգի համալսարաններում<sup>45</sup>:

Զանգիրի գործունեության համաձիրը ավելի լայն էր. նրան է վերագրվում ղազախական միջավայրում արևմտյան տիպի հանրային ծառայությունների ներմուծումը՝ փոստ, թանգարան, դեղատուն, հիվանդանոց և այլն<sup>46</sup>: Այս ամենով Զանգիր խանը նպաստեց ռուսական մշակութային գերակայության հաստատմանը:

Այսուհենդերձ, կայսերական վարչակարգը դժգոհ էր ղազախների ինչպես ապստամբական, այնպես էլ մեղմ հարմարվողական հակազդումներից. Երկու դեպքում էլ նախաձեռնությունը ղազախներին էր պատկանում: Նրանց պետք էր ղազախների կրավորական ենթարկումը:

Այս ամենից դասեր քաղելով՝ վարչակարգը սկսեց ուշադրություն դարձնել նոր տարածքների յուրացման տնտեսական և քաղաքական միջոցներին: Առանձնակի կարևորություն ուներ Արայան նավահանգստի կառուցումը, որից հետո Օրենբուրգի և ղազախական տափաստանի միջև սկսվեց կանոնավոր առևտրաշրջանառություն<sup>47</sup>: Շնորհիվ նոր ենթակառուցվածքների ներդրման՝ 19-րդ դարի կեսերին Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի և մասնավորապես Օրենբուրգի, Նիժնի Նովգորոդի, Իրբիտի, Խիվայի, Բուխարայի և Տաշքենդի միջև սկսվեց ակտիվ ապրանքաշրջանառություն: Ռուսաստանից Կենտրոնական Ասիա արտահանվող հիմնական ապրանքներն էին երկաթը, պղինձը, բամբակյա, բրոյա գործվածքները, կաշին: Միայն ծխախոտն ու շաքարավազը կազմում էին Կենտրոնական Ասիա ներկրվող ռուսական ապրանքների 2/3-ը: Իսկ Կենտրոնական Ասիայից (հիմնականում ղազախական տափաստանից) Ռուսաստան էին արտահանվում գյուղատնտեսական ապրանքներ՝ բրդի հումք, բամբակ և խոշոր ու մանր եղջերավոր անասուններ<sup>48</sup>:

<sup>45</sup> Диоценбаев А., Первый казахский просвещенный правитель, Портал «National Digital History», 28 Ноября 2016. URL: Источник: <http://e-history.kz/ru/contents/view/1860> (23.09.2017)

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> Coates, W. P., Coates Z. K., Soviets in Central Asia, London: Lawrence and Wishart, 1951, p. 44.

<sup>48</sup> Նոյն տեղում, էջ 42:

Ղազախները բնակվում էին Մեծ Թուրքեստանի հյուսիսային հատվածում՝ ներառյալ ապագա մայրաքաղաք Ալմա Աթայի<sup>49</sup> և արդի Ղազախստանի հարավային տարածքները։ Ցարական քաղաքականության արդյունքում ճնշվում էին ղազախների քաղաքական ինքնիշխանության բոլոր իրական կամ հնարավոր դրսնորումները։

Սկսվեց ղազախական հողերի մասսայական բռնազավթումը։ Դա իր հերթին ուղեկցվում էր ծանր հարկային քաղաքականությամբ և մենաշնորհների հաստատմամբ։ Ռուսներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել հատկապես ձկնորսության, մսի արտահանման և անտառահատման մենաշնորհները<sup>50</sup>։ Սա գաղութային քաղաքականության ամենացայտուն դրսնորումներից էր։ Մինչդեռ կայսերական վարչակազմի քարոզությունը դա ներկայացնում էր իբրև քաղաքակրթական առաքելություն<sup>51</sup>։ Եվ ցարիզմն այստեղ միայնակ չէր. նույնը բրիտանացիները քարոզում էին Հնդկաստանում, ֆրանսացիները՝ Հյուսիսային Աֆրիկայում, հոլանդացիները՝ Հարավային Աֆրիկայում և այլն։

Սակայն խնդիրն ուներ և իր հակառակ կողմը. 1870-ականների վերջին Կրասնովոդսկ-Սամարկանդ-Տաշքենդ և Տաշքենդ-Օրենբուրգ երկաթգծերի կառուցմամբ դյուրացավ կապը մի կողմից՝ ռուսական քաղաքական-մշակութային ազդեցության ներքո գտնվող, մյուս կողմից՝ իսլամի ավանդական արժեհամակարգերով ապրող համայնքների միջև<sup>52</sup>։ Տնտեսական գործոնից զատ այս իրողությունը կարևոր նշանակություն ունեցավ նաև կրթական, մշակութային և ինքնության այլակերպումների առումներով։

Մարդահամարի ստույգ տվյալներ չկան, սակայն Ցարական Ռուսաստանի կողմից անցկացված մարդահամարից տեղեկանում նշեք, որ 1897 թ. ներկայիս Ղազախստանի

<sup>49</sup> Նշենք, որ Ալմա Աթա տեղանունը կիրառության մեջ էր խորհրդային տարիներին, և միայն 1993 թ. կառավարության որոշմամբ մայրաքաղաքը վերանվանվեց Ալմաթի։ Ուստի տվյալ տեղանունը ներկա աշխատանքում կիրառվել է ըստ այդ տրամաբանության։

<sup>50</sup> **Бекмаканов Е.**, Казахстан 20-40 годы XIX века, с. 117.

<sup>51</sup> **Said E.**, նշվ. աշխ. էջ 142.

<sup>52</sup> Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ցարական ամենաարտահայտիչ նախագծերից մեկը 750 սաժեն (cájene - երկարության չափման հին ռուսական միավոր, որը հավասար էր 3 արշինի կամ 2.134 մետրի) կամ 1600 մետր երկարությամբ Ամու Դարյա գետի երկաթգծային կամուրջի կառուցումն էր (1889-1901): Այն Ռուսական կայսրության ամենաերկար կամուրջն էր, որն անգամ գերազանցում էր Վոլգայի Ալեքսանդրյան երկաթգծային կամուրջի երկարությանը (674, 125 սաժեն): Կամուրջի կառուցումը կայսրության վրա նստեց 4 միլիոն 853 հազար ռուսական ոուլիի, որն այդ ժամանակների համար ահոելի գումար էր: **С्�т'я, Дмитриева-Мамонова А. И.,** նշվ. աշխ. էջեր 296-298:

տարածքներում ապրում էին ավելի քան երեք միլիոն դազախներ<sup>53</sup>: Առաջընթացն ակներև էր, մանավանդ եթե նկատի ունենանք, որ 18-րդ դարում դազախները կանգնած էին ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև: Թեպետ ակներև առաջընթացին, դազախների սոցիալական ցուցիչն էլի մնում էր ցածր. նրանց մեծամասնությունը շարունակում էր ապրել քոչվորական կենցաղով՝ թույլ ազգային ինքնագիտակցությամբ:

1870-1880-ականներից սկսվեց Ղազախստանի տնտեսական յուրացման նոր շրջափուլ: Դա կապված էր բնական ռեսուրսների հայտնաբերման և արդյունահանման հետ. Սպասկ-Վուկրեսենսկ-Ռապենսկի շրջանում հայտնաբերվեցին պղնձի և ոսկու հարուստ հանքեր: Ռուսական, իսկ ապա նաև օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ) կառուցվեցին մետաղածուկան ձեռնարկություններ: Սկսեցին շահագործվել Կարագանդայի, Էկիբաստուզի քարածխի հանքատարածքները: 1890-ականների վերջերին բրիտանական հետազոտողներն սկսեցին խոսել նավթի և գազի հարուստ հանքավայրերի մասին:

Սակայն դազախներն անհաղորդ էին այս կարևոր անցուդարձերին: Լավագույն դեպքում նրանք սևագործ բանվորներ էին: Հետամուտ նորանոր շահույթների՝ Կայսրությունն սկսեց զորացնել իր էթնիկ դիկտատոր: Վարչակարգը որոշեց փոխել տափաստանի ժողովրդագրական պատկերը՝ ի հաշիվ սլավոնական զանգվածների վերաբնակեցումների: Համաձայն 1897 թվականի առաջին մարդահամարի տվյալների՝ աստ արդեն ապրում էին ոուս (772 հազար), ուկրաինացի (100 հազար) և բելառուս (62 հազար) վերաբնակյաներ՝ Ուրալի, Տուրքայի, Ակմուլիսկի, Սեմիպալատինսկի, Սամարկանդի, Սիրդարիայի, Անդրկասպյան, Սեմիրեչիեի և Ֆերգանայի շրջաններում<sup>54</sup>: Վարչապետ Պ. Ա. Ստոլիպինի հողային բարենորոգության արդյունքում այս թիվը շեշտակի աճեց, և սլավոնական տարրը 1911 թվականի մարդահամարի

<sup>53</sup> Saparbekova A., Kocourková J., Kučera T., Sweeping Ethno-demographic Changes in Kazakhstan during the 20th century: A dramatic story of mass migration waves AUC Geographica, Vol 49, No. 1, 2014, pp. 74.

<sup>54</sup> Robert A. Lewis, Richard H. Rowland, Clem, R. S., Modernization, Population Change and Nationality in Soviet Central Asia and Kazakhstan. Canadian Slavonic Papers / Revue Canadienne des Slavistes, Vol. 17, No. 2/3, Russian and Soviet Central Asia, 1975, p. 289.

տվյալներով հասել էր մոտ երկու միլիոնի: Նախատեսվում էր նրանց տրամադրել 17 միլիոն հեկտար հող<sup>55</sup>:

Այս նույն գաղութացման քաղաքականությամբ էր թելադրված Ղազախական տափաստանի նոր վարչական բաժանումը. 1867 թվականին Ալեքսանդր 2-րդի երկու իրամանագրերով Թուրքեստանի ղազախական հատվածը բաժանվեց երեք գեներալ-նահանգապետությունների՝ Թուրքեստանի (Սիրդարիայի և Սեմիրեչիեի մարզեր), Օրենբուրգի (Ուրալի և Տուրգայի մարզեր) և Արևմտյան Սիբիրի (Ակմուլա և Սեմիպալատինսկ մարզեր), որոնք կառավարվում էին ցարի կողմից նշանակված գեներալ-նահանգապետերի կողմից<sup>56</sup>:

Մեկնարկելով Մ. Վեբերի ընկերաբանությունից՝ կարելի է պնդել, որ Ղազախստանում անցում էր ապահովվում անասնապահական ավանդական պատրիմոնիայից դեպի վարչաքաղաքական պատրիմոնիայի՝ օրենքի և կառավարման բանական ուղղահայցի գերակայությամբ: Սակայն ստիպված ենք այս պարագայում նույնպես արձանագրել, որ բարենորդումը քիչ էր առնչվում ղազախների կյանքին և առօրյային: Նրանք հիմնականում շարունակում էին ապրել նախակենցաղ կյանքով:

Նորակառուց վարչական, քաղաքական և դատական ինստիտուտները գտնվում էին ցարական վերահսկողության ներքո: Եվ ղազախական նախկին ինքնավարության վերապրուկները, կրկնենք մի անգամ էլ, ի չիք դարձան: Սա տարավ տիտղոսային ժողովրդի լուսանցքայնացմանը:

Դրա հետ մեկտեղ, որքան էլ տարօրինակ հնչի, գաղութային իշխանությունները համոզված էին, որ «քաղաքակիրթ զանգվածին» կառավարելն ավելի դյուրին է: Այդ մտահոգությամբ՝ նրանք սկսեցին համախմբել ղազախ մտավորականության ներկայացուցիչներին՝ քաղաքաբնակ ուսուցիչներ, հոգևոր սպասավորներ, երաժիշտներ, ասացողներ (*акын*), որոնք հարգանք էին վայելում:

Այս մտավորականության կորիգը բնակվում էր Ռուսական Թուրքեստանի հյուսիսային քաղաքներում՝ Օրենբուրգ, Օմսկ, Սեմիպալատինսկ, Կազան, որտեղ նրանք շփվում էին ռուսական մշակույթի և մտավորականության հետ: Այն էականորեն տարբերվում էր հարավային շրջաններում ապրող ղազախ ավանդական մտավո-

<sup>55</sup>Түрчининовъ Н. В., նշվ. աշխ. էջ 82:

<sup>56</sup>Nurpeis K., նշվ. աշխ. էջ 248:

րականությունից, որի ներկայացուցիչներն ընտրել էին գաղութային վիճակին հակազդման գործելակերպը. չէին խոսում ոռւսերեն, չէին ընդունում ոռւսական մշակութային արժեքները: Իրենց անվանում էին *Зар Заман ақындары*, որը բառացի նշանակում էր *ηժψωρ ժωμωνακή բωνωσψεղծնερ*: Ընդհանուր առմամբ, նրանց գործելառն արդի հետգաղութատիրության եզրաբանությամբ կարելի է անվանել *չենթարկվելու, դիմադրելու, չհանդուրժելու պահվածք*<sup>57</sup>:

Հարավիազախական տարածքների բնակիչները դուրս էին ազգային տարաբնույթ տեղաշարժերից: Մասնավորապես նրանք ներկայացված չէին 1905 թվականին ստեղծված համադաշախական *Ալաշ Օրդա* կազմակերպությունում: Դրա առաջնորդները Միջին Հորդայից էին՝ հյուսիսային և կենտրոնական դաշախական շրջաններից:

Ռուսական կողմի համար քոչվորների չափավոր զարգացումը գնահատվում էր իբրև կայսրության գերիշխանության ամրապնդման միջոց: Զևավորվող վարչական, կրթական և մշակութային համակարգերը ներկայացվում էին իբրև դրա գործիքներ: Կար խնդրի մեկ այլ դիտանկյուն նույնպես. արդի մշակութային հարացուցերի ներդրմամբ Ռուսաստանը հնարավորություն էր ստանում ծևակերպելու դաշախի աշխարհընկալման սահմանները: Նպատակին հետամուտ՝ 19-20-րդ դարերի սահմանագծին արդեն գործում էին տարբեր աստիճանի 15 ոռւս-դաշախական քերականական և միջնակարգ կրթական հաստատություններ<sup>58</sup>: «Ռուսական մեծ մշակույթի» ներդրմամբ պայքար էր ծավալվում մի կողմից՝ թյուրքական, մյուս կողմից՝ իսլամական արժեքների դեմ<sup>59</sup>: Հիշենք, որ մինչ այդ կրթական համակարգը հիմնված էր ավանդական իսլամական մակրաբների և մադրասաների համացանցի վրա, որոնք գործում էին մզկիթների հովանու ներքո<sup>60</sup>:

Պատկերն ամբողջացնելու համար նշենք, որ վարչակարգը նախապես հակված էր «դաշախներին քաղաքակրթելու» գործը հանձնելու արդեն «քաղաքակրթության

<sup>57</sup> **Хайрулдаева А. М.** Зар заман ақындары шығармаларындағы Қазақстанның ортазиялық елдермен қарым-қатынастары, Электронный научный журнал «edu.e-history.kz» № 2(06). URL: <http://edu.ehistory.kz/ru/publications/view/435> (10.03.2017)

<sup>58</sup> **Ильминский, Н. И.**, նշվ. աշխ. էջ 51:

<sup>59</sup> **Landau J. M., Kellner-Heinkele B.**, Politics of Language in the Ex-Soviet Muslim States: Azerbaijan, Uzbekistan, Kazakhstan, Kyrgyzstan, Turkmenistan, Tajikistan, London: C. Hurst & Co. Publishers, 2001, pp. 20-21.

<sup>60</sup> **Nurpeis K.**, նշվ. աշխ., էջ 251:

որոշակի ճանապարհ անցած» թաթարներին, բայց շուտով համոզվեց դրա վտանգավորության մեջ: Թաթարներն սկսեցին դա օգտագործել իւլամի և իրենց ազդեցությունը զորացնելու նպատակով: Ուստի վարչակարգը որոշեց հրաժարվել թաթարների ծառայություններից՝ «ի բարօրություն ղազախների»<sup>61</sup>:

Կայսերական կենտրոնաձիգ քաղաքականությունը հասկանալու համար պեղը է հաշվի առնել, որ 18-րդ դարում ցարական քաղաքականությունը փարբերվում էր 19-րդ դարի քաղաքականությունից: Առաջինի պարագայում քաղաքականությունն առավել հանդուժող էր. թույլավրվում էր առանձին էթնիկ միավորներին ունենալ իրենց դարական, կրթական և անգամ վարչական համակարգերը: Ասվածի լավագույն օրինակը հայկական համայնքներն էին Նոր Նախիջևանում և Ասղրախանում, որտեղ հայերն ունեին անգամ իրենց դարասպանագիրը<sup>62</sup>: Սակայն 19-րդ դարում պարկերը միանգամայն այլ էր. առանձին էթնիկ-քաղաքական միավորներն ապրում էին ըստ ռուսական օրենքների գերակայության:

Ղազախականի պարագայում ցարական կառավարությունն իր գաղութային առաջելությունը՝ «հասարակական համերաշխության հասկավորումը», իրագործում էր՝ օգտագործելով մտավորական և հեղինակավոր անձանց: Առաջնային գաղափարն այժմ **կայսրության ընդհանուր քաղաքացիության** հղացքն էր: Ղազախական պատմության մեջ այսօրինակ գաղափարների տիպիկ կրող էր Մուհամմեդան Տինիշպաևը, որը եղել է Թուրքեստանյան Երկրորդ Դումայի պատգամավոր և իրեն համարում էր ղազախական «ինտելիգենցիայի» ներկայացուցիչ: Նա մշտապես քարոզում էր կայսրության քաղաքացիության գաղափարի առավելությունը էթնիկ պատկանելության նկատմամբ: Հորդորում էր ղազախական տարբեր կլաններին կայսրության համար կամավոր գենք վերցնել և ենթարկվել աշխատանքային պարտադիր պարհակներին<sup>63</sup>:

Նույն դասին էր պատկանում նաև Շոկան Ուալիխանովը, որը, օգտագործելով իր ռուսական ռազմական կրթությունը և ֆ. Դուստուսկու անձնական համակրանքը,

<sup>61</sup> Galick D., Responding to the Dual Threat to Kazakhness: The Rise of Alash Orda and its Uniquely Kazakh Path, *Vestnik, The Journal of Russian and Asian Studies*, [http://www.sras.org/alash\\_orda\\_kazakh](http://www.sras.org/alash_orda_kazakh) (29.04.2016)

<sup>62</sup> Նշենք, որ հայերն Աստրախան գաղթել էին Նոր Ջուղայից 17-րդ դարի կեսերից, և արդեն իրավական հարաբերություններն ըստ էության բխում էր պարսկական իրավական համակարգից, որը, սակայն, ի տարբերություն Ռուսական կայսրության ներքո գործող համակարգի, իհմնված էր սովորութային իրավունքի վրա: Տե՛ս, Aslanian S., From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Univ. of California Press, 2014, p. 83.

<sup>63</sup> Brower D., Turkestan and the Fate of the Russian Empire, New Yourk: Routledge, 2012, p. 8.

ներկայանում էր իբրև ղազախական հասարակության 1860-1880-ականների լավագույն մտավորական<sup>64</sup>: Նա որակվում էր իբրև լուսավորիչ, որի հորդորները նպաստեցին կանխելու իսլամականացման սպառնալիքը տափաստանում: Այս առումով հատկանշելի է Ուալիխանովի «Տափաստանի մուսուլմանականության մասին» աշխատությունը:

«Իսլամն ի զորու չէ օգնելու ռուսական կամ որևէ այլ քրիստոնեական կառավարության: Թաթարական ծախված հոգևորականության հավապարմությանն ապավինել չի կարելի [...] Եվ մեզ մոտ՝ տափաստանում, կառավարության բոլոր բարեգործական միջոցառումները չեն հանգեցնում ակնկալվող արդյունքներին, քանի որ վերջիններս կաթվածահար են լինում ի հերթանս աճող կրոնական մոլեռանդության: Մեր որդզները [ղազախներ—Ն.Մ.] հիմա առավել քան երբեմ շաբ են խուսափում ռուսական լուսավորականությունից և եղբայրությունից»<sup>65</sup>:

Այնուամենայնիվ, ռուս-ղազախական հարաբերությանները ղազախական պատմական հեռանկարի միակ վեկտորը չէին: Դա զգալի էր արդեն 20-րդ դարի սկզբին, երբ առանձին մտավորականները և նրանց (տակավին թույլ) խմբակներում սկսեցին միտումներ արձանագրվել՝ միավորվելու համագֆային շարժման մեջ: Նախաձեռնությունը պատկանում էր **Ալաշ Օրդային**: Գործընթացը խթան ստացավ 1916 թվականի ապստամբության և դրան հաջորդող մղջավանջի ժամանակ:

1917 թվականին կործանվեց Ռուսական կայսրությունը. Ալաշ Օրդան հաստատութենացվեց և վերածվեց ազգային քաղաքական կուսակցության: Նույն թվականի հունիսի 15–19-ին Օրենբուրգում տեղի ունեցած համաղազախական համաժողովի որոշմամբ ստեղծվեց Ալաշ Օրդա կառավարությունը, որն առաջնային էր համարում Ղազախստանի ինքնավարության, ինչպես նաև ղազախական հողերի բռնագրավման դեմ և էթնիկ ներգաղթի կանխմանն ուղղված քայլերը<sup>66</sup>: Նշալ ծրագրերի իրականացման համար ալաշօրդայականները կուղացիոն հարաբերություններ հաստատեցին հակաբուշնիկյան ուժերի հետ:

<sup>64</sup> Crews R. D., For Prophet and Tsar: Islam and Empire in Russia and Central Asia, Cambridge, MA and London: Harvard University Press, 2006, p. 211.

<sup>65</sup> Валиханов Ч., О мусульманстве в Степи, с. 71.

<sup>66</sup> Bhavna D., Kazakhstan, p. 47.

1917 թվականի դեկտեմբերի 5-13-ը Երկրորդ համաշարական համաժողովի ժամանակ որոշվեց Ալաշ Օրդա կառավարության իրավասությունների մեջ ներառել Ակմոլայի, Ուրալի, Տուրգայի, Սիրդարիայի, Սեմիրեչիենի, Սամարկանդի, Ղակաս-պիհսկի մարզերը, Ֆերգանայի Ղազախական շրջանը (յեզծ) և ղազախներով բնակեցված Ալթայի մարզը<sup>67</sup>: Ստեղծվեց կառավարություն՝ բաղկացած օրենսդրական, գործադիր և դատական մարմիններից: Խորհրդարանն ուներ 25 անդամ, որոնցից 15-ը ղազախներ չէին՝ ոլորզներ, ուզբեկներ, ռուսներ: Խոսնակն էր Ահմետ Բայթուրսինովը: Գործադիր գերագույն իշխանությունը ներկայացնում էր «հարգարժան եռյակը»՝ Ալիխան Բեքսեյխանով, Մուսթաֆա Շուքրուշիան, Բերդի Աբբասով:

Հենց առաջին նիստում Խորհրդարանը հաստատագրեց իր ինքնավար իրավունքները ղազախարնակ տարածքների նկատմամբ: Ազգայնացվեցին բոլոր հարստությունները: Մտցվեց ղազախական քաղաքացիություն: Խոսվում էր սեփական բանակի, դրոշի, դրամական միավորի մասին: Սակայն կառավարությունն իր հեռանկարը կապում էր *սպիտակ շարժման* հետ՝ որդեգրելով հակաբոշկիկյան կեցվածք: Քաջալերանքը գալիս էր նաև բրիտանացիներից, թուրքերից և չինացիներից: Սակայն հաշվարկները սխալ դուրս եկան. բոլշևիկները հաղթեցին: 1920 թվականի օգոստոսի 26-ին նրանք ռազմակալեցին Ալաշ Օրդայի մայրաքաղաք Սեմեյը: Հոչակվեց Ղրղզական Խորհրդային Ինքնավար Հանրապետությունը:

Ալաշ Օրդայի Հանրապետությունը չկարողացավ (և չէր էլ կարող) իրականացնել ղազախների անցումը համակեցական կյանքի այն մակարդակին, որը (հետևելով Մ. Վեբերին) ծնակերպել ենք իբրև վարչական պատրիմոնիա: Դրան վիճակված էր իրականություն դառնալ խորհրդային ժամանակաշրջանում՝ համեմված կոմունիստական գործելակերպով և գաղափարական կարծրակերպերով:

Ժողովուրդները, բացի նյութական շարժադիթներից, ապրում են պատմական հիշողությամբ: Ղազախստանի պարագայում Ալաշ Օրդայի մասին հիշողությունն ունեցավ հենց այդ նշանակությունը: Պատմության երկար ժամանակի համատեքստում այն մնում էր կրավորական վիճակում, սակայն ներունակ դարձավ և սկսեց ներազել համակեցական գործառույթի վրա 70 տարի անց՝ հետխորհրդային ժամանակներում:

<sup>67</sup> Nurpeis K., նշվ. աշխ., էջ 255:

### 1.3. Խորհրդային Ղազախստան

1920 թվականին հիմք դրվեց Ղազախստանի պատմության խորհրդային շրջափուլին: Պետական միավորը՝ Ղրղզական Խորհրդային Ինքնավար Հանրապետությունը, խորհրդային պատմագրության մեջ ներկայացվում էր իբրև ղազախական առաջին պետականություն՝ ձեռք բերված շնորհիվ ուս մեծ ազգի եղբայրական օգնության: Միայն անվանումը հնացած կայսերական էր. հետազոտողներից շատերի համոզմամբ՝ «որող» էթնոնիմը ղազախներին տրվել էր, որպեսզի չշփոթեն նրանց ուսական կազակների հետ<sup>68</sup>:

Սակայն այս բացթողումը շուտով շտկվեց. 1925 թվականին ՌԽՍՖՀ-ի կազմում Ղազախստանին տրվեց ինքնավար հանրապետության կարգավիճակ՝ Ղազախական Խորհրդային Ինքնավար Հանրապետություն: Իրավիճակը պահպանվեց ընդհուար 1936-ի դեկտեմբերը, երբ ընդունվեց ԽՍՀՄ երկրորդ սահմանադրությունը, և Ղազախստանը ճանաչվեց իբրև ինքնիշխան խորհրդային սոցիալիստական հանրապետություն<sup>69</sup>: Ընդունվեց համապատասխան սահմանադրություն, որի հիմնարար դրույթները գրված էին ստանդարտ կոմունիստական հոետորաբանությամբ և չէին պարունակում ազգային որևէ գաղափար: Զկար որևէ հոդված ղազախական ազգային ինքնության, լեզվի, ավանդույթների մասին: Դրա փոխարեն շեշտված էր ժողովուրդների անխախտ կոմունիստական եղբայրությունը՝ ազուցված Կուսակցության և ուս մեծ ազգի կամքով:

#### ա. Տնտեսական և ընկերային նորացումը 1920 – 1930-ական թվականներին

Ղազախստանի պատմության խորհրդային փուլը շրջադարձային նշանակություն ունեցավ նոր ազգի կայացման և զարգացման ճանապարհին: Ռեժիմի արդիականացման ալիք ձևավորվեց: Այս առումով խորհրդային քաղաքականությունը զարգացավ երկու ուղղություններով՝ ուսականացման և արդիականացման (արդյունաբերություն, քաղաքաշինություն, կրթություն և մշակույթ) գուգահեռ հարթություններով: Երկու ուղղությունները հոյժ փոխկապակցած էին, քանի որ ղազախները չունեին արդի մտավորականություն՝ ընդունակ նոր տեխնոլոգիաներ ներմուծելու և գործարկելու արդյունաբերական մասշտաբներով: Հետազոտողներն իրավիճակը հաճախ

<sup>68</sup> Левшин А. И., Об имени киргиз-кай-сацкого народа с. 432-451.

<sup>69</sup> Peimani H., Conflict and Security in Central Asia and the Caucasus, Santa Barbara, CA: Greenwood Publishing Group, 2009, p. 124.

բանաձևում են գաղութատիրական դիսկուրսի շրջանակներում. համակեցական նորացումը հնարավոր էր միայն գերակա էթնոսի (կամ այն ներկայացնող էթնոսների) առկայությամբ՝ ոռւսներ, ուկրաինացիներ, բելառուսներ, որոշ չափով նաև՝ գերմանացիներ, լեհեր, կորեացիներ, թաթարներ, հայեր:

Խորհրդային տնտեսական և ժողովրդագրական քաղաքականության հետևանքով Ղազախստանը վերածվեց տարբեր ազգերի և էթնիկ խմբերի քաղաքակրթական գործունեության միջավայրի: Գործունեություն, որ հաճախ ուղեկցվում էր բռնություններով, սպանություններով, սովոր ու աքսորով. ղազախները դժվարությամբ էին հրաժարվում իրենց ավանդական ապրելակերպից և արժեհամակարգից:

Խորհրդային շրջանի նորարարությունների շարքում պետք է առանձնակի հիշատակել նստակյաց հասարակության ծևավորումը: Պատմության մեջ առաջին անգամ հասարակությունը պետք է կապվեր երկրագործության, արդյունաբերության և քաղաքային կյանքի հետ: Դրա քաղաքական ամրագրման լավագույն օրինակը 1925 թվականին Ղազախստանի հնքնավար Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության առաջին քարտուղար (ուկրաինացի իրեա) Ֆիլիպ Գոլոշյոկինի<sup>70</sup> բռնի կոլեկտիվացման քաղաքականությունն էր. 1929–1932 թվականներին Ղազախստանում կազմավորվեց 2700 կոլտնտեսություն: Բնական պայմանները խստաշունչ էին՝ ծայրաստիճան ցուրտ ձմեռներ և չորային ամառներ: Գործընթացն ընթանում էր դժվարությամբ. տնտեսությունների անմիտ միավորման, ավանդական քոչի ուղիների խաթարման, լայնազանգված մորթի հետևանքով անասունների գլխաքանակը առաջին երկու հնգամյակներին (1928–1936 թթ.) կրճատվեց շուրջ 5 միլիոնով: Եվ ինչպես սովորական էր ստալինյան ժամանակներում, սկսեցին փնտրել «կատաղի դասակարգային թշնամիների»: Ծայր առան բռնություններ, որոնց զոհ գնաց 550-600 հազար մարդ<sup>71</sup>:

Դրան զուգընթաց, սակայն, խորհրդային իշխանությունների ներդրումային քաղաքականության շնորհիվ Ղազախստանի գյուղատնտեսությունն սկսեց համալրվել նոր

<sup>70</sup> Ֆիլիպ Գոլոշյոկինին Ղազախստան էր գործուղել անձամբ Ստալինը: Նրա քաղաքականությունը առանձնանում էր արտակարգ դաժանությամբ: 1992 թվականին նախագահ Նազարբաև նախաձեռնությամբ ստեղծվեց պատմաբանների խոմը՝ հրահանգավորված ղազախական պատմության այս շրջանը ներկայացնել իրու ցեղասպանություն: Անգամ շրջանառության մեջ դրվեց «Գոլոշյոկինյան ցեղասպանություն» եզրույթը: Տե՛ս, **Абылхожин Ж. Б., Козыбасев М. Б., Татимов М. Б.**, Казахстанская трагедия, Вопросы истории, 1989, № 7, с. 65-67.

<sup>71</sup> **Абылхожин Ж. Б.** Традиционная структура Казахстана: с. 190.

տեխնոլոգիաներով: Դա տեղի էր ունենում ըստ հնգամյա պլանների. օրինակ՝ առաջին հնգամյակի (1928-1933 թթ.) վերջին իշխանությունները 700 միլիոն ռուբլի էին ներդրել Ղազախստանի գյուղատնտեսության մեջ՝ տրակտորներ, շարքացաններ, կոմբայններ<sup>72</sup>: Սակայն ղազախները երկրագործությամբ համարյա չէին զբաղվում. բնագավառը համարյա ամբողջությամբ գտնվում էր վերաբնակների ձեռքին: Այլորեն՝ ինտենսիվ գյուղատնտեսության պայմաններում ղազախները լուսանցքայնացվում էին: Եվ 1934–1938 թվականներին դա առաջ բերեց ընդվզումների ալիք Չիմքենդի, Կուստանայսկի, Պավլոդարի, Ալմա Աթայի և այլ շրջաններում: Դրանք որակվեցին բասմաշական շարժումեր և դաժանորեն ճնշվեցին:

Արևմտյան հետազոտողները կարծում են, որ այս շրջանում սովի, աքսորի, բռնությունների հետևանքով Ղազախստանը կորցրել է 4 կամ 1.7 միլիոն մարդ: Խորհրդային պատմագրությունը նախընտրում էր այս մասին լոել: Մինչդեռ արդի ղազախ պատմաբանները համոզված են, որ այս շրջանում կորուստների թիվը հասնում է 2-ից 2.3 միլիոնի<sup>73</sup>:

Գյուղատնտեսության արդիականացումը կապակցված էր թեթև և ծանր արդյունաբերության զարգացման հետ: Հնգամյակների առաջին խոկ տարիներից մեծ ուշադրություն դարձվեց երկաթուղային ենթակառուցվածքների զարգացմանը. 1927-1930 թվականներին կառուցվեց Թուրքսիբն իր ճյուղավորումներով՝ 1450 կիլոմետրանոց երկաթուղի, որը կապում էր Սիբիրը Կենտրոնական Ասիայի հետ<sup>74</sup>:

Առաջին հնգամյակի տարիներին ի հայտ եկան արդյունաբերական գիգանտներ, որոնք զարգացրին Ղազախստանի տնտեսությունը՝ Էկիբաստուսի, Կարագանդայի, Կուստանայսկի, Տալդիկուրգանի, Չիմքենդի լեռնահանքային և մետաղաձուլական կոմբինատները: Միայն 1932 թվականին այդ ոլորտի ներդրումները կազմում էին 217.7 միլիոն ռուբլի<sup>75</sup>: Երկրորդ հնգամյակի տարիներին գունավոր մետաղների արդյունաբերության ոլորտում ներդրումները հասան 700 միլիոն ռուբլու: Աննախընթաց

<sup>72</sup> **Տե՛ս,** Coates, W. P., Coates Z. K., Soviets in Central Asia, London: Lawrence and Wishart, 1951, p. 122.

<sup>73</sup> Абылхожин Ж. Б., Козыбаев М. К., Татимов М. Б. Казахстанская трагедия, URL:<http://istorja.ru/articles.html/central-asia/famin-in-kazakhstan/> (10.11.2015)

<sup>74</sup> Ахмедова Н. Б. նշվ. աշխ., էջ 9:

<sup>75</sup> Coates, W. P., Coates Z. K., նշվ. աշխ., էջ 123:

զարգացում արձանագրվեց քարածխի և նավթի արդյունահանության մեջ. ներդրված ավելի քան 600 միլիոն ռուբլին վկայում էր հենց այդ մասին<sup>76</sup>:

Առաջին երեք հնգամյակների տարիներին (1928-1939 թթ.), շնորհիվ հանք-արդյունաբերության բուռն զարգացման, Ղազախստանը վերածվեց գունավոր մետաղ-ների արտադրման տարածաշրջանային կարևորագույն կենտրոնի: Արդիականացման արդյունքում 1940 թվականին Ղազախստանում գործում էր շուրջ 1200 գործարան, հազարավոր կիլոմետրերի երկաթուղացանց: Նաև՝ Կենտրոնական Ասիայի ամենա-ընդլայն էլեկտրածածկություն<sup>77</sup>:

Հավելենք, որ Ղազախստանի արդյունաբերության զարգացումը կենսական էր ԽՍՀՄ-ի (ի մասնավորի՝ Ռուսաստանի) համար. գունավոր մետաղները (պղինձ, անագ, ցինկ, նիկել, քրոմ, վոլֆրամ, ալյումին) խիստ անհրաժեշտ էին նրա ծանր և ռազմական արդյունաբերությունների համար: 1930-ականների արդյունաբերության արդիականացման հետևանքով տեղի ունեցավ ռուսական աշխատութի շարժ դեպի Ղազախստան<sup>78</sup>: 1940 թվականի արդյունքներով դա կազմել է շուրջ մեկ միլիոն մարդ: Ավելորդ է ասել, որ արդյունաբերության մեջ նույնաես դազախների լուսանցքայնացումն անժիշտելի փաստ էր. նրանք չունեին որակյալ բանվորական և ինժեներական կադրեր:

1920-1930-ականներին Ղազախստանում հաստատվեց համակեցական կյանքի մի յուրատեսակ տարակերպ, որի համապատկերում համադրվում էին զարգացած տեխնոլոգիաները և վարչահրամայական ամբողջատիրությունը՝ համեմված կոմունիստական քարոզությամբ: Այդ համաձուլվածքի մեջ ուրվագծում են նաև ավատադրության հստակ հատկանիշներ. նկատի ունեն նախ և առաջ այն իրողությունը, որ «ազատ և ստեղծագործ» բանվորներն ամրակցված էին գործարաններին, իսկ գյուղացիները՝ կոլտնտեսություններին:

Միակ ստեղծագործ ներուժը, ինչպես խորհրդային այլ հանրապետություններում, բխում էր վարչահրամայական բոլոգից: Այն բաղկացած էր երկու բաղադրիչից՝ խորհրդային և կուսակցական: Խորհուրդները և նրանց գործադիր կոմիտեները

<sup>76</sup> Ахмедова Н. Б. նշվ. աշխ., էջ 10:

<sup>77</sup> Coates, W. P., Coates Z. K., նշվ. աշխ., էջեր 123-125:

<sup>78</sup> Ст'я, Gillette P. S., Ethnic Balance and Imbalance in Kazakhstan's Regions, Central Asia Monitor, No. 3, 1993, pp. 17– 23.

պարառում էին ողջ Ղազախստանը՝ 27 000 շրջանային, 64 քաղաքային, 12 մարզային: Եվ համապատասխանաբար՝ Գերագույն խորհուրդը և Նախարարների խորհուրդը, որոնք անվանապես կառավարում էին հանրապետությունը: Իսկ իրականում իշխանությունը կենտրոնացված էր Կոմունիստական կուսակցության և նրա Կենտրոնական կոմիտեի ձեռքում: Եվ առաջին դեմքը հանրապետության Կենտկոմի առաջին քարտուղարն էր՝ պարտադրված Մոսկվայից:

Գլխավոր պաշտոններում նշանակվում էին հիմնականում ռուսները կամ ռուսախոս այլազգիները: Իբրև օրինակ՝ Կենտկոմի առաջին քարտուղարների մասին հետևյալ այլուսակը, որտեղ երկրի բարձրագույն քաղաքական պաշտոնում ղազախների թիվը խիստ սահմանափակ էր: (Տե՛ս, այլուսակ 1)

Ինչպես ցարական դարաշրջանում, այնպես էլ այժմ իրադրությունն ուներ նաև իր հակառակ երեսը: 1920-1930-ականներին ղազախական միջավայրում տեղի էր ունենում, այսպես կոչված, *արմատավորման* (*коренезацися*) գործնթաց: Վերջինս անմիջական աղերս ուներ ազգային հարցերի հետ: Խորիրդային քաղաքականության այս բաղկացուցիչը պահանջում էր ազգային լեզվի և մշակույթի հանրայնացում, ազգային տարածքի հաստատագրում, ղեկավար պաշտոններում ազգի ներկայացուցիչների նշանակում:

Լոնդոնի համալսարանի Արևելյան և Աֆրիկյան հետազոտությունների դպրոցի պրոֆեսոր, ղազախագետ Բիավնա Դեյվը, խոսելով արմատավորման տարիների մասին, ներկայացնում է, թե ինչպես էին Կենտկոմի այլազգի առաջին քարտուղարներն աջակցում իրենց ազգի ներկայացուցիչների արմատավորմանը»: Մասնավորապես՝ շեշտադրում է Լսոն Միրզոյանի դերակատարությունը Ալմա Աթան հայերով բնակեցնելու և նրանց տարբեր աշխատանքներով ապահովելու գործում<sup>79</sup>:

<sup>79</sup> Bhavna D., Kazakhstan, p. 76: Հայերի՝ Ղազախստանում բնակություն հաստատելու մասին տե՛ս նաև, Սաֆարյան Ա., Ատաև Ա., նշվ. աշխ. էջ 72:

## Աղյուսակ 1<sup>80</sup>

Անուն ազգանուն	Ազգություն	Կառավարման տարեթիվ	Ծննդ. և մահվան տարեթիվ
Ֆիլիպ Գոլոշոկին	հրեա	1925-1933 թթ.	1889-1974 թթ.
Լևոն Միրզոյան	հայ	1933-1938 թթ.	1887-1939 թթ.
Նիկոլայ Սկվորցով	բելոռուս	1938-1945 թթ.	1899-1974 թթ.
Ժումարայ Շայախսմետով	ղազախ	1946-1954 թթ.	1902-1966 թթ.
Պանտելեյմոն Պոնամարեկնկո	ռուսացի	1954-1955 թթ.	1902-1984 թթ.
Լեոնիդ Բրեժնև	ռուս	1955-1956 թթ.	1906-1982 թթ.
Իվան Չակովսկի	ռուս	1956-1957 թթ.	1910-1999 թթ.
Նիկոլայ Բեյյան	ռուս	1957-1960 թթ.	1903-1966 թթ.
Դինմուհամետ Կունաև	ղազախ	1960-1962 թթ.	1912-1993 թթ.
Իսմայիլ Յուսուպով	ռուսուր	1962-1964 թթ.	1914-2005 թթ.
Դինմուհամետ Կունաև	ղազախ	1964-1986 թթ.	1912-1993 թթ.
Գենադի Կոլրին	ռուս	1986-1989 թթ.	1927-1998 թթ.
Նուրսուլթան Նազարբաև	ղազախ	1989-1991 թթ.	1940-

Լեզվի, մշակույթի և տարածքի հարցերում խորհրդային իշխանությունը «սրտա-  
բաց ընդառաջում էր ղազախներին»: Նրանց լեզուն ու մշակույթը համարվում էին նա-  
խակենցաղ և անհեռանկար, ուստի դրանցում ոչ մի վտանգ չէին տեսնում: Տարածքն էլ  
նկատվում էր հեղիեղուկ՝ ենթակա փոփոխությունների՝ ըստ քաղաքական նկատառում-  
ների:

1920-ականների վերջերից սկսվեց սոցիալիստական մշակույթի զարգացումը  
Ղազախստանում. մանկապարտեզներ, դպրոցներ, տեխնիկումներ, բուհեր, գրադա-  
րաններ, թանգարաններ, թատրոններ, գիտական հաստատություններ, թերթեր և ամ-  
սագրեր: Գործընթացն իր տրամաբանական շարունակությունն ստացավ 1950-ական-  
ներից ի վեր: Ղազախներն իրենց զարգացման գագաթնակետը համարում էին Գիտու-

<sup>80</sup> First Secretaries of the Central Committee of the Communist Party (Bolsheviks) of Kazakhstan (from 13 Oct 1952, Communist Party of Kazakhstan). URL: <http://worldstatesmen.org/Kazakhstan.htm> (5.8.2016)

թյունների Ակադեմիան՝ հիմնված 1946 թվականին: Այն ուներ 100-ից ավել գիտահետազոտական կենտրոններ և ինստիտուտներ, որտեղ աշխատում էին 8 հազարից ավելի գիտաշխատողներ, այդ թվում՝ 100 ակադմիկոս և թղթակից անդամ, 156 գիտության դոկտոր և շուրջ 2650 գիտությունների թեկնածու<sup>81</sup>: Մշակույթի և գիտության համարյա բոլոր ասպարեզներում տիրապետող էր ռուսերենը և ապազգային կոմունիստական արժեհամակարգը:

Սակայն սխալ կլինի բարդել ամբողջ մեղքը «անհջյալ գաղութային համակարգի» վրա. ղազախական մշակույթն ու արժեհամակարգը խիստ սահմանափակ էին՝ արտահայտելու արդի աշխարհի իմաստային բազմազանությունը:

### բ. Հասարակական նորացման գործընթացները 1950–1980-ականներին

Ժամանակաշրջանը նշանավորվեց նախ ժողովրդագրական նոր տեղաշարժերով. Հայրենական պատերազմին նախորդած և դրա տարիներին միության կողմերից Ղազախստան արտաքսվեցին ազգային փոքրամասնությունների նորանոր խմբեր: Արդյունքում 1937 թվականին Ղազախստանում հայտնվեց 95 հազար կորեացի, 102 հազար լեհ: 1941-ին՝ ավելի քան 500 հազար գերմանացի՝ Պովոլժիեցի, Ուկրաինացի և Հյուսիսային Կովկասից: 1944-ին՝ 500 հազար չեչեն, ինգուշ, կարաչայ, բալկար, կալմիկ: Նաև՝ Ղրիմի թաթարներ, մեսխեթցի թուրքեր<sup>82</sup>:

Մյուսը 1950-ականներին Ն. Խրուչչովի նախաձեռնած խամ և խոպան հողերի յուրացումն էր: Վերջինիս հետևանքով 3.5 միլիոն (հիմնականում սլավոնական ծագման) մարդ բնակեցվեց Ղազախստանի հյուսիսային հատվածում՝ հացահատկի արդյունաբերական արդարության նպատակով: Այս իրողությունը խեղեց հանրապետության առանց այդ էլ անբարենպաստ ժողովրդագրական պատկերը: 1959 թվականի մարդահամարով ղազախների թիվը 2.8 միլիոն էր՝ բնակչության 30.2%-ը, իսկ ռուսների թիվն արդեն մոտենում էր 4 միլիոնի՝ ազգաբնակչության 42%-ը<sup>83</sup>: 1960-ականներից սկսած՝ ղազախների թիվն սկսեց ավելանալ: 1989 մարդահամարի տվյալներով ղազախների թիվը հասավ 5.3 միլիոնի (36.02%), իսկ ռուսներինը՝ 6.5-ի

<sup>81</sup> Ахмедова Н. Б., նշվ. աշխ., էջ 37:

<sup>82</sup> Абдакимов А., նշվ. աշխ., էջեր 151-152:

<sup>83</sup> Статистика, Министерство национальной экономики Республики Казахстан Комитет по статистике, Об истории переписей населения в Казахстане, URL: <http://stat.gov.kz/getImg?id=WC16200032735> (12.06.2016)

(39.68%)<sup>84</sup>: Հարկավ, թվերը հավելագրվել էին ըստ «ժողովուրդների բարեկամության սկզբունքի»: Մի բան էր արժանահավատ. 1989-ին քաղաքային բնակչության միայն 27%-ն էր ղազախ, մինչդեռ ռուսները 51% էին<sup>85</sup>: Մնացած 22%-ը ներկայացնում էին այլ ազգերի ներկայացուցիչները:

Խրուշչովյան քաղաքականության արդյունքում Ղազախստանն ունեցավ ավելի քան 25 միլիոն հեկտար մշակելի հողատարածք<sup>86</sup>: Գյուղատնտեսությունը համալրվեց նորագույն տեխնոլոգիաներով: Ավելացավ անասունների գլխաքանակը՝ ի հաշիվ ագարակային (ֆերմային) տնտեսությունների՝ հասնելով 11 միլիոնի: 1980-ականների տվյալներով՝ հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը դրամական արտահայտությամբ հասնում էր շուրջ 4.5 միլիարդ ռուբլու: 1985թ. դրությամբ Ղազախստանի գյուղատնտեսական ոլորտն ամբողջությամբ մեխանիզացված էր: Հարկավ, գյուղատնտեսության զարգացումը պայմանավորված էր տվյալ ոլորտում հսկայական ներդրումներով . 1971-ից 1989-ն ընկած ժամանակահատվածում Խորհրդային Ղազախստանի գյուղատնտեսության մեջ ներդրվել էր 58.2 միլիարդ ռուբլի<sup>87</sup>:

Բուռն զարգացում ապրեց արդյունաբերությունը: Դեռ Հայրենական պատերազմի տարիներին Ղազախստան էր տեղափոխվել 150 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն՝ ինժեներատեխնիկական համակազմով և որակյալ բանվորներով: Դրանք էլ հիմք հանդիսացան հանրապետության հետպատերազմյան արդյունաբերական աննախընթաց զարգացման: Ասվածն առաջին հերթին վերաբերում էր հանքարդյունաբերությանն ու մետալուրգիային: Եվ ինչպես երկրի կուսակցական առաջնորդ Դ. Կունաևն էր նշում, շուտով ի հայտ եկան արդյունաբերական նոր շրջաններ, քաղաքներ և ենթակառուցներ՝ Թիկելի, Բերեզովի, Միրգալիմի, Բայժանի, Բալխաշի, Զեղսագենի և Թեմիրտաուի: Վերակառուցվեցին 1930-ականների խոշոր գործարանները՝ Կարագանդայի, Էկիբաստուսի, Տալդիկուրգանի, Զերժինսկի, Չիմքենդի արդյու-

<sup>84</sup> **Տե՛ս**, Всесоюзная перепись населения 1979 года. ԵՎ Национальный состав населения по республикам СССР Всесоюзная перепись населения 1989 года. Национальный состав населения по республикам СССР. URL: [http://demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_79.php](http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_79.php) (12.06.2016)

<sup>85</sup> Fierman W., Language and Education in Post-Soviet Kazakhstan, p. 100.

<sup>86</sup> Абдакимов А., նշվ. աշխ., էջ 184:

<sup>87</sup> **Տե՛ս**, Портал «National Digital History», Кризисные явления в сельском хозяйстве. Портал «National Digital History», 30 June 2013, URL: <http://e-history.kz/ru/contents/view/276> (13. 06. 2016)

նաբերական հսկաները<sup>88</sup>: Հարդյունս ավելացան երկաթի, պողպատի, պղնձի, ածխի, ցեմենտի, նավթի և գազի արդյունահանումն ու մշակումը: Նորություն էր մոլիբդենի և (հատկապես) ուրանի արդյունահանությունը:

Հետստալինյան ծնիալը և վերափոխումները կարճ կյանք ունեցան: 1960-ականների սկզբներից ԽՍՀՄ-ում սկսեց ձևավորվել կուսակցական-կլանային կառավարման այն համակարգը, որն իր ծաղկումն ապրեց առաջիկա քսան տարիներին և ստացավ բրեժենյան լճացում անվանումը: Կոռուպցիան և կլանային հովանավորչությունը դարձան այս նոր համակարգի գլխավոր ցուցիչները: Կենտրոնական Ասիայում և (ի մասնավորի) Ղազախստանում այն կրկին պարարտ հող ստեղծեց ավանդական պատրիմոնիայի վերակենդանացման համար: Այլորեն՝ օրենքն ու օրինականությունը շրջանցվում էին անդրկուլիսյան խաղերով և համաձայնություններով, որոնք իրենց հերթին ուղեկցվում էին խոր բարոյական անկմամբ: Ծաղկում էին ստվերային տնտեսությունը և կաշառը: Դարաշրջանի հիմնական դերակատարներից էր Ղազախստանի Կենտկոմի առաջին քարտուղար Ղինմուհամեր Կունակը՝ Լ. Բրեժենյի կուսակցական կլանի հավատարիմ անդամը:

Միխայիլ Գորբաչովի վերակառուցման տարիները նոր իրավիճակ ստեղծեցին ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Ղազախստանում: Փորձելով բարեփոխել Ղազախստանի կուսակցական համակարգը՝ նա 1986 թվականին պաշտոնանկ արեց Դ. Կունակին և ղազախական կոմկուահ առաջին քարտուղար առաջադրեց ազգությամբ ուս Գ. Կոլբինին: Ինչպես նշել ենք, նման գործելառը սովորական էր Ղազախստանում: Սակայն ժամանակները փոխվել էին. ղազախների ինքնագիտակցությունն արդ բավական բարձր էր<sup>89</sup>: Կենտրոնի որոշումը նրանք ընկալեցին իբրև ղազախականությունը ստորադասելու հերթական փորձ: Ավելին, դժգոհությունը վերածվեց ազգային համախմբման խթանի:

Ալմա Աթայում տեղի ունեցան տարերային ելույթներ, որոնք ճնշվեցին: Գ. Կոլբինը որոշեց ընկրկել, բայց իրավիճակն օր-օրի դառնում էր անկառավարելի: Տեղեկատվական վակուումը ազգային գաղափարներով և պատմական հիշողություննե-

<sup>88</sup> 50 лет Казахской ССР и Компартии Казахстана, Интервью «Огонька» Д.А. Кунаев кандидат в члены Политбюро ЦК КПСС, Первый секретарь ЦК КП Казахстана, Огонек, № 34 (2251) 22 Августа 1970.

<sup>89</sup> Olcott M. B., The Kazakhs, p. 256.

րով լցվելու պարագայում կարող էր վերածվել լուրջ հակախորհրդային ընդվզման: Այս էր հուշում խորհրդային այլ հանրապետություններում ձևավորված իրավիճակը:

1980-ականներին դազախական մտավորականությունն սկսել էր ձևավորել «մոքիլիզացիոն խմբեր» (դրանք հաճախ գործում էին ընդհատակում)՝ Ազատ, Ալաշ, Քազաք Շքլը (դազախերեն լեզու): Դրանք գործում էին ընդդեմ ռուսական լեզվական, մշակութային ու քաղաքական գերիշխանության և քարոզում էին անկախ ազգ-պետության գաղափարը:

Հաշվի առնելով իրադրության լրջությունը՝ Մոսկվան որոշեց հեռացնել Գ. Կոլբինին և Ղազախստանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար առաջադրել էթնիկ դազախ և դազախախոս Նուրսուլյան Նազարբաևին, որը մինչ այդ տարբեր պաշտոններ էր զբաղեցրել կուսակցական և պետական համակարգում:

Այս ամենը տեղի էր ունենում ԽՍՀՄ կազմալուծման հետնախորքին: Արդեն շատ հանրապետություններ (Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան, Մոլդավիա, Լիտվա, Լատվիա, Էստոնիա) հոչակել էին իրենց ինքնիշխանությունը: Եվ 1991 թվականի դեկտեմբերի 8-ին ՌԽՍՖՀ-ի, Ուկրաինայի և Բելառուսի լիդերները՝ Բ. Ելցինը, Լ. Կրավչուկը և Ս. Շուշկիչը, ստորագրեցին Բելովեժսկի համաձայնագիրը ԽՍՀՄ կազմալուծման վերաբերյալ: Դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում իրավիրվեց ԽՍՀՄ նախկին 11 հանրապետությունների ղեկավարների համաժողով՝ ստորագրելու ԱՊՀ կազմավորման հոչակագիրը:

Այս գործընթացներին համընթաց՝ 1991-ի դեկտեմբերի 16-ին Ղազախստանը հոչակեց իր ինքնիշխանությունը: Հետագայում կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Նուրսուլյան Նազարբաևն ընտրվեց նորանկախ երկրի առաջին նախագահ, որի իշխանությունը կարծես թե հանդերձավորված էր անձնիշխանության (ավտորիտարիզմ) տարազով: Այն նորանկախ Ղազախստանի համար դարձավ էթնիկ և ընկերային նորացման նոր դարաշրջանի սկիզբ: Հասարակական գիտակցության մեջ սկսեցին ակտիվացնել Ալաշի Առաջին Հանրապետության և հերոսական նախնիների իդեալականացված կերպարները: Վերականգնվեց «պատմության ճշմարիտ պատկերը»:

#### **1.4. Ինքնիշխան Ղազախստանի Հանրապետությունը**

Ղազախստան Հանրապետություն (ՂՀ), հոչակված 1991 թվականի դեկտեմբերի 16-ին, դեմոկրատական հանրապետություն՝ նախագահական կառավարման համակարգով: Տարածքը՝ 2. 724902 քառ. կմ., ազգաբնակչությունը՝ ավելի քան 17 միլիոն, մայրաքաղաքը՝ Աստանա: Եվրասիական պետություն. աշխարհագրական սահմանները արևմուտքում՝ Կասպից ծով, հյուսիս-արևմուտքում՝ Ստորին Պովոլժիե, հյուսիսում՝ Ուրալ, Սիբիր, արևելքում՝ Չինական տափաստան, Կենտրոնասիական տափաստան: Պետական սահմաններն արևմուտքում և հյուսիսում՝ Ռուսաստանի Դաշնություն, արևելքում՝ Ղրղզստան և Չինաստան, հարավում՝ Ուզբեկստան և Թուրքմենստան:

#### **ա. Պետական ինստիտուտների կայացումը.**

Յուրաքանչյուր պետության կայացման հիմքում ընկած է պետական ինստիտուտների կազմակերպումը: ԽՍՀՄ անկումից հետո Ղազախստանը նույնպես լծվեց այդ աշխատանքին, որի համար ճանապարհային քարտեզի դեր կատարեց 1992 թվականին մշակված «Ղազախստան ինքնիշխան պետության կայացման և զարգացման ռազմավարությունը», որտեղ նշվում էր.

« [...] Ղազախստան հասարակությանն անհրաժեշտ է զարգացման հսկակի հայեցակարգ, որը յուրաքանչյուրին հնարավորություն կրա գրեսնելու շարժման հանգրվանները և համակվելու իրադարձությունների վերջնական արդյունքների իրագործման հավաքով: [...] Հանրապետությունը ընթանալու է հեղբոնագիրական ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական և տնտեսական իշխանությունների սահմանափակման, սեփականության պեղական մենաշնորհի հաղթահարման ուղիով»<sup>90</sup>:

Սույն ռազմավարությունը նախատեսում էր վերափոխումների լայն շրջանակ՝ նախկին պլանային տնտեսությունից դեպի ազատ շուկայական տնտեսության անցումից մինչև ինքնավար գործադիր, օրենսդիր և դատական մարմինների ձևավորում:

Անցած 25 տարիների ընթացքում գործընթացն արձանագրել է աներկրածեռքերումներ, և արդի Ղազախստանը սահմանադրական հանրապետություն է՝ նա-

<sup>90</sup> Նազարբաև Ն., Ղազախստանյան Ուղի, Երևան, «Տիգրան Մեծ» իրատարակչություն, 2008, էջեր 17-18:

խագահական կառավարման համակարգով: Կառավարությունն իրականացնում է գործադիր իշխանությունը՝ վարչապետի գլխավորությամբ, որի ենթակայության տակ են 16 նախարարություններ: Երկրի օրենսդիր իշխանությունը երկպալատ խորհրդարանն է, որի Վերին պալատում կամ Սենատում ներկայացված են 49 ընտրված պատգամավորներ՝ 6 տարի ժամկետով: Համապետական նշանակության քաղաքները, մայրաքաղաքը և մարզերը ներկայացնում են երկուական պատգամավորներ: Սենատի 15 պատգամավորների նշանակում է նախագահը՝ հաշվի առնելով բազմաէթնիկ երկրի «արդար ներկայացման սկզբունքը»: Խորհրդարանի Ստորին պալատում կամ Մաժիխում ներկայացված է 107 պատգամավոր, որոնցից 9-ը ներկայացնում են Ղազախստանի ժողովրդի ասամբլեան: Ի տարբերություն Վերին պալատի պատգամավորների՝ նրանք ընտրվում են 5 տարով:

Ներկայումս պաշտոնապես գրանցված 11 քաղաքական կուսակցություններից Մաժիխում ներկայացված են միայն երեքը՝ ժողովրդադեմոկրատական «*Hür Otan*» (Նուր Օտան՝ Հայրենիքի խորհուրդ), Դեմոկրատական «*Ak Jol*» (Ակ Ժոլ՝ Լուսավոր ճանապարհ) և Ղազախստանի կոմունիստական ժողովրդական կուսակցությունները:

Կառավարման մյուս կարևոր սկզբունքը վարչատարածքային բաժանումն է: Ղազախստանը ունի համազգային նշանակության երկու քաղաք՝ Ալմաթի և Աստանա, ու բաժանված է 14 վարչատարածքային մարմինների՝ Ակմոլայի, Ակտյուբինսկի, Ալմաթի, Աթիրաուի, Արևմտյան, Արևելյան, Հյուսիսային և Հարավային Ղազախստան-ների, ժամբիլի, Կարագանդայի, Կուստանայի, Կըզըլօրդայի, Մանգիստաուի և Պավլոդարի: Դրանց ղեկավարների նշանակումը նախագահի իրավասությունն է՝ ըստ տեղական օրենսդրական խորհուրդների առաջարկի:

Երկրի դատական իշխանությունն իրականացվում է Գերագույն և տեղական դատարանների միջոցով: Գերագույն դատարանի դատավորներն ընտրվում են Սենատի կողմից՝ հանրապետության նախագահի առաջադրմամբ: Տեղական դատարանների դատավորները նշանակվում են նրա կողմից՝ Գերագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

## **բ. Տնտեսությունը**

Պատմությունից «նվեր» ստացած վիթխարի աշխարհագրական տարածքի վրա Ղազախստանն սկսեց ազգային պետականաշխնության մի ուրուն նախագիծ: Տարածքների ռազմաքաղաքական կարևորությունն էլ ավելի էր մեծանում էներգետիկ նոր պաշարների հայտնաբերմանը զուգընթաց: Համաձայն «Բրիժիշ Փեթրոլիում» ընկերության՝ Ղազախստանն աշխարհի՝ նավթ և գազ արտադրող խոշորագույն երկրներից է: Նրա ընդերքը պարունակում է շուրջ 30 միլիարդ բարել նավթ (համաշխարհային նավթի պաշարի 2 %) և 45.7 տրիլիոն խորանարդ մետր բնական գազ<sup>91</sup>: Ավելին՝ ուրանի համաշխարհային պաշարի 1/4-ը գտնվում է Ղազախստանում<sup>92</sup>:

Պետք է արձանագրել, որ նաև շնորհիվ հողօգտագործման նոր տեխնոլոգիաների՝ Ղազախստանը ներկայումս համարվում է աշխարհի՝ հացահատիկ արտահանող 10 խոշոր երկրներից մեկը: Ղազախստանն արտադրում և արտահանում է այլ մշակաբույսեր ևս՝ բրինձ, բամբակ, ծխախոտ: Դրանց զուգընթաց նաև զարգանում է քոչվորական կենսաձևի երթեմնի ցուցիչներից մեկը՝ անասնաբուծությունը:

Ղազախստանի տնտեսության զարգացումն անժխտելի է. բավական է հատկանշել մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշները. 1991-ից մինչև 2016 թվականն այն աճել է շուրջ 15 անգամ՝ 700 ԱՄՆ դոլարից հասնելով ավելի քան 10 հազար ԱՄՆ դոլարի: Եվ համաձայն նույն պաշտոնական աղբյուրի՝ Ղազախստանի տնտեսությունը 21-րդ դարի առաջին տասնամյակի 25 ամենադիմամիկ տնտեսությունների շարքում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը: Համաձայն Համաշխարհային Բանկի դիտարկումների՝ դա երկրին հնարավորություն է տվել միանալու միջին եկամուտ ունեցող երկրների շարքին<sup>93</sup>: Հարկավ, տնտեսական աճը կախված էր նաև Ղազախստանի միջազգային ներգրավվածությունից և արտաքին ներդրումային հոսքերից: Օրինակ՝ ԱՄՆ ներդրումային ծրագրերը Ղազախստանում անկախությունից ի վեր գերազանցում են 200 միլիարդ ԱՄՆ դոլարը<sup>94</sup>:

<sup>91</sup> Nicol J., Kazakhstan: Recent Developments and U.S. Interests, CRS report for Congress, 2012, p. 15.

<sup>92</sup> Nicol J., Central Asia's Security: Issues and Implications for U.S. Interests, CRS report for Congress, 2010, p. 26.

<sup>93</sup> **Տե՛ս, Օֆիциալъныи Сайт Президента Республики Казахстан**, URL: [http://www.akorda.kz/re-public\\_of\\_kazakhstan/kazakhstan](http://www.akorda.kz/re-public_of_kazakhstan/kazakhstan) (13. 06.2017)

<sup>94</sup> Նոյն տեղում:

2014 թվականին Ղազախստանը որդեգրեց տնտեսական քաղաքականության նոր տեսլականը՝ «Հյուրլա շոլ» (Ճանապարհ դեպի ապագա), որի նպատակն է Ենթակառուցվածքների վերակազմակերպմամբ ապահովել տնտեսության արդյունավետության զարգացումը՝ հնարավոր առավելագույնի մակարդակով: Սա կարևոր նախապայման է երկրի համարձակ և ապագայամետ ծրագրերի իրագործման համար: Դրանցից է, օրինակ, «Նոր Մետաքսի ճանապարհ»-ի նախագիծը՝ միտված երկրի պատմական դերի վերականգնմանը՝ իբրև կամուրջ երկու մայրցամաքների միջև:

#### **գ. Ռազմարդյունաբերական համալիրը**

Տարածությամբ աշխարհի իններորդ երկրի համար կենսական նշանակության հարց էր զինված ուժերի և ռազմարդյունաբերական համալիրի վերակազմակերպումը: Այս ինստիտուտի կարևորությունը հատկապես շեշտադրվեց 1990-ականներին՝ երկրի երկարատև ռազմավարական ծրագրերի համատեքստում: Խոսքը մասնավորապես 1997 թվականին ընդունված «Ղազախստան-2030» ռազմավարության մասին է, որտեղ ազգային անվտանգության հարցն առաջին հորիզոնականում է.

«Ապահովել Ղազախստանի զարգացումը՝ որպես անկախ ինքնիշխան պետության՝ պահպանելով նրա լիակատար դարաձքային ամբողջականությունը: [...] Մենք հասկանում ենք, որ ներկա և մոտ ապագայում Ղազախստանի ազգային անվտանգության համար հնարավոր բոլոր սպառնալիքները չունեն և չեն ունենա անմիջական ռազմական ներխուժման բնույթ եւ սպառնալիք պետության դարաձքային ամբողջականությանը: Ո՞չ Ռուսաստանը, ո՞չ Չինաստանը, ո՞չ Արեւմուղքը, ո՞չ Էլ մուսուլմանական երկրները չունեն մեզ վրա հարձակվելու շարժառիթ: [...] Համոզված ենք, աշխարհը հասկացել է, որ զինված հակամարդություններն անարդյունավետ են, բայց եկեք չմոռանանք, որ յուրաքանչյուր խելամիտ երկիր հենվում է ոչ միայն այլ պետությունների խոսկումների, այլև իր երկրի զորության վրա: Ուստի կասկած չպետք է լինի, որ մենք առաջնային ուշադրություն պետք է հարկացնենք մեր զինված ուժերի արդիականացմանը, նրանց մասնագիտական վերապարասրմանը և մարդական

պարասպրածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ժամանակակից գեներով սպառազինմանը»<sup>95</sup>:

Նազարբաևի այս զգուշավորությունից կարելի է ենթադրել, որ Ղազախստանն այնուամենայնիվ կարող է առերեսվել տարածքային ամբողջականությանը սպառնացող «քնած մարտահրավերների»: Այս միտքը կարելի է զուգորդել մի կողմից՝ Ուզբեկստանի հետ ունեցած տարածքային վեճերին, մյուս կողմից՝ Չինաստանի Սինցյան նահանգում ապրող թյուրքական զանգվածի անջատողական հնարավոր շարժումներին<sup>96</sup>: Երրորդ կողմից՝ Աֆղանստանին՝ Կենտրոնական Ասիան թմրամիջոցների և ահաբեկչության տարանցիկ ուղիներին, գումարած նաև հազարավոր կիլոմետրեր Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում ապրող ռուսական էթնոսի հնարավոր մորթիլիզացիային: Մինչ 2016 թվականը ռազմական ոլորտը կենտրոնաձիգ իշխանության կողմից դիտարկվում էր **իբրև քաղաքական և դրամական ուժի խորհրդանիշ**<sup>97</sup>:

2016 թվականից Պաշտպանության և օդատիեզերական արդյունաբերության նախարարության ստեղծումով ազդարարվեց սեփական սպառազինության դարբնոցի ստեղծման մասին: Ենելով 2011 թվականին ընդունված ռազմական հայեցակարգից՝ կարելի է եզրակացնել, որ զինված ուժերի կայացումը կարևոր է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անդորրի համար<sup>98</sup>: Ռազմական ոլորտի արդիականացման հարցում իշխանություններն առանձնացնում են երեք ուղղություն. **ա.** ռազմարդյունաբերական համալիրի արդիականացում, **բ.** ռազմական կրթության առաջնահերթությամբ մարտունակության բարձրացում, **գ.** բանակի հեղինակության բարձրացում: Նազարբաևի գնահատմամբ՝ սեփական ռազմարդյունաբերական համալիրը հույժ կարևոր է ազգային անվտանգության համար, որը պետության ինքիշխանության, տարածքային անխախտելիության և միջազգային համագործակցության հիմնական երաշխավորն է: Եվ շեշտելու համար այդ գաղափարի պատմական կարևորությունը՝ Նազարբաևը հղում է

<sup>95</sup> Назарбаев Н. А., Послание Президента Республики Казахстан народу Казахстана "Казахстан-2030. Այս ծրագրի մասին տես' նաև՝ Հավելված 1, Էջեր 149-150:

<sup>96</sup> Сыроежкин К.Л. Казахстан – Китай: от приграничной торговли к стратегическому партнерству: монография. – В трех книгах. Книга 2. В формате стратегического партнерства. – Алматы: Казахстанский институт стратегических исследований при Президенте РК, 2010, с. 85.

<sup>97</sup> Peyrouse S., Armament Strategies and Development of The Kazakhstani Military-Industrial Complex: Stakes And Prospects, CAP Papers 185, 2017, p. 2.

<sup>98</sup> Նոյն տեղում, էջ 4:

կատարում հետվեստֆայան աշխարհակարգին<sup>99</sup>: Ղազախստանի ռազմական արդյունաբերության հիմքերը դրվել են խորհրդային տարիներին, սակայն այժմ գործում է ռազմարդյունաբերական 20 արդիական համալիր, որտեղ արտադրվում և այլ երկրներ են արտահանվում հրետանային համակարգեր, ռադիոհաղորդակցական, հրթիռային, նավատորմային, ավիացոն և այլ սարքավորումներ: Ռազմարդյունաբերական համալիրի արդիականացման և միջազգային ռազմական համագործակցության շնորհիվ՝ Ղազախստանը մշակել է ռազմավարական ծրագիր՝ մինչև 2020 թվականը ապահովել սեփական ռազմական պահանջարկի 80%-ը<sup>100</sup>:

Անհերքելի է, Ղազախստանի ռազմարդյունաբերական համալիրի վերագինումը տեղի է ունեցել նաև արտաքին ուժերի օգնությամբ: Անկախության տարիներից ի վեր դազախական գինված ուժերը բազմիցս մասնակցել են ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի միջազգային ռազմակրթական մի շարք ծրագրերի և զորավարժությունների: 2001 թվականի Նյու Յորքի ահաբեկչությունից հետո Ղազախստանի և ԱՄՆ-ի ռազմական հարաբերությունները մտան նոր փուլ. Ղազախստանը պարտավորվեց օգնել ԱՄՆ-ին ահաբեկչության դեմ պայքարում՝ նրան տրամադրելով Ալմաթայի օդանավակայանը՝ թոփքներ իրականացնելու համար<sup>101</sup>: Չնայած որ Ղազախստանն ակտիվորեն ռազմական տեխնիկա է ձեռք բերում եվրոպական երկրներից, Ռուսաստանը շարունակում է մնալ զենքի հիմնական մատակարարը և ռազմական դաշնակիցը:

Հավելենք, որ 1992թ. մայիսի 15-ից Ղազախստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, որին անդամակցում են նաև Հայաստանը, Ռուսաստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը<sup>102</sup>:

<sup>99</sup> **Назарбаев Н.**, Критическое Десятилетие, Аламты: Атамура, 2003. с. 202-203. Վեստֆայան համակարգի մասին առավել մանրամասն տե՛ս, **Եվրեմյան Տ.**, Վեստֆայան համակարգը իրեն արդի եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան, Քանրեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2015 № 3 (18), էջեր 31-47:

<sup>100</sup> **Peyrouse S.**, նշվ. աշխ., էջ 16:

<sup>101</sup> **Nicol J.**, Kazakhstan: Recent Developments and U.S. Interests, p. 3.

<sup>102</sup> ՀԱՊԿ առանձնահատկությունների և գործառույթների մասին տե՛ս, Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, URL: <http://www.mfa.am/hy/international-organisations/CSTO/> (12.03.2016)

## Դ. Արտաքին քաղաքականության ուղեծիրը

Ինքնիշխանությունն իր հետ բերեց քազմաթիվ մարտահրավերներ և հնարավորություններ: Հետխորհրդային ճգնաժամը հաղթահարելու համար նորանկախ Ղազախստանը պետք է իրականացներ կերպավոխումների համալիր ծրագրեր, հակառակ դեպքում, ինչպես նախագահ Նազարբաևն էր բնորոշում, «կոմայի» վիճակում ցանկացած հապաղում կամ սխալ քայլ կարող էր հանգեցնել մահացու ելքի<sup>103</sup>:

Նշենք, որ պետական ինստիտուտների կայացման և տնտեսության կազմակերպման գործընթացից ոչ պակաս կենսական նշանակություն ուներ արտաքին քաղաքականության նոր և ճկուն հայեցակարգի մշակումը: Դրա անհրաժեշտությունը բխում էր նախ և առաջ Ղազախստանի աշխարհագրական դիրքից, որը գտնվում է աշխարհաքաղաքականության հիմնադիրներից <. Մակինդերի մատնանշած միջնաշխարհի ծիրում (Heartland):> Եվ իր արտաքին քաղաքականությունը մշակելիս Ղազախստանն անպայմանորեն պետք է հաշվի նստեր մեծ տերությունների շահերի հետ: Այս խնդիրներին անդրադարձել է նաև ամերիկյան քաղաքագետ Զ. Բժեզինսկին, որի կարծիքով Եվրասիայում գերիշխող ուժը կարող է վերահսկել աշխարհի երեք ամենաառաջադեմ և տնտեսապես արդյունական տարածաշրջաններից երկուաը<sup>104</sup>:

Այս տարածաշրջանի մասին 20-21-րդ դարերի տեսական քննարկումների արդյունքում է, որ վերածնվեց «Եվրասիականություն» եզրույթը<sup>105</sup>: Նախագահ Նազարբաևը, հարիր գնահատելով Ղազախստանի դիրքն այս համատեքստում, 1994 թվականին շրջանառության մեջ դրեց «պետությունների Եվրասիական միություն» հղացքը<sup>106</sup>: Այն ենթադրում էր քաղաքական, տնտեսական և մշակութային երկխոսությունների համացանցի ներդրում հետխորհրդային տարածքի երկրների, Ռուսաստանի և Չինաստանի միջև:

<sup>103</sup> Նազարբաև Ն., նշվ. աշխ., էջ 10:

<sup>104</sup> Brzezinski Z., The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Importance, New York: Basic Books, 1997, p. 31.

<sup>105</sup> Եզրույթն սկսել է շրջանառվել ուսւ մտավորական շրջաններում՝ Ն. Դանիլսկի, Ն. Ստրախով և Լ. Լեռնտև: Համակողմանի մշակվել է 1920-1930-ականներին՝ Էմիգրանտ մտավորականության քազմապիսի աշխատություններում: Առավել ակտիվ էին Ն. Տրուբեցովը, Պ. Սավիցկին, Գ. Ֆլորովսկին, Ն. Բերդյակը և այլք: Իր ավարտուն պատմափիլսոփայական ծնակերպումն ստացել է Լ. Գումիլյովի գործերում: Տե՛ս, Գումիլև Լ. Ի., Կոնեց և վնօս Նախալո: Պոպուլյարные лекции по народоведению, Москва: Айрис-пресс, 2008, с 277.

<sup>106</sup> Назарбаев Н., Стратегия становления постиндустриального, с. 178-180.

Առանցքային դերակատարությունը պատկանում է Ռուսաստանի Դաշնությանը, որի հետ, թեպետ հետգաղութային ինչ-ինչ լարումների, Ղազախստանը պահպանում է առանձնահատուկ հարաբերություններ: Միաժամանակ այն համարժեք հարաբերություններ է զարգացնում նաև Չինաստանի հետ՝ հաշվի առնելով նրա ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևորությունը: Ասվածի հաստատութային դրսերումը դարձավ Ղազախստանի անդամակցությունը Շանհայի համագործակցության կազմակերպությանը<sup>107</sup>: 2004 թվականին ստեղծված այս կազմակերպությունն այժմ ընդգրկում է Ասիայի կարևորագույն երկրները՝ Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան, Պակիստան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Տաջիկստան: Խնդիր ունի ապահովելու խաղաղություն և համագործակցություն այս տարածաշրջանում:

Այսպիսով, բազմավեկտոր աշխարհին մասնակցելու և քաղաքական տարբեր կենտրոնների հետ հավասարակշիռ հարաբերություններ հաստատելու նպատակով Ղազախստանը որդեգրել է «բազմավեկտոր արտաքին քաղաքականության» հայեցակարգը: Այն հնարավորություն է տայիս երկրին հավասարակշիռ հարաբերություններ հաստատել մուսուլմանական, թյուրքական, ռուսական, ասիական և արևմտյան բևեռների հետ<sup>108</sup>:

Մուսուլմանական բևեռի մասով հատկանշական է Ղազախստանի մասնակցությունը «**Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը**», թյուրքականի մասով՝ «**Թյուրքալեզու պետությունների համագործակցությանը**», ասիականի մասով՝ «**Ասիայում փոխգործակցության և վստահության միջոցների խորհրդակցությանը**», ռուսականի մասով՝ «**Եվրասիական գոնդեսական միությանը**»<sup>109</sup>:

Ի տարբերություն կենտրոնասիական մի շարք երկրների՝ Ղազախստանը բավականին ընդգրկուն և փոխպատասխանատվության վրա հիմնված հարաբերություններ է հաստատել արևմտյան աշխարհի հետ: Այս համապատկերում կարևոր է փոխհարա-

<sup>107</sup> Կարապետյան Ա., Հարությունյան Է., Օհանյան Կ., Մկրտչյան Ն., Հայրապետյան Տ., Ղազախստան. Հաջողության գաղտնիքներ, Երևան, «Ժիգրան Մեծ» իրատարակչություն, 2013, էջ 22:

<sup>108</sup> Weitz R., Kazakhstan and the New International Politics of Eurasia, Washington D.C.: Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, July 2008, p. 10. Տե՛ս նաև, Հազարճաև Հ., նշվ.աշխ. էջ 299:

<sup>109</sup> Եվրասիական Տնտեսական միության մասին տե՛ս, Ter-Matevosyan V., Drnoian A., Mkrtchyan N., Yepremyan T., Armenia in the Eurasian Economic Union: reasons for joining and its consequences, Eurasian Geography and Economics, 2017, Vol. 58, No. 3, pp. 340-360, DOI:10.1080/15387216.2017.1360193

բերությունների հաստատումը Եվրոպական Միության և ԱՄՆ-ի հետ: Անկախության հենց առաջին տարիներին 1993-1995 թթ. Ղազախստանի և ԵՄ-ի միջև հաստատվեցին պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ, որոնք ինստիտուցիոնալացվեցին 1995 թվականին կնքված և 1999-ին ուժի մեջ մտած Գործընկերության և Համագործակցության համաձայնագրով, որը խիստ կարևոր էր Ղազախստանի՝ միջազգային հանրությանը ինտեգրվելու առումով<sup>110</sup>: Ի սկզբանե ինչպես ԵՄ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի հետ փոխհարաբերություններում առանցքային խնդիրը Ղազախստանի՝ ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած միջուկային արտենալի ապասպառագինումն էր<sup>111</sup>: Ղազախստանը ԽՍՀՄ-ից ժառանգել էր 1040 միջուկային մարտագլխիկներ, 104 միջմայրցամաքային բալիստիկ հրթիռներ, 40 հատ Tu-95 ռմբակոծիչներ՝ զինված 370 միջուկային հեռահար հրթիռներով<sup>112</sup>: Ղազախստանի միջուկային սպառագինության շուրջ միջազգային համաձայնության գալու նպատակով ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի հրավերով նախագահ Նազարբաևը 1992 թ. մեկնեց ԱՄՆ, որտեղ, ի պատասխան մասսայական ոչչացման գենքերից հրաժարման, Ղազախստանը ԱՄՆ կառավարության կողմից 1994-ին ստացավ շուրջ 300 միլիոն դոլար աջակցություն<sup>113</sup>: Նոյն թվականին Ղազախստանը ստորագրեց նաև միջուկային գենքի չտարածման մասին պայմանագիր<sup>114</sup>: Միջուկային անվտանգության շուրջ ևս մեկ պայմանագիր էլ կնքվեց ԵՄ-ի հետ 1999 և 2001 թվականներին<sup>115</sup>: Ահա նման միջազգային պարտավորությունների տակ մտնելուց հետո միայն Ղազախստանն սկսեց միջազգային համակարգին անդամագրվելու գործընթացը: Այն ենթադրում էր ներքին բարեփոխումների բազմաշերտ գործընթաց: Նպատակին հետամուս՝ նախագահ Նազարբաևը բանաձևում է «Ուղի դեպի Եվրոպա» պետական ծրագիրը,

<sup>110</sup> The European Union and Kazakhstan: Cooperation on the threshold of the third millennium, Interview by the Head of Delegation of the European Commission in Kazakhstan Michael B. Humphreys, Kazakhstan International Business Magazine, № 3, 2000.URL: <http://www.investkz.com/en/journals/50/331.html> (14.02.2015)

<sup>111</sup> **Назарбаев Н.**, На пороге, с. 66.

<sup>112</sup> **Weitz R.**, նշվ. աշխ., էջ 57:

<sup>113</sup> **İpek P.**, The Role of Oil and Gas in Kazakhstan's Foreign Policy: Looking East or West? Europe-Asia Studies, Vol. 59, No. 7, 2007, p. 1184.

<sup>114</sup> **Weitz R.**, նշվ. աշխ., էջ 59:

<sup>115</sup> European Commision, Kazakhstan & the EU, Chronology of bilateral relations. URL: [http://eeas.europa.eu/delegations/kazakhstan/eu\\_kazakhstan/chronology/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/kazakhstan/eu_kazakhstan/chronology/index_en.htm) (2.10.2016)

որը 2010 թ. հավանության արժանացավ նաև ԵԱՀԿ-ի կողմից<sup>116</sup>: Եվ հենց նույն թվականին էլ Ղազախստանն ստանձնեց ԵԱՀԿ նախագահությունը: Պետք է արձանագրել, որ ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան երկրները, օրինակ՝ Թուրքիան, Իրանը, Չինաստանը, նույնպես շահագրգիռ են Ղազախստանի հետ փոխհամագործակցային հարաբերություններ հաստատել՝ ղազախական էներգակիրներն իրենց երկրներ հասցնելու նպատակով<sup>117</sup>: Մենք պատրաստվում ենք նաև անդրադառնալ աշխարհաքաղաքական և ներքին ինքնութենական խնդիրներին ատենախոսության հաջորդ գլխում՝ նվիրված ղազախական ազգային ինքնության հիմնախնդիրներին, ուստի բավարարվենք այսքանով:

Ամփոփենք: Ղազախների պատմական ուղին առավել հարիր է նկարագրել ու բացատրել ըստ **ուշացած ազգերի** հղացքի: Հիրավի, պատմական ներքին ու արտաքին ազդակների ներգործությամբ նրանք հաճախ մարգինալացվել են պատմության մայրուղուց: Համակեցական կյանքի մի շարք կարծրակերպեր դարեր շարունակ պահպանվել են նրանց միջավայրում՝ ավանդական նախակենցաղ քոչվորական պատրիմոնիա, վարչական-գաղութային պատրիմոնիա, խորհրդային-կլանային սոցիալիզմ, որոնց ծիրում նրանց ազգային տեսակի ինքնահաստատումը (պահպանություն և զարգացում) վտանգվել է: Վտանգվել է հարդյունս կամ կլանային ինքնարավության, կամ խորհրդային քվազինորարարության:

Ազգային և պետական ինքնիշխանության մերօրյա վերահաստատումը հոչակագրել է ազգաշինության նոր փորձառության սկիզբ: Նպատակն է ծերբազատվել անցյալի խորորումներից, վերադառնալ նախնյաց բարքերին և կառուցել ազգային նորը՝ օգտագործելով Արևմութիւն և Արևելքի հիմնարար մտահոգնոր ու արտադրական տեխնոլոգիաները: Արդյո՞ք սա Ն. Ղազարբասի ինքնիշխանական համակարգի ուսուպիան է, թե՛ խորքային ազգային ինքնանորացման քաղաքակրթական և երկարաժամկետ ծրագիր՝ ցույց կտա պատմական ժամանակը:

<sup>116</sup> Hasanova N., Laruelle M., Peyrouse S., Into Eurasia Monitoring The EU's Central Asia Strategy, Center for European Policy Studies (CEPS), Brussels Fundacion Para Las Relaciones Internacionales Yel Dialogo Exterior (FRIDE), Madrid, 2010, p. 102.

<sup>117</sup> Gidadhulbi R. G. Oil Politics in Central, Economic and Political Weekly, Vol. 34, No. 5, Jan. 30 - Feb. 5, 1999, p. 262. Պետք է նշել, որ Իրանը նաև բավականին գործուն կրթական և մշակութային քաղաքականություն է վարում Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ՝ փորձելով խթանել արարապարսկական այրութենի և իրանագիտության կիրառելությունը տարածաշրջանի երկրներում, այդ թվում և՝ Ղազախստանում: Տե՛ս, Միանայան Ն., Հետխորհրդային Կենտրոնական Ասիայում, էջեր 71-72:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### 2. ՂԱԶԱԽՍՏԱՆ. ԱՇԳԱՅԻՆ ԻՆՔՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Արդի իմաստասիրությունն ինքնությունը բանաձևում է իբրև տվյալ գոյակցության (իսկ լայն առումով՝ սեոի և տեսակի) հարաբերությունն ինչպես իր, այնպես էլ շրջակա աշխարհի նկատմամբ: Եվ ինչպես պատմագետ Ա. Ստեփանյանն է սահմանում, «Դա բազմապիսի և բազմիմասի առնչությունների ամբողջություն է, հընթացս որոնց համադրվում են գոյակցության ներքին և արդաքին դարածությունները: Եվ այդ գործընթացի ծավալման պայմաններում նրա երկու հիմնակազմիկ բևեռները՝ «նոյնությունը և այլությունը», անընդմեջ շրջափոխվում են՝ ապահովելով նրա բնականոն շարունակականությունը ժամանակի ու դարածության հոլովույթում»<sup>118</sup>:

Հարկավ, այս բանաձևն արտահայտում է ինքնության իդեալական (և փոքր-ինչ ուսուպիական) վիճակը: Իրականությունն ավելի բարդ է: Եվ ասվածն առավել քան վերաբերում է այն ընկերային կյանքին, որտեղ ինքնությունը մեծապես լծորդված է բանական ինքնագիտակցությանն ու ընտրությանը: Դա է պատճառը, որ քաղաքակրթական ինքնությունը սահմանվում է իբրև տվյալ ընկերային միավորի ինքնահայեցողություն (authoreflexion): Ի հետևանս դրա՝ վերջինս տեքստային է: Այլորեն՝ քաղաքակրթությունը հարաբերվում է ինքն իրեն ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տեքստերի միջոցով՝ ծես, առասպել, էպոս, գրականություն, պատմագրություն, գիտություն, իմաստասիրություն, արվեստ և այլն:

Նշանային և իմաստային նկարագրությունների միջոցով դրանք կոդավորում են ինքնության հարափոփոխ տարակերպերը, բացահայտում դրանց ալգորիթմերը՝ անցյալի, ներկայի և տեսանելի ապագայի հեռանկարում: Իզուր չէ, որ արդի ազգաբանության մեջ ազգերի կայացման և զարգացման գործում առավել կարևորվում է նրանց մտահոգւոր (վիրտուալ) միասնությունը: Ասվածն իրական է միայն համապատասխան ընտրախավի առկայությամբ, որը տվյալ տեսակի պահպանման և

<sup>118</sup> Ստեփանյան Ա., Երկու խոսք, ինքնության հարցեր, խմբ. Ա. Ստեփանյան, Երևան «Զանգակ-97», 2002, էջ 9: Տե՛ս նաև՝ Barth F., Introduction, in Barth F., (Ed.) Ethic Groups and Boundaries. Social Organization of Culture Difference, London: Allen and Unwin, 1969, pp. 17 – 21.

այլացման գործընթացի հիմնական դերակատարն է<sup>119</sup>: Հակառակ պարագայում քաղաքակրթությունները և ազգերը դատապարտված են հետընթաց ինքնակրկնության կամ Էլ Կեդ-պատրանքային առաջընթացի:

Ղազախական պատմության համառոտ ուրվագիծն իսկ առիթ է տալիս մտածելու, որ նրան դարեր ի վեր ներհատուկ է եղել քաղաքակրթական կայացման երկորդ ուղին: Քաղաքակրթական ինքնահայեցողության և ազգային ինքնագիտակցության անբավարար մակարդակը, աշխարհին համաքայլ ազգային մտավորականության բացակայությունը հանգեցրել են ղազախների պատմական լուսանքայնացմանը:

Չբարձրաձայնելով այս մասին՝ նորանկախ Ղազախստանի կառավարող ընտրախավը մեկնարկում է իրավիճակի հենց նման սթափ գնահատականից: Եվ գործարկում է ղազախական հավաքականության արդիականացման մի համալիր ծրագիր, որը հնարավորություն կտա Ղազախստանին նորովի ներկայանալու աշխարհին:

Մենք որոշել ենք լուսաբանել այս գործընթացի միայն մի քանի հիմնարար դիտանկյուններ՝ հասկանալու համար այն տեղաշարժերը, որոնք առնչվում են ազգային լեզվին, խորհրդանշիշերին, կրթությանը, կրոնին, միջէթնիկ հարաբերություններին և պատմագրությանը:

## 2.1. Լեզվագաղաքականություն

Ազգային ինքնության կայացման և կառավարման գործում չափազանց կարևոր դերակատարում ունի լեզուն: Իբրև ինքնության գործիք՝ այն ունի մշակութային, կրոնական, սոցիոլոգիական, փիլիսոփայական, քաղաքագիտական, աշարհաքաղաքական այլազան հիմնավորումներ: Այս համատեքստում մասնավոր ուշադրության են արժանի լեզվի և ազգաշինության առնչությունները: Դրանք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու հասարակությունների կերպափոխումները պատմության ամենատարբեր դարաշրջաններում՝ սկսյալ նախակենցաղ կյանքից մինչև հետխորհրդային ժամանակաշրջան:

Այս առումով, կարծում ենք, կարևոր են արդի ակադեմիական մոտեցումներն առայն, որ լեզուն, իբրև սոցիալ-մշակութային գործիք, հիմնարար դերակատարություն

<sup>119</sup> Cohen A. P., The Symbolic Construction of Community, London, New York: Routledge, 2013, p. 72.

ունի ազգային ինքնության կայացման գործում<sup>120</sup>: Ավելին, լեզվամտածողությունը կարևոր է նաև ինքնության պլանավորման, այլակերպման և իրագործման հարցում. Լ. ֆոն Վիտգենշթայնը համակեցական կյանքը սահմանում է իբրև լեզվական խաղերի միջավայր՝<sup>121</sup>:

## ա. Ղազախերենի կարգավիճակի հիմնախնդիրը

Ղազախստանի արդի լեզվաքաղաքականությունը համապատմական բովանդակություն ունի: Այս լուսի ներքո հստակ է, որ Նազարբաևի վարչակարգը կանգնած է բարդ փնտրտութիւն առջև. ազգաշինության համատեքստում կառուցել միջհասարակական կայուն հարաբերություններ շուրջ 130 էթնիկ և 17 կրոնական խմբերի միջև<sup>122</sup>:

Խորհրդային ժառանգությունն այս պարագայում անընդունելի է: Հիշենք, խորհրդային լեզվաքաղաքականությունը ռուսերենին շնորհել էր քաղաքային և քաղաքական լեզվի գերակա կարգավիճակ, մինչդեռ ղազախերենը լուսանցքայնացվելով վերածվել էր կենցաղային լեզվի: Ռուսերենը, իբրև «կայսերական» լեզու, դարձել էր ղազախական հասարակության աստիճանակարգայնացման ցուցիչ:

Ասվածի ծայրահեղ դրսևորումը Կենտրոնական Ասիայի հասարակություններում գոյություն ունեցող «մանկուրսիզմի» մասին դիսկուսիան է<sup>123</sup>: Հատկանշելի է, որ Ղազախական ԽՍՀ-ի 1978 թվականի սահմանադրության մեջ ազգային պետական լեզվի հնարավորությունը տարրալուծված էր «ազգերի իրավահավասարության և եղբայրության» կոմունիստական իիմադրույթի մեջ: Մի իրողություն, որ լոելայն հաստատագրում էր ռուսերենի գերակայությունն իբրև ներպետական լեզվահաղորդակցման գլխավոր միջոցի. «Ղազախական ԽՍՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ իրենց ծագումից, ընկերային և ունեցվածքային վիճակից, ռասայական և ազգային պարկանելությունից, սեղից, կրթությունից, լեզվից, կրոնից,

<sup>120</sup> Smith A., նշվ. աշխ. էջ 46.

<sup>121</sup> Տե՛ս՝ և Hunnings G., The World and Language in Wittgenstein's Philosophy, Albany: Suny Press, 1988, pp. 59 – 78.

<sup>122</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

<sup>123</sup> Եզրը գրականության մեջ ներմուծվել է դրու գրող Չինգիզ Այթմատովի կողմից իր «Եվ դարից երկար է ձգվում օրը» վիպակում՝ ներկայացնելու համար սեփական պատմությունը, լեզվական և մշակութային ինքնությունը կորցրած անհատին: «Մանկուրտիզմ» եզրը մեծապես օգտագործվում է ղազախ ազգայնականների կողմից՝ մատնանշելու համար իրենց մշակույթն ու լեզուն կորցրած ռուսախոս ղազախներին: Հետազոտողները գուգահեռներ են տեսնում մանկուրտիզմի և աֆրիկյան «սևականության» միջև: Տե՛ս, Matuszkiewicz R., The language Issue in Kazakhstan-institutionalizing New Ethnic Relations after Independence, Economic and Environmental Studies, Vol. 10, No. 2, 2010, p. 215.

աշխարանքային գործունեության դեսակից, բնակավայրից և այլ հանգամանքներից»

<sup>124</sup>:

Միաժամանակ, հասարակական գիտակցության մեջ ամրագրվում էր այն դրույթը, որ միայն ռուսերենի միջոցով են ղազախներն ի զորու հաղորդակցվելու արդի քաղաքակրթության արժեքներին՝ գիտություններ, արվեստներ, տեխնոլոգիաներ: Դրույթ, որի իսկությունը դժվար էր խնդրարկել:

Սակայն Խորհրդային Ղազախստանում (թեպետ թույլ դրսադրմամբ) առկա էր նաև հակոտնյա միտումը. սկսած 1970 – 1980 – ականներից՝ գործում էր Ղազախ Շըլլ Քողամը (Ղազախերեն լեզվի ընկերությունը) ոչ պաշտոնական կազմակերպությունը՝ բաղկացած ընդդիմադիր մտավորականներից, որոնք մտահոգ էին ազգային լեզվի, մշակույթի և ինքնագիտակցության աղետալի մակարդակով: 1980-ականների վերջից նրանց նկատմամբ վերաբերմունքը կտրուկ փոխվեց. Նազարբակը և իր շրջապատն սկսեցին օժանդակել մշակութային ընդդիմադիրներին՝ Ղազախստանի ղազախացման իրենց ծրագրերն իրագործելու ճանապարհին<sup>125</sup>:

Առաջընթացը նկատելի էր հընթացս ԽՍՀՄ փլուզման գործընթացի. 1989 թվականին ընդունված օրենքով ղազախերենը հոչակվեց պետական լեզու, և հանձնարարվեց այն օգտագործել կրթական բոլոր մակարդակներում<sup>126</sup>:

Անկախ Ղազախստանի առաջին սահմանադրության մեջ այս օրենքն ստացավ սահմանադրական հիմնադրույթի կարգավիճակ. «Ղազախստանի Հանրապետության պետական լեզուն ղազախերենն է: Ռուսերենը համարվում է ազգամիջյան հաղորդակցության լեզու: Հանրապետությունը երաշխավորում է պահպանել ազգամիջյան հաղորդակցության և այլ լեզուների կիրառման ոլորտները և նպաստել դրանց ազատ զարգացմանը»<sup>127</sup>: Հավելվածում հինադրույթը մասնավորեցվում է. «Անցումային ժամանակաշրջանում պայմաններ ստեղծել պետական լեզվի ազատ և անվճար

<sup>124</sup> Конституция Казахской ССР - 1978, 5, 32: URL: [http://www.worldstatesmen.org/Constitution\\_of\\_KazSSR-1978.pdf](http://www.worldstatesmen.org/Constitution_of_KazSSR-1978.pdf) (09. 10. 2016)

<sup>125</sup> Luong P. J., նշվ. աշխ., էջ 128:

<sup>126</sup> Matuszkiewicz R., նշվ. աշխ., էջ 215:

<sup>127</sup> Конституция Республики Казахстан – 1993, VIII, 2.

ուսուցման համար: Նոյն ժամանակաշրջանում գործավարությունը Ղազախստանի Հանրապետությունում անցկացնել ղազախերեն և ռուսերեն լեզուներով»<sup>128</sup>:

Շեշտերը հիմնովին փոխված են երկրորդ սահմանադրության մեջ՝ ընդունված 1995 թվականին: Աստ նախ հաստատագրված է, որ պետական ինքնիշխանության կրողը Ղազախստանի ժողովուրդն է. «Մեր ժողովուրդը Ղազախստանի՝ միավորված ընդհանուր պատմական բախչով [...]»<sup>129</sup>: Եվ ապա այս հիմամբ իրավագրվում է. «Ղազախստանի Հանրապետությունում պետական լեզուն ղազախերենն է: Պետական հաստատություններում և դեղական արյաններում ղազախերենին հավասար օգտագործվում է ռուսերեն լեզուն»<sup>130</sup>:

Այսօրինակ պատկերացումներն ավարտունության հանգրվանին են հասցված մեկ այլ կարևոր փաստաթղթի մեջ՝ «Ղազախստան-2050»<sup>131</sup>: Տեղ-տեղ ուսուպիստական այդ փաստաթուղթն ապագայատեսական ծրագրեր է առաջարկում՝ լիահոյս, որ դրանք ի զորու են ավարտին հասցնելու արդի ղազախ ազգի կայացման գործընթացը: Եվ մեկնադրույթը կրկին ազգային ինքնությունն ու լեզուն են. «Լեզուն պետք է միավորիչ ազդեցություն ունենա Ղազախստանի ժողովրդի համար»,<sup>132</sup> որպեսզի պետությունն ապրի ներդաշնակ համակեցական կանոններով: Ղազախերենը ներկայացվում է իբրև պետականության խորհրդանշից<sup>133</sup>: Համաձայն ղազախ հետազոտողների՝ աշխարհի կայսարական և հայրենասիրության գործընթացն սկսվում է հենց մայրենի լեզվի (*Ana tili*) գաղափարից, որը շուտով դառնալու էր պաշտոնական խոսությի կարևոր մասը<sup>134</sup>:

Զուգընթաց՝ պաշտոնական քարոզությունը հայտագրում է իին խորհրդային կարծրատիպը՝ ազգամիջյան հարաբերություններում «օտարներ, մերոնք կամ նրանք չպետք է լինեն»<sup>135</sup>: Նույն տրամաբանությամբ՝ ղազախերենը ճանաչվում է իբրև «առաջինը հավասարների մեջ»՝ զրկելով այդ կարգավիճակից ռուսերենին: Այլորեն՝

<sup>128</sup> ԱՆՀ և ՄԵՂՈՆ, Переходные положения, II, 4.

<sup>129</sup> Конституция Республики Казахстан – 1995, Эпиграф.

## <sup>130</sup> ԵՌԵ Ն ԱԵՂՈՒՄ, 7, 1 - 2:

<sup>131</sup> «Ղազախստան-2050» հազմավարության բովանդակության մասին տե՛ս, Հավելված 3, էջեր 153-157:

<sup>132</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

<sup>133</sup> Fierman W. Kazakh Language and Prospects, pp. 393-423.

<sup>134</sup> Назарбаев Н., Стратегия Независимости, с. 111.

<sup>135</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

խոսքը կրկին տեղեկատվական դաշտի բոլոր մակարդակների ղազախացման մասին է:

Լեզվի մասին սահմանադրական հիմնադրույթի իրական մեկնակետն այն էր, որ էթնիկ ղազախների մեծամասնությունը չուներ մայրենի լեզվի իմացության բավարար մակարդակ, և ներհանրութային ինֆորմացիայի հաղորդման գործիք շարունակում էր մնալ ռուսերենը: Սակայն այդ փաստը չկանգնեցրեց Պետական վիճակագրական ծառայությանը՝ 1999 թվականին հաստատագրելու, որ համաձայն համապետական հարցախույզի՝ ղազախների 95%-ը հմտորեն տիրապետում է ղազախներեն լեզվին<sup>136</sup>: Հարկավ, արդյունքն արժանահավատ չէր և վկայում էր ազգաշինական ծրագրի, բայց ոչ արդյունքի մասին:

Ասվածին հավելենք, որ համաձայն սահմանադրության՝ սենատի և մեջլիսի ներկայացուցիչները պարտադիր պետք է տիրապետեն պետական լեզվին: Նույնը վերաբերում է կենտրոնական վարչական ապարատի և դատարանի բոլոր պաշտոնյաներին<sup>137</sup>: Հատուկ հոդվածով սահմանվում է նախագահի կարգավիճակը. «Ղազախստանի Հանրապետության նախագահ կարող է ընդունել Ղազախստանում ծնված՝ ոչ պակաս, քան 40 տարեկան և պետական լեզվին ազարորեն պիրապետող քաղաքացին»<sup>138</sup>:

## բ. Ղազախներենի հանրայնացումը

Համաձայն արդի հումանիտար մտքի՝ այս գործընթացը ներունակ է նախ և առաջ լեզվական նոր տեխնոլոգիաների և նոր պատումների առկայության պարագայում: Հարդյունս՝ կայանում է ազգային նոր ինքնության ձևավորումը և վերարտադրությունը<sup>139</sup>: Այս քաղաքականության հիմնագաղափարը նույնպես ձևակերպված է «Ղազախստան - 2050» ծրագրային փաստաթղթում.

«Պատրասխանակու լեզվաքաղաքականությունը ղազախական ազգը միավորող ամենակարևոր գործոններից մեկն է: Ղազախական լեզուն մեր հոգևոր կորիզն է: Մեր խնդիրն է զարգացնել մեր լեզուն՝ այն ակտիվ օգտագործելով բոլոր ոլորդներում:

<sup>136</sup> Bhavna D., Kazakhstan, p. 113:

<sup>137</sup> Конституция Республики Казахстан – 1995, 9, 14, 58, 1.

<sup>138</sup> Конституция Республики Казахстан – 1995, 42, 1.

<sup>139</sup> Ст’я, Anderson B., նշվ. աշխ., էջեր 208-209.

Սերունդներին մենք ժառանգություն պետք է թողնենք ժամանակակից լեզու, որին ներդաշնակորեն պետք է ավելանան մեր դեսլականները»<sup>140</sup>:

Առաջին քայլն այս ուղղությամբ հրաժարումն էր կիրիլիցայից, որը պարտադրվել էր Կենտրոնական Ասիայի ժողովուրդներին 1940 թվականից ի վեր<sup>141</sup>: Նախաձեռնությունը գալիս էր Քազաք Թըլը կազմակերպությունից և ԳԱ Լեզվի ինստիտուտից: Ճիշտ է, այբուբենի լատինացման որոշումը պաշտոնապես կայացվեց դեռևս 1996 թվականին<sup>142</sup>, բայց օրակարգ մտավ միայն տասը տարի անց՝ Նազարբաևի անմիջական միջնորդությամբ<sup>143</sup>: Այդու ակնհայտ դարձավ սեմիոտիկ հղումն առ քաղաքակիրթ աշխարհ, բայց նաև առ թյուրքալեզու աշխարհ, քանզի վերջինս այժմ համարյա ամբողջությամբ գրում և կարդում էր այդ այբուբենով:

Հուսկ ակնբախ դարձավ մեկ այլ, ավելի հիմնարար խնդիր. դազախերենն անկարող էր արտահայտել արդի քաղաքակրթության իմաստային շերտերը: Բացը հաղթահարելու համար 1998 թվականին Տերմինաբանական պետական հանձնաժողովին հանձնարարվեց աշխատանք սկսել դազախերենը նոր եզրույթներով ու հասկացություններով հարստացնելու ուղղությամբ:

Առայսօր ձեռք բերված արդյունքները գոհացուցիչ չեն: Հասկանալով դա՝ Նազարբաևը և իր շրջապատը ցանկանում են կրկին դիմել ռուսերենի օգնությանը: Հանդերձ այդու նրանք որոշել են թարմացնել իրենց ներկապնակը՝ խաղի մեջ ներգրավելով արդի ամենազարգացած լեզվի՝ անգլերենի հնարավորությունները: Ուսումնասիրողներից ոմանք այս գործընթացը բնութագրում են իբրև դազախերենի քաղաքայնացում: Այս մասին մենք պատրաստվում ենք խոսել արդի դազախական դպրոցի կապակցությամբ<sup>144</sup>:

Հանրայնացման մյուս կարևորագույն հիմնախնդիրը ազգային նորօրյա պատումների ձևավորումն է: Այդ փորձառությունը Ղազախստանին ծայրաստիճան

<sup>140</sup> **Назарбаев Н. А.**, Стратегия «Казахстан-2050».

<sup>141</sup> Նպատակն էր ԽՍՀՄ թուրքալեզու ազգարնակչությանը հեռու պահել համաթուրքական ունիվերսալիզմից:

<sup>142</sup> **Landau J. M., Kellner-Heinkele B.**, նշվ. աշխ., էջ 141:

<sup>143</sup> **Tanayeva L.**, The Politics of the Latin Alphabet in Kazakhstan, The Annual of Language & Politics and Politics of Identity, 2007, p. 79.

<sup>144</sup> Ի տարբերություն հայերենի կամ վրացերենի՝ դազախական լեզուն խորհրդային տարիներին չկարողացավ կայանալ իբրև գիտության լեզու:

պակասում է, քանզի և՝ ցարական, և՝ խորհրդային ռեժիմների ժամանակ ղազախական ազգային պատումները լուսանցքայնացվել էին՝ մնալով առասպելի և էպիկական ասքի մակարդակին: Հույժ հատկանշելի էին բանասաց-բանաստեղծ Աբայի գործերը, որոնցում իդեալականացվում էր ղազախական «պանծալի անցյալը»:

Հետխորհրդային տարիներին սուր ձևով զգացվում է այդ և նման պատումների արդիականացման և նոր պատումների ստեղծման անհրաժեշտությունը: Դա ենթադրում է երկարաժամկետ և բարդ աշխատանք: Նազարբակի վարչակարգը գիտակցում է դա: Որպես օրինակ՝ կարելի է նշել Ղազախական խանության մասին հետխորհրդային ազգային պատումները, որոնք օգտագործվում են պետականության սիմվոլիկան հաստատագրելու նպատակով:

2015 թվականին Ղազախստանը մեծ շուքով տոնեց Ղազախական խանության ստեղծման 550 ամյակը, որը, չնայած ակնհայտ հակասություններին, ղազախական հասարակությանը մատուցվում էր իբրև Ղազախստանի պետականության պատմության անքակտելի մաս: Նման պատումներն օգտագործվում են ոչ միայն ազգային ինքնության ամրապնդման, այլև պետության միջազգային պատկերի (իմիջ) ստեղծման նպատակով:

Ավելին՝ Ղազախստանի նախագահի պաշտոնական կայքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն 2015 թվականին ավելի քան 70 պետական, միջազգային հանդիպումների, քննարկումների և այլ միջոցառումների ժամանակ անդրադարձ է կատարվել Ղազախստանի խանության 550 ամյակին: Այն զուգորդվում է պետականության գաղափարին և առավել ցցուն խաղարկվեց 2016 թվականին՝ անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների համատեքստում<sup>145</sup>: Նախագահ Ղազարբակը հաճախ օգտագործում է պատմական հեռանկարի արքետիպը.

«Ղազախական խանությունը սրանից հինգուկես դար առաջ, թեկուզ և միայն դրոշ բարձրացնելով, դարձել է հեռավոր ժամանակներում Եվրասիայի մեծ պակասականում ապրած սակերի, հոների, ուսունների, ավելի ուշ նաև՝ Մեծ թյուրքական կազանարի, Դեշտ-ի ղվչաղի ու Ռոկե հորդայի օրինական ժառանգորդը:

<sup>145</sup> Қазақстан Республикасы Президентінің Ресми Сайты, Мемлекет басшысы Н. Назарбаевтың Қазак хандығының 550 жылдығына арналған салтанатты жиында сөйлеген сөзі, [URL: http://www.akorda.kz/ru/search?q=550&page=1](http://www.akorda.kz/ru/search?q=550&page=1) (10.01.2017)

Գալով նոր ժամանակներին, եթե ուշադրություն դարձնենք նոր թյուրքական ժամանակաշրջանին, ապա հայտնի Հռոմեական կայսրությունը փլուզվեց, Եվրոպայի այսօրվա պետություններն էլ դեռ ձևավորված չէին, իսկ Չինասփանում երեք իշխանություններ ու գարբեր դինաստիաներ միմյանց դեմ թշնամական պայքարի մեջ էին: «Ենց այդ ժամանակ՝ 6-րդ դարում՝ 552 թվականին, Ալթայում ծնունդ առավ հղոր, ուժեղ մի պետություն՝ Մեծ թյուրքական կազանար անունով: Ընդամենը կես դարի ընթացքում Ալթայն ու Կովկասն առնում է իր միանձնյա իշխանության գակ»<sup>146</sup>:

Նազարբաևի վարչակարգը դազախերեն պատումները դիտարկում է իբրև ազգային-կոլեկտիվ իշխողությունը և կամքը փոխակերպելու, մարդկանց ինքնութենական արժեքները ձևավորելու յուրօրինակ մեխանիզմ: Հարկավ, այս ճանապարհով իշխող վերնախավը փորձում է նաև օրինականացնել իր կարգավիճակը<sup>147</sup>: Ծրագիրը կրկին վկայում է հասարակության և պետության դազախականացման մասին: Վերջնական նպատակ է սահմանվում դազախերենի գերակայության հաստատումը մնացած լեզուների նկատմամբ՝ հարգանքի և սատարումի խոստումներով.

«[...] մինչև 2025 թվականը դազախսփանցիների 95%-ը պետք է փիրապեղի դազախերեն լեզվին: Եթե երեխան դպրոց է հաճախում այս գարի, ապա գասը-դասներկու գարի անց մենք կունենանք դազախսփանցիների մի սերունդ, որը լիովին կդիրապեղի դազախերենին»<sup>148</sup>:

Հիշենք. անկախության հաստատումից հետո էլ դազախական մտավորականության մեծ մասը խոսում էր և նախընտրում էր խոսել ոռուսերեն: Նման ժառանգությունը ստեղծեց մի շարք դժվարություններ Ղազախստանի ազգաշինության գործընթացների համար:

<sup>146</sup> Қазақстан Республикасы Президентінің Ресми Сайты, Мемлекет басшысы Н.Назарбаевтың Қазак хандығының 550 жылдығына арналған салтанатты жиында сөйлеген сөзі, 11 қыркүйек 2015, URL: [http://www.akorda.kz/kz/speeches/internal\\_political\\_affairs/in\\_speeches\\_and\\_addresses/memleket-basshysy-nnazar-baevtyn-kazak-handygynyn-550-zhyldygyna-arnalgan-saltanatty-zhiynda-soilegen-sozi](http://www.akorda.kz/kz/speeches/internal_political_affairs/in_speeches_and_addresses/memleket-basshysy-nnazar-baevtyn-kazak-handygynyn-550-zhyldygyna-arnalgan-saltanatty-zhiynda-soilegen-sozi) (10.02.2017) Պատմությանը թիւ թե շատ ծանոթ մարդիկ ակնհայտ հակասություններ կգտնեն այս ասույթի մեջ, սակայն հետաքրքրին այն է, որ Ղազարբաևի այս ելույթը նախագահի պաշտոնական եռալեզու (դազախերեն, ռուսերեն, անգլերեն) կայքում դրված է միայն դազախերեն տարրերակով: Ցանկանում ենք առանձնացնել խեղաթյուրման այն մասը, ըստ որի՝ Կովկասը 6-րդ դարում թյուրքական գերակայության տակ էր գտնվում:

<sup>147</sup> Ives P., Language and Hegemony in Gramsci, London: Pluto Press, 2004, pp. 111-112.

<sup>148</sup> Տե՛ս, Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

Ղազախերենի հանրայնացման գործում հովժ կարևոր է ԶԼՄ-ների դերը: Համաձայն լեզվի մասին օրենքի՝ հեռարձակումների առնվազն 50%-ը պետք է իրականացվի ղազախերենով<sup>149</sup>: Ղազախստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 10-րդ հոդվածով բոլոր լեզուներով հեռարձակվող նյութերի ժամաքանակը միասին վերցրած չպետք է գերազանցի ղազախերենի ժամաքանակին<sup>150</sup>: Չնայած օրենքին՝ առկա պատկերը խնդրահարուց է. Տեղեկատվության և կապի նախարարությունն արձանագրում է, որ Երկրում գործող շուրջ 70 ռադիոհեռուստատեսային կայանների հեռարձակումների միայն 10%-ն է իրականացվում ղազախերենով<sup>151</sup>: Եվ ցավալին այն է, որ այս ցուցանիշի բարձրացման միտում չի նկատվում: Մինչդեռ հանրահայտ է մեղիայի կարևորությունը ազգաշինական գործընթացներում, հատկապես թյուրքալեզու միջավայրերում<sup>152</sup>:

Անկախացումից ի վեր ակնառու տեղաշարժեր են արձանագրվել ղազախական մամուլում: Ներկայումս իրատարակվում է շուրջ 20 անուն կենտրոնական թերթ ղազախերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Մարզային և շրջանային թերթերի թիվը հասնում է 300-ի, որոնց կեսը ղազախերենով է: Սակայն ընթերցող զանգվածի հաշվարկով ղազախերենը կրկին խիստ զիջում է ռուսերենին: Ինչպես տեղեկատվության այլ միջոցները, մամուլը նույնպես դարձել է ղազախական հասարակության աստիճանակարգայնացման ցուցիչ. զանգվածը կարդում է ղազախերեն, իսկ ընտրախավը՝ ռուսերեն կամ անգլերեն:

Խոշոր հաշվարկով՝ այս նույն խնդիրն են լրացում նաև ազգային գրականությունը, թատրոնը և արվեստը: Դրանք նոր ընձյուղում են ստացել մեր օրերում և պահանջում են առանձին քննություն, որը, սակայն, դուրս է մեր քննության շրջանակից:

Ղազախերենի հանրայնացման մյուս դիտանկյունն առնչվում է նրա կապերին թյուրքական մյուս լեզուների հետ: Շուրջ 200 միլիոնանց մի զանգված, որ կանգնած է

<sup>149</sup> **Bhavna D.**, A Year of Growing Unrest and Opposition, in Peter Rutland (Ed.), Annual Survey of Eastern Europe and the Former Soviet Union: 1997, The Challenge of Integration, New York: M.E. Sharpe, 1998, p. 369.

<sup>150</sup> Закон Республики Казахстан от 18 января 2012 года № 545-IV о телерадиовещании (с изменениями и дополнениями по состоянию на 01.01.2017 г.) URL: [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=311148-20#pos=232,-108](https://online.zakon.kz/Document/?doc_id=311148-20#pos=232,-108) (02.08.2017).

<sup>151</sup> В Казахстане 10% телевещания ведется на казахском языке, Сетевое издание "Zakon.kz", URL: <https://www.zakon.kz/201358-v-kazakhstane-10-televeshhanija.html> (10.09.2017).

<sup>152</sup> Բավական է հիշել ռադիոյի դերը քեմալական թուրքիայի ազգաշինական փորձառությունում:

ինքնանորոգման բարդ խնդիրների առաջ: Ստեղծվել են մշակութային բազում միություններ, որոնցից առավել ներգործունը «Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպությունն» է՝ կենտրոնը Անկարայում: Այն խնդիր ունի պահպանելու, զարգացնելու և սերունդներին փոխանցելու թյուրք ժողովուրդների մտավոր և նյութական արժեքները: Հիմնադիր ժողովը տեղի է ունեցել Ալմաթիում 1993 թվականին, և հիմնարար փաստաթյահի մշակման մեջ Նազարբաևն ունեցել է ազդեցիկ դերակատարություն: Ղազախստանն ակտիվ մասնակցում է կազմակերպության բոլոր աշխատանքներին: Ավելին, այսօր դրանք դեկավարում է Դյուսեն Կասեննովը՝ Ղազախստանի մշակույթի նախկին նախարարը:

Այս հիմամբ Թուրքիան փորձեր է կատարում ակտիվացնելու իր լեզվական և մշակութային ներկայությունը Ղազախստանում: Բացվել են դպրոցներ, մշակութային միություններ, ուսումնական համալսարաններ, սակայն արդյունքներն առայժմ համեստ են: Թերևս ղազախական կողմը զգուշանում է թուրքականության խիստ գորացումից: Այս հիմնախնդրին մենք պատրաստվում ենք անդրադառնալ ավելի ընդլայն: Աստ բավարարվենք ասվածով: Հավելենք, որ Ղազախստանը հայտագրում է իր հավատարմությունը եռալեզու ապագային՝ ղազախերեն, ռուսերեն, անգլերեն, որի մասին Նազարբաևը ձևակերպում է հետևյալը.

«Եռալեզվությունը պետք է խրախուսվի պերական մակարդակով: Ռուսաց լեզվին և Կիրիլիցա այրութենին մենք պետք է վերաբերվենք նոյնքան խնամքով, որքան ղազախերենին: Բոլորիս համար ակնհայտ է, որ ռուսաց լեզվին դիրապետելը մեր ազգի պատմական առավելությունն է: [...] Մենք պետք է թողչը կադարենք նաև անգլերեն լեզվի ուսուցման գործում: Այս ժամանակակից լինգուա ֆրանկային դիրապետելը մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքում նոր հնարավորություններ կրացի»<sup>153</sup>:

## 2.2. Ինքնության ազգային-պետական խորհրդանիշերը

Բազմամշակույթ Ղազախստանի ընտրախավն ընդգծում է ազգաշինության և՝ էթնիկ, և՝ սոցիալական, և՝ քաղաքացիական գործընթացների կարևորությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է տարբեր հասարակական խմբերի միջևն ձևավորել

<sup>153</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

կոլեկտիվ ինքնության զգացողություն և գիտակցություն: Համաձայն Է. Սմիթի՝ հոյժ կարևոր են անցյալում արմատավորված մշակութային խորհրդանիշերը<sup>154</sup>:

Երևոյթն առանձնակի կարևորություն ունի Ղազախստանում, որտեղ վարչակարգը ձգտում է ձևավորելու վերեթնիկ ընկերային և քաղաքական ինքնություն: Նպատակին հետամուտ՝ Ղազարբակը ձեռնամուխ եղավ մի շարք համակարգային վերափոխումների, որոնք ուղեկցվեցին կառավարման նոր ռազմավարության և հաստատությունների ձևավորումից մինչև պետական խորհրդանիշերի՝ հիմնի, դրոշի և գերբի փոփոխությամբ:

## ա. Դրոշ

Դրոշի խորհրդանշական դերի մասին բավականին հետաքրքրիր դիտարկումներ կան Ս. Հանթինգթոնի «Քաղաքակրթությունների բախումը» աշխատությունում, որտեղ ազգային դրոշի խորհրդանիշը (հատկապես հետխորհրդային տարածքում) գուգորդվում է էթնիկ ինքնագիտակ-ցության զարթոնքին և ազգայնականության վերընջուղմանը<sup>155</sup>: Պետական խորհրդանիշերը և մասնավորապես դրոշը ունի երկակի իմաստ՝ քաղաքական և ազգային: Դրանք ընդգծվում են դրոշի պատկերագրությամբ:

Ղազախական ԽՍՀ-ի դրոշը (1953 – 1991 թթ.) ներկայացնում էր մի կարմիր պաստառ, որի ստորին հատվածում բաց կապույտ գունաշերտ կար: Վերևի ծախ անկյունում ուկեզօծ մոլոր ու մանգաղն էին, իսկ դրանցից քիչ բարձր՝ աստղը: Բոլոր խորհրդանիշերը մեկնաբանվում էին ըստ կոմունիստական գաղափարաբանության՝ պայքար, ազատություն, խաղաղ աշխատանք և երջանկություն:

Ինքնիշխան Ղազախստանի դրոշը՝ ընդունված 1992 թվականին, միանգամայն այլ խորհրդանշական իմաստ ունի: Տիրապետող կապույտ գույնը (թյուրքական էթնո-մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկը) միտում ունի ղազախների շրջանում խթանելու հանրագիտակցությունը: Պաշտոնական քարոզությունն այն ներկայացնում է իբրև խաղաղության, բարգավաճման և միության խորհրդանիշ<sup>156</sup>: Նպատակ ունի

<sup>154</sup> Smith A. նշվ. աշխ., էջ 25:

<sup>155</sup> Huntington S., The Clash of Civilizations p 20.

<sup>156</sup> Официальный Сайт Президента Республики Казахстан, Государственный Флаг Республики Казахстан, URL: [http://www.akorda.kz/en/category/kazakhstan\\_flag](http://www.akorda.kz/en/category/kazakhstan_flag)

Էթնիկ խմբերի միջև խթանելու ներդաշնակ համակեցության տեսլականը: Թեպետ կապուտի միջոցով արտահայտվող թյուրքական ինքնության նոր հարացուցը փոքր-ինչ ուսուպիական է, բայց խորհրդանշական ներուժը ակնհայտ է:

Դրոշի առանցքային մյուս գաղափարն արտահայտում է տափաստանային ճախրող արծիվը: Տափաստանային հասարակությունների համար այս խորհրդանշն առանձնակի նշանակություն ունի. այն զուգորդվում է հզորության, ազատության և ինքնիշխանության գաղափարներին: Եվ ինչպես ղազախներն են նշում՝ դրոշի ուսեւ արծիվը արտացոլում է երիտասարդ անկախ պետության ձգտումն առ համաշխարհային քաղաքակրթության բարձունքներ<sup>157</sup>:

## թ. Գերբ

Ինչպես է. Հոբսբաումն է նկատում՝ պետական գերբը համարվում է այն առանցքային խորհրդանշերից մեկը, որը վկայում է պետության անկախություն ու ինքնիշխանությունը<sup>158</sup>:

Խորհրդային Ղազախստանի գերբի վերջին նմուշը (1978 թ.) ներկայացնում էր դրոշի գունային հետնախորքին զետեղված մի օվալ՝ երիզված հասկերի երկու խոլոծով, մեջտեղում ծագող արևն էր՝ իր ճառագայթներով, վերևում՝ մուրճն ու մանգաղը: Խոլոծերի վրա՝ արձանագրություններ՝ ղազախերեն և ռուսերեն լեզուներով. «Պրոլետարներ համայն աշխարհի, միացե՛ք»: Գերբի ստորին հատվածում երկու գրություն կար կիրիլիցայով՝ *KCCP - мәкін'* ռուսերեն, մյուսը՝ ղազախերեն: Կրկին պետք է արձանագրենք, որ այս խորհրդանշում նույնպես տիրապետող էր խորհրդային «կոմունիստական հայրենասիրությունը»:

Միանգամայն այլ պատկերագրություն է ներկայացնում Ղազախստանի արդի պետական գերբը՝ ընդունված 1992 թվականին: Այն ազգային նոր գաղափարանության կարևորագույն գաղափարների հանրագումարն է<sup>159</sup>:

Գերբն ունի կապույտով և ոսկեգոծ արևի ճառագայթներով պարուրված շրջանի տեսք՝ շարինակի (ղազախական ավանդական յուրտի գմբեթ) պատկերով, որի աջ և

<sup>157</sup> Государственный Флаг Республики Казахстан, Официальный Сайт Президента Республики Казахстан, URL: [http://www.akorda.kz/en/category/kazakhstan\\_flag](http://www.akorda.kz/en/category/kazakhstan_flag)

<sup>158</sup> Hobsbawm E., նշվ. աշխ. էջ 11:

<sup>159</sup> Государственный Гимн Республики Казахстан, Официальный Сайт Президента Республики Казахстан, URL: [http://www.akorda.kz/en/state\\_symbols/kazakhstan\\_anthem](http://www.akorda.kz/en/state_symbols/kazakhstan_anthem)

ձախ կողմերում դիմացական առասպելաբանության թևավոր ծիերն են<sup>160</sup>: Կարելի է պնդել, որ գերբի պարագայում հստակորեն ներառված են դազախական ազգային և ավանդական խորհրդանիշերը: Հարկավ, սա տիտղոսային ազգի ներկայացուցիչներին հոգեբանական բավականության հնարավորություն է տալիս: Սակայն նշենք նաև, որ գերբում ակնհայտ է ռուսականության կնիքը. նրա ստորին հատվածում սլավոնական կիրիլցա այբուբենով գրված է Ղազախստան բառը<sup>161</sup>:

#### գ. Հիմն

Եթե դրոշի և գերբի պատկերագրությունն ունի հստակ շեշտադրումներ, ապա երրորդ խորհրդանիշը՝ հիմնը, իր առողջություններով առավելապես միտված է առ հուզական վերապրումը: Ղազախական ԽՍՀ վերջին հիմնն (1945 - 1992) ուներ ազգային հենքից համարյա զուրկ (ռուսական ստանդարտով ազուցված) երաժշտություն: Բառերն էլ համահունչ էին դրան. փառաբանվում էին Լենինը, Կուսակցությունը, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, որոնք դազախ ժողովորդին բերեցին ազատություն ու երջանկություն:

Անկախության հաստատումից ի վեր Ղազախստանում ընդունվել է երկու պետական հիմն՝ 1992 և 2006 թվականներին: Առաջինն արտահայտում էր հետգաղութային փորձառությունը. անցյալի դժվարությունների հայթահարման և «պայծառ ապագայի» տեսլականը՝ պարապած գլխավոր էթնիկ ցուցիչի՝ մայրենի լեզվի հարատևության գաղափարի մեջ<sup>162</sup>: Իսկ երաժշտությունն արդեն շեշտված ազգային երանգ ուներ:

Սակայն հաշվի առնելով Ղազախստանի բազմաէթնիկ հասարակության շրջանում ինքնանույնացման գործընթացների անհրաժեշտությունը՝ 2006 թվականին Նազարբաևը խմբագրեց և ընդունեց նոր հիմնը՝ Զ. Նաժիմեդենովի «Հմ

<sup>160</sup> **Государственный Герб Республики Казахстан:** Ի հավելումն նշենք, որ ծիաբուծությունը համարվում էր Կենտրոնական Ասիայի ժողովուրդների հասարակական, տնտեսական և քոչվորական մշակույթի անբաժան մասը, որի արդյունքում ծին վերածվեց շրեղության, ազնվականության և հզորության խորհրդանիշի: Stu' Mukhamejanov A., Natural Life and the Manmade Habitat in Central Asia, In History of Civilizations of Central Asia, Vol. 4, Part 2, Bosworth, C. E., Asimov, M. S. (Eds.), Paris: UNESCO publishing, 2003, pp. 286-287.

<sup>161</sup> **Государственный Герб Республики Казахстан**

<sup>162</sup> Kazakhstan Discovery, «Kazakhstan National Anthem, 1992-2006», URL: [http://www.kazakhstan discovery.com/kazakhstan-national-anthem.html#.UXKiyaI\\_s9A](http://www.kazakhstan discovery.com/kazakhstan-national-anthem.html#.UXKiyaI_s9A) (10. 10. 2014):

Ղազախստան» երգի հիման վրա<sup>163</sup>: Լրամշակված տարբերակում արդեն նկատելի են հստակ քաղաքացիական միտումների հավելումներ, օրինակ՝ «**Իմ ղազախ ժողովուրդը ամուր**» կամ «**Իմ հայրենիք, իմ Ղազախստան**»<sup>164</sup>: Նոր հիմնը նպատակ ունի միավորելու բոլոր էթնիկ խմբերին իրենց հայրենիքի՝ Ղազախստանի հովանու ներքո:

Ի մի բերելով ղազախական պետական խորհրդանշիշերի խնդիրը՝ կարելի է եզրահանգել. առկա է ոչ միայն ազգային, այլ նաև քաղաքացիական խորհրդանշիշերի ներմուծման միտում: Դրանց ազդեցությամբ, հեղինակները համոզված են, որ ռուսը, գերմանացին կամ կորեացին հնարավորություն ունեն ինքնանույնացվելու Ղազախստան պետության և ղազախ հանրույթի համաձիրում:

### **2.3. Կրթական նորացման ծրագիրը**

Արդեն անդրադարձել ենք՝ մինչ խորհրդայնացումը Ղազախստանում չկար որևէ բարձրագույն ռասումնական հաստատություն։ Եվ միայն խորհրդային իշխանությունների ջանքերով դրանք գործարկվեցին։ 1950-ականներին Ղազախստանում արդեն գործում էր հումանիտար, առողջապահական և տեխնիկական ուղղվածության 27 բուհ, որտեղ դասավանդումը բացառապես ռուսերենով էր<sup>165</sup>։ <Ենց ռուսական կրթական հաստատությունների գործունեության արդյունքում էր, որ ռուսերենը հաստատեց իր գերակա դիրքերը։ Սակայն ղազախերենի լրացնցքայնացումը չպետք է բացատրել միայն այս հանգամանքով։ Նոյն խորհրդային համակարգում կային ազգեր, որոնց լեզուները ոչ միայն պահպանվեցին, այլ նաև զարգացում ապրեցին՝ հայերենը, վրացերենը, լիտվերենը, լատիշերենը, Էստոներենը։ Այս առումով հարկ ենք համարում պնդել, որ լեզվի կիրառելիությունը մեծավ մասամբ կախված էր մշակութային ավանդույթներից և նրա ինտելեկտուալ հնարավորություններից։ Ղազախերենի գործիքակազմով հնարավոր չէր արտահայտել արդի գիտության և մշակույթի հիմնարար արժեքները։

<sup>163</sup>Официальный Сайт Президента Республики Казахстан, Государственный Гимн Республики Казахстан URL:[http://www.akorda.kz/ru/category/kazakhstan\\_gimm](http://www.akorda.kz/ru/category/kazakhstan_gimm)

<sup>164</sup> Առան տեղում:

<sup>165</sup> Ахмедова Н. Б. Կցվ. աշխ., Էջ 37:

Ճշգրիտ ձևակերպմամբ՝ խորհրդային Ղազախստանը «ինդուստրիալ ֆեռայիզմի» մի յուրահատուկ մոդել էր, որտեղ խորհրդային վերնախավի լեզվամիջավայրը հույժ տարբերվում էր քվազիխորհրդային հասարակության լեզվամիջավայրից: Անհրաժեշտություն կար հաղթահարելու այս տարանջատումը: Կրթական համակարգում ներդնելով ոռւսաց լեզվի ստանդարտը՝ խորհրդային իշխանությունը, հատկանշենք մեկ անգամ էլ նրան հնարավորություն էր ընձեռել վերածվելու գերիշխանական լեզվի:

Խորհրդային շրջանում պաշտոնապես հայտագրվում էր, որ առկա են ոռւսական և ղազախական միջնակարգ դպրոցներ: Սակայն ղազախական էր տարրական դպրոցների մի մասը միայն: Սկսած հիմնական դպրոցից՝ կրթությունն ընթանում էր ոռւսերենով: Եվ դա խորհրդային ռեժիմի «բռնությունների» հետևանքը չէր. ղազախերենը հնարավորություն չուներ ապահովելու արդի գիտության հիմունքների բավարար ուսուցանումը:

Անկախության առաջին տարիներին որոշվեց հիմնախնդրին տալ հանգրվանային լուծում. բացել ղազախական և ոռւսական միջնակարգ դպրոցներ, որոնցում ոռւսերենն ու ղազախերենն ուսուցանվում էին ըստ ընտրության: Եվ չնայած ղազախերենի պետական աջակցությանը՝ այն հանդիպեց դժվարությունների: 1998-ից մինչև 2004 թվականը քաղաքային խառը դպրոցների թիվը 242-ից հասավ 723-ի: Բայց պարզվեց, որ ծնողների մեծ մասը նախապատվությունը տալիս էր ոռւսերենին<sup>166</sup>: Չնայած այս տիսուր փաստին, կառավարող ընտրախավն անկոտրում էր: «Արդեն այսօր աշակերտների 60%-ը սովորում է պետական լեզվով, բոլոր դպրոցներում ներառված է ղազախերենի ուսուցումը»<sup>167</sup>: Եվ նորից խոսքն ապագայատեսական ծրագրի մասին է, քան իրականության:

Կարևորվում է ղազախերեն դասագրքերի ստեղծման հիմնախնդիրը: Սկսելով տարրական դպրոցից՝ Կրթության բարեփոխումների կենտրոնը խնդիր է դրել ստեղծելու այբբենարան, մայրենի լեզվի, հայրենագիտության, թվաբանության և այլ առարկաների դասագրքեր: Արդյունքները գոհացուցիչ են. նոր դասագրքերը

<sup>166</sup> Ahn E S., Smagulova J., Comparative Education Review Examining Access to Public Education in Almaty, Kazakhstan: An Exploratory Study (չհրատարակված հետազոտություն):

<sup>167</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

համապատասխանում են արդի մանկավարժության, ազգաբանության, հոգեբանության պահանջներին:

Չնայած դասապրոցեսի ղազախականացման միտումին, Ղազախստանի շատ դպրոցներում՝ հիմնական ու ավագ, ղազախերեն են միայն մայրենի լեզվի, գրականության և պատմության դասագրքերը. ճշգրիտ գիտությունները՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աստղագիտություն, կենսաբանություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն, դասավանդվում են ռուսերենով: Իսկ նորագույն դպրոցներում՝ անգլերենով: Այլորեն՝ ռուսերենն էլի մնում է իբրև արդի աշխարհի հետ կապի հիմնական միջոց: Այս առումով հույժ տիպական է հետևյալ օրինակը. տարրական դպրոցի ղազախերենի դասագրքի շապիկին գրված է. «*Учимся и учим говорить по казахски*», (**Սովորում ենք և սովորեցնում խոսել ղազախերեն**)<sup>168</sup>:

Աշակերտներին ազգային լեզվով հանրակրթական դպրոցին պատրաստելու համար նազարբական վարչակարգը մեծ ուշադրություն է դարձնում նախադպրոցական կրթությանը: Նախադպրոցական կրթությունը երկրով մեկ հասու դարձնելու նպատակով նախագահ Նազարբակի հրամանով 2010 թվականին ընդունվում է «*Балапан*» ծրագիրը, համաձայն որի՝ մինչև 2020 թվականը Ղազախստանում պետք է բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության հնարավորություններ ստեղծել<sup>169</sup>: Արդյունքները երկար սպասեցնել չտվին. ծրագրի մեկնարկից հետո երկրում հիմնվել են շուրջ 3956 նախադպրոցական կրթության օջախներ<sup>170</sup>: Մեծ թափով վերափոխվեցին նաև հանրակրթական համակարգը և դպրոցաշինությունը: Համաձայն Կրթության և գիտության նախարարության գեկուցի՝ այսօր Ղազախստանում գործող 7450 դպրոցներից յուրաքանչյուր հինգերորդը կառուցվել է անկախության տարիներին, որոնց շնորհիվ ղազախերենի կիրառելիությունը կրկնապատկվել է<sup>171</sup>:

Սակայն կառավարող ընտրախավը չի բավարարվում դրանով: Արևմտյան կրթական ստանդարտներին համապայլ լինելու համար, սկսած 2009 թվականից, այս

<sup>168</sup> Landau J. M., Kellner-Heinkele B., նշվ. աշխ., էջ 200:

<sup>169</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

<sup>170</sup> Նույն տեղում:

<sup>171</sup> Национальный доклад о состоянии и развитии системы образования Республики Казахстана, 2016 год. С. Ирсалиев, А. Култуманова, Э. Тулеков, Т. Булдыбаев, Г. Кусиденова, Б. Исаков, Л. Забара, Л. Барон, Е. Коротких, Астана: АО «Информационно-аналитический центр», 2017, с. 153-154.

ուղղությամբ Ղազախստանում լուրջ քայլեր են ձեռնարկվում. ներդրվում է քեմքրիշյան համակարգով ձևավորված դպրոցների տարատեսակը, որն ստացել է Ղազարքակ ինքելեկտուալ հանրակրթական դպրոց անվանումը: Բացի կրթական նոր մեթոդներից, աստ ներմուծվել են նոր կրթակարգեր՝ գործարարության հիմունքներ, համակարգչային ծրագրավորում, արվեստների հիմունքներ և այլն:

Եռալեզու կրթական համակարգի փորձարկումը, որտեղ կարևորություն է տրվում դազախալեզու կրթությանը, նպատակ ունի ձևավորելու ապագա դազախական ընտրանին և սահմանելու նրա անելիքները. «Եվ յուրաքանչյուր դազախի առջև նոր հնարավորություններ կրացվեն ինքեզրվելու արդի աշխարհի համակեցական կյանքի դարբեր բնագավառներում՝ գիրություն, արվեստ, գրականություն, գործարար նախաձեռնություն»<sup>172</sup>:

Եռալեզու կրթական համակարգի մտահոգիչ մարտահրավերներից մեկը միևնույն գրքերի (հատկապես պատմության դասագրքերի) դազախերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակների բովանդակային տարբերությունն է: Ըստ գաղաքագետ Ազիզ Բուրխանովի՝ «դասագրքերի և մասնավորապես պարմության ռուսերեն և դազախերեն դասագրքերի բովանդակային տարբերությունը նախ՝ բխում է հեղինակների դարբեր մոլորդումներից և ապա՝ որոշակի քաղաքական զգուշավորություններից. դրանք հիմնականում գրվում են՝ հաշվի առնելով մեր երկրի էթնաքաղաքական, էթնամշակութային, էթնադավանանքային եւ էթնասոցիալական առանձնահարկությունները»<sup>173</sup>:

Բուհական կրթության համակարգը նույնպես ակտիվ վերակառուցման փուլում է: Խորհրդային Միությունից ժառանգություն ստացած մանկավարժական, բժշկական, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, անասնապահական, տնտեսագիտական, քիմիատեխնոլոգիական, լեռնարդյունաբերական և հումանիտար բուհերը համալրվեցին նոր ազգային և միջազգային բուհերով: Համաձայն Ղազախստանի Կրթության և Գիտության նախարարության տվյալների՝ երկրում այժմ գործում են 125 տարբեր

<sup>172</sup> Назарбаев Н. А., Стратегия «Казахстан-2050».

<sup>173</sup> Ազիզ Բուրխանով, 10.08.2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:

բուհեր<sup>174</sup>: Եթե նախկինում պրոֆեսորադասախոսական կազմը գլխավորում էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, ապա այժմ մեծամասնությամբ դազախ դասախոսներ են աշխատում:

Հիմնարար գիտակարգերի շարքում հայտնվել են գիտական նորագույն նվաճումներին հարիր առարկաներ՝ ողբուտութեխնիկա, նանոֆիզիկա, պլազմային ֆիզիկա, մոլեկուլար բիոսինթեզ, գենային ինժեներիա, մոլեկուլար բժշկություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնց զարգացման համար Նազարբաևյան վարչակարգը ստեղծում է հնարավոր բոլոր ենթակառուցվածքային և ֆինանսական նախապայմանները<sup>175</sup>:

Նշենք, որ հետարդյունաբերական գիտակարգերի զարգացման հեռանկարը դեռևս նախանշված էր «Ղազախստան 2030» ռազմավարական նախագծում, որտեղ Նազարբաևը տեղեկատվական հասարակության ձևավորումը համարում է երկրի զարգացման 30 կարևորագույն ուղղություններից մեկը<sup>176</sup>:

Հումանիտար գիտությունների շարքում նույնականացնելու համար երևացել են գիտական նոր ուղղություններ. քաղաքակրթությունների տեսություն և պատմություն, ընկերային հոգեբանություն, նշանագիտություն, պատմական հերմենևիտիկա, նոստրատիկ լեզվաբանություն, աշխարհաքաղաքականություն, կառուցվածքային և համեմատական տնտեսագիտություն և այլն: Միանգամայն նոր երևոյթ է անգլալեզու համալսարանների հիմնումը: Առաջինն ի հայտ եկավ 2009 թվականին՝ Ղազարբաև համալսարանն Աստանայում, երկրորդը՝ 2011-ին Ալմաթիում՝ ԿԻՄԵՊ-ը (Kazakhstan Institute of Management, Economics and Strategic Research): Եթե առաջին համալսարանը նպատակ ունի Ղազախստան ներմուծելու արդի հիմնարար գիտությունների նվաճումները, ապա երկրորդն իր առաքելությունը տեսնում է հումանիտար գիտությունների արժեքների յուրացման մեջ:

Նման վերափոխումների փորձեր դեղի են ունենում նաև հերիորիդային այլ երկրներում: *Օրինակ՝* անգլալեզու կրթական համակարգի ներդրման առումով

<sup>174</sup> Министерство Образования и Науки Республики Казахстан, Список высших учебных заведений Республики Казахстан в разрезе регионов, URL: <http://enic-kazakhstan.kz/en/realiz-bp/spisok-vuzov-rk> (05.03.2018)

<sup>175</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս, Հավելված 2, էջեր 151-152:

<sup>176</sup> Назарабев Н., № վ. աշխ. էջ 65-66: Ст. նաև՝ Бастами И. Казахстан: Технология Успеха, Алматы, Алматы «Раритет», 2015, с. 138 -48.

առաջինը Հայաստանի Հանրապետությունն էր, որտեղ 1991 թ. սկսուոքի ջանքերով սկսելով գրածաշրջանում միակ՝ ԱՄՆ դպրոցների և քոլեջների ասոցիացիայի՝ ավագ դպրոցների և համալսարանների հավաքարմագրման հանձնաժողովի կողմից արդունված Հայաստանի Ամերիկյան Համալսարանը: Երկրորդը Ղրղզստանն էր, որտեղ 1997 թ. ԱՄՆ կառավարության և Բաց Հասարակության հիմնադրամի ջանքերով սկսելով Կենդրոնական Ասիայի Ամերիկյան Համալսարանը:

Նպատակին հետամուտ՝ առաջատար հետազոտողներ են հրավիրվում դասավանդելու ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Կանադայից: Ղազախ մասնագետներն ունեն աշխարհի լավագույն համալսարաններում և գիտական կենտրոններում վերապատրաստման հնարավորություններ: Քսան տարում այդ հնարավորությունից օգտվել է շուրջ 2500 մասնագետ: Լայն տարածում ունեն ուսանողների փոխանակման ծրագրերը և մասնավորապես «Բոլաշակ» ծրագիրը, որի հնարավորությունից օգտվել է ավելի քանի 9000 ուսանող<sup>177</sup>: Նրանցից ոմանք առաջատար համալսարաններում պաշտպանել են մագիստրոսի կամ դոկտորի գիտաթեզեր:

Բարձրագույն կրթության արևմտյան կրթական ստանդարտի կողքին Ղազախստանում հիմնվեցին իսլամական հումանիտար դպրոցներ (լիցեյներ) և համալսարաններ: Դրանք հիմնականում առաջնորդվում էին Սահիդ Նուրսիի և Ֆերովլահ Գյուլենի ուսմունքով<sup>178</sup>: Դրանք ֆինանսավորում են առաջատար իսլամական երկրների կառավարությունները: Հատկապես ակտիվ է Թուրքիան: Ղազախստանում գործող գյուլենական դպրոցների հիմնագաղափարը համաթյուրական միասնությունն է՝ հիմնված ժողովրդավարության, ինտելեկտուալ կամ «կրթալ իսլամ» արժեքների վրա<sup>179</sup>: Դրանց թիվը հասնում է շուրջ 29-ի: Համաձայն որոշ արդի հետազոտողների՝ գյուլենական դպրոցները թյուրքականության և իսլամի արժեքների տարածմամբ նպատակ ունեն թուլացնելու ոռուականության դիրքերը<sup>180</sup>:

<sup>177</sup> Կարապետյան Ա., Հարությունյան Է., Օհանյան Կ., Մկրտչյան Ն., Հայրապետյան Տ., նշվ. աշխ., էջ 113:

<sup>178</sup> Balci B., ‘Fethullah Gülen’s Missionary Schools in Central Asia and Their Role in the Spreading of Turkism and Islam’, Religion, State & Society Vol 31, No 2, 2003, pp. 155-156.

<sup>179</sup> Մինասյան Ն., նշվ. աշխ. էջեր 156-157:

<sup>180</sup> Նույն տեղում, էջ 164:

Սակայն արդ Նազարբաևի վարչակազմը սթափվել է և շուտափույթ փոխում է իրավիճակը՝ ծայրահեղական տրամադրություններից խուափելու մտահոգությամբ:

Նոյն իրավիճակը նկատելի է նաև իսլամական բուհական կրթության մեջ: 1993 թվականին Եգիպտոսի կառավարության ֆինանսավորմամբ Ալմաթիում բացվեց Իսլամական մշակույթի Նուր-Մութարակ համալսարանը: Ալմաթիում, Տարազում և Թուրքեստանում թուրքական կառավարության աջակցությամբ հիմնվեցին Ահմադ Յասավիի (*K. A. Ясави атындағы Халықаралық қазақ-түркік үниверситеті*) և «Սուլեյման Դեմիրել» թուրք-ղազախական միջազգային համալսարանները<sup>181</sup>: Քուվեյթի հովանավորությամբ Զիմբետում հիմնադրվեց Հարավղազախստանյան Հումանիտար Ակադեմիան<sup>182</sup>:

Այս կրթական օջախները մի կողմից՝ հիմք են ստեղծում իսլամի տարածման և ամրապնդման համար, մյուս կողմից՝ դրանք ակնհայտ մարտահրավերներ են գործող համակարգին: Խնդիրն այն է՝ կկարողանա՞լ Նազարբաևի վարչակարգը հավասարակշություն ստեղծել արևմտյան և իսլամական կրթակարգերի միջև:

## 2.4. Իսլամը և կրոնական ինքնության նոր հարացույցը

Հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության դրսևորումներից մեկն էլ պետության հիմքում աշխարհիկ-քաղաքացիական արժեքների ներդրումն էր: Ի տարբերություն իսլամական պատմական ավանդույթ ունեցող մի շարք երկրների՝ Ղազախստանն իր առջև ծառացած խնդիրներին չպատասխանեց իսլամով և զերծ մնաց արմատական իսլամի դրսևորումներին նպաստող քաղաքական գործընթացներից<sup>183</sup>:

Դա ուներ իր հստակ պատմական հիմնավորումը. նախակենցաղ կենսակերպը և կենտրոնացված պետության բացակայությունը խոչընդոտում էին կրոնի հաստատութենացմանը: Ցարիզմն էլ իր հերթին տափաստանի ժողովուրդների շրջանում կրոնական ինքնագիտակցությունը հնարավորինս ցածր մակարդակի վրա էր պահում: Թերևս այս

<sup>181</sup> Nurmanova A. SH., Izbaurov A.K. Islamic Education in Soviet and post-Soviet Kazakhstan in Kemper M., Motika R., Reichmuth S., Islamic Education in Soviet Union and its Successor States, London and New York: Routledge, 2010, p. 306.

<sup>182</sup> Ст'я, Yemelianova G. M., նշվ. աշխ. էջ 293:

<sup>183</sup> Назарбаев Н., Критическое Десятилетие, Алматы: Атамура, 2003. с. 85-87.

Երկու կարևոր նախապայմաններով կարելի է բացատրել դազախական հասարակությունում արմատական իսլամի համեմատաբար թույլ դրսևորումը:

Այդուամենայնիվ, պետք է նշել, որ իսլամի քաղաքակրթական արժեքները դուրս չեն մնացել հետխորհրդային ազգաշինական գործընթացից: Այս առումով կարևոր է հասկանալ դազախական ազգային ինքնության կրոնական ենթաշերտը:

#### **ա. Իսլամի հետխորհրդային զարգացումն ու տարածումը**

Անկախության գործընթացը Ղազախստանում ուղեկցվեց «իսլամացման ալիքով». պետական ընտրախավը սատարում էր միտումին, և արդյունքներն իրենց սպասել չտվին. համաձայն 2009 թվականի ազգային վիճակագրության տվյալների՝ մուսուլմանական դազախները կազմում էին երկրի ազգաբնակչության 50-65%-ը, որի մեծ մասը սունի հանաֆիական դավանանքի հետևորդ էր<sup>184</sup>:

Պետք է արձանագրել, որ իսլամի հետևորդների 70.2%-ը կազմված է ոչ միայն դազախներից, այլև Ղազախստանում ապրող այլ մուսուլմանականներից. ուզբեկներ՝ 99.1%, ուզբեկներ՝ 98.4%, թուրքեր՝ 99.1%, ադրբեյջանցիներ՝ 94.8%, դունգաններ՝ 98.9%, քրդեր՝ 98.3%, գաջիկներ՝ 97.8%, չեչեններ՝ 93.7% և դրդներ՝ 96.7%<sup>185</sup>:

Ղազախստանը պատմականորեն եղել է նաև քրիստոնեության համաձիրում, և համաձայն 2009 թվականի մարդահամարի՝ նրա ազգաբնակչության 26.3%-ը քրիստոնյաներ են, որոնց մեջ մեծամասնություն են կազմում ուղղափառ ռուսները, ուկրաինացիները և բելառուսները<sup>186</sup>:

Հետաքրքիր է՝ իսլամը հանրային ի՞նչ ընկալում ունի Ղազախստանում: 2000-2002 թվականների հարցախույզը (Ներառյալ Աստանան և Ալմաթին) ներկայացնում է հետևյալ պատկերը. հարցվածների 51.6%-ն իրեն համարել է մուսուլմանական, որից 47.2%-ը կարծում էր, որ իսլամն իրենց տրված է ի ծնե՝ իբրև ազգային մշակույթի, ավանդույթների, սովորույթների և նախնիների հոգևոր ժառանգության հարգանքի դրսևորում<sup>187</sup>:

<sup>184</sup> Агентство Республики Казахстан по статистике, Итоги национальной переписи населения республики Казахстан 2009 года, Аналитический отчет. Агентство Республики Казахстан по статистике, Астана 2011, с. 25.

<sup>185</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>186</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>187</sup> Նույն տեղում, էջ 102:

Այդուհանդերձ, իրենց մուսուլմանական համարող դազախների մեծամասնությունը չի հետևում իսլամի Հավատության հանգանակի հինգ հիմնայուներին և չի մասնակցում օրական պարտադիր նամազներին<sup>188</sup>: Ուստի իսլամի հետ նրանց ինքնանույնացումն անհրաժեշտ է դիտարկել հետխորհրդային ազգային ինքնության փնտրությի համատեքստում:

Թերևս ազգաշինական գործընթացների համաձիրում պետք է դիտարկել մզկիթաշինության և կրոնական կազմակերպությունների հիմնման այն եռանդը, որը ներհատուկ է հետխորհրդային Ղազախստանին. դեռևս 1989 թվականից գործող 46 մզկիթների թիվը 1998-ին հասել է 1000-ի<sup>189</sup>: Իսկ 2001 թվականին Ղազախստանում արդեն գործում էր 1408 մզկիթ և 1372 իսլամական կազմակերպություն<sup>190</sup>: Մզկիթաշինությունը շարունակվեց նաև 2000-ականներին, և նախագահի հովանավորությամբ 2005 թվականին բացվեց «Նուր Աստանան», իսկ 2012-ին՝ Կենտրոնական Ասիայի ամենամեծ մզկիթը՝ «Հազրաթ Սուլյանը»:

Ինչպես նշվեց, իսլամի արժեքների տարածմանը նպաստում էր Երկրի բարձրագույն ղեկավարությունը: Այս առումով 1994 թվականին նախագահը խորհրդանշական քայլ արեց. մեկնեց Հաջ՝ ուխտագնացություն, առ Մեքքա<sup>191</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ազգաշինական գործընթացները հետխորհրդային Ղազախստանում ուղիղ կապի մեջ են նաև Երկրի արտաքին քաղաքական վեկտորի հետ: Իսլամը հնարավորություններ է տալիս անմիջական կապեր հաստատելու մուսուլմանական աշխարհի առանցքային այնպիսի Երկրների հետ, ինչպիսիք են Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը:

## **բ. Իսլամի հաստատութենացումը**

Մինչ խորհրդային կարգերի փլուզումը, Ղազախստանի մուսուլմանականների կրոնական հարցերը համակարգվում էին դեռևս 1943 թվականին Տաշքենդում հիմնադրված Կենտրոնական Ասիայի և Ղազախստանի մուսուլմանականների հոգևոր

<sup>188</sup> Omelicheva M. Y., Islam and Power Legitimation, pp. 150-151:

<sup>189</sup> **Տե՛ս,** Omelicheva M. Y., Islam in Kazakhstan: A survey of contemporary trends and sources of securitization, Central Asian Survey, 30: 2, 2011, p. 244.

<sup>190</sup> Телебаев Г. Т., Религиозная идентификация населения и религиозная ситуация в Республике Казахстан, Социс, 2003, № 3, с. 105.

<sup>191</sup> Yemelianova G. M., նշվ. աշխ. , էջ 293:

ադմինիստրացիայի (ՍԱԴՈՒՄ) կողմից: Անկախության հոչակումից հետո առանցքային մարտահրավերներից էր կրոնի հաստատութենականացման հիմնախնդիրը: Իսլամի արժեքները պետք է կիրառվեին ազգաշինության նպատակների համար: Դեռևս ինքնիշխանության հոչակումից մեկ տարի առաջ՝ 1990 թվականին, ստեղծվեց Ղազախստանի մուսուլմանականների հոգևոր կառավարման կոմիտեն կամ Մուֆթիությունը<sup>192</sup>: Հաշվի առնելով բազմաէթնիկության և ժողովրդավարական արժեքները՝ երկրի ղեկավարությունը շտապեց հաստատութենացնել նաև այլ կրոնական ուղղությունները:

Ղազախստանն սկսեց ակտիվորեն անդամակցել իսլամական համաշխարհային կառույցներին: Քաղաքականություն, որի ամենացայտուն դրսնորումը դարձավ իսլամական Կոնֆերանս Կազամակերպությանն անդամակցությունը 1995 թվականին:

Իսլամի հանրայնացումը, բացի բազմաթիվ մզկիթներից և կրոնական կազմակերպություններից, իրականացվում էր նաև լեզվի, դպրոցի և բուհերի միջոցով, որոնց անդրադարձել ենք վերը:

Այս շարքում հովժ կարևոր դերակատարություն ունեն իսլամական ԶԼՄ-ները և իրատարակչությունները: Դրանց գործունեության ծիրում առանցքային են Ղուրանը, դրա ղազախերեն թարգմանությունը և մեկնությունները: Մտավոր վերնախավի շրջանում համոզում կա, որ այս գործընթացը նոր լիցքեր է հաղորդում ազգային ինքնագիտակցությանը: Հարկավ՝ ծայրահեղականությունից խուսափելու նախապայմանով:

Նման ծրագրերի իրագործման խնդրում առանցքային դերակատարություն ունի «Մուսահիլման» (*Мұсылмандық*) իրատարակչությունն իր անսահման հնարավորություններով: Նրա քարոզական, խրատական, բարոյագիտական և աստվածաբանական գրքերն ու բրոշյուրները, իրատարակված միլիոնավոր օրինակներով, մեծ տարածում ունեն Կենտրոնական Ասիայում<sup>193</sup>:

Նոյն առաքելությամբ է առաջնորդվում "Асыл арна" կամ «Ղուսավոր ուղի» հեռուստաալիքը, որը ղազախերենով և ռուսերենով հեռարձակում է իսլամին նվիրված

<sup>192</sup> Официальный сайт духовного управления мусульман Казахстана, URL: <http://old.muftyat.kz/ru> (20.10.2017)

<sup>193</sup> Schwab W., Establishing an Islamic Niche in Kazakhstan: Musylman Publishing House and its publications, Central Asian Survey, Vol. 30 No 2, 2011, pp. 228-29.

հաղորդաշարեր<sup>194</sup>: ԶԼՄ-ների այլ միջոցներ նույնպես նպաստում են իսլամի հանրայ-նացմանը:

Այս ամենով հանդերձ, կառավարող ընտրախավը Ղազախստանը սահմանում է իբրև աշխարհիկ, ժողովրդավարական երկիր՝ իր ազատություններով և իրավունքներով<sup>195</sup>: Կրոնի և պետության հարաբերությունները սահմանվում են ըստ օրենքի. 1992 թվականին Ղազախստանի Գերագույն Խորհուրդն ընդունեց օրենք «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների» մասին<sup>196</sup>: Այն հետագայում ամրագրվեց երկրի առաջին Սահմանադրության 1-ին հոդվածով (1993 թ.)<sup>197</sup>:

Իսլամից հետո երկրորդ կրոնական համայնքը ոռուսական ուղղափառ Եկեղեցին է՝ միտրոպոլիտական աթոռով: 2009 թվականի հարցախոյզի տվյալներով՝ հավատացյալների թիվը հասնում է 4.2 միլիոնի: 2013 թվականին Աստանայում բացվեց Ուսպենսկի տաճարը, որն էլ դարձավ ուղղափառ համայնքի կենտրոնը: Այն ունի 230 գործող Եկեղեցի: Գործում է 3 հոգևոր սեմինարիա, որտեղ կրթություն են ստանում ապագա հոգևոր սպասավորները: Հրատարակում է հոգևոր գրականություն, կազմակերպում ուսուցիչների և հեռուստատեսային հաղորդումներ:

Ղազախստանում առկա են քրիստոնեական այլ համայնքներ՝ կիկ, բողոքական, ուղղափառ-հունական և այլն: Նրանց հետևորդները միասին կազմում են երկրի ազգաբնակչության շուրջ 3%-ը: Վերջին շրջանում աշխուժացել է նաև հայկական համայնքը. Արդ գործում է 11 հայկական մշակութային միություն՝ Ալմաթիում, Պավլուդարում, Կուստոնյասկում, Չիմքենդում, Կարագանդայում և այլուր: 2006 թվականին Ալմաթիում բացվել է Ս. Կարապետ Եկեղեցին, որն առայժմ միակն է երկրում:

Հարկավ, Նազարբաևի վարչակարգն օգտագործում է իսլամի գործոնն իր իշխանությունն օրինականացնելու ուղղությամբ, բայց հստակորեն գիտակցում է, որ այն պետք է հակակշռի այլ դավանանքների և (անգամ) աթեիզմի ներգործությունը:

<sup>194</sup> **Տե՛ս, G.M. Yemelianova**, նշվ. աշխ., էջ 291:

<sup>195</sup> **Официальный Сайт Президента Республики Казахстан**, Конституция Республики Казахстан URL: <http://www.akorda.kz/en/category/konstituciya> (12.06.2016)

<sup>196</sup> **Закон Республики Казахстан от 15 января 1992 года № 1128-ХII «О свободе вероисповедания и религиозных объединениях»** (с изменениями и дополнениями по состоянию на 05.07.2011 г.) URL: [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=1000934](https://online.zakon.kz/Document/?doc_id=1000934) (12.06.2016)

<sup>197</sup> **Конституция Республики Казахстан** – 1993, URL:[https://online.zakon.kz/Document/?doc\\_id=10102-12#pos=0;0](https://online.zakon.kz/Document/?doc_id=10102-12#pos=0;0) (09. 10. 2016)

Ղազախսական ընտրախսավն իսլամի (հնարավոր կամ իրական) բացասական դրսեւորումները կապում է արտաքին ներգործությունների հետ և իր վերաբերմունքն այս մարտահրավերի նկատմամբ սահմանում է իբրև «**արտաքին իսլամի զսպման և անվտանգայնացման քաղաքականություն»**<sup>198</sup>: Պաշտոնական դիսկուրսում արմատական իսլամն սկսվեց մեկնաբանվել իբրև ազգային անվտանգության սպառնալիք: Սպառնալիք, որի մասին Նազարբաևը շարունակաբար զգուշացնում է Կենտրոնական Ասիայի առաջնորդներին<sup>199</sup>: Այս կապակցությամբ Ղազախստանի կրոնական քաղաքականության ծիրում հստակ ուրվագծվում է երեք վեկտոր. ա. չսրել հարաբերությունները ռուսական ուղղափառ համայնքի հետ, բ. հավատարիմ մնալ ազգաշինության քաղաքացիական ուղեգծին, գ. վերահսկողություն հաստատել երկրի կրոնական ոլորտի նկատմամբ՝ բացառելով քաղաքական իսլամի զարգացումը:

Հենց այս մտահոգությամբ էլ թելադրված էր 2011 թվականի հոկտեմբերի 11-ի «**Կրոնական գործունեության և կրոնական միավորումների մասին» նոր օրենքի ընդունումը: Համաձայն դրա.**

«[...] Ղազախստանի Հանրապետությունը հայդարարում է իրեն ժողովրդավարական, աշխարհիկ հանրապետություն, վերահսկապում է յուրաքանչյուրի խղճի ազատության իրավունքը, երաշխավորում է յուրաքանչյուրի հավասարությունն օրենքի առաջ՝ անկախ կրոնական համոզմունքներից, ճանաչում է հանաֆիական իսլամի և ուղղափառ քրիստոնեության պարմական դերը ազգի մշակույթի և հոգևոր կյանքի զարգացման գործում, հարգում է Ղազախստանի մյուս կրոնները, ընդունում է միջկրոնական ներդաշնակության, քաղաքացիների կրոնական հավակամքի նկարմամբ հանդուրժողականության և հարգանքի կարևորությունը»<sup>200</sup>:

Օրենքով արգելվում է աղոթքի պարտադրանքը դպրոցներում, քրեակատարողական հիմնարկներում, ռազմական և պետական այլ հաստատություններում: Նույն 2011 թվականին Նազարբաևի նախաձեռնությամբ կառավարությանը կից ստեղծվեց

<sup>198</sup> Այս հղացքը հետազոտական շրջանակներին հայտնի է իբրև «Իսլամի անվտանգայնացում» (Securitization of Islam) անվամբ: Հղացքն առաջադրվել է անվտանգության ուսումնասիրությունների (Security Studies) «Կոպենհագենյան դպրոցի» կողմից: St'u, Buzan B., Wæver, O., de Wilde J., Security: A New Framework for Analysis, London: Lynne Rienner Publishers, 1998, p. 25.

<sup>199</sup> Omelicheva M. Y., Islam in Kazakhstan, p. 249:

<sup>200</sup> Закон Республики Казахстан о религиозной деятельности и религиозных объединениях URL: [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=31067690](https://online.zakon.kz/Document/?doc_id=31067690) (23.06.2017)

Կրոնական հարաբերությունների գործակալությունը, որի նպատակն է հաստատութենացնել պետության վերահսկողությունը կրոնական ոլորտի նկատմամբ<sup>201</sup>:

Փաստաթուղթն ունի իր նախապատմությունը: Դեռ 2004 թվականին Նազարբաևի նախաձեռնությամբ Աստանայում իրավիրվեց Համաշխարհային և ավանդական ազգային կրոնների առաջնորդների առաջին համաժողովը: Դրան մասնակցեց իսլամը, քրիստոնեությունը, բուդդայականությունը, հուդայականությունը, դառսականությունը, իինդուականությունը ներկայացնող 17 պատվիրակություն<sup>202</sup>: Ընդունվեց որոշում՝ երեք տարին մեկ Աստանայում անցկացնել նոյնատիպ համաժողովներ: Այդու փորձ էր արվում Աստանան վերածել միջլրոնական համաձայնության մայրաքաղաք-խորհրդանիշի: Նազարբաևի առաջարկով որոշում կայացվեց հաջորդ համաշխարհային կրոնական համաժողովի համար կառուցել խորհրդանշական կառուցք:

«Սույն կոնքրեսն ինձ գաղափար պվեց Ասդանայում կառուցել Ազգերի պալար, որում կլինի մզկիթ, եկեղեցի, սինագոգ և բուդայական տաճար: Այսինքն նաև կգործեն Ղազախստանի ժողովուրդների Ասամբլեան և բոլոր ազգային-կրոնական կենտրոնները»<sup>203</sup>:

Երկու տարի անց՝ 2006 թվականին, Համաշխարհային և ավանդական ազգային կրոնների առաջնորդների երկրորդ համաժողովն արդեն անցկացվեց նորակառուց «Խաղաղության և հաշվեցման պալատում»։ Ի շարունակություն այս ամենի՝ 2016 թվականին ստեղծվեց Կրոնական և քաղաքացիական հարցերով նախարարությունը<sup>204</sup>։

## 2.5. Ղազախստանը և Թյուրքական ինքնության աշխարհաբառական չափումը

Ղազախստանի հետխորհրդային ազգաշինության գործընթացն իր երկու բևեռներով (քաղաքացիական և էթնիկ-թյուրքական) առնչվում է Երկրի և՝ Ներքին, և՝

<sup>201</sup> Қазақстан Республикасының Дін Істері Және Азаматтық Қоғам Министрлігі, [URL:https://diakom.gov.kz/kk](https://diakom.gov.kz/kk) (20.04.2017)

<sup>202</sup> Съезд Лидеров Мировых И Традиционных Религий первый, Съезд Лидеров Мировых И Традиционных Религий В Астане, URL:<http://www.religions-congress.org/content/view/18/32/lang.ru/> ( 24.06.2017)

## Гелий в Астане, 203 1-рій інженер:

<sup>204</sup> Официальный Сайт Президента Республики Казахстан, Указ «О мерах по дальнейшему совершенствованию системы государственного управления Республики Казахстан, URL: [http://www.akorda.kz/ru/events/astana\\_kazakhstan/astana\\_other\\_events/ukaz-o-merah-po-dalneishemu-sovershenstvovaniyu-sistemy-gosudarstvennogo-upravleniya-respubliki-kazakhstan-1](http://www.akorda.kz/ru/events/astana_kazakhstan/astana_other_events/ukaz-o-merah-po-dalneishemu-sovershenstvovaniyu-sistemy-gosudarstvennogo-upravleniya-respubliki-kazakhstan-1) (22.10.2016)

արտաքին քաղաքականությանը: Հատկապես հետաքրքիր է դիտարկել ղազախների թյուրքական ինքնության աշխարհաքաղաքական վեկտորը:

Ազգային ինքնության նոր հարացուցիչ կարևոր բաղադրիչը՝ թյուրքական շերտը, կարևոր դեր ունի տարածաշրջանի աշխարհաքաղաքական խճանկարում, որտեղ հանդիպում են Ղազախստանի, Ռուսաստանի, Չինաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերը:

Մի կողմից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած գաղափարաբանական պարապը, մյուս կողմից՝ ղազախական ազգաշինության թյուրքական բաղադրիչը Կենտրոնական Ասիայում հավակնությունների նոր հեռանկարներ ուրվագծեցին Թուրքիայի համար<sup>205</sup>: Դրանցում առաջնային տեղ է գրադեցնում Կենտրոնական Ասիայում ընդհանրական թյուրքական ինքնության ձևավորումը, որն անպայման հակադրվելու է ռուսական էթնիկ, քաղաքակրթական, մշակութային և կրոնական ներկայությանը: Հիշենք, խորհրդային իշխանությունները, հանձին ռուսախոս բազմաէթնիկ Ղազախստանի, տեսնում էին պանթյուրքական հակվածություն ունեցող Ուզբեկստանի հակակշիոն<sup>206</sup>:

1992 թվականին Թուրքիայի նախաձեռնությամբ ստեղծվեց **Թյուրքալեզու պետությունների համագործակցությունը**, որին միացան Ղազախստանը, Աղրբեջանը, Ղրղզստանը<sup>207</sup>: Ոգեշնչողները թ. Օզալը և Ն. Նազարբաևն էին: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ այդ ժամանակ նման միավորիչ միտումներն ավելի խորհրդանշական էին, քան իրական: Կազմակերպությանը հրաժարվեցին անդամակցել Ուզբեկստանը և Թուրքմենստանը:

Թյուրքալեզու պետությունների համագործակցության գաղափարն սկսեց կրկին ակտիվ շրջանառվել 2009-ից ի վեր, երբ հետխորհրդային տարածքում իրենց դիրքերն էին ամրապնդում Եվրասիական և Եվրոպական ինտեգրացիոն նախագծերը: 2009 թվականին Նախիջևանում կայացավ թյուրքալեզու պետությունների համաժողովը, որտեղ Նազարբակի նախաձեռնությամբ ստեղծվեց **Թյուրքալեզու Պետությունների Համագործակցության Խորհուրդը**:

<sup>205</sup> Սաֆարյան Ա., նշվ. աշխ. էջեր 71-72:

<sup>206</sup> Haugen A., նշվ. աշխ., էջ 154:

<sup>207</sup> Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey, The Cooperation Council of Turkic Speaking States, URL: <http://www.mfa.gov.tr/turk-konseyi-en.en.mfa> (20.10.2016)

Խորհրդի առաջին գագաթնաժողովը տեղի ունեցավ 2011 թվականին Ալմաթիում: 2012 թվականին կազմակերպության երկրորդ գագաթնաժողովում ընդունվեց միասնական դրոշ, որն էկետերիկ համադրություն էր՝ Ղրղզստանի դրոշի արևի, Աղրբեջանի աստղի, Թուրքիայի կիսալուսնի և Ղազախստանի կապուտ գույն<sup>208</sup>:

Կառույցի՝ վերջին տարիներին նախաձեռնած մի քանի գլոբալ նախագծեր կարող են լուրջ ազդեցություն ունենալ թյուրքականության աջակցման գործում: Կարծում ենք, այս առումով հատկանշական են Խորհրդի 5-րդ գագաթնաժողովի (2016թ.) հետևյալ որոշումները. ա. միասնական ներդրումային ֆոնդի ձևավորում, թ. թյուրքական ակադեմիայի հիմնում, գ. թյուրքախոս սփյուռքյան կենտրոնների աշխուժացում և նորերի հիմնում, ե. թյուրքերի միասնական պատմության ստեղծում, որը պետք է ներառվի անդամ երկրների հանրակրթության համաձիրում, դ. քոչվորական համաշխարհային խաղերի անցկացում, զ. Ղազախական խանության 550 ամյակին նվիրված գիտական միջոցառումների անցկացում<sup>209</sup>:

Ակնհայտ է, թյուրքախոս երկրների միավորմամբ Թուրքիան փորձում է առաջնորդի դիրքեր ապահովել: Հավակնություն, որն արդ հաճախ հանդիպում է Ղազախստանի ակնհայտ դիմադրությանը: Այս շրջադարձը հետազոտողները հաճախ կապում են 2012 թվականի ապրիլի 8-ին մուսուլմանական ույղուրներով բնակեցված Չինաստանի Սինցյան ինքնավար նահանգում Ռ. Էրդողանի բարձրագույն հայտարարության հետ՝ առ այն, որ Թուրքիան պատրաստ է բոլոր միջոցներով նպաստելու նրա ազգային զարգացման ծրագրերին<sup>210</sup>: Դա առաջ բերեց և՛ Ռուսաստանի, և՛ Չինաստանի, և՛ Ղազախստանի բացահայտ դժգոհությունը:

Ի մի բերելով ասվածը՝ փաստենք. Թուրքիայի մշակութային և քաղաքական ծառայությունը Կենտրոնական Ասիայում կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ տարածաշրջանի երկրներն ազգային ինքնություն ձևավորելու և սեփական վարչակարգերի լեգիտիմությունն ապահովելու պահանջ ունեն: Դա երկարաժամկետ է:

<sup>208</sup> Summary Report Of The Second Summit Of The Turkic Council Bishkek – Kyrgyz Republic (22-23 August 2012), URL: <http://www.turkkon.org/en-US/report-of-the-bishkek-summit/301/1130/1130/409> (19.10.2016)

<sup>209</sup> Declaration of the Fifth Summit of The Cooperation Council of Turkic Speaking States. URL: <http://www.turkkon.org/Assets/dokuman/DECLARATION-ENG.pdf> (19.10.2016)

<sup>210</sup> Famularo J., Erdogan Visits Xinjiang, The Diplomat, 2012, URL:<http://thediplomat.com/2012/04/erdogan-visits-xinjiang/> (20.10.2016)

գործընթաց է, և խնդիրն այն է, թե կկարողանա՞ն տարածաշրջանի երկրները հավասարակշռել թյուրքական վեկտորը աշխարհաքաղական այլ վեկտորների հետ:

## 2.6. Միջերնիկ հարաբերությունների կառավարումը

Բազմաէթնիկ Ղազախստանում ազգաշինության գաղափարն էականորեն տարբերվում է Ու. Նորմանի առաջադրած բանաձևից՝ «Ազգաշինություն ի հաշիվ էթնիկ փոքրամասնությունների ազգայնացման»<sup>211</sup>: Աստ պետական կառույցների օգտագործումը բնավ նպատակ չունի կազմալուծելու էթնիկ խմբերի էթնոմշակութային և լեզվական ինքնությունը: Ընդհակառակը՝ միտված է խրախուսելու և վերահսկելու դրանց ներկայացվածությունը պետական, ընկերային, մշակութային կյանքում: Ի տարբերություն նախկին խորհրդային որոշ հանրապետությունների (Լատվիա, Լիտվա, Էստոնիա՝) Ղազախստանը չսահմանափակեց ոչ-տիտղոսային էթնիկ փոքրամասնությունների իրավունքները, ավելին՝ նրանց համար հիմնեց կառավարության կողմից հովանավորվող նորանոր ազգային-մշակութային կենտրոններ: Համաձայն պաշտոնական տվյալների՝ անկախության առաջին տարիներին (1992 թ.) Ղազախստանն ուներ 16.5 միլիոնանոց ազգաբնակչություն<sup>212</sup>: Ղազախները կազմում էին դրա 39.7 %-ը, ոուաները՝ 37.8 %-ը, իսկ 22.5% -ը բաժին էր ընկնում մնացած ազգային փոքրամասնություններին<sup>213</sup>:

Դիտարկելով Ղազախստանի հետխորհրդային վիճակագրությունը՝ կարելի է եզրակացնել, որ ազգաշինությունը դրական անդրադարձ է ունեցել նաև դազախ էթնոսի թվաքանակի վրա: Այսպիսով համաձայն 1997 թվականի ժողովրդագրական տվյալների՝ դազախները կազմում էին ազգաբնակչության 50.6%-ը կամ 8,033,400 մարդ, ոուաները՝ 32.2% կամ 5,104,600 մարդ, ուկրախնացիները՝ 4.5% կամ 720,300 մարդ, ուզբեկները՝ 2.3% կամ 358,700 մարդ, գերմանացիները՝ 1.9% կամ 303,600 մարդ, թաթարները՝ 1.8% կամ 277,600 մարդ, իսկ մնացած 6.7%-ը բաժին էր ընկնում 100 և ավելի էթնիկ խմբերին<sup>214</sup>:

<sup>211</sup> Norman W., նշվ. աշխ., էջ 39:

<sup>212</sup> Nazparay J., նշվ. աշխ., էջ 28:

<sup>213</sup> Svanberg I., նշվ. աշխ., էջ 323:

<sup>214</sup> Национальное статистическое агентство Министерства экономики и торговли Республики Казахстан. Алматы, Статистическое обозрение Казахстана, №1, 1997, с. 3.

Արդեն առաջին սահմանադրությունը (1995 թ.) շատ լուրջ ուշադրություն էր դարձնում ազգերի փոխհարաբերությունների հիմնախնդրին՝ խոստանալով երկրի բոլոր քաղաքացիներին ազգային իրավահավասարություն և ազատություն<sup>215</sup>: Ի կատարումն այդ հիմնադրույթի՝ նույն թվականին էլ ստեղծվեց Ղազախստանի ժողովուրդների Ասամբլեան<sup>216</sup>: Գործելով նախագահին առնթեր՝ իբրև խորհրդակցական մարմին՝ այն լիազորված էր Մեջլիսում (Խորհրդարանի Ստորին Պալատ) ներկայացնելու 9 հոգուց բաղկացած պատգամավորական խումբ, որը զբաղվելու էր էթնիկ խմբերի իրավունքների պաշտպանության, մշակույթի և պատմության զարգացման հարցերով<sup>217</sup>: Խումբն ընտրվում էր Ասամբլեայում ներառված 350 ներկայացուցիչներից, որոնք իրենց հերթին ընտրվում էին ազգային-մշակութային կենտրոնների առաջադրմամբ: Օրենքով նրանց տրված են սահմանափակ իշխանական լիազորություններ՝<sup>218</sup>:

Ասամբլեայի ղեկավար մարմինն ընտրվում է բազմամշակութայնության սկզբունքով, ունի իր ընտրովի ղեկավար խորհուրդը, նախագահը՝ իր տեղապահներով: 2012 թվականին Ղազարբասի հրամանագրով երկու տեղակալներից մեկի պաշտոնը տրվել էր հայազգի Արտուշ Կարապետյանին, որը Ղազախստանի հայկական Ղայրի ընկերակցության ղեկավարն է<sup>219</sup>: Կառուցն իր մշակութային, հասարակական և կրթական բաժիններով մասնակցային միջավայր էր: Նրա հովանու ներքո գործում են մոտ 500 ազգային-մշակութային կենտրոններ, որոնք էթնիկ խմբերին հնարավորություններ են ընձեռում իրատարակելու իրենց լրատվական և մշակութային պարբերականները, հեռարձակելու ռադիո և հեռուստատեսային հաղորդումները<sup>220</sup>:

Շնորհիվ Ասամբլեայի՝ Ղազախստանում արդ գործում է 6 ազգային թատրոն (Ղազախական, ռուսական, կորեական, ուզբեկական, գերմանական և ույղուրական), ինչպես նաև՝ 100 ամենօրյա և 170 կիրակնօրյա դպրոցներ, որտեղ դասավանդում են

<sup>215</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս, Nazarbayev N., The Kazakhstan Way, London: Stacey International, 2008, pp. 78-85.

<sup>216</sup> Ասամբլեայի կառուցվածքի, գործառությների և այլնի մասին տե՛ս, **Ассамблея Народа Казахстана, Деятельность Ассамблеи Народа Казахстана**, URL:<http://www.Assembly.Kz/50/> (04.02.2015).

<sup>217</sup> Cohen A., Kazakhstan: The Road to Independence, Energy Policy and the Birth of a Nation, Singapore: Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2008, p. 24.

<sup>218</sup> Markus U., Kassymova D., Kundakbayeva Zh., նշվ. աշխ. էջ 35:

<sup>219</sup> Kazinform, Urgent: Kazakh President appointed vice chairmen of People's Assembly of Kazakhstan, 27 April 2012, URL:<http://www.inform.kz/eng/article/2459535> (04.02.2015).

<sup>220</sup> Агакишиев И., նշվ. աշխ. էջ 124:

23 լեզուներով<sup>221</sup>: Անշուշտ, այս քաղաքականության ենթատեքստում կարելի է գտնել նաև ռուսական լեզվական գերիշխանության հակազդման միտումներ: Հիշենք, որ ռուսների գերիշխանական ներկայությունը մեծ ազդեցություն է թողել ոչ միայն դաշտականության, այլև 100-ից ավելի ազգային փոքրամասնությունների վրա: Դրա վառ ապացույցը նրանց ռուսամոլությունն ու ռուսախոսությունն է:

Նազարբաևի վարչակարգի քաղաքականության կենտրոնում տարբեր էթնոսների շրջանում **դազախսսպանցու** կերպարի արմատավորումն է: Համաձայն նախագահի 2002 թվականի «Ղազախստանի ժողովուրդների Ասամբլեայի նոր ռազմավարությունը» շրջաբերականի՝ Ասամբլեան պարտավորվում էր իր գործողությունները կենտրոնացնել համադաշտական ինքնության, հայրենասիրության, մշակույթի, պատմության, պատմական ժառանգության և ազգային ավանդույթների հետագա զարգացմամբ բազմաէթնիկ հասարակության հոգևոր միասնության շուրջ<sup>222</sup>:

Դրան էին միտված նաև 2007 թվականի սահմանադրական վերափոխումները, որոնց արդյունքում Ղազախստանի ժողովուրդների Ասամբլեան վերանվանվեց Ղազախստանի ժողովուրդի Ասամբլեա<sup>223</sup>: Դրանով փորձ էր կատարվում ստեղծելու «Ղազախստանցի» ազգի գաղափարը, մի բան, որը ժամանակին փորձում էր ներմուծել Բորիս Ելցինը, երբ առաջադրում էր **ռուսասպանցի (россиянин)** հղացքը: Ըստ ամերիկացի ղազախագետ Քրիստոֆեր Ռիսի Ղազախստանի կառավարությանը մեծավ մասամբ հաջողվել է ստեղծել «համախազախստանյան» ինքնությունը, որին կառավարությունը հազիվ թե հասներ առանց Ղազախստանի Հանրապետության բազմաէթնիկ, բազմալեզու և տարբեր մշակութային նախասիրություններ ունեցող քաղաքացիների միասնական աջակցությամբ<sup>224</sup>:

Համաձայն Նազարբաևի 856-րդ հրամանագրի՝ Ասամբլեան հանձնառում է նոր ռազմավարություն՝ ուղղորդել ղազախական ինքնության ձևավորման գործընթացը: Նպատակին հետամուտ՝ նոր ռազմավարությունը նախ և առաջ կարևորում էր

<sup>221</sup> Официальный интернет-ресурс города Алматы, Резюме информации на Ассамблею народа Казахстана. URL: [http://www.almaty.kz/page.php?page\\_id=1698&lang=2](http://www.almaty.kz/page.php?page_id=1698&lang=2) (12.02.2016)

<sup>222</sup> Cohen A., Kazakhstan p. 24:

<sup>223</sup> Markus U., Kassymova D., Kundakbayeva Zh., նշվ. աշխ., էջ 35:

<sup>224</sup> Քրիստոֆեր Ռիս, 18.08.2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:

ηαզախական պատմության և մշակույթի մասին գիտելիքի տարածումը և պատմական ժառանգության և ազգային ավանդույթների պահպանումը<sup>225</sup>:

Պետք է նաև ընդունել, որ այս կառուցի նկատմամբ առկա է նաև քննադատական մոտեցում: Հետազոտողներից շատերը համոզված են, որ Ասամբլեան ոչ թե քաղաքական, այլ մշակութային կառուցի է, քանի որ այն չունի օրենսդրական իշխանություն կամ քաղաքական ազդեցություն և գործարկվում է իբրև փոքրամասնությունների վերահսկման գործիք<sup>226</sup>:

## 2.7. Ազգային ինքնությունը և պատմական միտքը

Պատմական միտքը քաղաքակրթական տեսակի ինքնահայեցողության առավել կարևոր ծևերից է: Սակայն պատմական հանգամանքների բերմամբ դազախների շրջանում վերջինս աչքի չի ընկել ներունակությամբ և բազմազանությամբ: Հիմնական պատճառը, ինչպես քանից առիթ ենք ունեցել հատկանշելու, նրանց ազգային ինքնագիտակցության անբավարար մակարդակն էր:

### ա. Էպիկական ասքեր

Կենտրոնական Ասիայի ժողովուրդների վաղնջական պատմության մասին պատկերացումներ են տալիս նաև թյուրքական դաստիանները կամ էպիկական ասքերը՝ «Ալպամիշը» և «Մանասը», որոնց պատկանելության մասին վեճերը մինչ այժմ էլ շարունակվում են<sup>227</sup>: Դրանք պատումներ են ցեղերի և նրանց բատիրների՝ օտար նվաճողների դեմ մղած «հերոսական պայքարի» մասին<sup>228</sup>:

Հընթացս ժամանակի տարանջատվելով թյուրքական ընդհանրությունից՝ դազախները շարունակում էին մտածել նույն կլանային ինքնանույնացման կանոններով: Եվ

<sup>225</sup> Տե՛ս, Cohen A., Kazakhstan p. 24:

<sup>226</sup> Bhavna D., Kazakhstan, p. 131:

<sup>227</sup> Զնայած Մանաս էպոսը հիմնականում համարվում է դրա գների ազգային էպոսը, այն նաև ընդունված է այլ թյուրքական ժողովուրդների կողմից, այդ թվում նաև՝ դազախների: Մանաս էպոսի մասին մանրամասն տե՛ս Mysaev C. L., Թուղթ "Մանաս": հայու-պոպուլյարny օչերկ, Փրուզ: Ալիմ, 1984.

<sup>228</sup> Չարական շրջանում դրանք լրջորեն ուսումնասիրվում էին տեղի ժողովուրդների կառավարելիությունն արդյունավետ դարձնելու նպատակով: Մինչդեռ խորհրդային շրջանում կուսակցությունը դրանք որակեց իբրև ֆեռայիզմի և կրոնական անհանդուրժողականության տեքստեր և հանեց լայն շրջանառությունից: Paksoy H. B., Alparamys: Central Asian identity under Russian Rule, Association for the Advancement of Central Asian Research Monograph Series, 1989, pp. 20-21.

Էպիկական պատմահայեցողությունը կրկին գերակայում էր նրանց ասքերում՝ «Կոլբանդի», «Եղիզե», «Օրակ մամայ» և այլն<sup>229</sup>:

Բանաստեղծների (ակիններ կամ ժիրայներ) ասքերի հիմնական թեման ժողովրդի անցյալն ու ներկան էր՝ Ումբետեյ, Բուխար, Շարտամբայ: Պատմության քննությամբ նրանք զարգացնում էին իրենց իմաստասիրական և գեղագիտական հայացքները: Նրանց շարքում ավանդույթն առանձնացնում է նախ և առաջ Կաժաբերգեն Թալիբայուլային (1663-1763 թթ.), որի «Բաբա-թիլ» էպոսը խնդիր ուներ հարակարգելու և իմաստավորելու ազգային պատմությունը: Ասացողն այն բաժանում էր չորս շրջափուլի: ա. սակերից ու մասագետներից մինչև ազգային համախմբում և առաջին պետականության կազմավորում՝ Ալաշա խանի գլխավորությամբ, բ. մոնղոլական դժնդակ տիրապետություն, գ. Կերեի և Ժանիբեկի հերոսական ապստամբությունը և Ղազախական Խանության ստեղծումը, դ. ղազախների հերոսական պայքարը Չինաստանի, ոռու կազակների, ուզբեկական հորդաների և (հատկապես) Զունգուրական Խանության դեմ: Վերջին շրջափուլը ողբերգական էր ղազախների համար, նրանք հայտնվել էին բնաջնջման վտանգի առաջ, բայց ասացողը չի կորցնում հավատը ժողովրդի իմաստնության հանդեպ՝ համոզված, որ նա կգտնի իր ճշմարիտ պատմական ուղին:

Կաժաբերգենի ժամանակակիցն էր Կադիրգալի Ժալահիրը: 17-րդ դարի սկզբին նա համաբերել է իր հիմնական երկը՝ «Ժամի ատթավարին» (Պատմական տարեգրություններ), որտեղ փաստական հենքի վրա շարադրել է ղազախների պատմությունը 13-16-րդ դարերում: Շարադրանքն ասոցիատիվ-էպիկական է, չկա դեպքերի հաջորդական և տրամաբանական բացատրություն: Փոխարենը շեշտված են հերոսները և ժողովրդի «վեհ ու իմաստուն կերպարը»<sup>230</sup>:

Ղազախներն իրենց պատմական իմաստնության աղբյուր են համարում Աբայ Կունանբաևի (1845-1904 թթ.) բանաստեղծությունները: Խոսքն առաջին հերթին նրա «Ղարա սյոզ (Սև խոսք)» ստեղծագործության մասին է՝ գրված դասական ողբի կանոններով: Դրանում հեղինակը, հետևելով բարքերի խաթարման տեսությանը, նկա-

<sup>230</sup> Մանրամասն տե՛ս **Մկրտչյան Ն., Օհանյան Կ.**, խմբ. Ղազախստան. բազմամշակույթ և յուրօրինակ, Երևան, Նշանակ, 2012, էջեր 23-50:

րագրում է ղազախների աստիճանական անկումը համակեցական կյանքի ամենատարբեր հարթակներում՝ ընտանիք և մարդկային հարաբերություններ, օրենք և տնտեսական կյանք, կրոն և բարոյականություն<sup>231</sup>: Համարում է, որ իրավիճակը հնարավոր է շտկել՝ հետևելով միայն նախնյաց փորձառությանն ու արժեհամակարգին: Իբրև ազնվական կեցվածքի և մարդասիրության իդեալական օրինակներ՝ նա բերում է Թաուկե, Եսիմ, Կասիմ, Կերեի խաների կերպարները և արության գործերը<sup>232</sup>:

Խորհրդային ժամանակաշրջանում էպիկական ասքը վերասերվեց և սկսեց օգտագործվել կոմունիստական գաղափարախոսությունը հանրաճայնելու նպատակով: Այս առումով հայտնի էր ակին ժամբուլ ժաբակը (1846–1945 թթ.): Նրա շատ բանաստեղծություններ և էպիկական ասքեր նվիրված էին սոցիալիստական շինարարությանը և ժողովրդի լուսավոր ապագան կերտող հերոսներին՝ «Զինված ժողովուրդ», «Լենինն ու Ստալինը», «Հարազատ Կիրովը», «Իմ հայրենիքը» և այլն<sup>233</sup>: Նման կեղծ պաթոսով լրացվում էր ճշմարիտ պատմագիտական մտքի պակասը: Կարծիք կա, որ ժաբակի փոխարեն (հարկավ, կուսակցության առաջադրանքով) գրում էին նրա թարգմանիչները: Գրում էին, որպեսզի «ժողովրդի ձայնը հասցնեին ժողովուրդին»:

Էպիկական պատմագրության ժանրն այսօր էլ արմատներ ունի ղազախական միջավայրում: Նորանկախ Ղազախստանի ծրագրային և քարոզչական փաստաթղթերում զգալի է դրա շունչը: Այս առումով առանձնակի հատկանշելի է «Ղազախստան-2050» հանրագիրը: Ապագայի տեսլականը հիմնավորելու համար անդրադարձ է կատարվում դեպի հերոսական անցյալ՝ համաթյուրքական միասնություն, դիչաղական կազանատ, Կերեյի և ժանիբեկի ապատամբություն և Ղազախական Խանության հիմնում: Հիմնագաղափարն է՝ անցնելով ծով դժվարությունների միջով՝ ղազախները վերադառնում են իրենց արմատներին և ի զորու են վերագտնելու իրենց միասնությունն ու արժանապատիվ կեցվածքն առ համայն աշխարհ: Հանրագրի հիմքում ժամանակի շրջանաձև (առասպելաբանական) շարժումն է՝ իին ուսուափայից դեպի նոր ուսուափա:

<sup>231</sup> Համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս զուգահեռներ տեսնելու Աբայի գաղափարների և Մովսես Խորենացու «Ուրի» միջև: Ամենայն հավանականությամբ ղազախ ակինը ծանոթ էր պատմահոր «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությանը:

<sup>232</sup> Կүнанбаев А. Նշվ. աշխ. էջեր 112 – 136:

<sup>233</sup> Джумабеков К. М., Таланханова С. Б., История казахской литературы, т.1, Алма-Ата, изд. Академия наук Казахской ССР, 1989, с. 31 – 49.

Ղազախияկան միջավայրում պատմության բանական ընկալումներն սկսեցին իրական կերպարանք ստանալ լոկ 19-րդ դարի երկրորդ կեսից: Մասնագետ պատմաբաններ չկային, սակայն ականավոր լուսավորիչների ստեղծագործություններում նոր ընկալումներն ակնհայտ էին: Ուսումնասիրողներն առանձնացնում են հատկապես Զոկան Վալիխանովին և Իբրայ Ալթինսարինին, որոնց կրթական, ազգագրական, լեզվաբանական, գրական ընկալումներում պատմությունն արդեն ներկայանում է իբրև հետազոտական ուրույն միջավայր<sup>234</sup>: Այս առումով պետք է նշել, որ պատմական տվյալ ժամանակաշրջանը խիստ կարևոր ազդեցություն է թողել ղազախ մտավորականության ստեղծագործությունների վրա: Հարցին՝ որքանո՞վ են Ղազախստանի 19-րդ դարի գրական—պատմական տեքստերն ազդվել Ռուսաստանի գաղութային քաղաքականությամբ պայմանավորված հասարակական-քաղաքական վերափոխումներից, Նազարբաև համալսարանի դասախոս—գրականագետ Գարրիել Մքոնայերը պատասխանում է.

«Ռուսական գաղութային քաղաքականությունը մեծ հետք է թողել ղազախական գրականության վրա: 19-րդ դարի վերջը եւ 20-րդ դարի սկիզբը նոր ժանրերի սղեղծման ժամանակաշրջանն է: Առաջին անգամ ղազախական միջավայրում ի հայր են գալիս վեպը, նովելը, էսսեն և այլն: Կայսերական Ռուսաստանի քաղաքականության հետքանքով ղազախական լրեքսպերն ասլիճանաբար զրվում են իսլամական մշակութային ազդեցությունից: Այն պայմանավորված էր նաև ղազախ գրողների ռուսական կրթությամբ և ռուս գրողների հետ ակտիվ շփումներով»<sup>235</sup>:

## **թ. Ռուսական պատմական միջքը**

Ղազախական տափաստանի մասին գիտական անդրադարձեր սկսել են երևալ 18–19-րդ դարերի ռուս հեղինակների մոտ՝ Ի. Կ. Կիրիլով, Ն. Պ. Ռիչկով, Վ. Ն. Տատիշչև, Ի. Գ. Անդրեև, Ն. Մ. Կարամզին, Ս. Մ. Սոլովյով, Ո. Օ. Կյուլսակի և այլք<sup>236</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին երևացին նոր ռուս հետազոտողներ, որոնք սկսեցին ուսումնասիրել Կենտրոնական Ասիայի ժողովուրդ-

<sup>234</sup> Валиханов Ч., Исторические предания с. 136 – 276; Валиханов Ч., О мусульманстве в Степи, с. 63 – 122; Алтынсарин И., Хрестоматия казахской литературы, с. 49 – 185.

<sup>235</sup> Գարրիել Մքոնայեր, 16.08. 2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:

<sup>236</sup> Առավել հանգամանորեն այս մասին տե՛ս, Игбабаев С. К., Историография истории Казахстана, с. 112 – 131; 156 – 171.

ների կյանքի և կենցաղի, սովորութեների և օրենքների տարբեր դիտանկյունները՝ Ա. Գ. Լսշին, Լ. Մ. Մեյեր, Վ. Ն. Վիտսակի, Ա. Ի. Դոբրոսմիլով, Ա. Ն. Խարուզին, Ե. Մ. Վոլֆսոն և այլը<sup>237</sup>: Այդ ուսումնասիրությունները գրված էին ժամանակի ազգագրական և ազգաբանական գիտության մեթոդների կիրարկմամբ և չեն կորցրել իրենց կարևորությունը նաև մեր օրերում: Այս առումով հույժ հատկանշելի են Վ. Վ. Բարտոլդի աշխատությունները՝ նվիրված Կենտրոնական Ասիայի պատմության, ազգագրության, կրոնի այլայլ հիմնահարցերին<sup>238</sup>: Դրանցում դազախական թեման լրաաբանվում է լայն գուգահեռների հետնախորքում:

Այս գիծը շարունակվեց նաև Ղազախստանի խորհրդայնացումից հետո՝ 1920–1940-ականներին. ոռու պատմաբանների հերթական սերունդն սկսեց զբաղվել Կենտրոնական Ասիայի (նաև Ղազախստանի) պատմության հիմնահարցերով՝ Մ. Ն. Պոկրովսկի, Մ. Պ. Վյատկին, Ն. Ի. Կրասովսկի, Վ. Գ. Ֆելդման: Նրանց հետազոտական սկեռումն էր՝ մերկացնել ցարիզմի գաղութային քաղաքականությունը, փառաբանել ղազախ ժողովրդի հերոսական պայքարն «ատելի ցարական վարչակարգի դեմ»: Դրա հետ մեկտեղ անջրպես էր դրվում գաղութային ռեժիմի և «առաջադեմ ռուս պրոլետարիատի» միջև: Հատկանշվում էր վերջինիս բացառիկ պատմական առաքելությունը՝ ազատագրելու կայսրության ճնշված ժողովուրդներին և առաջնորդելու դեպի պայծառ ապագա՝ մարքսիզմ-լենինիզմի դրոշի ներքո: Նոյն մոտեցմամբ՝ նախահեղափոխական ղազախական պատմությունը ներկայացվում էր իբրև դասակարգային պայքարի և բախումների շարան՝ շահագործվող մեծամասնության և շահագործող բիերի (բայեր) ու խաների միջև:

<sup>237</sup> **Левшин А.**, Описание Киргиз-Казачьих, или Киргиз-Кайсацких орд и степей, СПб, 1823 , под общей ред. академика М.К. Козыбаева, Алматы: Санат, 1996; **Левшин А.**, Об имени киргиз-кай-сацкого, с. 432—451; **Мейер Л. М.**, Киргизская степь Оренбургского ведомства / Сост. Ген. штаба подполк. Л. Мейер. - Санкт-Петербург : тип. Э. Веймара и Ф. Персона, 1865; **Витевский В. Н.**, И. И. Неплюев и Оренбургский край в прежнем его составе до 1758 г., т. 3, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1897; **Добросмыслов А. И.**, Тургайская область. Исторический очерк, «Известия Оренбургского отряда. РГО», вып. 15—19, Материалы по истории, России, 'Оренбург, 1900; **Харузин А. Н.**, Степные очерки (Киргизская Букеевская орда): странички из записной книги, А.Н. Харузин, М.: Типография А. А. Левенсон, 1888; **Вульфсон Э. С.**, Киргизы. Составила Э. С. Вульфсон. Природа и люди России. Общедоступные книжки под редакцией А. А. Ивановского, М.: Издание книжного магазина торгового дома С. Курнин и К°, 1901. **Вульфсон Э. С.**, Как живут «сарты», Москва, Издание книгоиздательницы А. С. Панафидиной, 1908.

<sup>238</sup> **Бартольд В. В.** Отчёт о поездке в Среднюю Азию с научною целью 1893 – 1894 гг. СПб., Типография Императорской Академии наук, 1897. **Նոյնի՝** Очерки истории Семиречья, т. 1 – 2, СПб, изд. АН, 1898; **Նոյնի՝** Образование империи Чингисхана, СПб, изд. АН, 1896; **Նույնի՝** История мусульманства, Петроград, изд. Огни, 1918; **Նոյնի՝** Турки. Двадцать лекций по истории Средней Азии, Алматы, Юалтын, 1998.

#### **գ. Ղազախական պատմագրությունը**

Նոր ձևավորվող ղազախական պատմագրական մտքին պարտադրվեց այս կարծրակերպը: Ի հայտ եկան ազգային պատմաբաններ, որոնք փորձեցին իրենց նյութի նկատմամբ կիրարկել «հետազոտական մեթոդներ»՝ Գ. Վ. Տոկժանով, Ա. Վ. Բուկեյխանով, Ս. Մ. Աբդիկալիկով, Ս. Մ. Ասֆենդյարով՝<sup>239</sup>:

Այս և նման փորձառությունների արդյունք հանդիսացավ առաջին ընդհանրացնող կոլեկտիվ մենագրությունը՝ «Ղազախական ՍՍՀ պատմություն», խմբ՝ Մ. Աբդիկալիկով, Ա. Պանկրատովա՝<sup>240</sup>: Մենագրության տեսական-գաղափարական հենքը պարտադրվել էր Մոսկվայից. Երկու տարի առաջ՝ 1941-ին, իրատարակվել էր Մ. Պ. Վյատկինի «Ղազախական ՍՍՀ-ի պատմության ակնարկները», որտեղ մարքսիզմի դասականների ասույթների ներքո ներկայացվում էր ղազախական պատմությունը՝ սկսած հեռավոր անցյալից մինչև 1868 թվականի բարենորոգումները: Այնուհետև ուրվագծվում էին այն ուղիները, որոնցով պետք է ուսումնասիրվեին Խորհրդային Ղազախստանի պատմության հիմնահարցերը՝<sup>241</sup> : Այսու՝ ղազախական պատմագիտական մտքի սահմաններն այլևս հաստատագրված էին, և յուրաքանչյուր նորամուծություն պիտակավորվում էր իրու գաղափարական շեղում:

Այս առումով հույժ հատկանշական էր Ե. Ն. Բեկմախանովի գիտական կենսագրությունը: Նա ԳԱ ղազախական մասնաճյուղի Պատմության ինստիտուտի տնօրենն էր: 1947 թվականին իրատարակեց «Ղազախստանը 19-րդ դարի 20 – 40-ական թվականներին» մենագրությունը, որտեղ ք. Կենսարի ապստամբությունը ներկայացնում էր իրու հակացարական համաժողովրդական շարժում՝ միտված վերականգնելու ղազախների պետականությունն ու ազատ կյանքը՝<sup>242</sup>: Հեղինակը սուր քննադատվեց, հեռացվեց պաշտոնից և պարտադրվեց արմատապես փոխելու հայացքները: Գրեց աշխատություններ, որոնցում սկսեց գովերգել ուսական տիրապետությունն իրու պատմական առաջընթացի լուսավոր ուղի:

<sup>239</sup>Շարունակելով ուսագրությունը՝ Սանժար Ասֆենդիարովը ցարիզմին մեղադրում էր ղազախների զանգվածային կոտորածների մեջ: **Ասֆենդիար Ս. Դ.**, История Казахстана, с. 110.

<sup>240</sup> **Աբդիկալիկով Մ., Ա. Պանկրատով Ա.**, ред. История Казахской ССР, Алма-Ата, изд. Казфана, 1943.

<sup>241</sup> **Վյատկին Մ. Պ.**, Очерки по истории Казахской ССР, М., Госполитиздат, 1941, с. 109 – 134.

<sup>242</sup> **Бекмаканов Ե. Ն.**, Казахстан 20-40 годы XIX века: 20-40 годы XIX века, под ред. Жиенгалиев Н. Б., Алма-Ата, 1992.

1950-ականներին՝ խրուշչյովյան ծնհալի տարիներին, փորձ արվեց փոքր-ինչ խաթարելու նախորդ դարաշրջանի կարծրատիպերը: Պատմաբանները շարունակում էին զարգացնել արդեն ավանդական դարձած երկու հետազոտական թեմաներ՝ ռուս-հազարական հարաբերությունները, և խորհրդային կարգերի հաստատումն ու զարգացումը<sup>243</sup>: Նորությունն այն էր, որ սկսել էին արդեն խոսել «ղազախական առանձնահատկությունների» մասին՝ հատկապես անասնապահության, երկրագործության մեջ՝ Ի. Մ. Մակարով, Ա. Տ. Տորսունով, Ե. Ն. Բեկմախանով<sup>244</sup>: Թեման համարվում էր հրատապ, քանի որ սկսվել էր խամ և խոպան հողերի յուրացման աննախադեպ փորձառությունը, և ցանկություն կար համեմատելու ղազախական պատմության նախախորհրդային և խորհրդային շրջափուլերը: Հարկավ, նպատակն էր ցուց տալ նոր հողերի յուրացման խորհրդային փորձառության առավելությունները՝ խարսխված կոմունիստական իդեալների և ժողովուրդների անխախտ բարեկամունքան վրա:

Նոյն ժամանակաշրջանում ակտիվ քննարկման առարկա էին նաև Ղազախական ԽՍՀ արդյունաբերական զարգացման նվաճումները: Աստ ավելի մեծ էին նվաճումները, սակայն ղազախների մասնաբաժինն անհամեմատ ավելի համեստ էր: Փույթ չէ, վիճակագրական տվյալների համահարթեցումները հանրապետական ընդհանուր ցուցանիշների ցանկում ընդունված ավանդույթ էր: Այս մեկնակետից էին գրված ժամանակի աչքի ընկնող պատմաբանների աշխատությունները՝ Ս. Ատառով, Վ. Գ. Գրիգորևս, Բ. Ս. Սիմակով և այլք<sup>245</sup>:

Բրեժենյան լճացման տարիներին այս պատկերն ընդհանուր առմամբ շարունակվեց: Նշանակալի պատմագիտական գործեր չէին ստեղծվում. կրկին զորեղ էր կուսակցական թելադրանքը, որի նկատմամբ ղազախ պատմաբանները (ի համեմատություն այլ հանրապետությունների) ունեին ավելի քան կրավորական կեցվածք: Դրա վառ արտահայտությունը դարձավ «Ղազախական ԽՍՀ պատմություն»

<sup>243</sup> **Ше'у, Ким М.П.** Аграрный вопрос и классовая борьба в Казахстане в период Великой Октябрьской социалистической революции. Москва: Госполитиздат, 1945.

<sup>244</sup> **Турсунов А. Б.**, Победа крлхозного строя в Казахстане, Алма-Ата, изд. АН Каз. ССР, 1957; **Макаров И. М.**, Казахское замледелие в конце XIX–в начале XX вв., М., Восточная литература, 1959; **Бекмаханов Е. Н.**, Из истории колективизации Казахской ССР, Алма-Ата, изд. АН Каз. ССР, 1963.

<sup>245</sup> **Атаяев С.** Деятельность Компартии Казахстана по развитию тяжелой промышленности (1956-1965 гг.). Алма-Ата, Наука, 1979. **Григорьев В. Г.**, История развития станкостроительства в Казахской ССР, Кустанай, изд. Полит. института, 1965; **Симаков К.М.** Очерк развития промышленности Казахстана. Алма-Ата, 1970.

հինգհատորյա կոլեկտիվ աշխատությունը, որի գլխավոր խմբագիր ակադ. Ա. Ն. Նուսուպքեկովը հայտնի էր «իր կոշտ կուակցական» կեցվածքով: Երկրի պատմությունն սկսվում էր հինքարեղարյան հուշարձաններից մինչև թյուրքական ընդհանրություն, Ղազախական Խանության ստեղծումից մինչև ազգային միասնություն, ռուսական բարերար տիրապետության հաստատումից մինչև Հոկտեմբերյան բախտորոշ հեղափոխություն, սոցիալիստական բուռն շինարարությունից մինչև ընկերային, մշակութային, գիտական աննախադեպ նվաճումներ<sup>246</sup>:

Միայն հեռատես մի քանի պատմաբաններ ջանք էին թափում հասկանալու «անկման իրական պատկերը» և ուրվագծելու ապագայի հեռանկարը<sup>247</sup>: Նրանք ստեղծում էին պատմագրական բնույթի աշխատություններ՝ Բ. Ս. Բասին, Վ. Յ. Տուրտա, Ե. Ն. Բեկմախանով, Բ. Ս. Սովեյմանով, Ն. Գ. Ապոլովա և այլք<sup>248</sup>:

Միով բանիվ, սկիզբ առած 1930-ականներից՝ ղազախական պատմագիտական միտքը խոշոր հաշվով ի զորու չեղավ իրագործելու իր պատմական առաքելությունը՝ նպաստելու ազգային նոր ինքնության ձևավորման գործընթացին։ Ղազախական պատմական դիսկուլսը միահյուսվեց կոմոնիստական արժեհամակարգի հետ։ Նորանկախ Ղազախստանում փորձեր են արվում վերիմաստավորելու երկրի պատմական հեռանկարը։ Այս գործընթացում նոյնպես ակտիվ էր նախագահ Նազարբաևը, և ինչպես պատմագետ Սվետանա Կովալյովան է նշում։

«1995 թվականին Ղազախստանի Հանրապետությունում պատմական գիրակցության կայացմանը նպաստող նոր հայեցակարգ ընդունվեց: Այս ամբողջ ժամանակահարվածում պետությունը մեծապես նպաստում էր պատմագիրության զարգացմանը: Մեկ այլ ձևակերպմամբ՝ խոսքը «նախագահական պատմագիրության» զարգացման մասին է, քանի որ պատմական միջի զարգացման գրեթե բոլոր նախաձեռնությունները պատկանում են մեր նախագահին»<sup>249</sup>:

Պատմության վերահմաստավորման նախաձեռնությունը 1990–2000-ականներին «չափավոր հակախորհրդալին» բովանդակություն ուներ: Վերանայվում էին անզյակ

<sup>246</sup> Нусупбеков А. Н., и др. История Казахской ССР (с древнейших времен до наших дней) Т. 1—5. Алма-Ата: Наука, 1977—1980.

<sup>247</sup> Игibaев С. К., նշվ. աշխ., էջ 179:

<sup>248</sup> **Басин В. Я., Турта В. В.**, Некоторые вопросы, с. 10 ; **Бекмаханов Е. Н.**, История дореволюционного Казахстана в новейшей советской литературе (1968–1971 гг.), Вопросы истории. 1972. № 10, с. 11.

**249 Սվետանա Կովալսկյայ, 20.08.2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:**

վերաբերյալ շատ եզրույթներ, հասկացություններ և հղացքներ: Այս առումով պատմագետ Սվետանա Կովալսկայան նշում է.

«2013 թվականին նախագահ Նազարբաևի նախաձեռնությամբ մշակվեց պատմագիրական հետազոտությունների՝ «Ազգը պատմության հորձանուղում» ծրագիրը, որի հիմնական նպատակն ազգային պատմության հորիզոնների ընդլայնմամբ նոր պատմական աշխարհընկալման ծևավորումն ու հետխորհրդային պատմության իմաստավորումն էր: Ծրագիրը նախագիր է:

- ա.** պատմագիրությունը դարձնել հումանիտար գիրությունների կապող օղակ,
- բ.** որակական նոր մշակման ենթարկել Ղազախստանի պատմության ընդհանուր հղացքը,
- գ.** Ղազախստանի պատմությունը դիրքարկել համաշխարհային պատմության համարեքսպում,
- դ.** Կենդրունական Ասիայի պատմությունը դիրքարկել քաղաքակրթագիրության հոլովույթում՝ շեշտադրելով ղազախական էթնոսի դերը գործում ղաղաքակրթության պահպանման գործում:

Մեր հիմնական մարդահրավերը պատմության դասագրքերի սղեղծումն է: Պեսք է նշել, որ անկախության դարիներին, այնուամենայնիվ, պատմության վերագրման ուղղությամբ ինչ-որ քայլեր կարարվել էն. պատմության դասագրքեր են ներառվել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են 1920-1930-ականների սովորությունները, կոլեկտիվացման և Ղազախստանի դարածքի ԳՈՒԱԳԻ պատմությունը, Ղազախստանը Ռուսաստանին միացնելու հիմնախնդիրը, Ռուսաստանի դեմ ազգային-ազատագրական պայքարի պատմությունը և այլն: Այս թեմաները ներառվել են պատմության դասագրքեր՝ շնորհիվ մեր նոր՝ «անկախ» պատմություն սղեղծելու ձգումանը, որը փորձում ենք իրականացնել.

- ա.** համառուսական պատմությունից ղազախական պատմության դարանջապմամբ,
- բ.** գաղութային և խորհրդային ազդեցության հաղթահարմամբ, ապագաղութայնացմամամբ կամ ապախորհրդայնացմամբ,

**գ. պարմական գիրակցության և պարմական հերազդությունների յուրայինացմամբ (indigenization)»<sup>250</sup>:**

Շեշտը դրվում էր անցյալի հերոսական դրվագների և «անանց» արժեքների վրա, որոնք խաթարվել էին գաղութային (ցարական և խորհրդային) դարաշրջանում: Միևնույն ժամանակ խոսվում էր ղազախների պատմական առաջընթացի մասին՝ ձեռք բերված զրկանքների և կորուստների ճանապարհով: Փառաբանվում էին ինքնիշխան ներկան և ապագան: Այս դիտանկյունից հույժ հատկանշական էր «Ղազախստանի պատմության» քառահատորյակը: Պատմական փաստերն աստ հիմնականում վերցված էին նախորդ հինգհատորյակից, սակայն այլ էր դրանց մեկնաբանությունը՝ «հարիր ժամանակի ոգուն»<sup>251</sup>: Համաձայն որոշ փորձագետների՝ ղազախական արդի պատմագրության աղբյուրագիտական հենքը շարունակում է մնալ խորհրդայինը: Օրինակ, Գաբրիել Մքանուայերը, անդրադառնալով այս հիմնահարցին, նշում է.

«Արդի պարմագրությունը հաճախ, իբրև սկզբնաղբյուր, օգտվում է գրական սրեղծագործություններից, որոնցից շատերը խորհրդային գործադրություններին այլ կերպ էին ներկայացվում: Այսինքն՝ վերընթերցման անհրաժեշտություն կա: Օրինակ, Իյաս Եսեմբեռինի նովելները, չինելով առաջնային սկզբնաղբյուրներ, շարունակում են դիրարկվել իբրև աղբյուր՝ հասկանալու ղազախ ժողովրդի պատմությունը: Այսօր պարմաբաններից շատերն ուղղակի կիրառում են դրանք»<sup>252</sup>:

Վերջին տարիներին պատմագրության մեջ նկատվում է միտում՝ տեսականացնելու և նորովի ներկայացնելու ղազախական անցյալն ու ներկան: Ի հայտ են եկել նոր պատմագետներ, որոնք ձգտում են միահյուսելու ֆրանսական անալականների քաղաքակրթական և գումիլկան Եվրասիականության տեսությունները ղազախական պատմանութի հետ: Առայժմ նրանք բավարարվում են դասախոսությունների տեքստերի և դասագրքերի ստեղծմամբ՝ Ռ. Վ. Թեմիրգալիև, Ժ. Կ. Կասիմբաև, Դ. Բ. Ժոլդաբաև, Ա. Շ. Ժունդուբաև<sup>253</sup>: Ստեղծված տեքստերն աչքի չեն ընկնում

<sup>250</sup> Սվետանա Կովալսկայա, 20.08.2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:

<sup>251</sup> Байпаков К. М., Кумеков Б. Е., Акишев К. А., ред. История Казахстана. В четырех томах, т. I – IV, Алматы, Атамура, 1996 – 2000.

<sup>252</sup> Գաբրիել Մքանուայեր, 16.08. 2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:

<sup>253</sup> Темиргалиев Р., «Казахи. Путь предков», Астана; Фонда «Аспандау», 2017; Қасымбаев Ж. К. , История Казахстана (XVIII века-1914 год), учебник для 8 классов общеобразовательных школ, Алматы «Мектеп», 2012; Жолдасбаев С., Бабаев Д., История средневекового Казахстана учебник для 7 класса, Алматы «Атамура»,

թարմությամբ. առկա է ծգտումը՝ ամեն կերպ ցույց տալու Ղազախստանի համաքայլությունը համաշխարհային քաղաքակրթության հետ՝ մշակույթի և կրոնի, գիտության և գրականության, ընկերային արժեքների և պետականության ասպարեզներում: Այս մոտեցումն օրինականացվում է նաև քաղաքական խոսույթում. խոսելով Ղազախստանի աշխարհաքաղաքական կողմորոշումների մասին՝ Նազարբաևը Ղազախստանը միշտ դիտարկում է Եվրասիական քաղաքակրթության համատեքստում, որն, ըստ նրա, լոկալ քաղաքակրթությունների ամբողջություն է<sup>254</sup>:

Կիասնե՞ն նրանք ճշմարիտ գիտականության, և պատմագիտական միտքը կդառնա՝ ազգային ինքնության կայացման կարևորագույն գործոն, թե՛ կրկին կմնա քարոզության գործիք, ժամանակը ցույց կտա:

---

2003. **Абдыгалиулы Б.**, Цикл «Живая память» Лекция 6. «Сталинизм после Сталинизма», Видео Апрел 29. URL: <https://www.youtube.com/watch?v=LRn69MjMBM4>; **Абылхожина Ж.**, Цикл "Живая память". Лекция 2. Великое переселение народов: История депортаций, 32-33, URL:<https://www.youtube.com/watch?v=JO-DIreCh8A> (11.12.2016)

<sup>254</sup> **Назарбаев Н.**, նշվ. աշխ. էջեր 169-171:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### 3. ՀԵՏԽՈՐՀԴԱՅԻՆ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԱՍՏԱՆԱ

Նորանկախ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի գործարկված հասարակական նորարարությունների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում նոր մայրաքաղաքի՝ Աստանայի կառուցումը: Ալմաթիից մայրաքաղաքի տեղափոխումն Աստանա լոկ քաղաքաշինական շարժադրությունը չէր պայմանավորված. այն, ըստ Էության, ղազախական ազգային կենսաշխարհի վերակերպման մտածված ու հավասարակշիռ քայլ էր:

Պետք է նկատել՝ քաղաքային միջավայրերի միջոցով հանրույթի և ընկերային անհատի ձևավորումը համապատմական փորձառություն է: Այն հատուկ էր նաև խորհրդային ժամանակաշրջանին: Միջավայրն ունակ է ձևավորելու նոր համակեցական արժեհամակարգ և գիտակցություն: Ուստի միջավայրի տարածական կերպափոխումը համարվում է հասարակական նոր գործընթացների խթանման հոլժ ներունակ միջոց:

Նազարբաևի վարչակարգը որոշում էր կայացրել քաղաքային միջավայրի միջնորդությամբ ստեղծել ազգային ինքնության նոր կենսատարածք: Եվ խնդիր էր դրված իրագործել դա ոչ թե գործող մայրաքաղաքի ճարտարապետական բովանդակության կերպափոխման ճանապարհով, այլ նոր գաղափարաբանությամբ հղացված և կառուցված նոր մայրաքաղաքի տեսլականով: Այդ գործընթացն սկսվեց 1990-ականների սկզբին, երբ ամենուրեք միտում կար իրապարակների, փողոցների և շինությունների վերանվանմամբ «ջնջելու» խորհրդային հետքը: Համաձայն Գաբրիել Մբգուիրի՝ այս գործընթացում հետխորհրդային ազգային ինքնության կարևոր քայլերից էր, երբ փողոցները վերանվանվում էին ղազախ գրողների անուններով, կամ կանգնեցվում էին հուշարձաններ՝ նվիրված ղազախ մտավորականներին, որոնց գործերը խորհրդային տարիներին արգելված էին<sup>255</sup>:

<sup>255</sup> Գաբրիել Մբգուայեր, 16.08. 2017, Ղազախստան, Աստանա, փորձագիտական հարցազրույց:

Այնուամենայնիվ, Ղազախստանը գնաց ամեն ինչ նորից սկսելու ճանապարհով: Եվ իբրև արդիական սկզբի միջավայր ընտրվեց Աստանան՝ մայրաքաղաք, որ պատմության մեջ մտավ անհայտությունից, հանկարծ:

Այս ծավալուն փորձառությունն ուներ աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, մշակութային, ճարտարապետական, նշանագիտական, սոցիալ-հոգեբանական դիտանկյուններ՝<sup>256</sup>: Դրանց առանձին քննությունը դուրս է ներկա հետազոտության շրջանակներից: Մեր խնդիրն է ընդհանրացնել դրանց կարևորագույն արդյունքները պատմական ընկալման տիրուպթում: Այլորեն՝ դիտարկել մերօրյա Աստանան լոկալ (Ղազախստան, Կենտրոնական Ասիա) և գլոբալ (համաշխարհային փորձառություն) հեռանկարում: Մեր ընկալմամբ՝ Աստանայի նախագիծը պատմության մարտահրավերների ղազախական պատասխանն է:

Աստանայի ճարտարապետական շինությունները չպետք է ընկալվեն իրենց մեկուսի գործառույթների շրջանակներում: Դրանք պետք է դիտարկել իրենց իմացաբանական-ընդհանրական համակարգում՝ իբրև ոչ վերբալ հաղորդակցական միջավայրեր, որոնք պետք է ծառայեն ներհանրութային համաձայնության ձևավորմանը, քանզի ճարտարապետական միջավայրը, իբրև կոդերի և նշանների ամբողջություն, *ցուցանող և հայրկանշող հնարավորություններով լի հաղորդակցության մի դեսակ է*<sup>257</sup>:

### 3.1. Քոչվորական հավաքատեղից դեպի արդիական քաղաք

Աստանայի ղազախական քոչվորական կենսաձևի և արդիական նշանային համակարգերի ուսումնասիրումը թույլ է տալիս պատկերացումներ կազմել Ղազախստանի էթնիկ և քաղաքացիական ազգային գործընթացների մասին՝<sup>258</sup>

Քաղաքամայր Աստանան տեղակայված է Ղազախստանի հյուսիսային հատվածում՝ Ակմոլայի մարզում՝ Իշիմ գետի ափին: Նախակենցաղ անասանպահական կյանքի շրջանում չորային տափաստանային այս հանգույցը ծառայում էր իբրև անասունների քոչի հավաքատեղի, որտեղ (հատկապես աշնանը) հանդիպում էին

<sup>256</sup> Barthes R., Semiology and the Urban, In Neil Leach, Rethinking Architecture: A Reader in Cultural Theory. London: Routledge, 1997, p. 159.

<sup>257</sup> Eco U., A Theory of Semiotics, Bloomington: Indiana University Press, 1979, p. 85.

<sup>258</sup> Buchli V., Astana: Materiality And The City in Catharine Alexander, Victor Buchli, Caroline Humphrey (Eds.) Urban Life in Post-Soviet Asia, Taylor & Francis Group, 2007, p. 49

տարբեր ցեղերի (ժուգերի) ներկայացուցիչները: Ընդհանուր յուրթի տակ հավաքվում էին ցեղերի առաջնորդները և ընտրանին՝ քննելու ընդհանուր կարևորության խնդիրները: Լոեցվում էին ներքին հակասությունները, տեղի էր ունենում տնտեսական, կրոնական և մշակութային արժեքների փոխանակություն, վերահաստատվում էին դազախական միասնության զգացումն ու գաղափարը: Բնակավայրը կոչվում էր Բոզոր: Հարակից տարածքներում բնակվում էր երեք ցեղ՝ քարպըկներ, ալթայներ, քվանդըներ: Մոտավոր հաշվարկներով՝ ազգաբնակչության թիվը տատանվում էր 70 – 75 հազար միջև:

Դրությունն սկսեց էականորեն փոխվել ռուսական տիրապետության հաստատումից ի վեր: Իշխանությունների հետևողական քաղաքականությամբ տարածքն սկսեց բնակեցվել սլավոնական էթնոսով: Եվ իշխացս ժամանակի նրանց թվաքանակը գերազանցեց տեղաբնակներին:

Այս առումով, կարծում ենք, օգտակար են տարբեր տարիներին անցկացված մարդահամարների տվյալները: Ակմոլան կամ Ակմոլինսկը բերդաքաղաքի կարգավիճակ ստացել է 1832 թվականին: Աստ տեղակայված էր կազակների կայազորը, որը բնակչության հետ կազմում էր ընդամենը 2 հազար: 1860-ականներին այդ թիվը հասավ մոտ 6500-ի<sup>259</sup>: 1869 թվականին Ակմոլան ստացավ քաղաքի կարգավիճակ՝ դառնալով համանուն մարզի (*Акмолинская область*) կենտրոնը:

1926 թվականի տվյալներով մարզի բնակչության թիվը անցնում էր 1.2 միլիոնը, որից շուրջ 431 հազարը դազախներ էին, 394 հազարը՝ ռուսներ, 21 հազարը՝ գերմանացիներ, 312 հազարը՝ ուկրաինացիներ և այլք: Մի կողմից՝ սովոր, մյուս կողմից՝ գաղութային քաղաքականությունը բացասական ազդեցություն թողեցին մարզի ժողովրդագրության վրա, և արդեն 1939 թվականի տվյալներով մարզում ապրում էր շուրջ 459 հազար մարդ, որից 120 հազարը դազախներ էին, 208 հազարը՝ ռուսներ, 10 հազարը՝ գերմանացիներ, 82 հազարը՝ ուկրաինացիներ և այլք<sup>260</sup>:

<sup>259</sup> Троицкий Н. А., Петровский А. Н., Волости и населенные места 1893 года, СПб.: издание Центрального статистического комитета Министерства внутренних дел, 1893-1896. URL: <https://www.prlib.ru/item/327526> (12.07.2015)

<sup>260</sup> Масанов Н. Э. Абылхожиным Ж.Б., Ерофеевым И.В., Баратовой Г.С., История Казахстана: народы и культуры. Учебное пособие. Алматы: Дайк-пресс, 2001, с. 588, St'u նաև Poujol C., and Fourniau V., History of Civilizations of Central Asia, Vol. 6: Towards the contemporary period: from the mid-nineteenth to the end of the twentieth century, Palat M. K., Tabyshalieva A., eds. Paris: UNESCO Publishing, 2005, p. 62.

Գաղութային քաղաքականության հետևանքով Ղազախստանի հյուսիսն սկսեց ներգրավվել ապրանքաշուկայական հարաբերությունների ոլորտը: Քայլեր կատարվեցին արդյունաբերական ենթակառույցների ստեղծման ուղղությամբ: Դրանք նախ և առաջ խնդիր ունեին վերամշակելու գյուղատնտեսական հումքը՝ կաշի, ջուր, բամբակ, հացահատիկ: Իսկ ապա՝ հանքարդյունահանություն՝ աղ, պղինձ, անագ, ցինկ, երկաթ: Այդ խթաններն ավելի ներունակ դարձան Ռուսաստանի հետ կապերի աշխուժացմամբ: Հատկապես 1915 թվականից ի վեր, երբ շահագործման հանձնվեց Ալթայական երկաթուղին (*Алтайская железная дорога*), որը ապագա Թուրքսիրի առաջին մասնահատվածն էր:

1856 թվականին քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո Ակմոլայի առջև բացվեցին առաջընթացի նոր հնարավորություններ: 1857 թվականին կազմվեց նրա գլխավոր հատակագիծը: Ըստ այդմ՝ նախատեսվում էր ոուսական քաղաքաշինությամբ հանձնարարվող նոր վարչական, կրթական, մշակութային, կրօնական, ինչպես նաև հասարակական շինությունների կառուցումը: Երևացին այս հղացքն արտահայտող ճարտարապետական շինություններ՝ քաղաքային ինքնավարություն (Դումա), ոստիկանություն, հաղորդակցություն (փոստ, հեռագիր), հյուրատներ, եկեղեցիներ (սր. Улѣсъшъаңъ), Նևսկի տաճար), դպրոցներ (նախագիմնազիա, գիմնազիա), թերթ (*Ведомости*) և այլն: Զարգացավ քաղաքային տնտեսությունը՝ ջրմուղ, կոյուղի, հասարակական տրանսպորտ, բժշկական ծառայություն, դատական համակարգ և այլն: Այս ամենը խթանեց վերաբնակիչների նոր այիրին<sup>261</sup>:

Խորհրդային կարգերի հաստատմամբ Ակմոլինսկն ավելի ու ավելի սկսեց մղվել երկրորդ պլան. առաջնությունը պատկանում էր Ալմա Աթային: Այդուամենայնիվ, աստ նույնպես տեխնիկական առաջադիմությունը զգալի էր. գործում էին շաքարի, մսամթերքի, կաթնամթերքի, բամբակի վերամշակման, մանածագործության, ավտոմասերի, գյուղատնտեսական մեքենաների և սարքաշինական ձեռնարկություններ՝ շուրջ 30 հազար աշխատատեղորով:

Ակմոլայի մասին «հիշեցին» խամ ու խոպան հողերի յուրացման խրուչչովան տեսնդի ժամանակ: 1962 թվականին արդեն 100 հազար բնակչությամբ այն

<sup>261</sup> Жунусов С., Досмагамбетов В., Т14 Астананын бас жоспары, 10 жыл, 2011, Деловой Мир Астана, бет 36-47.

վերանվանվեց Յելինոգրադ և այդպես մնաց մինչև 1992 թվականը: Ինչպես պատշաճում էր մարզկենտրոնի կագավիճակին, աստ գործում էին տեղական կուսակցական և կառավարման օրգանները: Առկա էր զարգացած տրանսպորտային ենթահամակարգ՝ երկաթուղային հանգույց, օդակայան, ավտոճանապարհներ: Գործում էին մշակութային օջախներ՝ թատրոններ (ռուսական, դադախական), ռադիոհեռուստակայան, թերթեր (*Целиноградская правда*, *Целиноградский комсомолец*), ամսագրեր: Միջնակարգ կրթության համակարգի կողմին Յելինոգրադում կային նաև բուհեր՝ պոլիտեխնիկական, գյուղտնտեսական, մանկավարժական:

1992-ից մինչև 1998 թվականը քաղաքը կրկին անվանակոչվեց Ակմոլա: Սակայն նորանկախ Ղազախստանի ղեկավարությունը նրա նկատմամբ միանգամայն այլ վերաբերմունք էր որդեգրել. շուտափույթ վերակառուցվում և ընդլայնվում էին ենթակառույցները, սկսվել էր բնակչության (հատկապես մտավորականության) վերաբնակեցում, տեղափոխվում էին կարևոր պետական և մշակութային հաստատությունները: 1995 թվականի մարդահամարի տվյալներով Ակմոլայում բնակվում էր 250 000 մարդ: Այս անցումային գործընթացն ավարտվեց 1998 թվականի մայիսի 6-ին, երբ նախագահ Ղազարբակի հրամանագրով Ակմոլան վերանվանվեց Աստանա՝ դադախներեն մայրաքաղաք:

## **ա. Ինքնիշխան Ղազախստանի մայրաքաղաք**

Մայրաքաղաքի տեղափոխումը միանգամից տեղի չունեցավ: Այն տևական հանրային քննարկումների արդյունք էր:

Տակավին 1994 թվականի մայիսի 6-ին Ղազախական Հանրապետության Գերագույն Խորհրդում որոշում ընդունեց նոր մայրաքաղաքի մասին: Այդ իհմամբ 1995 թվականի սեպտեմբերի 15-ին հրապարակվեց Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաքի մասին նախագահական որոշումը, և ստեղծվեց պետական հանձնաժողով երկրի բարձրագույն մշակութային և քաղաքական ընտրախավի մասնակցությամբ: 1997 թվականի հոկտեմբերի 20-ին նախագահական մեկ այլ հրամանագրով Ակմոլան ճանաչվեց Ղազախական Հանրապետության մայրաքաղաք:

1998 թվականի մայիսի 6-ի հրամանագրով այն վերանվանվեց Աստանա՝ ղազախերեն մայրաքաղաք<sup>262</sup>:

Պետական հանձնաժողովը մայրաքաղաքի տեղափոխման համար հատկանշում էր 32 պատճառ (բնակչության, սեյսմիկ, հասարակական, տնտեսական, ենթակառուցվածքային, հաղորդակցական և այլն) <sup>263</sup>: Սակայն ամենակարևոր՝ էթնոքաղաքական և պաշտպանական դիտանկյունների մասին ոչինչ չկար: Դրանք պարզապես լրության էին մատնված, քանզի ունեին քողարկված (քայց դրանից ոչ պակաս ներունակ) հակառուսական միտվածություն: Կարելի է ենթադրել, որ քաղաքական նոր կենտրոնի կառուցումը միտված էր «փրկելու» երկրի ռուսախոս հյուսիսը, որի՝ Ռուսաստանին միացնելու նախաձեռնությամբ հանդես էին գալիս բազում ռուս մտավորականներ, այդ թվում նաև՝ Նորելյան մրցանակի դափնեկիր Սոլժենիցինը: Համաձայն Սոլժենիցինի՝ բուն ղազախական հողերը հարավից ծգվում էին մինչև կենտրոնական տափաստաններ՝ կազմելով յուրատեսակ կամար՝ ներառյալ արդի Ղազախստանի հարավային շրջանները: Այս առասպելույթի հիմամբ գրողն առաջարկում էր անջատել արդի Ղազախստանի տարածքները հօգուտ Ռուսաստանի»<sup>264</sup>:

Ռուսական ազդեցությունն այնքան զորեղ էր, որ Աստանայի ժողովրդագրական պատկերում շոշափելի փոփոխություն չնկատվեց անկախության առաջին տարիներին: 1990-ականներին ռուսները Ակմոլայի մարզում մեծամասնություն էին կազմում՝ 46.3 %, մինչդեռ ղազախները՝ 21.7%<sup>265</sup>: Սակայն պատկերը փոփոխման հստակ միտում ուներ. ըստ Վիճակագրական դեպարտամենտի տվյալների՝ 2012 թվականին ռուսների թիվը Աստանայում կտրուկ նվազել էր և հասել 17.4 %-ի (128.928)<sup>266</sup>: Այս, մայրաքաղաքի տեղափոխման մասին Ղազարբասի որոշման հիմքում նախ և առաջ տարածաշրջանի

<sup>262</sup> Nazarbaev N., նշվ. աշխ., էջ 303:

<sup>263</sup> Նույն տեղում, էջ 299: Տե՛ս նաև Մկրտչյան Ն., Ղազախստանի ազգաշինական մարտահրավերները, Ժամանակակից Եվրասիա, Հատոր II (2), 2013, էջ 74:

<sup>264</sup> Ст'я, Солженицын А. И., Как нам обустроить Россию: Посильные соображения, Л.: Сов. писатель, 1990.

<sup>265</sup> Alexandrov M., Uneasy Alliance: Relations Between Russia and Kazakhstan in the Post-Soviet Era, 1992-1997, Westport: Greenwood Publishing Group, 1999, p. 111.

<sup>266</sup> Керимхановой Г., ред. Демографический ежегодник города Астаны, Астана: Департамент статистики города Астаны, 2012, с. 30.

Էթնիկական հաշվեկշիռ հօգուտ ղազախական էթնոսի ապահովելու մտահոգությունն էր<sup>267</sup>:

Նախագիծը կյանքի կոչելու համար, հարկավ, անհրաժեշտ էր այս նոր տարածքը «լցնել» տիտղոսային էթնիկական բնակչությամբ: Նպատակին հետամուտ՝ վարչակարգը որոշում կայացրեց կազմակերպելու գյուղական շրջաններից դեպի Աստանա ղազախանու ազգաբնակչության ներհոսքը: Այս քաղաքականությունը նպատակ ուներ վերակազմակերպելու և զորացնելու ղազախական ազգային ինքնագիտակցությունը<sup>268</sup>: Կարծում ենք, այս առումով միանգամայն կիրարկելի է Ս. Հանթինգթոնի հղացքն առ այն, որ բնակչությունը «պարկանելության և ինքնության բարձրարժեք գիրակցություն» ձեռք է բերում քաղաքային միջավայրում, այնինչ «գյուղական բարածքը զգացական ինքնության աղբյուր է»<sup>269</sup>:

Սակայն պետք է նկատել, որ պատմական կարճ տևողության ընթացքում հնարավոր չէ կյանքի կոչել ազգային դիմագծով օժտված քաղաքային հանրույթ: Սովորաբար վերջինս թրծվում է՝ անցնելով մի շարք մշակութային խաչաձևումների միջով՝ երաժշտություն, գրականություն, կերպարվեստ, ֆիլմարվեստ, թատրոն, գիտություն, կրթական համալիր և այլն:

Արագ ուրբանիզացիայի պարագայում կողք-կողքի ապրող «քաղաքային» և «գյուղական» զանգվածների միջև հաճախ ձևավորվում է կենսակերպի և մշակութային նախընդունությունների անհամամասնություն: Ընդունին, քաղաքային համակեցությունը բաց է, շարժուն, աշխարհիկ և արդիական, մինչդեռ գյուղականը ավելի ներփակ է, անշարժ, կրոնական և ավանդական<sup>270</sup>: Այդուհանդերձ, չնայած գյուղական բարրի ազդեցությանը՝ քաղաքական գործընթացները մնում են քաղաքային<sup>271</sup>:

Ուրբանիզացիան թելադրում էր հանրային աշխատանքի, կենսակերպի, մշակույթի նոր վիճակներ և համամասնություններ: Եվ դրանք ստեղծել էին պատմական կարծրակերպեր. դարեր ի վեր ղազախների հիմնական տնտեսական

<sup>267</sup> Sarsembayev A., Imagined communities: Kazak nationalism and Kazakification in the 1990s, Central Asian Survey, Vol. 18, No. 3, 1999, p. 335.

<sup>268</sup> Մկրտչյան Ն., նշվ. աշխ., էջեր 74-75:

<sup>269</sup> Huntington S., Political Order In Changing Societies, New Haven And London: Yale University Press, 2006, p. 72.

<sup>270</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>271</sup> Նույն տեղում, էջ 74:

գործունեությունը կառուցված էր անասնապահության և որոշ դեպքերում նաև՝ երկրագործության վրա: Ցարիզմի և խորհրդային վարչակարգի տարիներից այս կենսակերպի վրա էր կառուցված ղազախական գյուղը: Ղազախ գյուղաբնակները հնարավորինս պահպանել էին իրենց ինքնությունը, լեզուն և ավանդույթները<sup>272</sup>: Ժամանակի ընթացքում ի հայտ եկավ ղազախ քաղաքաբնակը, որը, ենթարկվելով ռուսական տարաբնույթ ազդեցություններին (տնտեսական, քաղաքական, մշակութային, կրթական, հոգեբանական և այլն) և հաճախ էլ ներձուվելով ռուսների հետ, հայտնվել էր խոր էթնոքաղաքակրթական ճգնաժամի մեջ:

Էթնոսի այս երկու տարասեռությունների միջև գոյացած խրամը խոստանում էր վերածվել վիհի, որի հանդիպակաց կողմում ուրվագծվում էր կենտրոնասիական մշակութային խոսույթին քաջահայտ մանկուրտը: Ղազախ ընտրախավը գիտակցում էր քաղաքակրթական այս մարտահրավերի ոռջ լրջությունը: Հասկանում էր, որ միայն վտանգին հարիր պատասխանը կարող է ծնավորել ազգային կյանքի հոմեոստատիկ հեռանկար:

Եթե Աստանան դիտարկենք մշակութաբան Վ. Բենյամինի տեսական շրջանակի համապատկերում, ապա կարող ենք ասել, որ Աստանան հղացվեց հենց նման քաղաքակրթական շոկի միջավայում և պահանջում էր շոկային ախտորոշում և բժշկում<sup>273</sup>: Իր նախագծերում նոր մայրաքաղաքը ներկայանում էր իբրև ամենայն ղազախականի համակարգման և հանրայնացման իդեալական միջավայր: Միջավայր, որը պետք է կազմակերպվեր նախ և առաջ վիզուալ-գեղագիտական (ճարտարապետություն) և խորքային խորհրդանշանային համակարգերի հավասարակշիռ համադրությամբ<sup>274</sup>:

Միով բանիվ, Աստանան ղազախական ինքնության նոր հարացույցի կայացման և հանրայնացման արհեստական հարթակ է: Եվ կմնա այդպիսին, քանի դեռ չեն արձանագրվել ազգաշինական այս աննախընթաց նախագծի հիմնարար արդյունքները: Այս ճանապարհին հույժ կարևոր է, որ նոր հարթակում նշանայնացվեն

<sup>272</sup> Melvin N. J., Russia and the Ethno-Politics of Kazakhstan, *The World Today*, Vol. 49, No. 11, 1993, p. 209.

<sup>273</sup> Benjamin W., On Some Motifs in Baudelaire in In Neil Leach, *Rethinking Architecture: A Reader in Cultural Theory*. London: Routledge, 1997, pp. 28-30.

<sup>274</sup> Stău, Pusca A. M., Ed. Walter Benjamin and the Aesthetics of Change, Basingstoke: Palgrave Macmillan, 2010, pp. 182-183.

ու ճշգրիտ խաղարկվեն պատմական արքետիպերը՝ կարևորագույն դեպքեր, իրադարձություններ, հերոսներ: Պատմական արքետիպեր, որոնք նախկինում ղազախական պատմագրության մեջ կամ անտեսված էին, կամ էլ ստվերված:

Աստանայի նախագծի հեղինակները համոզված էին, որ միայն այս կերպ հնարավոր է ձևավորել երևութական և աներևույթ այն հարացուցը, որի գործարկմամբ հնարավոր կլինի հաղթահարել ազգային երկատումը: Եվ ավելին, ինչպես կտեսնենք, նրանք նպատակ ունեին համարազախստանյան գաղափարի շուրջ միավորելու երկրի բոլոր ազգերին՝ **միություն՝ բազմազանության միջոցով** գաղափարի համակողմանի կիրարկմամբ:

### 3.2. Աստանան իբրև նոր հետխորհրդային տեքստ

Իր ինքնակենսագրականում խոսելով մայրաքաղաքի տեղափոխման կարևորության մասին՝ Նազարբաևը շեշտադրում էր դրա առանցքային նշանակությունը ղազախական հայրենասիրության և պետականության գաղափարի արմատավորման և զորացման գործում<sup>275</sup>: Ընդունելու, Աստանան արմատականորեն տարբերվելու էր Ալմաթիից: Եվ առաջին հերթին նրանով, որ այն չպետք է լիներ արդյունաբերահենք. չէր պլանավորվում աստ ունենալ խոշոր արդյունաբերական ենթակառուցվածքներ՝ «հոծ բանվորական զանգվածով»: Արդյունաբերական հասարակության վաղ շրջափուլից ժառանգված խորհրդային այս փորձառությունն անհարիր էր ղազախական ազգաշինական նպատակներին: Աստանան պլանավորվում էր իբրև ազգային տեսլականի ցուցադրություն, ուսուցանում և իրագործման ընդհանրական ու անհատական կամք: Այստեղից՝ մայրաքաղաքի տարածքի մեկ այլ կարևոր չափույթ: Այն պետք է ունենար բանական (ռացիոնալ) հատակագիծ՝ հստակ կառուցակազմված կենտրոն, որը պողոտաների և փողոցների ճառագայթների համացանցով պետք է կապվեր ծայրամասերի հետ: Միջնադարյան քաղաքներից ժառանգած իռացիոնալ անհետևողականությունն իսպան բացառվում էր:

Այս տեսլականին միս ու արյուն հաղորդելու նպատակով 1998 թվականին որոշվեց անցկացնել մրցույթ քաղաքաշինական լավագույն նախագծի համար: 17 մասնակիցներից հանձնաժողովը նախապատվությունը տվեց Բահր Դումագամբաևի

<sup>275</sup> Nazarbaev N., նշվ. աշխ., էջ 318:

խմբին՝ 250 հազարանոց Աստանայի նախագծին: Սակայն շուտով պարզվեց, որ նախագիծը հեռու է արդի քաղաքաշինական փորձառությունից:

Որոշվեց անցկացնել միջազգային մրցույթ: Նախագահ Նազարբաևի հրավերով դրան իրենց մասնակցությունը բերեցին ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Միացյալ Թագավորության, Շուլքիայի, Ճապոնիայի և այլ երկրների համբավավոր ճարտարապետներ: Մրցույթը կայացավ 2001 թվականին, և 27 մրցակիցներից հաղթեց ճապոնացի Կիսե Կուրոկավայի նախագիծը՝ «Աստանա. 2001-2030 թթ.»: Այն կառուցված էր ըստ սիմբիոտիկ ճարդարապետության հիմնարար սկզբունքների, որոնք ենթադրում էին հարմոնիկ հարաբերություններ քաղաքային միջավայրի, ազգաբնակչության և բնության միջև:

Աստանայի ազգաբնակչությունը, ըստ նախադիր պայմանի, պետք է լիներ ոչ շատ, քան 350 հազարը: Սակայն անկառավարելի ներգաղթի հետևանքով քաղաքի բնակչությունն արդեն 2005 թվականին հասել էր 500 հազարի, ուստի հարկ եղավ վերանայելու նախագիծը: Կուրոկավան հրաժարվեց կատարել դա: Ստեղծվեց հանձնախումբ, որը, պահպանելով կենտրոնի դիմագիծը, սկսեց մշակել 5 ծայրամասերի նախագիծը: Համաձայն լրամշակման՝ 2030 թվականին Աստանան պետք է ունենա 1 միլիոն 200 հազար ազգաբնակչություն: Այսինքն՝ Ղազախստանի կառավարող ընտրախավը գիտակցեց, որ իրեն չհաջողվեց պահպանել «փոքրիկ, բայց ներունակ մայրաքաղաքի» տեսլականը:

Այդուամենայնիվ, պահպանվեց կենտրոնի գաղափարը, որի վրա էլ մենք կենտրոնանանք նոր մայրաքաղաքի տեսլականի ներկայացման համար: Այն գտնվում է երկու հիմնական պողոտաների՝ Սիգամակի և Սարայշիի հատույթում գոյացած տափարակում: Համաձայն Կուրոկավայի՝ այն պետք է համադրեր 4 մշակութային հիմնատարր՝ արևելյան, արևմտյան, դազախական և կոսմոպոլիտ: Հարդյունս՝ աստ հայտնված յուրաքանչյուր մարդ պետք է իրեն զգար տանը, «առանց օտարության որևէ զգացումի», և ինչպես Նազարբաևն էր նշում.

« [...] Ասպանան ընդամենը մեկ դասնամյակ անց ծայրամասային քաղաքից վերածվեց հսկայական հնարավորություններով արդի մեզապոլիսի, ընդ որում՝ ոչ

միայն ղազախսկանցիների համար»<sup>276</sup>: Դա տուրք էր երկրի բազմաէթնիկ կազմին, ինչպես նաև այն գիտակցությանը, որ Ղազախստանը բաց է աշխարհի առաջ:

Ճարտարապետը մտահոգ էր, որ մայրաքաղաքի ռացիոնալ կազմակերպված կենտրոնն ընթերցվի և շարունակի զարգանալ քաղաքացու և այցելուի մտքի հակառակ հեռանկարում: Ուղղակի կամ անուղղակի առաջնորդությամբ նրանք պետք է հեռանային Ալմաթիին ներհատուկ ոուսական և խորհրդային պատումից և ոտք դնեին ինքնութենական նոր տարածք: Այս առումով ցանկանում ենք հիշել Յու. Լուտմանի միտքն առ այն, որ ճարտարապետությունը կապված է ինչպես տվյալ հանրույթի պատմությանը, այնպես էլ նրա ուսուպիային<sup>277</sup>:

Պատմության առումով ճարտարապետական պատվերը միանգամայն հստակ էր. հնարավորինս շրջանցել ոուսական և խորհրդային հիշողությունները և արդի կյանքը կապել ազգային ուսուպիկ անցյալին: Այլորեն՝ հակառակ ընտրախսավի (և անձամբ նախագահի) ոուսամետ հայտարարություններին՝ մայրաքաղաքի կառուցի հիմքում դրված է երկուհարյուրամյա պատմության մոռացումի բաղադրիչը: Դրան հակառակ՝ շեշտադրված է հեռավոր անցյալը՝ սկսած 15-րդ դարից, Ղազախական միացյալ Խանության հիմնադրումից: Հայսմ անցյալը ճանաչվում էր իբրև ներկայի կառուցակազման ներունակ միջոց:

Սակայն խոսքը միայն վերացական գաղափարի մասին չէր. շրջանառվում էին ազգային մղավոր պահոցի ամենահեղինակավոր տեքստերը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է 15-րդ դարի ղազախ իմաստասեր Ասան Քայղիին (*Asan Kaygy*): Իր բազմաթիվ ասույթներում նա մշակել էր «ավետյաց երկրի» տեսլականն իբրև հասարակական խաղաղության և անդորրի ապահովման հիմնական գրավական: Համաձայն մտածողի՝ հավատալով այդ գաղափարին՝ մարդիկ ի զորու են համախմբվելու բարձր գաղափարների ներքո, լոեցնելու ներքին մանր հակասությունները հանուն պայծառ ապագայի<sup>278</sup>:

Արդեն անկախության առաջին խև օրերից այս ուսուպիան սկսեց ակտիվ խաղարկվել: Ավելին, այն դրվեց պետական հատուկ պատվերով նկարահանված

<sup>276</sup> Назарбаев Н., նշվ. աշխ., էջ 56:

<sup>277</sup> Лотман Ю. М., Семиосфера, Санкт-Петербург: «Искусство-СПБ», 2000, с. 680.

<sup>278</sup> Ст'яу, Nysanbayev A., Kazakhstan: Cultural Inheritance and Social Transformation, Washington: The Council for Research in Values and Philosophy, 2004 p. 30.

քարոզական ֆիլմի հիմքում՝ նկարահանված 2007 թվականին: Կոչվում էր «Հերչնակ» (Ավետյաց Երկիր) և սկսվում էր ղազախական գրականության հիմնադիր Աբայ Կունանբաևի (1845-1904 թթ.) հանրահայտ ասուլուվ. «Սիրեցե՛ք աշխարհի բոլոր մարդկանց իբրև ձեր եղբայրների»<sup>279</sup>:

Ֆիլմում խոսվում էր ղազախ ժողովրդի մեծահոգության, գութի և մարդասիրության մասին այն ժողովուրդների նկատմամբ, որոնց խորհրդային ռեժիմն արմատախիլ էր արել և քշել օտար տափաստաններ: Հատկանշական է ֆիլմի ավարտը. ինչում է տարեց կորեացու ձայնը. «Ճնորհակալ ենք ղազախ ազգին, որը, չնայած դժվարություններին, իրականացրեց փրկչի իր բարձրագույն առաքելությունը, և այս հինավորց ղազախական հողը մեզ համար դարձավ ճշմարիկ «Ավետյաց Երկիր», (Հերչնակ)»<sup>280</sup>: Զայնը զուգորդվում է Աստանայի արդիական շինությունների մի տեսարանով՝ կապելով «Ավետյաց Երկիր» գաղափարը նորակառույց մայրաքաղաքի հետ:

Ավետյաց Երկիր տեսլականը ղազախական գիտակցության մեջ անկապտելիորեն ազուցված է ռազմական և հոգեմտավոր սխրանքների հետ: Եվ պատահական չէ, որ մայրաքաղաքի նշանային-իմաստային համակարգի կազմակերպման կարևոր միջոցներից է հերոսների ներքերումը նոր համակեցական միջավայր: Առաջին հերթին՝ հեծյալ բաթիրների մի ամբողջ շարք, որը հնարավորություն է տալիս բացահայտելու անցյալի արյան կանչը: Ռազմի հերոսներից ամենից հարգվածը Երեքն են, որոնք ներկայացնում են Ղազախստանի պատմության վճորուշ շրջափուլերը. Ժանիբեկ և Կերեկ Խաները 15-րդ դարում հիմք դրեցին Ղազախական Խանությանը, Բոգենբայ Բաթիրը 18-րդ դարում վերամիավորեց ղազախների 3 ժուսերը՝ հաղթանակներ տոնելով հարևանների (այդ թվում նաև՝ ռուսների) դեմ, խան Կենեսարի Կասիմովը 19-րդ դարի 30 – 40-ականների գլխավորեց ղազախների հակացարական հզոր ապստամբությունը: Կա նաև հուշարձան (պակաս ազդեցիկ չափերի և ձևերի)՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին:

<sup>279</sup> Taukel S. (Director). (2010). Zheruik (The Promised Land): Drama, History, 00:25. Kazakhstan. URL: <http://Kino-pod.Ru/Video.Html?Id=19871> (18. 12. 2014).

<sup>280</sup> Նույն տեղում, 01:47 րոպեից:

Աստանայի ավետյաց տարածքի կարևոր ցուցիչներից են անցյալի իմաստունների և բանաստեղծների (*ական*) հուշարձանները. Աբայ Կունանբաև՝ ակին, դազախական նոր գրականության հիմնադիր, 19-րդ դար, ժամբուլ ժաբան՝ ակին, իմաստուն, 19 – 20-րդ դար, ժայա Մուսա Բայժանտովլա՝ բանաստեղծ, 20-րդ դար, Սակեն Սեյֆովին՝ արձակագիր, գրականագետ, 20-րդ դար: Նրանք բոլորը միասին կազմում են դազախական նոր հիշողության և ինքնության հիմքը: Արդի նշանաբանության ձևակերպմամբ՝ վերջինս «**ազգային երևակայությունների**»<sup>281</sup> տարածք է՝ միտված միավորելու անցյալի, ներկայի և ապագայի շարժուն (իրական և նույնքան էլ ուսուպիական) պատկերները<sup>282</sup>:

Մայրաքաղաքի իմաստանշանային համալիրի անբաժանելի մասն են հուշարձան կոթողները և ճարտարապետական համալիրները: Դրանց համաշափ ալգորիթմը քաղաքային միջավայրի ընթեռնելիությունը տեղափոխում է ավելի վերացական մակարդակ՝ անցում ապահովելով պատկերագրական ընկալումից դեպի ավելի մտածական խորքեր, զի բանական հայրենասիրությունն ընկերային ըմբռնումներից ամենաարմատականն է:

Այս առումով նախ և առաջ հիշատակելի է *Բայթերեք աշխարակը*՝ կենաց ծառը, որի գագաթին իր բույնն է հյուսել Սամրուկը՝ թյուրքական առասպելաբանության երջանկության հավքը, որ կապում է այս նյութական աշխարհը երկնքի հավերժին: Հանուր թյուրքականությունից դեպի մասնակի դազախականն անցումը մարմնավորում է Խան Շաթիրը՝ ավանդական յուրթի ծևով մի հսկայական շինություն, ուր տեղակայված են Խանութներ, սրճարաններ, ռեստորաններ, կինոթատրոններ, սպորտային դահլիճներ, արհեստական լողավազան: Գաղափարն այն է, որ աստ բոլորը կարող են հանդիպել և հարթել միջանձնային, ընտանեկան, ազգամիջյան հարաբերությունները:

Հաջորդ կոթողը, անտարակոյս, շարունակում է այս գաղափարը՝ անցում ապահովելով թյուրքականությունից և դազախականից դեպի համընդհանուր

<sup>281</sup> Այս եզրույթը առաջին անգամ կիրառվել է ազգայնականության և ազգաշինության խոշորագույն տեսաբան Բ. Անդերսոնի կողմից և լայնորեն կիրառվում է ինչպես քաղաքագիտության, այնպես էլ պատմության և այլ գիտակարգերում: **Տե՛ս, Anderson B., նշվ. աշխ., էջ 6:**

<sup>282</sup> **Լոտման Յ. Մ.**, նշվ. աշխ., էջ 276:

<sup>283</sup> **Նույն տեղում:**

մարդկայինը: Դա հսաղաղության և համերաշխության պալատն է: Բրգածն մի կառուց, որը նպատակ ունի Ղազախստանը ներկայացնելու իբրև համայն մարդկության մանրակերտ՝ տարբեր ազգերի և անհատների իրավահավասար և համերաշխ ամբողջություն, որտեղ դագախները «**առաջինն են հավասարների մեջ**»: Այդ գաղափարն ակնհայտ է դառնում բուրգի գագաթին, որտեղ գերակայում են Ղազախստանի դրոշի գույները՝ ոսկեզօծ դեղինը և կապույտը: Միաժամանակ, բրգային աստիճանակարգը վերաբերում է յուրաքանչյուրի ուսակություններին և ստեղծագործ կամքին: Բուրգը համալիրի մի մասն է միայն. մյուս շինությունները շարունակում են դրա հիմնագաղափարը՝ Օպերային թատրոնը, Քաղաքակրթությունների համալսարանը և Մշակույթի թանգարանը:

Այս շարժերն իրենց հանգուցալուծումն են ստանում Անկախության իրապարակում, որի երեք համալիրները խնդիր ունեն հաստատագրելու և զարգացնելու վերոհիշյալ երեք իմաստները: Կենտրոնում վեր է խոյանում Կազաք Ելի (Ղազախական հող) հուշայունը, որի կատարին կրկին Սամրուկ հավքն է, իսկ պատվանդանին՝ նախագահի բրոնզեձույլ արձանը<sup>283</sup>: Երկինք – Երկիր ուղղահայացն ընդգծում է Նազարբաևի քարիզմատիկ իշխանության դերը նորօրյա ազգաշինական գործընթացում: Այս առումով հավելենք, որ Աստանայի օրը նշվում է նախագահի ծննդյան օրը՝ հուլիսի 6-ին<sup>284</sup>:

Հուշայան հետևում խոյանում է Հազրեթ Սուլյան մզկիթը՝ նվիրված 11-րդ դարի սուֆիական բանաստեղծ Խոջի Ահմեդ Յասավիի հոգևոր սխրանքին: Համարվում է, որ հենց նրանից է սկսվում թյուրքական միստիկ իմաստասիրությունը՝ իր հիմքում ունենալով իսլամն ու նորպատոնականությունը: Իր չափերով մզկիթը երկրորդն է Կենտրոնական Ասիայում՝ զիշելով միայն Աշխաբաթի համանուն մզկիթին:

Հուշայունից դեպի աջ կառուցված է Անկախության պալատը: Այն ներկայացնում է քոչվորական յուրթի մեկ այլ տարատեսակ՝ ուղղանկյուն հորինվածքով, տափարակ տանիքով: Աստ անցկացվում են պաշտոնական արարողություններ,

<sup>283</sup> Ulko A., Architecture as a Mirror of the Age. Part III: Pasts Condensed, Present Constructed, (Neweurasia.Net, 2013) [database on-line]; URL: <http://www.neweurasia.net/cross-regional-and-blogosphere/architecture-as-a-mirror-of-the-age-part-iii-pasts-condensed-presents-constructed/> (09.06.2015)

<sup>284</sup> Adams L. L., Rustemova A., Mass Spectacle and Styles of Governmentality in Kazakhstan and Uzbekistan, in Cummings S. N. (Ed.) Symbolism and Power In Central Asia: Politics of The Spectacular, New York: Routledge, 2013, p. 186.

համագումարներ, հանդիպումներ: Կան սրահներ մշակութային միջոցառումների համար՝ ցուցահանդեսներ, համերգներ, քննարկումներ:

Աստանայի լանդշաֆտ-համակարգում առանձնահատուկ դերակատարություն ունի առաջին նախագահի թանգարանը: Պաշտոնապես այն բացվել է 2014 թվականի օգոստոսի 26-ին նախագահական նախկին նստավայրում: Այն երեք նշանահմատային զարգացում է ներկայացնում. երկրի պատմական անցյալը, նախագահի կյանքը, արդի քաղաքական և մշակութային կյանքը: Աստ ներկայացված են նշանավոր ստեղծագործողների երկերը՝ ձեռագրեր, նոտաներ, նկարներ: Կան մշտական և ժամանակավոր ցուցադրություններ: Թանգարանի հիմնագաղափարը ձգտում է միահյուսելու այդ բոլորը. երկար պատմության ընթացքում ազգը կարողացել է հարիր պատասխաններ տալ իր առջև ծառացած մարտահրավերներին միայն ճշմարիտ առաջնորդների և ընտրախավերի առկայության պարագայում: Արդ դազախներն ապրում են իրենց պատմության ամենաբախտորոշ ժամանակաշրջանը և, ի բարեբախտություն իրենց, ունեն ականավոր առաջնորդ ու ընտրախավ, որոնք նրանց տանում են դեպի լուսավոր ապագա: Ապագա, որի ծիլերն առկա են ազգի ստեղծագործ մտավորականության ոգորումներում:

Աստանայի ապագայամետ իմաստանշանաբանության այլ չափույթների բացահայտումը, կարծում ենք, հնարավոր է նրա պատմահամեմատական լուսաբանման հեռանկարում: Այլորեն՝ նրա իսկությունը պետք է փորձարկել այլ քաղաքակրթական միջավայրերի փորձառությամբ՝ անկախ կոնկրետ դարաշրջաններից և հասարակական միջավայրերից, իրադարձություններից և գործող անձանցից:

### 3.3. Աստանայի փորձառությունը քաղաքակրթական գուգահեռներում

Հանրահայտ փաստ է՝ զարգացած քաղաքակրթությունները, իբրև կանոն, կապված են քաղաքային միջավայրերի հետ: Այսպես էր համենայն դեպս անտիկ դարաշրջանից ի վեր. թե՛ անտիկ Հռոմատանը, թե՛ Հռոմը մեզ տալիս են նման ընկալումների հարուստ նյութ: Տարօրինակ չէ, որ արդի civilization բառը ծագում է լատիներեն civitas եզրից, որ նշանակում է քաղաքային/քաղաքացիական համայնք<sup>285</sup>:

<sup>285</sup> Orwin C. Tarcov N., The Legacy of Rousseau, Chicago: University of Chicago Press, 1997, p. 67.

Եվ հայերեն **քաղաքակրթություն** եզրն էլ բխում է հենց նման ընկալումների դաշտից: Խորքային առումով՝ հելլենիստական աշխարհածավալումը և Հռոմեական կայսրությունը կայացան ի հաշիվ քաղաքային կենտրոնների՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական, այևայլ ռիթմերի հերթագայությամբ: Արդյունաբերական դարաշրջանի ծավալումներն էլ (17-րդ դարից ի վեր) եկան հաստատելու այս սկզբունքը՝ անգլիական, հոլանդական, ֆրանսական, իսպանական, ռուսական փորձառությունների օրինակով: Արդեն անդրադարձել ենք Ռուսական կայսրությանը, իսկ ապա՝ ԽՍՀՄ-ին, որոնք իրենց քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում կառուցում էին ճիշտ այս տրամաբանությամբ:

Իր պատմության վերջին 200-ամյակի ընթացքում Ղազախստանն այս քաղաքականության փորձաքարերից մեկն էր Կենտրոնական Ասիայում: Աստ քաղաքները դարձան ռուսականության ներդրման միջավայրեր: Սակայն փորձառությունն ի դերև չանցավ. ղազախական ընտրախավը յուրացրեց այդ դասը և սկսեց գործարկել հետխորհրդային դարաշրջանում:

Այս ըմբռնումն օգնեց նորանկախ ղազախ ընտրախավին ճշգրիտ հասկանալ և իրենց (թվում է թե) առօրեական որոշումների մեջ տեսնել քաղաքակրթական հետագիծը: Նազարբակի խոսքերով՝ «պատմությունը հարուստ է մայրաքաղաքների տեղափոխման փաստերով: Հիշենք Պետրոս Առաջինին, որը **պատուհան քացեց դեպի Եվրոպա:** Աթաթյուրքը տեղափոխեց մայրաքաղաքը Ստամբուլից Անկարա, որպեսզի խզի կապը օսմանյան անցյալի հետ և ընթանա նորացման ճանապարհով»<sup>286</sup>: Իր այլ մտորումներում նախագահը խոսում է անգամ Ալեքսանդր Մակեդոնացու փորձառության մասին և կամա թե ակամա իր անձը դնում այս մեծերի կողքին: Եթե մի կողմ դնենք արտաքո փառասիրությունը, ապա միանգամայն պարզ է դառնում, որ Նազարբակը և իր շրջապատն ըմբռնում են իրենց առաքելության քաղաքակրթական հեռանկարը.

«Բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում մայրաքաղաքի տեղափոխումը դեղի չի ունեցել մեկ մարդու հասարակ քմահաճությամբ կամ երկաթյա կամքի դրսնորմամբ:

<sup>286</sup> **Տե՛ս, Mkrtchyan N.**, Nation-building projects through new capitals: from St. Petersburg to Yerevan and Astana, Nationalities Papers, Volume 45, Issue 3, 2017, pp. 485-498.

Գրեթե միշտ մայրաքաղաքի լրեղափոխումը բիւել է պեղության և հանրույթի արմադական շահերից [...]»<sup>287</sup>:

Խնդիրը քաղաքակրթական կտրուկ անցումների մասին է, երբ ընտրախավը որոշում է կայացնում ակտիվորեն միջամտել ընթացող գործընթացներին և սոցիալական տարերքին պարտադրել իր գործողութենական նախագծերն ու կամքը: Սա անցումային (տրանզիտիվ) դարաշրջանների դրական փորձառությունն է, որն ավարտվում է սպասելիք արդյունքով. հասարակությունը հասնում է մեկ այլ վիճակի, որը կառավարելի է և կանխատեսելի: Հնարավոր է, սակայն, և հակառակ արդյունքը, երբ բացակայում են (կամ քվազի-հատկանիշերով են ներկայացված) ընտրախավը և դրա առաջնորդները: Խոսքը, այսպես կոչված, **ճեղքած քաղաքակրթությունների** մասին է (torn civilizations), որի տեսական հիմքերը մշակել է Ս. Հանթինգթոնն իր «Քաղաքակրթությունների բախումը և կարգի վերակերպավորումը» աշխատության մեջ<sup>288</sup>:

Սակայն անցումայնության դրական փորձառությունը, համաձայն Ս. Հանթինգթոնի, ունի նաև մի այլ ակնհայտ արդյունք, որն արժանի է առանձահատուկ ուշադրության: Նկատի ունենք նրա **յուրայինացման հղացքը** (indigenization), ըստ որի՝ նորացումը, որպես կանոն, ուղեկցվում է տվյալ հանրույթի ջանքերով վերադառնալու իր կորցրած արմատներին: Զանքեր, որոնց մասին վերն առիթ ունեցանք խոսելու հընթաց Աստանայի տեքստի վերլուծության:

Աշխարհակարգի այս նոր մեկնությունն ունի իր տեսական հիմնավորման մի այլ աղյուր: Դա Մ. Վեբերի առաջ քաշած և Ն. Էլիասի կողմից հանգամանորեն մշակված տեսությունն է, որը մերօրյա գիտական գրականության մեջ հաճախ սահմանվում է իբրև Էլիտոլոգիա՝ գիտակարգ ընտրախավերի մասին<sup>289</sup>: Վերջինս խնդիր ունի բացահայտելու այն կառուցիկ դերակատարությունը, որը հանձնառում է տվյալ հասարակության **ներգործուն փոքրամասնությունը** նրա կենսագործության

<sup>287</sup> Назарбаев Н., В Сердце Евразии, Алматы: Атамура, 2005, с. 61.

<sup>288</sup> Huntington S., նշվ. աշխ., էջ 138-139:

<sup>289</sup> С্ট'ու, Elias N., The Court Society, Mennel S. (Ed.) and Jephcott E. (trans.), University College Dublin Press, 2006.  
Ашин Г.К., Элитология: история, теория, современность : монография, Московский государственный институт международных отношений (университет) МИД России, Кафедра философии, Москва : МГИМО - Университет, 2010.

ընթացքում՝ ինչպես հանդարտ զարգացման, այնպես էլ (առավելաբար) շրադարձային փուլերում: Մի նկատառում ևս. ընտրախավային մոտեցումն անմիջական առնչության մեջ է քաղաքակրթական հղացքի ժամանակային չափումի հետ՝ երկար, միջին և կարճ պատմական տևողություններ: Ընտրախավի խնդիրն է՝ արդիականության պայմաններում (պատմության կարճ տևողություն) կանխագծել և (սկսել) իրագործել այնպիսի բարենորոգումներ, որոնց արդյունքները պատկանում են ապագային (պատմության երկար տևողություն): Նման ընթանմամբ արդ մեկնաբանվում են հումանիտար գիտության տարբեր բնագավառի հիմնահարցեր:

Հետագա շարադրանքում այս երկու տեսությունների համադրությամբ մենք կփորձենք լուսաբանել քաղաքակրթական անցումային շրջափուլերի ռուսական և թուրքական տարատեսակները: Պատրաստվում ենք հատուկ կանգ առնել հայոց փորձառության վրա՝ ձեռնարկված 1920-1930-ական թվականներին: Այս լուսով վերադառնալով Աստանային, ինչպես նշել ենք, կփորձենք հնարավորինս վերիմաստավորել նրա քաղաքակրթական հեռանկարը:

#### **ա. Ռուսական փորձառությունը. Պետերբուրգ**

Քաղաքակրթական ինքնանորացման ռուսական փորձառությունը կապվում է Պետրոս Առաջինի (1689–1725 թթ.) հասարակաշինական գործունեության հետ, որի կենտրոնատեղին դարձավ Պետերբուրգը: 1712 թվականին մայրաքաղաք հոչակված այս ֆիննական բնակատեղին արագ քայլերով սկսեց վերածվել Եվրոպական տիպի քաղաքի՝ ուղիղ ճառագայթով ձգվող փողոցների և պողոտաների համացանց՝ սևոված Նևսկի պողոտայի վրա: Գրանիտապատ նույնքան ուղղագիծ ջրանցքներ, կամուրջներ<sup>290</sup>:

Բազմահարկ տներ, անտառախիտ պուրակներ, այգիներ: Դրանց վրա Պետրոսի ժամանակ և նրանից հետո աշխատել են Եվրոպական (հիմնականում իտալացի) ճարտարապետներ՝ Զ. Կվարենգին, Ա. Ռինալդին, Յ. Շնեդելը, Դ. Տրեգինին, Ա. Ռաստրելին, Կ. Ռոսսին և այլք: Թե՛ կայսրը, թե՛ իր շրջապատը հասկանում էին իրենց ձեռնարկի կարևորությունն ու վեհությունը՝ տալով Պետերբուրգին գերադրական

<sup>290</sup> Մետաֆիզիկական մոտեցմամբ Ա. Ստեփանյանն ու Տ. Սիմյանը Սանկտ Պետերբուրգը համարում են ջրի կամ կաթիլի տպերքի ծնունդ: Տե՛ս Ստեփանյան Ա. Ա., Սիմյան Տ. Ս., Ереван как семиотический текст (опыт реконструкции «начала» и «конца» проспекта Маштоца) Критика и семиотика, вып. 16, 2012. с. 8.

պատվանուններ՝ «Նոր Հռոմ», «Նոր Երուսաղեմ», «Հյուսիսային Վենետիկ», «Հյուսիսային Պալմիրա», «Ավետյաց Երկիր»<sup>291</sup>: Խորքային առումով դրանք նշանային ցուցիչներ էին, որոնք պարունակում էին կայուն գաղափարական կարծրատիպեր և գործողութենական խթաններ:

Այդուհանդերձ, սահմանափակ է Պետերբուրգի «պլաստիկ հիշողությունը». աստ բացակայում են առասպելաբանական և (անգամ) մոսկովյան շրջանի հերոսների և գործիչների արձանները: Բացառություն է միայն Ալեքսանդր Նևսկին, որին նվիրված պողոտա կա և հուշարձան: Մնացած հերոսները գուտ պետերբուրգյան դարաշրջանից են՝ ինքը Պետրոսը՝ Սենատի հրապարակում (Պողնձե հեծյալ), Եկատերինան իր ընտրախավով՝ Նևսկի պողոտայում, Ալեքսանդր 1-ինը՝ Դվորցովայա հրապարակում (Ալեքսանդրյան հուշակոթող), Ալեքսանդր 3-ը՝ Զնամենսկայա հրապարակում: Կան նաև Ռոմանովների (ընդհանրական հերոս) շիրմաքարերը Պետրոպավլովյան դղյակում: Արձանների մի խումբ էլ նվիրված է ականավոր զորավարներին՝ Ա. Սուվորովին՝ Մարսյան հրապարակում, Մ. Ի. Կուտուզովին և Մ. Բ. Բարկլայ դե Տոլիին՝ Նևսկի պողոտայում (Կազանսկի տաճարի հրապարակ):

Սակայն Պետրոսի հասարակական փորձառության առարկան ողջ ոռւս ժողովուրդը չէր: Նա խնդիր չուներ միջնադարյան այդ զանգվածից նորդարյա ազգ ձևավորելու, ուստի չէր էլ մտածում ճորտատիրության վերացման մասին: Նրա առաջնահերթ խնդիրն էր ձևավորել նոր ընտրախավ՝ ըստ Եվրոպական կրթական ստանդարտների: Այդ մտահոգությամբ նա հիմք դրեց նոր կրթահամալիրների՝ սկսած գիմնազիաներից մինչև լեռնարդյունաբերության, ճարտարագիտության, ռազմական, նավագնացության բարձրագույն դպրոցներ: Մահվանից քիչ առաջ նա ստորագրեց հրամանագիր Կայսերական Գիտությունների Ակադեմիայի ստեղծման մասին:

Պետրոսն արմատականորեն փոխեց պետական կառավարման համակարգը և գործադիր իշխանության գործառույթը բաժանեց 12 կոլեգիաների միջև: Դրանց թիվը 1718 թվականին իջեցվեց 9-ի. Արտաքին գործոց, Ռազմական, Ծովային, Պետական Եկամուտների, Արդարադատության, Արդյունաբերության, Պետական վերահսկողության և այլն: Դրանցից վեր կանգնած էր Սենատը՝ պետական խորհուրդը,

<sup>291</sup> Ste' u, Woodworth B., Richards C., Bloom H., St. Petersburg, New York: Infobase Publishing, 2005, p. 13.

որը կայսերը կից գերագույն խորհրդակցական մարմինն էր և նախապատրաստում էր նրա բոլոր կարևոր որոշումները: Անդամներն ընտրվում էին ըստ կայսեր հայեցողության և պատասխանատու էին նրա առջև:

Հատուկ կայսերական իրովարտակով 1721 թվականին լուծարվեց Ռուսական Եկեղեցու պատրիարքությունը և ստեղծվեց Հոգևոր գործերի կոլեգիան կամ Սրբազն սինոդը՝ իր նախագահով, տեղապահներով և աշխատակազմով: Այլորեն՝ հոգևոր իշխանության նկատմամբ Ռուսաստանում հաստատվեց կայսերական իշխանության բացարձակ վերահսկողությունը: Հոգևոր դասի ներկայացուցիչներն այժմ նույնացվում էին պետական մյուս պաշտոնյաներին:

Պետրոսի ջանքերով Ռուսաստանում ամրապնդվեց պաշտոնական ազնվականության (*служислое дворянство*) հասարակական դիրքը և իրավական կարգավիճակը: Այն եկավ փոխարինելու տոհմիկ ավագանուն և սկսեց կազմել պետական ապարատի հիմքը, նաև՝ բանակի և նավատորմի, որոնք համալրվեցին գենքի արդիական տեսակներով և համապատասխան սպայակազմով:

Այս կերպ սկսեց ձևավորվել նոր ընտրախավ, որն իր բարեկեցությամբ պարտական էր պետությանը և անձամբ կայսրին: Նրա շուրջը համախմբվեցին հասարակության տարբեր խավերից սերող մարդիկ՝ Ֆ. Յ. Լեֆորտ, Ֆ. Մ. Ապրակսին, Ա. Դ. Մենչիկով, Պ. Պ. Շաֆիրով, Ա. Մ. Յագումբիևը և բազում այլք: Ընտրախավի ազդեցության և իշխանության հիմքը գվարդիական Սեմյոնովյան և Պրեոքրաժկայն գնդերն էին՝ ստեղծված դեռ պատանի Պետրոսի ջանքերով:

Աստիճանաբար ձևավորվում էր Պետերբուրգի պատկերը: Այն կառավարող ազնվականության միապետական հանրապետություն էր, որն ապրում էր մեկուսի և իրամանների ռազմաքաղաքական ռողջահայացով էր ներազդում Ռուսական կայսրության կյանքի վրա: Պետերբուրգի թատերայնացված միջավայրում փորձարկվում էին եվրոպական ճաշակը և ճարտարապետությունը, կառավարման կարգը և մտածելակերպը<sup>292</sup>, նաև՝ հագուստը և առօրեական բարքերը՝ իրաժարում մորուքից, կոմզոլ, վերնաշապիկ, տաքատ, պիջակ, երկարաճիտ կոշիկներ և այլն:

<sup>292</sup> Топоров В. Н., Петербург и “петербургский текст” русской литературы (введение в тему), Избранное, Москва, 1995, с. 268.

Զանազան խթաններով դանդաղ տարածվում է կայսրության այլ քաղաքներ՝ Մոսկվա, Կիև, Կազան, իսկ ապա նաև՝ Հելսինկի, Թիֆլիս, Բաքու:

Այդուհանդերձ, Պետերբուրգը չէր շտապում բարեփոխել Ռուսաստանի հասարակական կարգը: Եկատերինա 2-րդի ժամանակներից ի վեր սկսեց ծևավորվել ընտրախավի շեշտված էգորդմը: Եվ միայն Ալեքսանդր 2-րդի օրոք (1855-1881 թթ.) ձեռնարկվեցին կտրուկ փոփոխություններ, որոնք երբեմն բնութագրում են իբրև «հեղափոխություն Վերից»<sup>293</sup>: Բայց ժամանակն արդեն անդառնալիորեն կորսված էր. Ռուսաստանին սպասում էին պատերազմներ, հասարակական ցնցումներ, հեղափոխություններ, որոնք ի չիք դարձրին նրա բնականոն զարգացման հեռանկարը:

### **բ. Թուրքական փորձառությունը. Անկարա**

Անկարայի՝ մայրաքաղաք դառնալու հանգամանքը կապվում է Առաջին աշխարհամարտի թոհութողի հետ: Օսմանյան կայսրությունը, չդիմանալով պատերազմի ծանր փորձություններին, փլուզվեց: Փլուզումը համակարգային էր, իսկ կառավարող վերնախավը փորձեց իրադրությունը փրկել ներքաղաքական ագրեսիայի միջոցով՝ թշմանիներ փնտրելով իր (հատկապես քրիստոնյա) հպատակների շրջանում: Դա ճանապարհ բացեց հայոց ցեղասպանության համար:

1918 հոկտեմբեր 27-ին Մուլլոսի գինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր պարտությունը և դուրս եկավ պատերազմից: Նոյեմբերին Ստամբուլը ռազմակալվեց Անտանտի դաշինքի կողմից: Ազգային այս ստորացման պայմաններում բանակի սպայության մի մասը Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ որոշեց չենթարկվել օկուպացիոն ռեժիմին և ծավալել միլի (ժողովրդական) շարժումը: 1919 թվականին կայացած Էրզրումի և Սվագի Արևելյան 6 վիլայեթների համագումարները շարժմանը տվեցին հստակ գաղափարական հենք և հիերարխիկ կառուց: Վերահաստատվեցին բանակային կառույցը և կարգապահությունը: 1919 թվականի դեկտեմբերի 27-ին քեմալական զորքերը մտան Անկարա և աստ սկսեցին կազմավորել իրենց պետական մարմինները: 1920 թվականի ապրիլի 23-ին բացվեց Ազգային Մեծ

<sup>293</sup> Էյդելման Հ. Յ., Ռеволюция сверху, չ. 2, Մոսկվա, 1989, ս. 48- 52.

ժողովը, որն էլ կազմավորեց կառավարություն Քեմալի գլխավորությամբ<sup>294</sup>: Նա այժմ ներկայանում էր իբրև ազգային քարիզմատիկ հերոս՝ օժտված անսահման լիազորություններով:

Քեմալն սկսեց ճկուն կերպով խուսանավել Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի միջև՝ համոզելով առաջինին, թե սոցիալիզմ է տարածում Արևելքում, իսկ երկրորդին՝ թե առանց Թուրքիայի Արևելքում հնարավոր չէ կայուն խաղաղություն: Երկուան էլ հավատացին կամ ձևացրին, թե հավատում են: Եվ երկու կողմից էլ ստանալով զինական օգնություն՝ քեմալականները զենքն ուղղեցին «իմաստերիալիզմի գործակալներ» Հայաստանի և Հունաստանի դեմ: Հարդյունս փլուզվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը, երկիրը խորհրդայնացվեց 1920 թվականի դեկտեմբերի 1-ին: Իսկ հոյները, որոնց բանակը հասել էր Անկարայի մատուցներին, ջախջախիչ պարտության մատնվեցին 1922 թվականի օգոստոսի 10-ին: Քեմալն ու իր շրջապատը գծեցին արդի Թուրքիայի սահմանները և հասան այն բանին, որ Լոզանի համաժողովը (նոյեմբեր 1922–հուլիս 1923 թթ.) հաստատագրեց դա: 1923 հոկտեմբերի 29-ին Թուրքիան հոչակվեց հանրապետություն, և Մուստաֆա Քեմալն էլ ընտրվեց նրա նախագահ (1923–1938 թթ.):

Տակավին Սվագի համագումարի ընթացքում սկսեց ձևավորվել Ազգային-հանրապետական կուսակցության կորիզը, որն այս տպավորիչ ձեռքբերումների հիմնական կազմակերպիչն էր: 1923 հոկտեմբերի 29-ին այն ինքնահոչակվեց իբրև քաղաքական կուսակցություն: Աստ Քեմալի շուրջ միավորված էին Թուրքիայի ապագա բոլոր խոշոր պետական գործիչները՝ Խամեթ Խնոնյու, Ֆազի Զակմար, Զեմալ Բայար, Աղնան Մենդերես և այլք<sup>295</sup>:

Անկարան, որը հետամնաց գավառական քաղաք էր՝ առանց արդյունագործության, ճանապարհների ու տրանսպորտի, և էական դերակատարություն չէր ունեցել պատմության մեջ, Քեմալի կամքով և Ազգային Մեծ ժողովի օրինադրությամբ 1923 հոկտեմբերի 13-ին հոչակվեց Թուրքական Հանրապետության մայրաքաղաք:

<sup>294</sup> Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթևսոսյան Վ., Զակրյան Հ., Հովհաննիսյան Ա., Խմբ. Թուրքիայի Հանրապետության Պատմություն: Բուհական դասագիրք, Երևան: ԵՊՀ հրատ., 2014, էջ 48:

<sup>295</sup> Սաֆրաստյան Ռ., և ուրիշ., նշվ. աշխ., էջ 69:

Անկարան նույնպես գոյացավ չգոյությունից՝ քաղաքակրթական ճեղքածքի տոպոսում: Հարկ էր առաջին հերթին անցում ապահովել օսմանյան ամորֆ էթնիկ միջավայրից դեպի հստակ սահմանագծված թուքական ինքնություն: Եվ մայրաքաղաքի տարածքն իր հստակ տրամաբանությամբ պետք է պայմաններ ստեղծեր այս պատմական անցման համար:

Ի տարբերություն արդի Ղազախստանի՝ երիտասարդ Թուրքական Հանրապետությունը չուներ առատ նյութական հնարավորություններ լայնածավալ քաղաքաշինության համար: Սակայն այն, ինչ արվել է 1920–1930-ականներին, տպավորիչ է բոլոր առումներով: Շվեյցարացի ճարտարապետների խումբը Կարլ Լոշերի գլխավորությամբ մշակեց քաղաքի գլխավոր պլանը՝ նախատեսված 350 – 400 հազար ազգաբնակչության համար<sup>296</sup>: Կենտրոնում քանդվեցին կավե նեղ փողոցները, և կառուցվեցին ուղղաձիգ պողոտաներ՝ Հանրապետության, Անկախության, Ազգային միասնության: Հետագայում դրանց գումարվեցին նորերը: Դրանք էլ կազմեցին ճարտարապետական նորամուծության այն միջավայրը, որտեղ կառուցվեցին նախագահական նստավայրը, Ազգային ժողովի, կառավարության, Ռազմական նախարարության, Գլխավոր դատարանի, Ազգային բանկի շինությունները: Զուգահեռաբար սկսեցին կառուցվել մշակութային նշանակության մի շարք շինություններ՝ Անատոլիական քաղաքակրթությունների թանգարանը (1921 թ.), Անկարայի համալսարանը, Թուրքական լեզվաբանական ընկերությունը (1932 թ.), Թուրքական պատմագիտական ընկերությունը (1931 թ.), Օպերային ընկերությունը (1934 թ.), Ազգագրական թանգարանը (1930 թ.), Անկախության թանգարանը (1931 թ.) և այլն<sup>297</sup>: Մայրաքաղաքի ճարտարապետական անսամբլը պսակում է առաջին

<sup>296</sup> Kezer Z., Ankara in Capital Cities in the Aftermath of Empires: Planning in Central and Southeastern Europe, edited by Emily Gunzburger Makas and Tanja Darnjanović Conley, London: Routledge, 2010, p. 126. Պետք է նշել նաև, որ Եվրոպական գաղափարների տարածումը չէր սահմանափակվում միայն Անկարայի տարածքում: Աթաթօւրքը թե Աթաթօւրքը փորձ արեց նաև Եվրոպական քաղաքային բովանդակություն ներդնել Ստամբուլում, որի նպատակով երկու անգամ հրավեր ուղարկվեց Փարիզի գլխավոր ճարտարապետ Հենրի Փրոստին: Ստամբուլը, լինելով աշխարհագրորեն ավելի մոտ Եվրոպային, կարծես մի փոխարեւական կամուրջ լիներ Եվրոպայի և նորաստեղծ Անկարայի միջև: Տե՛ս, Bilsel C., Remodelling the Imperial Capital in the Early Republican Era: the Representation of History in Henri Prost's Planning of Istanbul, in Osmund J., Cimina A., (Eds.) Power and Culture: Identity, Ideology, Representation, Pisa: University Press, 2007, pp. 98-99.

<sup>297</sup> Քեմալ Աթաթօւրքի ազգաշինական ծրագրերում կրթական, պատմագիտական և լեզվաբանական ոլորտների ազդեցության մասին առավել մանրամասն տե՛ս Սաֆրաստյան Ռ., և ուրիշ., նշվ. աշխ., էջեր 58-61:

նախագահի դամբարանը Խաղաղության պուրակում՝ կառուցված 1944–1953 թվականներին<sup>298</sup>:

Մոտավոր ներկայացմամբ այսպիսի իմաստանշանային միջավայրում Մուտաֆյա Քեմալն ու իր ընտրախավը պետք է սկսեին պատմական այն արարը, որը կոչվում էր Թուրքական Հանրապետություն: Դրա հիմնական հերոս էր հոչակվում թուրքը, որը միաժամանակ և՛ էթնիկ պատկանելության, և՛ քաղաքացիության ցուցիչ էր: Մնացած բոլոր տարբերությունները պարզապես անտեսվում էին<sup>299</sup>:

Այս շատ առումներով վերացական սոցիալական էակի կայացման համար նրան զգուշորեն զրկում էին հիշողությունից, որը հիմնված էր սովորանության, խալիֆայության և խլամի հիմնագաղափարների վրա: Խալիֆայության լուծարմամբ խլամական եկեղեցու վարույթից արտառում էին արդարադատության ողջ համակարգը. փակվեցին շարիաթի դատարանները: 1926 թվականին ընդունվեց քաղաքացիական կողեքս՝ կառուցված եվրոպական (հիմնականում շվեյցարական) իրավունքի վրա<sup>300</sup>: Վերացվեց կրթական հաստատությունների նկատմամբ խլամի վերահսկողությունը: Այն դարձավ աշխարհիկ՝ ենթակա Կրթության նախարարության ղեկավարությանը: 1928 թվականին Թուրքիան իրաժարվեց արաբական այբուբենից. հատուկ կազմված հանձնաժողովը լատիներենի հիմամբ մշակեց թուրքական այբուբեն: Նոյն թվականին ստեղծված Թուրք լեզվաբանների միությունն առաջադրանք ստացավ մաքրելու թուրքերենը արաբերենի ազդեցությունից. սա մի երկարատև քրտնաշան աշխատանք էր, զի թուրքերենը չուներ արդիական սեմանտիկ հնարավորություններ<sup>301</sup>:

1925–1927 թվականներին նախագահի նախաձեռնությամբ Ազգային Մեծ ժողովը որոշումներ ընդունեց երկաթուղու, բանկերի, խոշոր ձեռնարկությունների ազգայնացման վերաբերյալ<sup>302</sup>: Հատկապես նշանակալից էր Ազգային կենտրոնական

<sup>298</sup> Wilson Ch. S., Beyond Anitkabir: The Funerary Architecture of Atatürk: The Construction and Maintenance of National Memory, New York: Routledge, 2016, p. 65.

<sup>299</sup> Միանգամայն ակներև է, որ բազմազգ և բազմամշակույթ Ստամբուլը, որտեղ պատմականորեն շեշտված են բոլոր արժեքային տարբերությունները, չէր կարող համապատասխանել նման դերակատարությանը:

<sup>300</sup> Սաֆրաստյան Ռ., և ուրիշ., նշվ. աշխ., էջ 55:

<sup>301</sup> Նոյն տեղում, էջ 58:

<sup>302</sup> Բանկերի և մանավանդ ապահովագրական ընկերությունների միջոցների ազգայնացման ընթացքում թեմալական կառավարությունը յուրացրեց հայերին պատկանող միջոցները: Մոտավոր հաշվարկներով (ըստ արդի դրամական կուրսի) դրանք կազմում էին միլիարդներ: Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեցրկումը Օսմանյան կայսրությունում (1914–1923 թթ.), Պատմա-բանասիրական հանդես, 2013, № 3, էջ 32:

բանկի դերակատարությունը: Տեղական և օտարերկրյա ներդրումների շնորհիվ՝ այն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հաթայթեց արդյունաբերության ճյուղերի գործարկման համար՝ մետաղաձուլություն, քիմիական արդյունաբերություն, մեքենաշինություն, գյուղատնտեսական մթերքների վերամշակություն, մետաքսագործություն, մանածագործություն և այլն:

Նոյն ժամանակաշրջանում էական տեղաշարժեր արձանագրվեցին գյուղատնտեսության մեջ. պետականացվեցին սովորանական ընտանիքին, իսլամական կազմակերպություններին և խոշոր ավատատերերին պատկանող հողային տիրույթները և մանր հողակտորներով օգտագործման իրավունքով հանձնվեցին հողագորկ գյուղացիներին: Շուրջ 13 միլիոն գյուղացիներ ստացան հող և պետական փոքր վարկերով սկսեցին կազմակերպել ագարակային տնտեսություններ<sup>303</sup>:

Բարենորոգումները վերաբերում էին նաև ընտանեկան-առօրեական կյանքին. 1926–1934 թվականներին անցկացվեցին օրենքներ, որոնք արգելում էին բազմակնությունը, մտցվեց ընտրական իրավունք՝ տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքով: Բացվեցին լիկեայաններ՝ արմատախիլ անելու անգրագիտությունը տարեց մարդկանց շրջանում: Արգելվեցին տղամարդկանց մորուքը և ֆեսը: Մտցվեցին ազգանուններ: Հաստատվեց համապետական ժամանակի ստանդարտը՝ համահունչ համաշխարհային ժամանակին:

Վերացական թուրքը, Անկարայի վերացական-ստանդարտ ճարտարապետական համալիրը, շեշտված արևմտյան կրթական, իրավաքաղաքական, տնտեսական, առօրեական-կենցաղային միջավայրը դրական խթաններ էին համակեցական կյանքի նոր տեսլականի մշակման և կիրարկման համար: Եվ Թուրքիայի շատ քաղաքային և գյուղական համայնքներում (բացառությամբ Ստամբուլի) կրկնօրինակում էին Անկարայում մշակված ստանդարտները՝ համոզված, որ դրանք են արտահայտում ճշմարիտ ազգային արժեքները<sup>304</sup>:

Սակայն վաղ թե ուշ վերացական քաղաքացու թիկունքում պետք է երևային նաև քուրդը, ալսին, թյուրքնենը, արաբը, ասորին, հույնը, հայը, բուղարը և այլք: Պետք է

<sup>303</sup> Պետականացված հողերի մեջ զգալի տոկոս էին կազմում, այսպես կոչված, լրյալ տարածքները: Դրանք նախկինում պատկանում էին հիմնականում հայերին և հոյներին: Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 30:

<sup>304</sup> Kezer Z., նշվ. աշխ., էջ 124:

ակներս դառնար իւլամի ավանդութեաներից հրաժարվելու հակառակ երեսը՝ անհանդութողականություն, ծայրահեղականություն, մեկուսացում: Ուստի կարելի է պնդել, որ այսօր Աթաթուրքի ներմուծած «Անկարայի խթանը» արդեն սպառվել է: Թուրքիային անհրաժեշտ է աշխարհին մասնակցելու մի նոր տեսլական:

#### **գ. Այլ քաղաքակրթական զուգահեռներ**

Անցումային հասարակություններում մայրաքաղաքների դերակատարությունն ուսումնասիրելիս հետազոտողները հաճախ անդրադառնում են նաև բրազիլական փորձառությանը: Իր հինգհարյուրամյա պատմության ընթացքում այս երկիրը փոխել է երեք մայրաքաղաք: Երեք արմատական փոփոխություններն ել հետազոտողները տեղադրում են քաղաքակրթական ճեղքածքների տոպսներում: Առաջին մայրաքաղաքը Սալվադորն էր (1549–1763 թթ.)՝ հիմնված գաղութային-կաթոլիկ դիսկուրսի և ճարտարապետական էսթետիկայի վրա, որոնք կրկնում էին Լիսաբոնի նախօրինակը: Երկրորդը՝ Ուին դե Ժանեյրոն (1763–1960 թթ.), նախապատրաստեց և նշանավորեց Բրազիլիայի պատմության արմատական շրջադարձերը՝ անկախություն (1822 թ.), հանրապետության հոչակում (1889 թ.), արդյունաբերական բույն զարգացում 20-րդ դարում: Երրորդը Բրազիլիան է՝ համանուն Երկրին, հիմնադրված 1960 թվականին Երկրի կենտրոնական շրջանում: Նոր մայրաքաղաքն ընկալվում է իրեւ բրազիլական նոր պետականության՝ Բրազիլիայի Դաշնային Հանրապետության և ազգային ինքնության կերտման նոր կենտրոն<sup>305</sup>:

Ճարտարապետներ Լուիսո Կոստան, Օսկար Նիեմերը և Ռոբերտո Մարքսը ստեղծել են արդիական քաղաքի օրինակելի հարացուց՝ ըստ սիմբիոտիկ սկզբունքի, որում խիստ արտահայտված էին եվրոպական գաղափարները<sup>306</sup>: Աստ մարդը, համակեցական միջավայրը և բնությունը գտնվում են հավասարակշիռ վիճակում: Մայրաքաղաքի կենտրոնը կազմում են նախագահական նատավայրը, Խորհրդարանը և Գերագույն դատարանը՝ շրջապատված պուրակներով, լճակներով, ծառուղիներով: Կենտրոնը շրջապատված է երեք թաղամասերով՝ Հյուրանոցային, Բանկային և

<sup>305</sup> Chilcote R. H., Intellectuals and the Search for National Identity in Twentieth-Century Brazil, New York: Cambridge University Press, 2014, p. 206.

<sup>306</sup> Almandoz A., Introduction, in Almandoz A., (Ed.) Planning Latin America's Capital Cities 1850-1950, Routledge, 2013, p. 2.

Դեսպանատնային: Դա բուն քաղաքն է, որի ճարտարապետական լուծումները որոշ առումներով կրկնում են Եվրոպական այնպիսի մայրաքաղաքների, ինչպիսիք են Լոնդոնը կամ Փարիզը<sup>307</sup>:

Սակայն այս իդեալական հատվածը մտնում է ավելի ընդարձակ քաղաքային համայիրի մեջ՝ բաղկացած 27 շրջաններից, ուր բնակվում է շուրջ 2.5 միլիոն մարդ: Նրանք ներկայացնում են երկրի ազգաբնակչության համապատկերը՝ պորտուգալացիներ, ամերիկացի տեղաբնիկներ, սևամորթներ, իսպանացիներ, գերմանացիներ և այլք: Մայրաքաղաքի միասնական իմաստանշանային տարածքում նրանք կազմում են մեկ բազումի այն համաշափությունը, որ կոչվում է բրազիլացի:

Մայրաքաղաք-քաղաքակրթական նորացում գիտախնդրի ուսումնասիրողները, որպես կանոն, շրջանցում են 1920 – 1930-ականների հայոց փորձառությունը: Մինչդեռ այն, կարծում ենք, համապատմական կարևորություն ունի:

Երևանը նույնական պատմության համատեքստում հայտնվեց չգոյությունից՝ հանկարծ: Մինչ այդ կավաշեն գավառական քաղաք էր Ռուսական կայսրության հարավում, ուներ 30 000 ազգաբնակչություն: Պատմական հանգամանքների բերումով ճանաչվեց Հայաստանի Առաջին Հանրապետության մայրաքաղաք (1918 թ. հունիսի 4):

Պահն արտակարգ ծանր էր՝ ցեղասպանություն, սով, հիվանդություններ, գաղթականներ, որբեր: Գումարած՝ տնտեսական փլուզում, շրջափակում, պատերազմ: Սակայն կառավարող և մտավոր ընտրանին մշակում էր ազգային վերածննդի ծրագրեր: Եվ մայրաքաղաք Երևանը դրանց կիզակետում էր: Առաջին Հանրապետությունն անկեց բոլշևիկաքեմալական աքցանում (1920 թ. դեկտեմբերի 1):

Իշխանության եկան հայ բոլշևիկները, որոնք նախապես վարում էին բռնության և հակաժողովրդական տեռորի քաղաքականություն: Դա էլ ծնեց համաժողովրդական ապստամբություն, որը ճնշվեց: Բայց նոր վարչակազմն առժամանակ փոխեց իր քաղաքականությունը: Իբրև ժողովրդական նախագահ (վարչապետ)<sup>307</sup> Հայաստան գործուղվեց նշանավոր կուսակցական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը (1886–1925 թթ.), որը նէա-ի գործառմամբ երկրին բերեց խաղաղություն և զարգացման հեռանկար: Ազգային վերածննդի գաղափարը նորից ստացավ հրատապություն: Վարչապետի

<sup>307</sup> Pereira, M. da S., The Time of the Capitals: Rio de Janeiro and Sao Paulo: Words, Actors and Plans, in Almandoz A., (Ed.) Planning Latin America's Capital Cities 1850-1950, Routledge, 2013, pp. 75-76.

հրավերով հայրենադարձվեցին բազում հայ նշանավոր մտավորականներ՝ Ալեքսանդր Սպենդիարյան, Կոնստանտին Սարաջն, Հրաչյա Աճառյան, Մարտիրոս Սարյան, Արա Սարգսյան, Ռոմանոս Մելիքյան, Հակոբ Կոջոյան:

Մինչ ստալինյան բռնությունները, մտավորականության հայրենադարձության նոր ալիքներ են եղել: Այնքան զգայի էր մտավորականության ներկայությունը Երևանում, որ խոշորագույն գրող և մտածող Մարիետա Շահինյանն այն համեմատել է Գյորեի դարաշրջանի Վայմարին<sup>308</sup>: Նկատի ուներ մտավորականության ստեղծագործ ճիգը՝ վերականգնելու կորուսյալ հայրենիքի պատկերը նրա պահպանված մեկ տասնորդական հատվածում: Վերականգնել՝ չնայած կոմունիստական գաղափարախոսական կաղապարներին:

Հայրենադարձ մտավորականության առաջին ալիքի խոշորագույն ներկայացուցիչներից էր Ալեքսանդր Թամանյանը (1878-1936 թթ.)՝ Պետերբուրգի Արվեստների Կայսերական ակադեմիայի նախկին փոխնահագահը, Արքայական տան գլխավոր ճարտարապետը:

Կառավարության պատվերով նա 1923 թվականին մշակեց Երևանի գլխավոր հատակագիծը՝ նախատեսված 150 հազար ազգաբնակչության համար<sup>309</sup>: Այն կառուցված էր երկու ճարտարապետական հղացքների համադրությամբ՝ քաղաք-այգի և ֆունկցիոնալ քաղաք՝ վարչական, մշակութային, բուհական, թանգարանային և արդյունաբերական ենթակառույցներով<sup>310</sup>: Համակենտրոն երեք շրջանակ՝ հատված երկու հիմնական ճառագայթ-պողոտաներով՝ Հյուսիսային և Կենտրոնական, որոնք պսակվում էին երկու կարևորագույն շինություններով՝ Կառավարության տուն և Ժողովուն (ապագա Ֆիլիարմոնիայի և Օպերայի ու թատրոնի շենքը)<sup>311</sup>: Ե'վ այդիները, և՛ փողոցները կառուցվելու էին ռացիոնալ ապացուցելիության և թափանցիկ ընթեռնելիության սկզբունքով: Գավառական քաղաքի իռացիոնալությունը ժխտվում էր

<sup>308</sup> Ռազմիկ Մ. Ս., Путешествие по Советской Армении, Москва, изд. Художественной Литературы, 1957, с. 47.

<sup>309</sup> «Մայրաքաղաք – քաղաքակրթական ինքնանորացում» երևոյթը ունեցել է կայուն ավանդույթներ հընթացս հայոց պատմության՝ սկսած Արտաշատից մինչև Անի: Տե՛ս Ստեփանյան Ա., Ինքնության քաղաքակրթական չափումը (Նախնական դատողություններ), Պատմության հետագիծը. Գործք, Գրույթ, Իմաստ, Երևան, Փրինթինֆո, 2014, էջեր 27- 28 :

<sup>310</sup> Ste'v, Howard E., Garden Cities of To-Morrow, ed. Osborn F. J., London: Routledge, 2013.

<sup>311</sup> Ժողովան նախագիծն 1937-ին արժանացել է Փարիզում կայացած միջազգային ցուցահանդեսի գլխավոր մրցանակին:

մեկընդմիշտ: Եվ դա ճանապարհ էր հարթում հիշողության համար, որի շուրջ կարող էր միավորվել համայն հայությունը:

Սակայն բռնատիրության պայմաններում ազգային հիշողությունը չէր քաջալերվում: Քաղաքի համաձիրում անցյալի հերոսների համար չկային իմաստանշանային տարածքներ. դրանք կարող էին զբաղեցնել միայն կոմունիստական աստվածախմբի անդամները՝ Լենին, Ստալին, Շահումյան: Միակ բացառությունը Խաչատուր Աբրույանն էր՝ լրագրության մեջ, որին վերագրվում էր «անվերապահ ու անսահման ռուսասիրություն»<sup>312</sup>:

Թամանյանն այս բացը լրացրեց նորարարական ճանապարհով. իր յուրաքանչյուր կառույց նա ստեղծում էր միջնադարյան հայկական (Անի) և արդի (Դասական և Եվրոպական) ճարտարապետության համաշափ համադրությամբ՝ մոնումենտալ ձևեր, կամարներ, քիվեր, խոյակներ: Եղիշե Չարենցի գեղագիտական բանաձևով՝ «**Նա գետել է երևի արևային մի քաղաք**»<sup>313</sup>:

Այս կերպ Երևանը ներկայանում էր իբրև մտահոգւոր ճանապարհորդություն հայկականից դեպի համաշխարհայինը և հակառակ: Սփյուռքայնացված ազգի համար Երևանը դառնալու էր սևոռումի իդեալական կետ: Այս իմաստային դաշտի վրա իշխելու էր Երևանի բնական «հոլշակոթողը»՝ Արարատ լեռը, որը Մարտիրոս Սարյանի ձեռամբ արդեն պատկերված էր Խորհրդային Հայաստանի գերբի վրա:

1934 թվականին Թամանյանին պատվիրվեց կազմել Երևանի նոր գլխավոր հատակագիծը՝ նախատեսված 500 հազար ազգաբնակչության համար, բայց նա չհասցրեց գործն ավարտին հասցնել: Հետագա 20-30 տարիներին դա շարունակեցին նրա դպրոցի ներկայացուցիչները՝ Մարկ Գրիգորյանը, Գևորգ Քոչարը, Սամվել Սաֆարյանը, Միքայել Մազմանյանը, Գևորգ Թամանյանը և այլք:

<sup>312</sup> Նրան հետագայում միանալու է Սասունցի Դավիթը՝ պիտակավորված իբրև «անսահման ազատասեր և հայրենասեր»:

<sup>313</sup> **Չարենց Ե.**, Ակադեմիկոս Թամանյանի անմահ հիշատակին: [Բանաստեղծ.] / Եղիշե Չարենց // Եթեր.2009, 14 մայիսի, Էջ 22: Եղիշե Չարենցից սույն աշխատությունը տպագրվել է 1936 թվականի փետրվարի 23-ին՝ ճարտարապետ Թամանյանի մահից օրեր անց: Հավանաբար Չարենցի աշխատանքի վրա նաև ազդեցություն է թողել Կամպանելլայի «Արևի Քաղաք» աշխատությունը: Տե՛ս նաև՝ **Campanella T.**, The City of the Sun: A Poetical Dialogue, trans. Daniel J. Donno, Berkeley: University of California Press, 1981.

## **Դ. Սեմանդիկ հարադրություններ**

Վերը քննության առնված մայրաքաղաքային բոլոր տարակերպերը ծնունդ էին ճեղքված քաղաքակրթական միջավայրերի և նպատակ ունեին ձևավորելու ուսուահիքանական ճարտարապետական միջավայրեր ինքնության նոր հարացուցերի ձևավորման համար:

Սանկի Պետերբուրգ (1712 թ.). ձևավորվեց իբրև ընտրախավի միապետական հանրապետություն, որ պետք է ապահովեր անցում միջնադարից դեպի նոր դարաշրջան: Նպաստեց Եվրոպական նորագույն նվաճումների ներմուծմանը հետամնաց Ռուսաստան, սակայն ինքնաբավ էր և անտարբեր հասարակության խորքային վերակառուցման հիմնախնդրի նկատմամբ: Ռուսաստանը դեռ Երկար մնալու էր ճորտատիրական երկիր:

Անկարա (1923 թ.). Խնդիր ուներ ապահովելու անցումը Օսմանյան կայսրությունից դեպի Թուրքիայի Հանրապետություն, միջնադարից արդիականություն: Անկարայի նախագծի հեղինակը Մուստաֆա Քեմալի ինքնիշխանական ընտրախավն էր: Նպատակն էր պայմանական քաղաքային միջավայրում մշակել պայմանական թուրքի հավաքական կերպար՝ ըստ արևմտյան իրավաքաղաքական և մշակութային հարացուցերի: Նախագիծը լուծեց քաղաքակրթական միջնաժամկետ խնդիրներ, բայց արդ կանգնած է ճգնաժամի առաջ:

Բրազիլիա (1960 թ.). ստեղծվել է ազատական-հանրապետական գաղափարների հիմամբ: Ճարտարապետական միջավայրը դիքոստոմիկ է՝ Էլիտար կենտրոն և Էլիտար ծայրամաս: Սիմբիոտիկ սկզբունքի կիրարկմամբ ստեղծվել է հազվագյուտ համաշխափություն ճարտարապետական կառուցների, քաղաքային համայնքի և քնության միջև: Սոցիալական նախագիծը նպատակառությած է ձևավորելու ազգային ինքնության նոր հարացուց՝ ըստ մեկ բազումի համաշխափության: Այսինքն՝ միավորում, որ հաշվի է առնում յուրաքանչյուրի (հասարակախմբեր, էթնիկ-կրոնական միավորներ, անհատներ) առանձնահատկությունները: Այլ ձևակերպմամբ դա սահմանվում է իբրև նորօրյա ազատության ճարտարապետական միջավայր: Հավելենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն Բրազիլիան ճանաչել է «Մարդկության հոգևոր ժառանգության հուշարձան»:

**Երևան** (1923թ.). Խնդիր ուներ ապահովելու հայոց քաղաքակրթական անցումը այն ճեղքածքի վրայով, որ գոյացել էր գաղութային հետամնացության և եղեռնի հետևանքով։ Խորհրդային ժամանակաշրջանի նյութական սուլ պայմաններում պետք էր ստեղծել ճարտարապետական ուսուպիկ մի տարածք՝ միավորելու միջնադարյան հայկականը և արդիական արևմուտքը։ Դրանց հոգևոր կրողը պետք է դառնար նոր հայը՝ ունակ հաղթահարելու քաղաքական, մշակութային և առօրեական կյանքի բոլոր տարասեռություները և վերագտնելու իր միասնությունը պատմական հայրենիքի մեկ տասնորդական հատվածում։

**Ասպանա** (1998թ.). ստեղծվել է ըստ Նազարբաևի և իր ընտրախավի քաղաքակրթական ինքնարարումի նախագծի։ Նյութական նախապայմանները հոյժ նպաստավոր էին՝ պայմանավորված առաջին հերթին նավթագազադոլարների առատ հոսքով։ Անբարենպաստ էին էթնիկ, ընկերային և մշակութային նախապայմանները. վտանգված էին դազախների միացյալ էթնիկ գիտակցությունը, պատմական հիշողությունը, կրոնը և լեզուն։ Աստանան, օգտագործելով համաշխարհային փորձառությունը, պետք է պատասխաններ մշակեր այս մարտահրավերներին՝ կառուցված դազախի նոր (շատ առումներով ուսուպիական) պատկերի վրա։ Այդ պատկերը խիստ տարբեր էր Պետերբուրգի արևմտականացած ազնվականի, Անկարայի պայմանական (և էլի անհարկի արևմտականացված) թուրքի, Բրազիլիայի տարադեմ ազգային-աշխարհաքաղաքու, Երևանի աշխարհասիյուռ-ազգային պատկերներից։ Նրա խնդիրն է առանց ավելորդ զգացումայնության հավասարակշռել նախկին մետրոպոլիան և գաղութը, իսլամը և քրիստոնեությունը, ազգային հիշողությունը և արդիականությունը, թույլ զարգացած դազախներներ և աշխարհի զարգացած լեզուները (ռուսերեն, անգլերեն), թյուրքական ունիվերսալիզմը և դազախական լոկալիզմը, ազգային դիքուսոմիան և բացարձակ միավորման ուսուպիան։ Ի զորու՝ է Աստանան իրագործելու իր հանձնառած քաղաքակրթական առաքելությունը։ Հարցի պատասխանի ակնկալությամբ հարկ է ձևակերպել մեկ այլ կարևոր հարց ևս՝ կապված է նոր մայրաքաղաքի բախտը միայն անձնիշխանական կառավարման համակարգի հետ, թե՞ դրա խթանի մարման պարագայում այն կուին կիեռանա դեպի քաղաքակրթական չգոյություն։

## Եզրակացություններ

ԽՍՀՄ փլուզումն առաջ բերեց խորագույն տեղաշարժեր նրա էթնոպետական սուբյեկտների ինչպես ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական միջավայրերում: Տեղաշարժերը բազմազան են և, ըստ տարածաշրջանների, ունեն իրենց առանձնահատկությունները: Այս առումով կարևոր է Կենտրոնական Ասիայի պատմական փորձառությունը, որտեղ ներհանրութային (տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական, մշակութային) հիմնախնդիրներն ուղեկցվում են ազգաշինական աննախընթաց ծրագրերով: Դրանք իրագործվում են (տեղական ավանդույթներին և մտածելակերպին հարիր) անձնիշխանական վարչակարգերի նպատակամետ գործողությունների շնորհիվ: Մի գործընթաց, որն իր առավել ցայտուն դրսւորումն ստացավ նորանկախ Ղազախստանում:

Հետխորհրդային Ղազախստանի պատմության հիմնակազմիկ քաղադրիչը ազգային ինքնության նոր հարացույցի ստեղծումն է, որն ընթանում է հասարակական համակեցության ամենատարբեր մակարդակներում: Ղազախական ազգաշինությունը համարերում է ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի ազգաշինության փորձը: Մեկ այլ ձևակերպմամբ՝ դա ազգաշինության մի համալիր ծրագիր է, որի նպատակն է վերջինիս քաղաքակրթական ցուցանիշները համապատասխանեցնել արդիականության լավագույն նմուշներին: Այս գործընթացում կարևորագույն դերակատարությունը վերապահվում է քաղաքական իշխանությանը՝ ունակ համարժեք պատասխաններ մշակելու քաղաքակրթական մարտահրավերներին: Ղազախները համոզված են՝ Նուրսուլթան Նազարբաևին և նրա վարչակազմին է վիճակված իրագործելու այս պատմական առաքելությունը:

Հանրագումարի բերելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ ցանկանում ենք ընդգծել հետևյալ եզրահանգումները, որոնք մեր կարծիքով առավել կարևոր են.

**Ա. Հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության և պետականաշինության արդիականացման գործընթացն ունի պատմական կարևոր նշանակություն, որը լուս է սփոռում ոչ միայն անցյալի, այլև ներկայի վրա: Ղազախստանի ներկան և անցյալը գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ: Ներկայի մարտահրավերների**

մասին առավել ընդգրկուն պատկերացում տալիս է անցյալի ուսումնասիրությունը: Ղազախստանի պատմությունն առանձնանում է ինքնության հարացուցերի հերթագայությամբ: Ղազախների ինքնությունն ունի պատմական ազդեցությունների տարբեր շերտեր՝ **թյուրքական, ոռուսական և ղազախական-ազգային**: Մինչ քաղաքական ինքնակազմակերպման խանության փորձառությունը, ղազախները ապրում էին **քոչվորական նախակենցաղ կյանքով՝** զուրկ հայրենի տարածքի և սեփական ինքնության գիտակցությունից: Այս հարաբերություններում առանցքային տեղ ունեին **կլանային և տոհմացեղային հարաբերությունները**: Տոհմացեղային հարաբերությունները խորքային ազդեցություն ունեին հասարակական խմբերի քաղաքական համախմբման գործում: Ներկլանային-ցեղային պայքարի և ուզբեկական խանությունից առանձնանալով՝ Կերեյ և Ժանիբեկ խաների մղած պայքարի արդյունքում Երևացին ազգային ինքնագիտակցության առաջին ծիլերը: Վերջինիս արդյունքը «**ղազախ» Էթնիկ հղացքի** առաջադրումն էր: Ղազախական Խանության հիմնումից սկսած՝ **ղազախ Եզրն սկսեց վերածվել խանության տարածքում ապրող Էթնիկ խմբերին բնութագրող Էթնոնիմի՝ ճանապարհ հարթելով դեպի հանրության այն մակարդակը, որը բնութագրվում է իբրև ժողովուրդ:**

**Բ.** Ղազախների ինքնության հարացուցի մյուս մակարդակը պայմանավորված էր ոռուսական ներկայությամբ: Նախ՝ ղազախական տափաստանը հայտնվեց Ռուսական կայսրության վերահսկողության ներքո, ապա իբրև Խորհրդային Ղազախստան՝ ԽՍՀՄ կազմում: Ցարական Ռուսաստանը, չնայած քացահայտ գաղութային քաղաքականությանը, արդիականացման նոր պայմաններ ստեղծեց ղազախական տափաստանում: Այս ժամանակաշրջանում է, որ ժողովուրդը **տարածքի նկատմամբ ձևավորում է Էթնոմշակութային պատկանելության իր ըմբռնումը**: Մյուս կողմից՝ տեղի է ունենում ավանդական ինքնության ապակառուցում. ոռուսականության գերիշխանությամբ լուսանցքում հայտնվեցին ղազախների լեզուն և ավանդական ինքնությունը: Հատկանշական է, որ ավանդական կլանային հարաբերությունների տարրերը պահպանվեցին անգամ խորհրդային ժամանակաշրջանում (Բրեժնև-Կունաև-քաղաքական կլանը), սակայն պատմության մեջ առաջին անգամ ղազախ հասարակությունում Խորհրդային Միությունը փորձարկեց մի նորարարական

տեխնոլոգիա, այն է՝ ազգային ինքնության ներդրման գաղափարը: Գործընթաց, որն ընթացավ հաստատության և նորմատիվ չափորոշիչների ներդրմամբ: Այդպիսով՝ «հետամնաց ժողովուրդները» պետք է փոխակերպվեին սոցիալիստական ազգերի:

**Գ.** Անկախության առաջին տարիներից ակնհայտ դարձավ, որ Կենտրոնական Ասիայում կայացման իր ուրույն ուղիով է ընթանում բազմաէթնիկ մի պետություն՝ փորձարկելով Արևմուտքի և Արևելքի ազգաշինական ձեռքբերումների հիբրիդը: Այն դրսևորվել է Ղազախստանի վերակազմակերպմանը միտված հավակնուտ և ապագայամետ մի շարք ծրագրերում՝ «Ղազախստան 2030», «Ղազախստան 2050» և այլն: Ներհանրության համաձայնության հաստատման առումով կարևոր է ընդգծել Ղազախստանի ազգաշինության գործընթացի երկու բաղադրիչները՝ **Էթնիկական/ազգային և քաղաքացիական**: Այս երկու բաղադրիչները սկզբունքորեն ուղեկցել են լեզվաքաղաքականությանը, խորհրդանշական (ազգային դրոշ, գերբ, տոներ), կրթական և էթնիկ-վարչական քաղաքականություններին, ինչպես նաև՝ քաղաքաշինությանը: Ղազարբական վարչակարգը փորձում է լուծել մի շատ կարևոր խնդիր. Երկար տևողության ժամանակահատվածում ազգը հնարավորություն է ստանում շրջանցելու **ցեղային-կլանային հարաբերությունների մնացուկները**: Տեղի է ունենում խզում նախկին ինքնութենական հարացույցից. ազգային ինքնանույնացման գործընթացն այլևս միշնորդավորվում է **ազգային և քաղաքացիական միջավայրերով**, որոնց համադրվում են նաև ավանդական արքետիպերը: Հանրագումարում՝ Ղազարբական վարչակարգը կարելի է բնութագրել ըստ **ինքնիշխանության (ավտորիտարիզմ) և ժողովրդավարության միջանկյալ վիճակի** տիպաբանության:

**Դ.** Հետխորհրդային Կենտրոնական Ասիայում Ղազախստանն աչքի ընկավ իր պատրաստակամությամբ՝ ինտեգրվելու տարածաշրջանային և միջազգային մի շարք ծրագրերի: Մի բան, որը չի կարելի ասել Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի շատ երկրների մասին: Եթե հետխորհրդային որոշ երկրներ միջազգային հարաբերություններում ընտրում էին կամ-կամի տարբերակը, ապա Ղազախստանը որդեգրեց բազմավեկտոր արտաքին քաղաքականության հայեցակարգը, որով հնարավորություն էր ստանում հավասարակշունչություն մարտահրավերների բոլոր վեկտորները.

ազգային-դասախական, ոռուական, չինական, համաթյուրքական, իսլամական և արևմտյան:

Ազգաշինական գործընթացները և դրա երկու բաղադրիչները՝ էթնիկ-ազգային և քաղաքացիական-հետխորհրդային, Ղազախստանում ուղիղ կապի մեջ են նաև երկրի արտաքին քաղաքական վեկտորի հետ: Փորձ է արվում հավասարակշունչություն թյուրքական և մուսուլմանական վեկտորները Ռուսաստանի, Չինաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերին: Այդուամենայնիվ, ի տարբերություն իսլամական պատմական ավանդույթ ունեցող Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների՝ Ղազախստանն իր առջև ծառացած խնդիրներին չպատասխանեց իսլամով: Հակառակը՝ զգուշանալու համար արտաքին իսլամի բացասական դրսնորումներից՝ ընտրախավը որդեգրում է «**արտաքին իսլամի զսպման կամ վտանգազերծման քաղաքականություն**»: Այն, միտված լինելով հավասարակշունչություն իսլամի արտաքին և ներքին վեկտորները, գտնվում էր փոխադարձ հարաբերությունների մեջ ազգաշինության էթնիկ-ազգային բաղադրիչի հետ: Այս բաղադրիչի մյուս շերտը՝ թյուրքականը, նույնպես ենթարկվում է հավասարակշուման. անցում է կատարվում թյուրքականից դեպի ղազախականը և ապա մյուս կողմից՝ թյուրքականությունից և ղազախականից դեպի համամարդկայինը:

**Ե.** Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները հստակեցնելուն զուգընթաց՝ Նազարբաևը երկրում սկսեց հասարակական, կրթական, մշակութային և քաղաքական վերակազմակերպումների մի համալիր ծրագիր: Հավատարիմ մնալով ազգաշինության քաղաքացիական սկզբունքին՝ Նազարբաևի վարչակարգը ստեղծում է միջէթնիկ հարաբերությունները կարգավորող քաղաքական և մշակութային մեխանիզմներ, որոնք արդյունավորվեցին 1995 թ. «**Ղազախստանի ժողովուրդների Ասամբլեայի**» ստեղծմամբ: Ներդնելու համար **համադագախստանյան ինքնության** գաղափարը՝ որոշում կայացվեց «**Ղազախստանի ժողովուրդների Ասամբլեան**» վերանվանել «**Ղազախստանի ժողովուրդի Ասամբլեա**»: Իրավահավասար «**ղազախստանցիների**» գաղափարը ամրագրելու նպատակով երկրի գլխավոր փաստաթղթում հստակեցվեցին Ղազախստանում ապրող այլ էթնիկ խմբերի իրավունքները: Իրավական ամրագրմանը զուգորդվեց նաև զգայականը. պետական խորհրդանիշերը համալրվեցին նաև քաղա-

քացիական խորհրդանիշերով։ Այսպիսով, ազգաշինության էթնիկ-ազգային և քաղաքացիական սկզբունքով Ղազախստանը փորձում է աշխարհին ներկայանալ իբրև տարբեր ազգերի, կրոնական խմբերի և անհատների իրավահավասար և համերաշխ ամբողջություն, որտեղ այնուամենայնիվ ղազախները «**առաջինն են հավասարների մեջ»**։

**Զ.** Առանձնակի ուշադրության է արժանի երկրի լեզվաքաղաքականությունը, առանց որի անհնար է պատկերացնել հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության հարացուցքը։ Ղազախստանի լեզվաքաղաքականությունն ըստ էության քաղաքակրթական ինքնահայեցողության մի օրինակ է, որն իր մեջ կրում է անցյալի բարդուցների և մարտահրավերների հաղթահարման կամք։ Նազարբակյան վարչակարգն այն սահմանում է իբրև **եռալեզվության քաղաքականություն**, այն է՝ ընդունել սեփական լեզվի վտանգված լինելը և քայլեր ձեռնարկել փրկելու այն, որդեգրել ոռւսերենի նկատմամբ հավասարակշիռ քաղաքականություն և տարածել միջազգային լեզուն՝ անգլերենը։ Կրկին առկա է փոխադարձ կապ երկրի երկրեւ ազգաշինության հետ։ Մի կողմից՝ ընդգծվում են ընտրախավի էթնիկական-ազգային հավակնությունները, մյուս կողմից՝ ոռւսական ազդեցության հավասարակշուրջան կարևորությունը, իսկ մյուս կողմից էլ՝ բազմավեկտոր աշխարհին մասնակցելու պատրաստակամությունը։

Ազգային լեզվի կիրառելիության մեծացումը տեղի է ունենում ամենատարբեր միջավայրերի միջնորդությամբ, ինչպես օրինակ՝ կրթական, մեդիա, քաղաքային, իրավական, վարչական և այլն։ Պետք է ընդունել, որ ոռւսերենի արմատները բավականին խորն են, և Նազարբակյան լեզվաքաղաքականությունը միայն կարելի է համարել երկար տևողության «գերիշխանական հակազդման պայքարի» սկիզբը։ Թե ինչպես այն կարդյունավորվի, ցույց կտան ապագա վիճակագրությունները։

**Ե.** Հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության պատմության ամենավառ դրվագը թերևս նոր մայրաքաղաքի իրողությունն է։ Այն զուտ քաղաքաշինության արդի դրսևորում չէ, այլև հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կերպափոխումներին միտված ցուցիչ։ Մայրաքաղաքի տեղափոխման որոշման հիմքում գործող իշխանությունը տեսնում էր նոր սկզբի հնարավորություն։ Աստանան

ազգաշինության այն սկզբնական տարածքն է, որտեղ պետք է սահմանվեն «ղազախ» հասկացության տարբեր ենթաշերտերը: Նազարբասի վարչակազմի համար Աստանան ոչ միայն արդի աշխարհի հետ հարաբերվելու միջնորդ է, այլև մի տարածք, որտեղ **Ղազախստանը ներկայացվում է ավելի «ղազախական»** և ազատ՝ ինքնութենական այլ ազդեցություններից: Դա կատարվում է ի հաշիվ նորաստեղծ կրթական, էթնիկական, լեզվական և նշանային ոլորտների, որտեղ ազգայինը համադրվում է **բազմամշակութայնությանը**: Այսպիսով, Աստանան իր լայն հնարավորություններով սերտորեն կապված է Ղազախստանի ամենատարբեր տեղական և համաշխարհային նախագծերին: Այն ղազախական անցյալը, ներկան և ապագան իրար կապող մի հանգույց է, որի **քաղաքակրթական հեռանկարը** ակնհայտ է դառնում այլ օրինակների պատմահամեմատական լուսաբանման համապատկերում:

**Ը.** Միով բանիվ՝ արդի Ղազախստանում ընթանում է ազգային ինքնության նոր հարացույցի մշակման և ներդրման գործընթաց: Այն բարդ է ու բազմաչափ և պարառում է ազգային կյանքի բազում միջավայրեր՝ ինչպես ներհանրութային, այնպես էլ արտաքին. լեզու, ազգային պատումներ, կրթական համալիր, խորհրդանշաններ, կրոնական ինքնազիտակցություն, ներէթնիկ հարաբերություններ, պատմագրություն: Զևակերպված իբրև իմացաբանական հղացքներ՝ դրանք ներկայանում են իբրև քաղաքակրթական մարտահրավերներ, որոնք պահանջում են հարիր պատասխաններ: Ղազախական քաղաքական ընտրախավն աշխատում է հավասարակշռել մարտահրավերների բոլոր վեկտորները՝ ազգային-ղազախական, ոռւսական, համաթյուրքական, չինական, արևմտյան: Արդյո՞ք կկարողանա նա լրջմիտ ձևով համադրել դրանք. պատմական պահը խիստ կարևոր է, զի դրանից է կախված ղազախների քաղաքակրթական հեռանկարը:

# **Оқиғағынан шығарылған тәжірибелер**

## **Ұқырғыншылардың тәжірибелері**

1. Агентство Республики Казахстан по статистике, Итоги национальной переписи населения республики Казахстан 2009 года, Аналитический отчет. Агентство Республики Казахстан по статистике, Астана 2011, 65 с.
2. Бартольд В. В. Отчёт о поездке в Среднюю Азию с научною целью 1893 – 1894 гг. СПб., Типография Императорской Академии наук, 1897, 198 с.
3. Валиханов Ч., Исторические предания о Батырах XVIII века, Предания Большой киргиз-кайсацкой орды, Абылай хан, Собрание сочинений в пяти томах, т. 2, Алма-Ата, Академия наук Казахской ССР, 1983, с. 136 – 276.
4. Валиханов Ч., О мусульманстве в Степи в. Т. 4, Собр. соч. Алма-Ата, 1985, 462 с.
5. Витевский В. Н., И. И. Неплюев и Оренбургский край в прежнем его составе до 1758 г., т. 3, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1897, 361 с.
6. Ильминский, Н. И., Воспоминания об И. А. Алтынсарине: Письма и бумаги И. А. Алтынсарина, Н. Ильминский, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1891, 396 с.
7. Керимхановой Г., ред. Демографический ежегодник города Астаны, Астана: Департамент статистики города Астаны, 2012.
8. Конституция Казахской ССР-1978, URL: [http://www.worldstatesmen.org/Constitution\\_of\\_KazSSR-1978.pdf](http://www.worldstatesmen.org/Constitution_of_KazSSR-1978.pdf) (09. 10. 2016)
9. Конституция Республики Казахстан – 1993, URL: [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=1010212#pos=0;0](https://online.zakon.kz/Document/?doc_id=1010212#pos=0;0) (09. 10. 2016)
10. Конституция Республики Казахстан – 1995, Официальный Сайт Президента Республики Казахстан, URL: [http://www.akorda.kz/ru/official\\_documents/constitution](http://www.akorda.kz/ru/official_documents/constitution) (09. 10. 2016)
11. Кунаев Д.А. кандидат в члены Политбюро ЦК КПСС, Первый секретарь ЦК КП Казахстана, 50 лет Казахской ССР и Компартии Казахстана, Огонек, № 34 (2251) 22 Августа 1970.
12. Левшин А. И., Описание Киргиз-Казачьих, или Киргиз-Кайсацких орд и степей, СПб, 1823 , под общей ред. академика М.К. Козыбаева, Алматы: Санат, 1996, 656 с.
13. Левшина А. И., Об имени киргиз-кай-сацкого народа и его отличии от подлинных, или диких киргизов, Московский вестник. , № 4. 1827, с 432-451.
14. Мейер Л. М., Киргизская степь Оренбургского ведомства / Сост. Ген. штаба подполк. Л. Мейер. - Санкт-Петербург : тип. Э. Веймара и Ф. Персона, 1865. - 386 с.
15. Назарбаев Н. А., Послание Президента Республики Казахстан народу Казахстана

"Казахстан-2030: Процветание, безопасность и улучшение благосостояния всех казахстанцев"(10 октября 1997 года). Официальный Сайт Президента Республики Казахстан. URL [http://www.akorda.kz/kz/public\\_of\\_kazakhstan/kazakhstan](http://www.akorda.kz/kz/public_of_kazakhstan/kazakhstan) (10.03.2014)

16. **Назарбаев Н. А.**, Стратегия «Казахстан-2050» Новый политический курс состоявшегося государства, Послание Президента Республики Казахстан - Лидера Нации Н. А. Назарбаева Народу Казахстана, Официальный Сайт Президента Республики Казахстан URL: [http://www.akorda.kz/kz/public\\_of\\_kazakhstan/kazakhstan](http://www.akorda.kz/kz/public_of_kazakhstan/kazakhstan) (09.04.2015)
17. **Назарбаев Н.**, В Сердце Евразии, 2-е издание, Алматы: Атамұра, 2008, 192 с.
18. **Назарбаев Н.**, Критическое десятилетие, Алматы: Атамұра, 2003, 240 с.
19. **Назарбаев Н.**, На пороге XXI века, Алматы: Атамұра, 2003, 256 с.
20. **Назарбаев Н.**, Стратегия Независимости, Алматы : Атамұра, 2003, 312 с.
21. **Назарбаев Н.**, Стратегия становления постиндустриального общества и партнерство цивилизаций, Москва: Экономика, 2008, 398 с.
22. **Национальное статистическое агентство Министерства экономики и торговли Республики Казахстан. Алматы**, Статистическое обозрение Казахстана, №1, 1997.
23. Путеводитель по Туркестану и Средне-Азиатской железной дороге : С ист. очерком сооружения и эксплуатации Закасп. воен. ж. д. и очерком сооружения Оренбург-Ташкент. ж. д. / Под ред. Дмитриева-Мамонова А.И.; Ист. очерк сооружения и эксплуатации Закасп. воен. ж. д. сост. подполк. В.Н. Антипиным под ред. ген.-лейт. Н.Н. Левашева. - Санкт-Петербург : тип. Исидора Гольдберга, 1903. - XI, 454 с.
24. **Тройницкий Н. А., Петровский А. Н.**, Волости и населенные места 1893 года, СПб.: издание Центрального статистического комитета Министерства внутренних дел, 1893-1896. URL: <https://www.prlib.ru/item/327526> (12. 07. 2015)
25. **Турчининов Н. В.**, Население Азиатской России. Статистические Очерки, ред. И. И. Тхоржевский, Азиатская Россия, Люди и Порядки За Уралом: Издание Переселенческого управления главного управления землеустройства и земледелия, том 1., Санкт Петербург, 1914, 719 с.
26. **Харузин А. Н.**, Степные очерки (Киргизская Букеевская орда): странички из записной книги, А.Н. Харузин, М.: Типография А. А. Левенсон, 1888, 192 с.
27. **Ұшқарғыш Ұ.**, Ұшқарғыш ұшын шынайы шының өзінің, өзінің, «Сиғарашың Ұтқы» һәр шынайы шының өзінің, өзінің, 2008, 371 ғз :
28. **Nicol J.**, Central Asia's Security: Issues and Implications for U.S. Interests, CRS report for Congress, 2010, 67 p.

29. **Nicol J.**, Kazakhstan: Recent Developments and U.S. Interests, CRS report for Congress, 2012, 18 p.

### **Գիտական ուսումնասիրություններ**

30. **Կարապետյան Ա., Հարությունյան Է., Օհանյան Կ., Մկրտչյան Ն., Հայրապետյան Տ.**, Ղազախստան. Հաջողության գաղտնիքներ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2013, 226 էջ:
31. **Մինասյան Ն.**, Թուրքիայի Քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում (1991-2007), Երևան «Լուսաբաց հրատարակչություն» 2013, 237 էջ:
32. **Մկրտչյան Ն., Օհանյան Կ.**, Խմբ. Ղազախստան. բազմամշակույթ և յուրօրինակ, Երևան, Նշանակ, 2012, 179 էջ:
33. **Չարենց Ե.**, Ակադեմիկոս Թամանյանի անմահ հիշատակին: [Բանաստեղծ.], Եղիշե Չարենց, Եթեր. 2009, 14 մայիսի, էջ 22:
34. **Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթևոսյան Վ., Չակրյան Հ., Հովհաննիսյան Ա.**, Խմբ. Թուրքիայի Հանրապետության Պատմություն: Բուհական դասագիրք, Երևան: ԵՊՀ հրատ., 2014, 396 էջ:
35. **Ստեփանյան Ա.**, Պատմության հետագիծը. Գործք, Գրույթ, Իմաստ, Երևան, Փրինթինֆո, 2014, 496 էջ:
36. **Абдакимов А. Л.**, История Казахстана (с древнейших времен до наших дней), Алматы; РИК, 1994, 235 с.
37. **Абдыкаликова М., А. Панкратовой А.**, ред. История Казахской ССР, Алма-Ата, изд. Казфана, 1943, 640 с.
38. **Абылхожин Ж. Б.** Традиционная структура Казахстана: социально-экономические аспекты функционирования и трансформации (1920-1930 гг.), Алма-Ата: Гылым, 1991, 240 с.
39. **Агакишиев И.**, Казахстан На пути к межнациональной гармонии Казахстан, под ред. Бутаков Я. А., Верхотуров Д., Путь к лидерству: социально-экономические и политические реформы в Казахстане, Бослен, 2007, 124 с.
40. **Аполлова Н.Г.**, Присоединение Казахстана к России в 30-х годах XVIII века. -Алма-Ата: Изд-во АН КазССР, 1948, 191 с.
41. **Аполлова Н.Г.**, Присоединение Казахстана к России в 30-х годах XVIII века. -Алма-Ата: Изд-во АН КазССР, 1948, 254 с.

42. **Артықбаев Ж. О.**, Казахское Общество в XIX веке: традиции и инновации, Караганда: Полиграфия, 1993, 330 с.
43. **Асфендиаров С. Д.**, История Казахстана (с древнейших времен), т. 1., Алма-Ата; М.: Казах. краев. изд-во, 1935, 259 с.
44. **Атауов С.** Деятельность Компартии Казахстана по развитию тяжелой промышленности (1956-1965 гг.). Алма-Ата, Наука, 1979, 291 с.
45. **Ахмедова Н. Б.** Советский Казахстан за 40 лет (Расцвет экономики и культуры Казахстана за годы Советской власти), Алматы, 1961, 42 с.
46. **Ашин Г.К.**, Элитология: история, теория, современность : монография, Московский государственный институт международных отношений (университет) МИД России, Кафедра философии, Москва : МГИМО - Университет, 2010, 598 с.
47. **Байпаков К. М., Кумеков Б. Е., Акишев К. А.**, ред. История Казахстана. В четырех томах, т. I–IV, Алматы, Атамура, 1996 – 2000, 554 с.
48. **Бастами И.** Казахстан: Технология Успеха, Алматы, Алматы «Раритет», 2015, 260 с.
49. **Бекмаханов Е.**, Казахстан 20-40 годы XIX века: 20-40 годы XIX века, под ред. Жиенгалиев Н. Б., Алма-Ата, 1992, 400 с.
50. **Бромлей Ю. В.**, Очерки теории этноса, Москва: Изд. Наука, 1983, 416 с.
51. **Вяткин М.П.**, Очерки по истории Казахской ССР, М., Госполитиздат, 1941, 367 с.
52. **Григорьева В. Г.**, История развития станкостроительства в Казахской ССР, Кустанай, изд. Полит. института, 1965.
53. **Гумилев Л. Н.** Ритмы Евразии. Эпохи и цивилизации / [предисл. С. Б. Лаврова]. – Москва: Прогресс. Фирма «Прогресс–Пангея» : Центр экол. просвещения и развития «Экопрос», 1993, 575 с.
54. **Гумилев Л. Н.**, Конец и вновь Начало: Популярные лекции по народоведению, Москва: Айрис-пресс, 2008, 384 с.
55. **Жолдасбаев С., Бабаев Д.**, История средневекового Казахстана учебник для 7 класса, Алматы «Атамура», 2003, 224 с.
56. **Игибаев С. К.**, Историография истории Казахстана, Алматы: Ассоциация вузов, 2013, 358 с.
57. **Касымбаев Ж. К.**, История Казахстана (XVIII века-1914 год), учебник для 8 классов общеобразовательных школ, Алматы «Мектеп», 2012, 256 с.
58. **Ким М.П.** Аграрный Казахстане в период Великой Октябрьской социалистической революции. – Москва: Госполитиздат, 1945, 387 с.

